ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

ԲԱԼԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



Երևան, 2024 | N2

ISSN 1829-4952

ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК

МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА ЕВРАЗИЯ

BULLETIN

EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

2

Երևան - 2024

Հրատարակության է երաշխավորվել
Եվրասիա միջազգային համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Գագիկ Վարդանյան (գլխավոր խմբագիր), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան

Ալբերտ Մակարյան, բ.գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Անի Ստեփանյան, ի. գ. թ., դոցենտ, Արդարադատության համառուսական պետական համալսարան (Ռուսաստանի Արդարադատության նախարարության ԱՀՊՀ)
Աննա Օհանյան, ք.գ.դ., ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի պրոֆեսոր
Աշոտ Ալեքսանյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Աշոտ Խաչատրյան, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր
Աշոտ Մարկոսյան, տ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Արամ Այվազյան, ի.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան, ՀՀ քննչական կոմիտե
Գայանե Թովմասյան, տ.գ.թ., դոցենտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոն
Գրաժինա Չուլադենե, մանկ.գ.դ., դոցենտ, Լիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարան
Դմիտրիս Զախոս, մանկ.գ.դ, դոցենտ Սալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարան
Երանուհի Մանուկյան, փ.գ.թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Իգոր Կարապետյան, մանկ.գ.դ., պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Լուսինե Հարությունյան, բ.գ.դ., պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Լուսինե Ֆլջյան, բ.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Խաչիկ Գալստյան, ք.գ.դ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Հեղինե Մանասյան, տ.գ.դ., Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան
Հովհաննես Հարությունյան, տ.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան
Մարիամ Մարգարյան, ք.գ.դ., պրոֆեսոր, փ.գ.թ., դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիա
Մարտա Մորդովան-Ցիվինսկա, բ.գ.թ., Վիստուլայի համալսարան (Վիստուլայի համալսարանների խումբ, Վարշավա, Լեհաստան) և Վարշավայի Wszechnica Polska համալսարան
Պյոտր Բորովսկի, տեխ.գ.թ., տնտեսագետ, դոցենտ, Վարշավայի բնական գիտությունների համալսարան
Ռամոն Բուազաս Լորենցո, ք.գ.թ., Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարան (Իսպանիա)
Սամվել Մուրադյան, բ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Սոնա Հակոբյան, բ.գ.թ., Հայաստանի Եվրոպական Համալսարան
Սուրեն Օհանյան, աշխ.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Ստեփան Ծաղիկյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան
Վահե Վանեսյան, ք.գ.դ., CIDA-Կանադական միջազգային զարգացման գործակալություն
Վլադիմիր Հովհաննիսյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Խմբագրական խորհրդի քարտուղար՝
Նունե Ջոմարդյան, Եվրասիա միջազգային համալսարան

ISSN 1829-4952

© Եվրասիա միջազգային համալսարան, 2024

«Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի» պարբերականը ԲՈԿ-ի 28.06.2019թ. № 164Ա հրամանի համաձայն ընդգրկված է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

Издается по рекомендации ученого совета Международного университета Евразия

Редакционная коллегия
Гагик Варданян (главный редактор), д-р экон. наук, профессор, Международный университет Евразия

Альберт Макарян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет
Ани Степанян, канд. юрид. наук, доцент, Всероссийский государственный университет юстиции (РПА Минюста России)
Анна Оганян, д-р полит. наук, профессор, Стоунхиллский университет, США
Арам Айвазян, канд. юрид. наук, Международный университет Евразия, Следственный комитет РА
Ашот Алексанян, д-р полит. наук, профессор, Ереванский государственный университет
Ашот Маркосян, д-р экон. наук, профессор, Ереванский государственный университет
Ашот Хачатрян, д-р юрид. наук, профессор, судья Конституционного суда Республики Армения
Ваге Ванесян, д-р полит. наук, CIDA-Канадское агентство международного развития
Владимир Оганесян, д-р юрид. наук, Российско-Армянский (Славянский) университет
Гаяне Товмасян, канд. экон. наук, доцент, Исследовательский центр «АМБЕРД» Государственного экономического университета Армении
Гражина Чуладене, д-р пед. наук, доцент, Университет Миколаса Ромериса, Литва
Дмитриос Захос, д-р пед. наук, Университет Аристотеля в Салониках, Греция
Ерануи Манукян, канд. филос. наук, доцент, Ереванский государственный университет
Игорь Карапетян, д-р пед. наук, профессор, Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна
Лусине Арутюнян, д-р пед. наук, профессор, Государственный экономический университет
Лусине Флджян, д-р филол. наук, профессор, Международный университет Евразия
Мариам Маргарян, д-р полит. наук, профессор, канд. филос. наук, доцент, Академия государственного управления Республики Армения
Марта Молдован-Цывинска, д-р филол. наук, Вислинский университет (Группа университетов Вистулы, Варшава, Польша), Университет Wszechnica Polska в Варшаве
Оганес Арутюнян, канд. экон. наук, Международный университет Евразия
Петр Боровский, д-р техн. наук, экономист, Варшавский университет естественных наук, Польша
Рамон Бузас Лоренцо, д-р полит. наук, Университет Сантьяго-де-Компостела, Испания
Самвел Мурадян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет
Сона Акопян, канд. филол. наук, Европейский университет Армении
Сурен Оганян, д-р геогр. наук, профессор, Международный университет Евразия
Степан Цагикян, д-р юрид. наук, профессор, Российско-Армянский (Славянский) университет
Хачик Галстян, д-р полит. наук, доцент, Ереванский государственный университет
Эгине Манасян, д-р экон. наук, Кавказский исследовательский ресурсный центр-Армения

Секретарь редакционной коллегии:
Нуне Джомардян, Международный университет Евразия

Секретарь редакционной коллегии:
Нуне Джомардян, Международный университет Евразия

ISSN 1829-4952

© Международный университет Евразия, 2024

Решением Высшей квалификационной комиссией МОНКС РА от 28.06.2019 № 164А Вестник Международного университета Евразия включен в перечень научных изданий приемлемых для публикаций основных результатов и положений диссертаций.

Recommended for publication by the Scientific Council of Eurasia International University

Editorial Board:
Gagik Vardanyan (Chairman), Doctor of Economics, Professor, Eurasia International University

Albert Makaryan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University
Ani Stepanyan, Ph.D. in Law, Associate Professor, All-Russian State University of Justice (RLA of the Ministry of Justice of Russia)
Anna Ohanyan, Ph.D. in Political Science, Stonehill University, USA
Aram Ayvazyan, Ph.D. in Law, Eurasia International University, RA Investigative Committee
Ashot Aleksanyan, Doctor of Political Science, Professor, Yerevan State University
Ashot Khachatryan, Doctor of Law, Professor, Judge of the Constitutional Court of the RA
Ashot Markosyan, Doctor of Economics, Professor, Yerevan State University
Dmitrios Zachos, Ph.D. in Pedagogical Sciences, Associate Professor, Aristotle University of Thessaloniki, Greece
Yeranuhi Manukyan, Ph.D. in Philosophy, Associate Professor, Yerevan State University
Gayane Tovmasyan, Ph.D. in Economics, Associate Professor, "AMBERD" Research Center of the Armenian State University of Economics
Grazina Chuladiene, Ph.D. in Pedagogy, Associate Professor, Mikolas Romeris University, Lithuania
Heghine Manasyan, Doctor of of Economics, Caucasus Research Resource Center (CRRC)-Armenia
Hovhannes Harutyunyan, Ph.D. in Economics, Eurasia International University
Khachik Galstyan, Doctor of Political Sciences, Associate Professor, Yerevan State University
Igor Karapetyan, Doctor of Pedagogical Sciences, Professor, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University
Lusine Harutyunyan, Doctor of Philology, Professor, Armenian State University of Economics
Lusine Fljyan, Doctor of Philological Sciences, Professor, Eurasia International University
Mariam Margaryan, Doctor of Political Sciences, Professor, Ph.D. in Philosophy, Associate Professor, Academy of Public Administration of the Republic of Armenia
Marta Moldovan-Cywińska, Ph. D. in Humanities, Vistula University (Vistula Group of Universities, Warsaw, Poland), Wszechnica Polska University in Warsaw, Poland
Piotr Borowski, Ph.D. in Engineering, Economist, Associate Professor, Warsaw University of Life Sciences, Poland
Ramón Bouzas Lorenzo, Ph.D. in Political Science, University of Santiago de Compostela, Spain
Samvel Muradyan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University.
Sona Hakobyan, Ph.D. in Philological Sciences, European University of Armenia
Stepan Tsaghikyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University
Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor, Eurasia International University
Vahe Vanesyan, Ph.D. in Political Science, CIDA - Canadian Agency for International Development
Vladimir Hovhannisyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Secretary of Editorial Board:
Nune Jomardyan, Eurasia International University

ISSN 1829-4952

© Eurasia International University, 2024

According to № 164 (A)U. decree of RA Supreme Certifying Committee (hereinafter, SCC) dated on June 28, 2019, EIU Bulletin is now recognized as a scientifically relevant journal included in the list of SCC, RA Ministry of Education, Science, Culture and Sport for publicizing the main principals and guidelines of Ph.D. dissertation.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արամ Այվազյան, Ամանդա Սարգսյան
ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 8

Հակոբ Պետրոսյան
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ 24

Գևորգ Իսրայելյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 40

Հասմիկ Հակոբյան
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԿԱՊԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 49

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երանուհի Մանուկյան
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 62

Լիլիթ Մակարյան, Մարինե Գևորգյան
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ. 1988-1992 ԹԹ. ՍՈՒՄԳԱՅԻԹԻ, ԲԱՔՎԻ ԵՎ ՄԱՐԱՂԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ 74

Հարություն Մաթևոսյան
ԹԱԼԻԲԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ. ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՈԴԵԼ 89

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Միհեր Վարդանյան
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՊՏԻՄԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ 98

Լիլյա Ավետիսյան
ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ԲԻԶՆԵՍՈՒՄ 109

Զավեն Բաղրյան, Էլինա Շամխալովա, Արտաշ Գալստյան
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 131

Լուսինե Ղազարյան
ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ՈՒՄ 142

Աննա Մարգարյան
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (ՊՄԳ) ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ 158

Լուսինե Գրիգորյան
ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐ 172

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ենոք Գրիշկյան
ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՈՒ (ՄԵՏԱԼԵԶՈՒ, ԱՌԱՆՑ ՈՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԱՊՐԵԼ) 189

Սյուզաննա Գրիգորյան
ԽՈՍՔԱՅԻՆ ՆԵՐԱԶԴՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՈՒՄ 202

Մարիամ Հակոբյան
ԿԱՆԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ԿՆՈՋ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԿԱԿԱՆ ՎԵՊԵՐՈՒՄ 215

СОДЕРЖАНИЕ

ЮРИСПРУДЕНЦИЯ

Арам Айвазян, Аманда Саргсян
АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 8

Акоп Петросян
ПРИМЕНЕНИЕ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА В ПРОФИЛАКТИКЕ И РАССЛЕДОВАНИИ ПРЕСТУПЛЕНИЙ 24

Геворг Исраелян
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРАВОВЫХ ОСНОВ ЭКСПЕРТНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 40

Асмик Акобян
КОНСТИТУЦИОННАЯ ПРИРОДА ПРАВ СОБСТВЕННОСТИ И СВЯЗЬ С КОРРУПЦИЕЙ. ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ 49

ПОЛИТОЛОГИЯ

Ерануи Манукян
ОСОБЕННОСТИ РАЗРАБОТКИ СТРАТЕГИЧЕСКОЙ ПОЛИТИКИ АНТИКОРРУПЦИИ 62

Лилит Макарян, Марине Геворгян
НЕКОТОРЫЕ ЭПИЗОДЫ АНТИАРМЯНСКОЙ ПОЛИТИКИ АЗЕРБАЙДЖАНА 1988-1992 ГГ: НОВЫЕ ПОДРОБНОСТИ ИНЦИДЕНТОВ В СУМГАИТЕ, БАКУ И МАРАГЕ 74

Арутюн Матевосян
ИДЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ТАЛИБАНА: НОВАЯ МОДЕЛЬ ИСЛАМСКОГО РАДИКАЛИЗМА 89

ЭКОНОМИКА

Мгер Варданян
СТРАТЕГИЯ МОДЕЛИРОВАНИЯ СЛОЖНОЙ ЭКОНОМИКИ С ПОСЛЕДСТВИЯМИ В РАЗРАБОТКЕ ОПТИМАЛЬНОЙ ПОЛИТИКИ 98

Лилия Аветисян
ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МАРКЕТИНГА В РЕСТОРАННОМ БИЗНЕСЕ 109

Завен Багрян, Элина Шамхалова, Арташ Галстян
ОСОБЕННОСТИ СТРАТЕГИЧЕСКОГО МАРКЕТИНГА В АГРОПРОДОВОЛЬСТВЕННОЙ СИСТЕМЕ 131

Лусине Казарян
ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ ДЕБИТОРСКОЙ ЗАДОЛЖЕННОСТЬЮ В ИНГО АРМЕНИЯ СТРАХОВАЯ КОМПАНИЯ 142

Анна Маргарян
ГОСУДАРСТВЕННО-ЧАСТНОЕ ПАРТНЕРСТВО (ГЧП) КАК СРЕДСТВО ОБЕСПЕЧЕНИЯ ДОСТУПНОСТИ И МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ 158

Лусине Григорян
СТИМУЛИРОВАНИЕ РОЖДАЕМОСТИ В АРМЕНИИ: ВЫЗОВЫ И СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ 172

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

Енок Гришкян
УНИВЕРСАЛЬНЫЙ ЯЗЫК (МЕТАЯЗЫК, БЕЗ ЧЕГО ЖИЗНЬ НЕВОЗМОЖНА) 189

Сюзанна Григорян
РЕАЛИЗАЦИЯ ЛИНГВИСТИЧЕСКИХ СРЕДСТВ РЕЧЕВОГО ВОЗДЕЙСТВИЯ В БИЗНЕС-ИНТЕРВЬЮ 202

Мариам Акопян
ЖЕНСТВЕННОСТЬ И КОНЦЕПЦИЯ НОВОЙ ЖЕНЩИНЫ В НЕОРОМАНТИЧЕСКИХ РОМАНАХ ДЖЕКА ЛОНДОНА 215

CONTENT

JURISPRUDENCE

Aram Ayvazyan, Amanda Sargsyan
CURRENT ISSUES OF RELEASE FROM CRIMINAL RESPONSIBILITY IN THE REPUBLIC OF ARMENIA 8

Hakob Petrosyan
APPLICATION OF ARTIFICIAL INTELLIGENCE IN CRIME PREVENTION AND INVESTIGATION PROCESSES 24

Gevorg Israyelyan
SOME PROBLEMS OF IMPROVING THE LEGAL BASIS EXPERT
ACTIVITY IN THE REPUBLIC OF ARMENIA 40

Hasmik Hakobyan
THE CONSTITUTIONAL NATURE OF PROPERTY RIGHTS AND THE RELATIONSHIP WITH CORRUPTION. THEORETICAL AND LEGAL ANALYSIS 49

POLITICAL SCIENCE
Yeranuhi Manukyan
FEATURES OF DEVELOPING AN ANTI-CORRUPTION STRATEGY 62

Lilit Makaryan, Marine Gevorgyan
SOME EPISODES OF THE ANTI-ARMENIAN POLICY OF AZERBAIJAN 1988-1992: NEW DETAILS OF SUMGAYIT, BAKU AND MARAGHA INCIDENTS 74

Harutyun Matevosyan
THE IDEOLOGICAL FOUNDATIONS OF THE TALIBAN: A NEW MODEL OF ISLAMIC RADICALISM 89

ECONOMICS
Mher Vardanyan
THE MODELING STRATEGY OF COMPLEXITY ECONOMICS WITH IMPLICATIONS IN OPTIMAL POLICY-MAKING 98

Lilya Avetisyan
MARKETING DEVELOPMENT TRENDS IN THE RESTAURANT BUSINESS 109

Zaven Baghryan, Elina Shamkhalova, Artash Galstyan
THE FEATURES OF STRATEGIC MARKETING
IN THE AGRI-FOOD SYSTEM 131

Lusine Ghazaryan
EVALUATION OF THE EFFECTIVENESS OF ACCOUNTS RECEIVABLE MANAGEMENT IN INGO ARMENIA INSURANCE CJSC 142

Anna Margaryan
PUBLIC-PRIVATE PARTNERSHIP (PPP) AS A MEANS OF ENSURING ACCESS AND MODERNIZATION OF THE EDUCATION SYSTEM 158

Lusine Grigoryan
PROMOTING BIRTH RATE IN ARMENIA: CHALLENGES AND CONTEMPORARY TRENDS 172

LINGUISTICS AND PHILOLOGY
Yenok Grishkyan
UNIVERSAL LANGUAGE (METALANGUAGE WE CAN'T LIVE WITHOUT)

189

Syuzanna Grigoryan
IMPLEMENTATION OF LINGUISTIC MEANS OF VERBAL INFLUENCE IN BUSINESS INTERVIEWS 202

Mariam Hakobyan
FEMININITY AND THE CONCEPT OF THE NEW WOMAN IN JACK LONDON'S NEO-ROMANTIC NOVELS 215

Արամ Այվազյան
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլ. հասցե՝ aram.ayvazyan@eiu.am
Ամանդա Սարգսյան
Եվրասիա Միջազգային համալսարանի Քրեական իրավունք և դատավարություն մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրոս
Էլ. հասցե՝ sargsyanamanda@gmail.com

DOI: 10.53614/18294952-2024.2-8

ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը վերաբերվում է վաղեմության ժամկետներ անցնելու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու գործընթացին: Նախ՝ վերլուծվել է այս հիմքի, այսպես ասած, միջազգային կարգավորումների տեսակետից գաղափարի առաջացման նախապատմությունը: Ներկայացված է խնդրո առարկայի կապակցությամբ հայրենական օրենսդրական զարգացման դինամիկան՝ մատնանշվելով հիմնական փոփոխությունները, առանձնահատկությունները և դրանց հիմնավորումները: Միաժամանակ, կատարվել է արտասահմանյան տարբեր երկրների մոտեցումներում առկա իրավական սահմանումների վերլուծություն, որի արդյունքն իրավահամեմատական կոնտեքստով համադրվել է հայրենական օրենսդրական մոդելի հետ, ինչի արդյունքում էլ հնարավոր է եղել առաջ քաշել և հիմնավորել որոշակի առաջարկություններ:

Հիմնաբառեր. վաղեմության ժամկետ, պատիժ, հանցանք, քրեական պատասխանատվություն, օրենք, օբյեկտիվ կողմ:

Ներածություն

Հանցագործության դեմ պայքարի և հանցագործության կանխարգելման հարցում կարևոր նշանակություն ունի քրեական պատասխանատվությունը և դրա իրագործման հիմնական դրսևորում հանդիսացող հարկադրանքի միջոց՝ պատիժը: Հանցագործությունների ժամանակին բացահայտումը, հանցանք կատարած անձանց հայտնաբերումը, նրանց պատասխանատվության ենթարկելը, արդարացի պատիժ նշանակելն ու այն կիրառելը ինքնին ապահովում և երաշխավորում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով (այսուհետ ՀՀ քր. օր.) հռչակված պատժի իրագործման նպատակների իրականացումը, դրանք են՝ սոցիալական արդարության վերականգնումը, հանցանք կատարած անձի վերասոցիալականացումը և հանցագործությունների կանխումն իր ընդհանուր և հատուկ տարատեսակներով: Բայց ոչ բոլոր դեպքերում է, որ հանցանք կատարած անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության: ՀՀ քր. օր-ը, ելնելով համամարդկային մարդասիրության և արդարության սկզբունքներից, նախատեսում է քրեական պատասխանատվությունից ազատելու, այսպես կոչված, «հնարավորություն» հանցանք կատարած անձին:

Խոսքը վերաբերվում է ոչ թե այն դեպքերին, երբ բացահայտված չի լինում հանցագործությունը կամ այն կատարած անձը, այլ այն դեպքերին, երբ որոշակի ողջամիտ ժամանակահատված անցնելու պարագայում, այսպես ասած «կորում է» հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության ենթարկելու ողջամիտ անհարժեշտությունն ու նպատակահարմարությունը: Այս գաղափարը պարփակված ձևով իր ամփոփ տեղն է գտել ՀՀ քր. օր-ի ընդհանուր մասի՝ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի շարքում որպես առանձին և ինքնուրույն հիմք՝ «Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով» վերտառությամբ:

Քրեական պատասխանատվությունից ազատել նշանակում է իրավասու մարմնի որոշմամբ անձը, որը կատարել է հանցանք, ազատվում է հանրային քրեական դատապարտումից իր կատարած հանցագործության համար և նրա նկատմամբ պետական հարկադրական ազդեցության միջոցներից:

Վաղեմության ժամկետը ՀՀ քր. օր-ով սահմանված այն ժամանակահատվածն է, որն անցնելով հանցանքը կատարելուց հետո՝ հիմք է հանդիսանում հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Քրեական պատասխանատվությունից ազատելու այս տեսակի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ եթե հանցանքը կատարելուց հետո բավականին երկար ժամանակ անձը նոր հանցանք չի կատարում ու դրսևորում է օրինակելի վարքագիծ, ապա նա կորցնում է իր վտանգավորությունն ու նրան այդպիսի պայմաններում պատասխանատվության ենթարկելը կվերածվի նրանց լոկ վրեժ լուծելու: Կարևոր է նաև այն, որ կատարված հանցանքն ինքնին էլ ժամանակի ընթացքում կորցնում է իր հասարակական նշանակությունն ու վտանգավորությունը և պատասխանատվության ենթար-

կելը դառնում է անիմաստ:

Այն, որ դատավարական իմաստով ժամանակի ընթացքում դժվարանում է հանցանքի բացահայտումը, քանի որ շատ ապացույցներ ոչնչանում են կամ կորցնում իրենց ապացուցողական նշանակությունը, ունի երկրորդային նշանակություն ու ինքնին վաղեմության ժամկետի կիրառման ինստիտուտի վրա էական նշանակություն չպետք է ունենա: Այդ հանգամանքով է պայմանավորված, որ որոշ հանցանքների վտանգավորությունը հաշվի առնելով դրանց նկատմամբ վաղեմության ժամկետ չի կիրառվում կամ կիրառվող ժամկետի հաշվարկն ունի առանձնահատկություններ:

Վերջին տարիներին քրեական պատասխանատվությունից ազատված անձանց թիվը կտրուկ աճում է: Աճում է նաև վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով կարճվող գործերի քանակը:

Այս ամենը ուսումնասիրելուց հետո գալիս ենք հետևության, որ ՀՀ-ում վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմնահարցը միշտ կունենա իր արդիական նշանակությունը իրավակիրառ պրակտիկայում: Վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրը լուծելու համար անհրաժեշտություն է առաջանում գտնել այնպիսի լուծումներ և կիրառել անհրաժեշտ գործիքակազմ, որպեսզի այս հիմքի կիրառումը ինքնին չվնասի քրեական պատասխանատվության արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի արդյունավետ կիրառմանը, մասնավորապես՝ ողջամիտ և արդարացի վաղեմության ժամկետներ սահմանելու ճանապարհով:

Մեթոդ

Թեմայի մշակման շրջանակներում կիրառվել են իրավակիրառ փորձի ուսումնասիրություններ, իրավահամեմատական մեթոդներ՝ կատարելով վերլուծություններ, որոնք հանգեցրել են արդյունավետություն ապահովող առաջարկությունների ձևակերպմանը: Ինչպես նաև ուսումնասիրվել են օտարերկրյա պետությունների այն հոդվածները, որոնք վերաբերվում են վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնահարցերի բացահայտմանը:

Պատմահամեմատական մեթոդով համեմատության մեջ են դրվել պատմական տարբեր ժամանակաշրջաններում վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվության վերաբերյալ արտահայտված կարծիքները, գիտական դիրքորոշումները, նախկին և գործող օրենսդրության մեջ տեղ գտած դրույթները, դրանց մեջ առկա հակասությունները և բացթողումները:

Արդյունքներ

Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ինստիտուտը տարբեր հեղինակների կարծիքով առաջացել է դեռ Հռոմեական կայսրության հասարակական հարաբերությունները կարգավորող իրավանորմերից (Мшвениерадзе, 1967, էջ 5): Վաղեմության ժամկետն անցնելը հանցագործության համար պատիժը բացառող հիմք է պնդում էին վաղուց՝ տարբեր քրեաիրավական դպրոցների ներկայացուցիչներ (Мшвениерадзе, 1967 էջ 6): Ներկայումս այս ինստիտուտը մեծ տարածում է ստացել ու զարգացել շատ երկրների քրեական օրենսդրությունում (Крылова, 1998, էջ 2):

Իր հերթին, քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական հետապնդում չհարուցելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն վաղեմության ժամկետն անցնելը համարվում է որպես քրեական հետապնդում չհարուցելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք՝ սահմանելով, որ քրեական վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը, որոշակի փոփոխություններով և լրամշակումներով, նախատեսվել է հայրենական տարբեր ժամանակաշրջանի քրեական օրենսգրքերով:

ԽՍՀՄ 1961 թվականի մարտի 07-ին ընդունված և հուլիսի 11-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ «Անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե նրա կողմից հանցագործություն կատարելու օրից անցել է հետևյալ ժամկետները».

1) մեկ տարի՝ սույն օրենսգրքի 109 հոդվածի երկրորդ մասով, 132, 142, 197, 208, 208[1], 216, 217, 218 հոդվածներով, 219 հոդվածի առաջին մասով, 223 հոդվածով նախատեսված հանցագործություններից որևէ մեկը կատարելու օրից.

2) երեք տարի՝ այնպիսի հանցագործություն կատարելու օրից, որի համար, ըստ օրենքի կարող է նշանակվել ազատազրկում երկու տարուց ոչ ավելի ժամանակով, կամ այնպիսի պատիժ, որը կապված չէ ազատազրկման հետ.

3) հինգ տարի՝ այնպիսի հանցագործություն կատարելու օրից, որի համար ըստ օրենքի կարող է նշանակվել ազատազրկում հինգ տարուց ոչ ավելի ժամանակով.

4) տասը տարի, այնպիսի հանցագործություն կատարելու օրից, որի համար ըստ օրենքի կարող է նշանակվել ավելի խիստ պատիժ, քան հինգ տարի ժամանակով ազատազրկումը:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և օգոստոսի 01-ին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտ-

ված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները».

1. երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից
2. հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից
3. տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից
4. տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

Քրեական նոր օրենսգրքով նախատեսվել են վաղեմության ավելի երկար ժամկետներ: Այսպես՝ 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 01-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելու հաջորդող օրվանից անցել են հետևյալ ժամկետները».

1. 5 տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում
2. 10 տարի՝ միջին ծանրության հանցանքի դեպքում
3. 15 տարի՝ ծանր հանցանքի դեպքում
4. 20 տարի՝ առանձնապես ծանր հանցանքի դեպքում

Այս իրավակարգավորումը համահունչ է ժամանակակից իրավական միտումներին, ավելի հստակ է և թույլ կտա բացահայտել հանցագործությունները ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում: Համանման իրավակարգավորումներ, անգամ ավելի երկար վաղեմության ժամկետների սահմանմամբ, նախատեսված են նաև այլ երկրների քրեական օրենսդրությամբ: Օրինակ՝ ԳԴՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ ցմահ ազատազրկմամբ դատապարտվող հանցագործությունների վաղեմության ժամկետը սահմանված է 30 տարի:

Նույն իրավիճակն է նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում: Ի տարբերություն ՀՀ հայրենական օրենսդրության, դրանցում նախատեսված են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության զգալիորեն ավելի երկար ժամկետներ: Այսպես՝ Իսպանիայի քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության վաղեմության ժամկետը հաշվակցվում է հետևյալ կերպ՝

1. 20 տարի, եթե տվյալ հանցագործության համար առավելագույն պատիժը 15 տարուց ավել է,
2. 15 տարի, եթե տվյալ հանցագործության համար առավելագույն պատիժը 10 տարուց ավելի ժամկետով իրավունքներից զրկումն է կամ 10 տարուց մինչև 15 տարի ազատազրկումը,
3. 10 տարի,եթե տվյալ հանցագործության համար առավելագույն պատիժը 6-10 տարի ժամկետով իրավունքներից զրկումն է կամ 5-10 տարի ժամկետով ազատազրկումը,
4. 5 տարի՝ այլ ծանր հանցագործությունների համար
5. 3 տարի՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար (Criminal Code of Spanish, 1995)

Քրեական պատասխանատվության ավելի երկար ժամկետներ է նախատեսում ԳԴՀ քրեական օրենսգիրքը, որի 78 պարագրաֆի 3-րդ մասի համաձայն վաղեմության ժամկետ կազմում է՝

1. 30 տարի, եթե հանցագործության համար նախատեսված է ցմահ ազատազրկում,
2. 20 տարի, եթե հանցագործության համար նախատեսված է 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկում,
3. 10 տարի, եթե հանցագործության համար նախատեսված է 5-10 տարի ժամկետով ազատազրկում,
4. 5 տարի, եթե հանցագործության համար նախատեսված է 1-5 տարի ժամկետով ազատազրկում,
5. 3 տարի, եթե այլ հանցագործությունների դեպքում (Уголовный кодекс ФГР, 2006):

Մյուս երկրների քրեական օրենսդրություններում նույնպես վաղեմության ժամկետը կապվում է հանցագործության տեսակի հետ, բայց ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի այն նույնանում է այդ հանցագործության համար օրենքով նախատեսված առավելագույն պատժի հետ, և դրանցից պակաս չէ նաև կարող է գերազանցել պատժի չափից:

Վաղեմության ժամկետները անցնելու հետևանքով հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հարցի լուծման համար կարևոր նշանակություն ունի ժամկետները հաշվելու կարգը: Այս հարցի հետ կապված ՀՀ-ում առկա է վաղեմության սկզբի և ավարտի ժամանակաշրջանը որոշելու հարցը: Շատ քրեագետներ վաղեմության ժամկետի սկզբնական ժամանակաշրջան են համարում հանցագործությունն ավարտելու օրը, իսկ մյուսները դրա հաջորդ օրը (Смолников, 1969):

ՀՀ քր. դատ. օրենսգրքի հոդված 171-ի 2-րդ մասի համաձայն՝«Ժամկետները հաշվի առնելիս նկատի չեն առնվում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը», իսկ 3-րդ մասի համաձայն՝ «Ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքը սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը 24:00-ին»: Քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետի սկզբնական ժամանակ պետք է համարվի հանցանք ավարտված համարելու օրվան հաջորդող օրվա 24:00 ժամը: Նման մոտեցումներ ամրագրված են նաև Արգենտինայի քրեական օրենսգրքի 63 և 66 հոդվածներում, Նիդեռլանդների քրեական օրենսգրքի հոդված 71-ի 1-ին մասում (Criminal Code of Argentina, 1984, էջ 12):

Նախկին 1961 թվականի քրեական օրենսգիրքը չէր սահմանում քրեական պատասխանատվության ժամկետը հաշվելու կանոնները (Ղազինյան, Խաչիկյան, Առաքելյան, 2012, էջ 475):

2003 թվականի ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին

արարքը կատարելու պահից»: Այստեղ տևող հանցագործության վաղեմության ժամկետի սահմանման ժամկետը, ըստ հեղինակների սխալ է, քանի որ տևող հանցագործության դեպքում հանցագործությունն ավարտված է համարվում հանցանք կատարած անձին բռնելու կամ մեղայականով ներկայանալու պահից կամ այլ հանգամանքները պարզելու պահից (օրինակ՝ ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու դեպքում՝ զինվորական ծառայության ենթակա լինելու սահմանված առավելագույն տարիքը լրանալը,) մինչդեռ արարքը տևող հանցագործության դեպքում կարող է դադարել ավելի վաղ: Օրինակ՝ դասալքության դեպքում արարքը սկսվում է զորամասը թողնելու պահից, բայց դասալքությունը ավարտված է համարվում հանցանք կատարած անձին բռնելու կամ նրա մեղայականով ներկայանալու պահից: Մեր կարծիքով, քանի դեռ անձը չի հայտնաբերվել կամ ներկայացել մեղայականով, դասալքությունը ընթացքի մեջ է:

ՀՀ նոր քր. օր-ի 83-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով համապատասխանաբար սահմանվում են՝ «Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից մինչև անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելը»: «Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելուն հաջորդող օրվանից, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելուն հաջորդող օրվանից»:

Քրեական նոր օրենսգիրքը հստակեցրել է նաև վաղեմության ժամկետի հաշվարկման կարգը: ՀՀ նոր քր. օր-ի 83-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է՝ «Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են հետևյալ ժամկետները(...)»: Այսինքն՝ վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է հանցանքն ավարտելուն հաջորդող օրվանից, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որով, որպես վաղեմության ժամկետի սկիզբ, նշվում էր հանցանքն ավարտված համարելու օրը:

Նոր իրավակարգավորումը բավականաչափ հաջողված է և միտված է արդարադատության ավելի արդյունավետ իրականացմանը: Արդի պայմաններում, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, գործի քննությունը, այնուհետև՝ տարբեր դատական ատյաններում դրա բողոքարկումը, կարող է բավականաչափ երկար տևել, հաճախ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը, վաղեմության ժամկետները անցնում են և իրավապահ համակարգի և դատարանի կողմից ծախսված ժամանակային և նյութական ռեսուրսները դառնում են ապարդյուն: Նոր իրավակարգավորումը, վստահաբար, կլուծի այս խնդիրը: Տևող և շարունակվող հանցագործությունների պարագայում՝ նոր իրավակարգավորումն ուղղակի հստակեցնում է, որ ժամկետի հաշվարկի սկիզբ պետք է համարել դրանք ավարտվելու հաջորդ օրը:

Պետք է նշել, որ տևող հանցագործությունների հետ կապված նույն մոտեցումներն ունեն նաև որոշ երկրներ: Այսպես, օրինակ՝ Իսպանիայի քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տևող և շարունակվող հանցագործությունների դեպքում վաղեմության ժամկետները հաշվարկ-

վում են վերջին արարքը կատարելու կամ հակաօրինական իրադրությունը խափանելու պահից (Уголовный кодекс Испании, 2006):

Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու համար անհրաժեշտ է, որ ժամկետի ավարտից հետո ոչ մի խոչընդոտ չլինի: Վաղեմության ժամկետն անցնելուն միայն կարող են խոչընդոտել այն հանգամանքները, որոնք վկայում են, որ հանցանք կատարած անձը դեռևս չի կորցրել իր հանրային վտանգավորության աստիճանը, դեռ ավելին աչքի է ընկնում իր բարձր հանրային վտանգավորությամբ: Օրենքը նախատեսում է այդպիսի երկու հանգամանք՝ այդ ընթացքում անձի կողից նոր հանցանքի կատարումը և քննությունից կամ դատից խուսափումը: Առաջին հանգամանքի ժամանակ ժամկետն ընդհատվում է, իսկ հաջորդի դեպքում ժամկետն կասեցվում է:

Քրեական նախկին օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր «Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից»:

Վաղեմության ժամկետի ընթացքում նոր հանցանքի կատարումը վկայում է անձի բարձր հանրային վտանգավորության մասին, և այս դեպքում վաղեմության ժամկետի ընդհատումը արդարացված է:

Քննարկում

Վաղեմության ժամկետի ընդհատման ինստիտուտը նախատեսված է նաև այլ երկրների քրեական օրենսգրքերում: Օրինակ՝ Տաջիկստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 75-ի համաձայն՝ վաղեմության ժամկետի ընդհատումը իրականացվում է այնպես, ինչպես Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

Ուզբեկստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 64-ի համաձայն վաղեմության ժամկետն ընդհատվում է, եթե տվյալ անձը այդ ընթացքում կատարում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք:

Վաղեմության ժամկետի քննարկման հարցը այլ կերպ է լուծված եվրոպական այլ երկրների քրեական օրենսդրությունների համար: Այնտեղ վաղեմության ժամկետի ընդհատումը կապվում է հանցանք կատարած անձի նկատմամբ դատավարական որոշակի գործողությունների կատարելու հետ, անձի նկատմամբ քրեական գործի հարուցում (Իսպանիայի քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մաս), անձի հետ կապված յուրաքանչյուր տեսակի քննչական գործողություն կատարելու կամ դատարանի կարգադրության առկայության դեպքում (Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն):

Որոշ երկրների քրեական օրենսգրքերում վաղեմության ժամկետի ընդհատման եզրույթ առկա չէ: Մասնավորապես ՌԴ-ի քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վաղեմության ժամկետի ընթացքում նոր հանցագործություն կատարելու դեպքում այդ ժամկետը յուրաքանչյուր

հանցագործության համար ընթանում է առանձին՝ կախված նրանից, թե որ դասակարգմանն է պատկանում տվյալ հանցագործությունը (Уголовный кодекс Российской Федерации, 2007): Այս հարցի շուրջ տարբեր քրեագետներ տարբեր կերպ են հարցին լուծումներ տվել: Նրանց կարծիքով դա պայմանավորված է գործնական անհրաժեշտությամբ, և իրավակիրառողին ազատում է ամեն անգամ ապացուցելու այն փաստը, որ տվյալ ժամանակահատվածում անձը նոր հանցագործություն չի գործել (Прошляков, 1996):

Վաղեմության ժամկետների կիրառման արգելք է նախատեսում նաև Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության մեջ, որի 29-րդ հոդվածի համաձայն «Դատարանին ընդդատյա հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չի կիրառվում»: Սույն կանոնադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանին ընդդատյա հանցագործություններն են ցեղասպանության հանցագործությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, պատերազմական հանցագործությունները, ագրեսիայի հանցագործությունը:

Ինչ վերաբերվում է ագրեսիայի հանցագործությանը, ապա դրանք Կանոնադրության մեջ դրա հատկանիշները բացահայտված չեն: Ագրեսիայի որոշ հատկանիշներ բացահայտվել են, և բացահայտվում են ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածում, որում խոսվում է միայն զինված հարձակման մասին:

Վաղեմության ժամկետի հետ կապված կա ևս մեկ հարց, որը ենթակա է քննարկման, դա անչափահասների նկատմամբ կիրառվող ժամկետն է:

2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քր. օր-ի 95-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս քրեական օրենսգրքի 75-րդ և 81-րդ հոդվածներով նախատեսված վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են կիսով չափ նաև այս հոդվածը առկա է ՌԴ-ի քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածում:

Իրավաբանական գրականության մեջ տարբեր հեղինակներ տարբեր մոտեցումներ են արտահայտել տվյալ հարցի շուրջ: Այս ժամկետը անչափահասին դնում է չարդարացված ու չհիմնավորված արտոնյալ վիճակում և շատ դեպքերում կարող է նպաստել անչափահասների անպատժելիությանը (Сверчков, 2008, էջ 234):

Բացի այդ անչափահասների համար վաղեմության ժամկետների կրճատումը սխալ է ըստ էության: Նրանց սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների շնորհիվ նրանք ավելի անկայուն են, խոսքը ոչ հստակ, այդ իսկ պատճառով նրանց պետք է ավելի երկար ժամանակ կայունանալու և հստակ դիրքորոշում հայտնելու համար: Այսպիսով՝ անչափահասների դեպքում վաղեմության ժամկետները կրճատելը հիմնավորված չէ, և կարծում ենք, որ պետք է ապաքրեականացվի:

Մի շարք երկրներում վաղեմության ժամկետները ոչ միայն գերազանցում են պատժաչափին, այլ նաև կան հանցագործություններ, որտեղ չեն

կիրառվում դրանք: Որոշ երկրների քրեական օրենսգրքում վաղեմության ժամկետի կիրառման արգելք է նախատեսված այլ հանցագործությունների համար:

Այսպես՝ օրինակ՝ Վրաստանի քրեական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում խոշտանգման (144.1 հոդված), խոշտանգման սպառնալիքի (144.2 հոդված), նվաստացնող և անմարդկային վերաբերմունքի (144.3) հանցակազմերի համար (Criminal Code of Georgia, 1999)

Լեհաստանի քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ վաղեմության ժամկետին վերաբերող կարգավորումները չեն տարածվում դիտավորությամբ կատարված սպանության, ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու, խոշտանգման դեպքում (Criminal Code of Poland, 2021)

Լեհաստանի օրենսդրության նախորդ դրույթները նախատեսում էին, որ կոմունիստական հանցագործությունների համար վաղեմության ժամկետը սկսվում է 1990 թվականի օգոստոսի 1-ից, հանցագործությունների համար նախատեսված ժամկետներն ավարտվում են 40 տարի անց, եթե դա սպանության, պատերազմի կամ մարդկության դեմ ուղղված հանցագործության հարց է, և 30 տարի անց, եթե խոսքը կոմունիստական այլ հանցագործության մասին է: Վերջինիս համար հնարավոր չէ քրեական հետապնդում իրականացնել այս տարվա օգոստոսի 1-ից:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածը նախատեսում է, որ վաղեմության ժամկետ չի տարածվում երեխաների հետ սեռական գործողությունների, բռնաբարության, անօգնական վիճակում գտնվող անձի հետ սեռական գործողությունների, սեքսուալ բնույթի բռնի սեռական գործողությունների, ինչպես նաև նման հանցագործությունների վրա: Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև այնպիսի հանցագործությունների նկատմամբ, որոնք վտանգի տակ են դնում մարդկանց առողջությունը կամ այնպիսի վտանգի սպառնալիք են ստեղծում զանգվածային ոչնչացման միջոցներ օգտագործելու, աղետներ առաջացնելու կամ պատանդներ վերցնելու հետ (Criminal Code of Swiss, 2020)

Գերմանիայի դաշնային հանրապետության քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ծանրացնող հանգամանքներում սպանություն կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետին վերաբերող կարգավորումներն առհասարակ չեն տարածվում (Criminal Code of German, 2021)

Հունգարիայի հանրապետության քրեական օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ ցմահ ազատազրկում պատժատեսակ նախատեսող հանցագործությունների համար վաղեմության ժամկետները կիրառելի չեն (Հունգարիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մաս):

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ պետություն-

ները չեն սահմանափակվում միայն խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների համար այլ, ունեն հայեցողության լայն սահման որոշելու կոնկրետ հանցագործությունների շրջանակ (Խաչատրյան, 2019, էջ 69):

Հաշվի առնելով միջազգային և տարածաշրջանային մարմինների հանձնարարականները, ինչպես նաև այդ մարմինների կողմից ընդհանուր փաստաթղթերում որդեգրված մոտեցումները՝ անհրաժեշտ է նաև ներպետական օրենսդրության և պրակտիկայի վերլուծության արդյունքում վեր հանել այն բոլոր կարգավորումները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել հանցագործության անպատժելիությանը:

Վեր հանելով խնդիրները և ամփոփելով դիտարկումները՝ կարելի է եզրակացնել, որ խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորած պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով ազատելը, այդ անձանց նկատմամբ համաներում, ինչպես նաև այդ արարքի անպատժելիությանը հանգեցնող այլ համարժեք միջոցներ կիրառելը հանգեցնում է պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների խախտմանը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մեծ թվով բարձր հանրային վտանգավորություն ունեցող հանցագործությունների կապակցությամբ վաղեմության ժամկետի կիրառման արգելք նախատեսելու հարցը՝ չսահմանափակելով միայն ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցագործություններով:

Եզրակացություն

Ինչպես պարզ դարձավ թեմայի հետազոտության արդյունքում՝ Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմնական, ընդհանուր, իմպերատիվ, օբյեկտիվ, ոչ պայմանական տեսակ է, ուստի քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու այլ տեսակների հետ մրցակցության դեպքում առաջնահերթությունը պետք է տրվի այս հիմքին:

Հաշվի առնելով միջազգային և տարածաշրջանային մարմինների հանձնարարականները, ինչպես նաև այդ մարմինների կողմից ընդհանուր փաստաթղթերում որդեգրված մոտեցումները՝ անհրաժեշտ է ներպետական օրենսդրության և պրակտիկայի վերլուծության արդյունքում վեր հանել այն բոլոր կարգավորումները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել հանցագործության անպատժելիությանը:

Հետազոտություն կատարեցինք Հայաստանի Հանրապետության և մի շարք այլ Եվրոպական երկրների միջև: Իրականացվեց իրավահամեմատական վերլուծություն հասկանալու համար՝ արդյոք ՀՀ-ում կիրառվում են վաղեմության ժամկետներ թե ոչ, այդ նույն հանցագործությունների համար: Կարծում եմ, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ պետք է փոփոխություններ կատարվի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատվելու հիմնահարցերը լուծ-

վելու և արդյունքի հասնելու համար: Ելնելով վերոգրյալից, եզրահանգում ենք այն մտքին, որ ՀՀ-ում օրենսդրությունը պետք է հանրային բարձր վտանգավորություն ունեցող հանցագործությունների նկատմամբ չկիրառել վաղեմության ժամկետ, և չսահմանափակվել միայն ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցագործություններով:

Հայաստանի Հանրապետությունում վաղեմության ժամկետների հետ առնչվող տարբեր հիմնախնդիրներ կան, որոնք շատ հեղինակների կողմից բարձրաձայնվել են իրենց աշխատություններում: Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում հետազոտությունը մեզ թույլ տվեց եզրահանգելու ՀՀ-ում տեղի ունեցած և ունեցող հիմնախնդիրների վերհանմանը և լուծման տարբերակների առաջադրմանը:

Որպես հետազոտության վերջնարդյունք, առաջ ենք քաշում հետևյալ թեզը. թեև անչափահասների մասով, որպես խոցելի խումբ, քրեական պատասխանատվությունից ազատելու ժամկետի մասով անդրադարձ կա ՀՀ քր. օր.-ի 83-րդ հոդվածում, սակայն օրենսդրական այս ձևակերպումը պարզապես պահանջ է ներկայացնում վաղեմության ժամկետների հաշվարկը սկսել տուժողի 18 տարին լրանալուց հետո, ուստի, հաշվի առնելով անչափահասների նկատմամբ կատարված սեռական բնույթի հանցագործությունների ունեցած բարձր հանրային վտանգավորությունը և հասարակության ունեցած անհամեմատ անհանդուրժողական արձագանքն այդ կապակցությամբ, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 11-րդ մասը վերաշարադրել և ընդօրինակել Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածով նախատեսված համապատասխան իրավակարգավորումը: Այսպես. նշված երկրի քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի շրջանակներում ամրագրված է իրավական այն դրույթը, որ վաղեմության ժամկետ չի տարածվում երեխաների հետ սեռական գործողությունների, բռնաբարության, անօգնական վիճակում գտնվող անձի հետ սեռական գործողությունների, սեքսուալ բնույթի բռնի սեռական գործողությունների, ինչպես նաև նման այլ հանցագործությունների վրա: Այդ կերպ, առաջարկվում է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ, 198-202-րդ, 241-րդ և 242-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ չկիրառել վաղեմության ժամկետներ:

Օգտագործված գրականության ցանկ

Խաչատրյան, Ա. (2015). *Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելը խոչընդոտող հանգամանքները:*

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրք 2021թ. հունիսի 09-ին ընդունված, հուլիսի 01-ին ուժի մեջ մտած փոփոխություններով և լրամշակումներով Միասնական կայք 2021.05.17-2021.05.30 Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021 arlis.am/DocumentView.aspx?DocID=153080

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 1961թ. մարտի 07-ին ընդունված, հուլիսի 01-ին ուժի մեջ մտած և 2003թ. օգոստոսի 01-ին ուժը կորցրած

փոփոխություններով և լրամշակումներով ՀՍՍՀԳՍՏ 1961/7
Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 2003թ. ապրիլի 18-ին ընդունված, օգոստոսի 01-ին ուժի մեջ մտած և 01.07.2022թ-ին ուժը կորցրած փոփոխություններով և լրամշակումներով ՀՀՊՏ 2003.05.02/25(260)Հոդ. 407
Ղազինյան, Գ., Խաչիկյան Հ., Առաքելյան Ս., (2012). *Հայաստանի Հանրապետության Քրեական իրավունք Ընդհանուր մաս, ԵՊՀ հրատարակչություն, Երևան* :
Крылова Серебрянникова А. В. (1998) *Уголовное право зарубежных стран.*
Мшвениерадзе П. Я. (1967). *Институт давности в советском уголовном праве:* Санкт-Петербург.
Прошляков, Д.(2000) *Освобождегие от уголовной отвественности в связи с истечением сроков давности./* Российская юстиция.
Сверчков, В. В. (2008). Освобождение от уголовной ответственности, прекращение уголовного дела (преследования), отказ в его возбуждении. Проблемы теории и практики: Санкт-Петербург
Смолников, В. Е. (1969). *Давность в теории советского уголовного права. законодательстве и практике его применения.Автореф.* Дисс. Канд. Юрид. наук. М.
Уголовный кодекс Российской Федерации *Уголовный кодекс Российской Федерации (pravo.gov.ru)*
Criminal Code of Argentina Argentine Penal Code | Office of Justice Programs (ojp.gov)
Criminal Code of German German Criminal Code (Strafgesetzbuch – StGB) (gesetze-im-internet.de)
Criminal Code of Georgia CRIMINAL CODE OF GEORGIA | სსიპ "საქართველოს საკანონმდებლო მაცნე" (matsne.gov.ge)
Criminal Code of Poland Poland_CC_1997_en.pdf (legislationline.org)
Criminal Code of Spanish]Estonia_CC_as_of_2002_ru.pdf (legislationline.org)
Criminal Code of Swiss The Swedish Criminal Code – Government.se

References

Argentinayi k'reakan orensgirk' Argentine Penal Code | Office of Justice Programs (ojp.gov) [Criminal Code of Argentina] (In Eng.)
Germaniayi k'reakan orensgirk' German Criminal Code (Strafgesetzbuch – StGB) (gesetze-im-internet.de) [Criminal Code of German]
Ispaniayi k'reakan orensgirk' Estonia_CC_as_of_2002_ru.pdf (legislationline.org) [Criminal Code of Spanish]
Lehastani k'reakan orensgirk' Poland_CC_1997_en.pdf (legislationline.org) [Criminal Code of Poland] (In Eng.)
Khach'atryan, A. (2019). «Vaghemut'yan zhamketn ants'nelu hetevank'ov k'reakan pataskhanatvut'yunits' azately khoch'yndotogh hangamank'nery»: [Circumstances preventing the release from criminal responsibility due to the expiration of the statute of limitations] (In Arm.)
Hayastani Hanrapetut'yan K'reakan orensgirk' 2021t'. [Criminal Code of the Republic of Armenia] hunisi 09-in yndunvats, hulisi 01-in uzhi mej mtats p'vop'vokhut'yun-

nerov yev lramshakumnerov Miasnakan kayk' 2021.05.17–2021.05.30 Pashtonakan hraparakman ory 27.05.2021 (In Arm.)

Hayastani Hanrapetut'yan k'reakan orensgirk' 1961t'. [Criminal Code of the Republic of Armenia] marti 07–in yndunvats, hulisi 01–in uzhi mej mtats yev 2003t'. ogostosi 01–in uzhy korts'rats p'vop'vokhut'yunnerov yev lramshakumnerov HSSHGST 1961/7 (In Arm.)

Hayastani Hanrapetut'yan k'reakan orensgirk' 2003t'. [Criminal Code of the Republic of Armenia] aprili 18–in yndunvats, ogostosi 01–in uzhi mej mtats yev 01.07.2022t'–in uzhy korts'rats p'vop'vokhut'yunnerov yev lramshakumnerov HHPT 2003.05.02/25(260)Hod. 407 (In Arm.)

Ghazinyan, G., Khach'ikyan H., Arrak'elyan S., (2012) *Hayastani Hanrapetut'yan K'reakan iravunk' Yndhanur mas:* [RA criminal law, general part] (In Arm.)

Shvets'iariayi k'reakan orensgrk'I The Swedish Criminal Code – Government.se [Criminal Code of Swiss] (In Eng.)

Rrusastani Dashnut'yan k'reakan orensgirk' *Уголовный кодекс Российской Федерации (pravo.gov.ru)* [Russian Federation criminal code]

Vrastani k'reakan orensgirk' CRIMINAL CODE OF GEORGIA | სსიპ "საქართველოს საკანონმდებლო მაცნე" (matsne.gov.ge) [Georgia criminal code] (In Eng.)

Mshveniyeradze P. YA. (1967) *Institut davnosti v sovetskom ugolovnom prave.* [The institution of prescription in Soviet criminal law] (In Russ.)

Proshlyakov, D.(2000) *Osvobozhdegiye ot ugolovnoy otvestvennosti v svyazi s istecheniyem srokov davnosti./ Rossisyskaya yustitsiya. Kommentariy k UK RF*\Pod obshey red. [Released from criminal liability due to the expiration of the statute of limitations.] (In Russ.)

Sverchkov, V.V. (2008) *Osvobozhdeniye ot ugolovnoy otvetstvennosti, prekrashcheniye ugolovnogo dela (presledovaniya), otkaz v yego vozbuzhdenii. Problemy teorii i praktiki: Sankt–Peterburg.* [Release from criminal liability, termination of a criminal case (prosecution), refusal to initiate it. Problems of theory and practice: St. Petersburg] (In Russ.)

Smolnikov, V. Ye. (1969) *Davnost' v teorii sovetskogo ugolovnogo prava. zakonodatel'stve i praktike yego primeneniya.Avtoref.* Diss. Kand. Yurid. nauk. M. [Prescription in the theory of Soviet criminal law. legislation and practice of its application] (In Russ.)

Strogovich, M. S. (1946) *Ugolovniy protsess.* [Criminal process] (In Russ.)

Арам Айвазян
Преподаватель Международного университета Евразия
кандидат юридических наук, доцент
Эл. адрес: Aram.Ayvazyan@eiu.am

Аманда Саргсян
Студентка 2-го курса магистратуры Уголовного права и процесса
Международного университета Евразия,
Эл. адрес: sargsyanamanda@gmail.com

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В статье говорится о порядке освобождения лица от уголовной ответственности на основании истечения срока давности. Прежде всего, была проанализирована подоплека этой идеи с точки зрения международных норм. Представлена динамика развития отечественного законодательства по рассматриваемой теме, указаны основные изменения, их особенности и обоснование. При этом был проведен анализ существующих правовых дефиниций в подходах разных зарубежных стран, результаты которого сопоставлены с отечественной законодательной моделью в сравнительно-правовом контексте, в результате чего удалось выдвинуть и обосновать определенные рекомендации.

Ключевые слова: испытательный срок, наказание, преступление, преступление, уголовная ответственность, уголовный кодекс.

Aram Ayvazyan
Lecturer of the Law Department at Eurasia International University,
Ph.D. in Law, Associate Professor
Email: aram.ayvazyan@eiu.am

Amanda Sargsyan
MA student in Criminal Law and Procedure, 2nd, Eurasia International University
Email: sargsyanamanda@gmail.com

CURRENT ISSUES OF RELEASE FROM CRIMINAL RESPONSIBILITY IN THE REPUBLIC OF ARMENIA

The article refers to the process of releasing a person from criminal responsibility based on the expiration of the statute of limitations. This basis was analyzed in advance, so to speak, the background of the emergence of the idea from the point of view of international organizations. The dynamics of the respective do-

mestic legislative development of the subject in question are included, noting the main changes, features and their justifications. At the same time, an analysis of the existing legal definitions in different foreign countries was conducted, and the results were compared with the domestic legislative model in a comparative legal context, leading to certain recommendations being proposed and substantiated.

Key words: term of imprisonment, punishment, crime, criminal liability, law, objective aspect.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. օգոստոսի 22-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. հոկտեմբերի 4-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Հակոբ Պետրոսյան
Եվրասիա միջազգային համալսարանի
Իրավագիտության ամբիոնի դասախոս,
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ hakob.petrosyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2024.2-24

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Հոդվածում անդրադարձ ենք կատարում մարդկության զարգացման ներկայիս փուլում, հանցագործությունների կանխարգելման և քրեական վարույթների իրականացման ընթացքում նորագույն տեխնոլոգիական նվաճում հանդիսացող՝ արհեստական բանականության գործիքների կիրառության հնարավորություններին: Դրա գործածությունն առավելապես դիտարկվում է երեք առանձին գործընթացների՝ հանցագործությունների դեմ տարվող պրոֆիլակտիկ աշխատանքների, ինչպես նաև քրեադատավարական երկու փուլերի՝ մինչդատական և դատական վարույթների ընթացքում: Կատարված հետազոտությամբ և վերլուծության արդյունքներով գալիս ենք այն եզրահանգման, որ տրամադրվող գործիքների առավելագույն հնարավորությունների կիրառությունը մեծապես կնպաստի իրավապահ մարմինների գործունեության օգտակար գործողության գործակցի բարձացմանը, այն հատկապես ուղղված կլինի հետաքննչական, քննչական և դատական մարմինների աշխատանքի ծանրաբեռնվածության էական նվազեցմանը, ժամանակի և ռեսուրսների տնտեսմանը:

Հիմնաբառեր. հանցագործությունների կանխարգելում, հանցագործություններ կանխատեսող համակարգեր, արհեստական բանականություն, անալոգային մտածողություն, ալգորիթմների համակարգ, թվային մտածողություն:

Ներածություն

Հանցավորության կանխարգելման գործընթացում, ինչպես նաև քրեական վարույթի պատշաճ քննության կարևորագույն բաղադրիչների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում այն որակով և բարձր օպերատիվությամբ կյանքի կոչելու, ինչպես նաև պետական միջոցների և առկա ռեսուրսների, այդ թվում՝ ժամանակի տնտեսման հանգամանքը: Մարդկային գործունեության բազմաթիվ բնագավառներում նորագույն տեխնոլոգիաների և դրանց առանձին հնարավորությունների ներմուծումը մեծապես նպաստում են առաջադրված խնդիրների արդյունավետ և առավել տրամաբանական վերջնարդյունքին: Պետք է արձանագրել, որ իրավապահ գործունեության մեր կողմից առաջ քաշված ոլորտներում, որոշ չափով արդեն իսկ գործածվում են համապատասխան տեխնիկական միջոցները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդված), սակայն վստահորեն պետք է փաստենք, որ դրանք ըստ էության կրում են հատվածային (ֆրագմենտալ) բնույթ: Աշխարհում բարձր տեխնոլոգիաների բնագավառում տեղի ունեցող և երկրաչափական պրոգրեսիայով զարգացող հնարավորությունները ստիպում են նախ՝

1) մաս կազմել և ակտիվ մասնակցություն ունենալ այդ տեխնոլոգիական հեղափոխությանը,

2) առնվազն ճիշտ չի լինի տեղեկացված լինել դրանց հարաբերականորեն անսահման հնարավորությունների մասին և չօգտվել այդ, առավել ևս՝ արհեստական բանականության գործիքներից:

Բնականաբար, քրեաիրավական գործունեության բնագավառը ևս ունի դրա հիմնավորված պահանջարկը, որի մասին էլ որպես սույն գիտական հոդվածի արգասիք, կփորձենք մանրակրկիտ հետազոտական աշխատանքի և առաջարկությունների ձևով ներկայացնել ստորև:

Մեթոդ

Սույն գիտական հոդվածի հետազոտական-մեթոդաբանական հիմքը կազմել են համընդհանուր դիալեկտիկական, համեմատահիրավական, վերլուծական-կանխատեսական, ինչպես նաև վերլուծական-տրամաբանական մեթոդները, որոնք լայնորեն կիրառելով փորձ է արվել բացահայտել պետական տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող քրեաիրավական գործընթացներում արհեստական բանականության գործիքների գործածության և ապագա հնարավորությունները:

Արդյունքներ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն քրեական օրենսդրության խնդիրներն են հանդիսանում օրենքով նախատեսված շահերի պաշտպանությունը հանցավոր ոտնձգություններից, հանցագործությունների կանխումը, քրեական պատասխանատվության ենթակա իրավաբանական անձի և հանցանք կատարած անձի պատասխա-

նատվության արդարացիությունը, հասարակությունում հանցանք կատարած անձի վերաինտեգրումը, վերասոցիալականացումն ապահովելը: Սա նշանակում է, որ հանցավորության դեմ տարվող պայքարը պետական համապատասխան գերատեսչությունների համար կանխանշվում է որպես գործունեության առանցքային ուղղություններից մեկը, ինչն էլ իր հերթին վերջիններիս պարտավորեցնում է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, մշտապես գտնվել հիշյալ առաքելության իրականացման բարձր պատասխանատվության և որակյալ ծառայությունների մատուցման դիրքերում:

Ընդհանրապես, պատմական աղբյուրների և համապատասխան վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ իրավապահ գործունեության շրջանակներում հանցավորության դեմ առավել արդյունավետ պայքարի իրականացման նպատակով, մշտապես նկատվել է հիմնավորված հասարակական պահանջ: 21-րդ դարում մարդկության զարգացման տեխնոլոգիական հեղափոխությունը մեծապես փոխեց մարդկային մտածողությունը, պատճառ հանդիսացավ հասարակական լայն շերտերի վերաձևավորման, մի շարք հասարակական գործընթացների ու խնդիրների լուծման ուղղությամբ նորովի արդիական կարգավորումների և լուծումների գործածման կամ ներդրման պահանջ ձևավորվեց:

Որպես հասարակական նեգատիվ երևույթի՝ հանցավորության դեմ պայքարի, քրեական վարույթներով քննության որակի բարձրացման ուղղությամբ, թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակներում մշտապես ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ, ներդրվել են անհրաժեշտ գործիքներ, գործունեության պատշաճ ընթացակարգերն ապահովելու նպատակով: Սակայն, որոշ բնագավառներում հասարակական հարաբերությունների տեխնոլոգիական զարգացման ներկայիս վիճակը առանձին երևույթներին համարժեք արձագանքման պահանջով ստիպում և թելադրում է իր կանոնները, ինչը հնարավոր չէ անտեսել: Մեր կյանքում արհեստական բանականության շարունակական ինտեգրման շնորհիվ կկարողանանք հասնել նախկինում անհնարին թվացող նպատակների, իսկ այն աշխատանքը, որը ժամանակին համարվում էր, որ միայն մարդը կարող է անել, վստահելու ենք մեքենաներին (Քիսինջեր, 2024, էջ 30):

Բացի այդ, պետք է նկատի ունենանք, որ հանցագործությունները, շատ դեպքերում նաև բարձր տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառմամբ, վաղուց արդեն դուրս են եկել մեկ պետության սահմաններից, իրենց բովանդակությամբ պահանջում են միջազգային մակարդակով համապատասխան արձագանքի դրսևորում: Հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարն անխոս պահանջում է համարժեք տեխնիկական միջոցների և համակարգերի ներդրում, անհրաժեշտ կրթական ծրագրերի իրականացում՝ ծառայողների մոտ համապատասխան գիտելիքների ձևավորման նպատակով:

Այս ամենի համատեքստում, պատկան մարմինների կողմից արհեստական բանականության հնարավորությունների գործածումը քննարկվող բնագավառների համար կարելի է դիտարկել և՛ որպես ցանկություն, և՛ որպես պահանջ:

Խնդրի արդիականությունը ներկայացնելու նպատակով փաստենք, որ

միայն 2020 թվականից հետո գիտական մակարդակներում իրականացվել են մի շարք հետազոտություններ, պաշտպանվել թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնությունում տարբեր հեղինակների կողմից անդրադարձ է կատարվել՝ արհեստական բանականության համակարգերի կիրառության սկզբունքներին և սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդիրներին (Бадмаева, 2023), էլեկտրոնային արդարադատության համակարգում քաղաքակրթական գործընթացների սկզբունքներին (Кондюрина, 2020), թվային քաղաքակրթության դատավարական ձևին (Луконина, 2023), արհեստական բանականության կիրառությամբ տեղեկատվական հարաբերությունների իրավական կարգավորմանը (Щитова, 2022), քննության շրջանակներում քրեագիտական մտածողության տեսության հայեցակարգային հիմքերին և արհեստական բանականության համակարգերի կիրառմանը (Бахтеев, 2022), արհեստական բանականության տեխնոլոգիաների օգտագործմամբ ԵՄ նորագույն օրենսդրության իրավական վերլուծությանը (Марченко, 2022): Հայաստանի Հանրապետությունում տպագրվել են գիտական հոդվածներ՝ արհեստական բանականության քրեական պատասխանատվության տեսական և կիրառական ասպեկտների (Բարսեղյան, 2021), հեղինակային իրավունքի համատեքստում արհեստական բանականության իրավական կարգավորման հիմնախնդիրների (Թևոսյան, 2020), արհեստական բանականության օգտագործմամբ ստեղծված աշխատանքների նկատմամբ հեղինակային իրավունքի տարածման (Սիմոնյան, 2021), արհեստական բանականության իրավական կարգավորման որոշ հարցերի (Սուքիասյան, 2022) վերաբերյալ: Ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ կատարված հետազոտությունները հիմնականում վերաբերում են կամ քաղաքացիաիրավական տիրույթում արհեստական բանականության հիմնախնդիրների քննարկմանը կամ արհեստական բանականության կիրառությամբ կատարված հանցագործություններին քրեաիրավական գնահատական տալուն և արարքի համար պատասխանատվության հիմնախնդիրներին:

Ի տարբերություն վերը թվարկված թեմատիկ ոլորտների, մեր նպատակն է՝ իրավապահ գործունեության շրջանակներում արհեստական բանականության գործիքների կիրառման հնարավորությունների ուսումնասիրումը և համապատասխան առաջարկների ներկայացումը: Այս առումով առաջ քաշված թեման արդիական է և կարևոր:

Հատկանշական է, որ 2024 թվականին արդեն իսկ ընդունվել է «Եվրոպական Միության AI ակտը» (Արհեստական բանականության վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2024 թվականի հունիսի 13-ի կանոնակարգը (ԵՄ) 2024/1689), որն ըստ էության արհեստական բանականության ոլորտը կարգավորող առաջին համապարփակ փաստաթուղթն է: Բացի այդ, սեպտեմբերի 5-ին Վիլնյուսում ստորագրվեց Եվրոպայի խորհրդի «Արհեստական ինտելեկտի և մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության մասին կոնվենցիան»: Այն իր տեսակի մեջ առաջին պայմանագիրն է, որի համաձայն արհեստական բանականության զարգա-

ցումը պետք է համապատասխանի Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության չափանիշներին:

Սա նշանակում է, որ առաջադեմ գործընթացներից հետ չմնալու համար Հայաստանի Հանրապետությունը ևս պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի թե՛ միջազգային հարթակներում, թե՛ ներպետական տարբեր մակարդակներում: Առավել ևս այդ պահանջի մասին է վկայում այն հանգամանքը, որ համաձայն կատարված հետազոտությունների՝ ռոբոտի և մարդու մտածողության գործընթացների նմանությունը 2040 թվականին հավասար կլինի մոտավորապես 50%-ի, իսկ 2075 թվականին ռոբոտների մտածողության գործընթացներն այլևս չեն կարող տարբերվել մարդկային գործընթացներից. նմանությունը կհասնի 95%-ի (Բարսեղյան, 2021, էջ 18):

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավապահ մարմինների կողմից հանցագործությունների կանխարգելման և քրեական վարույթներով արհեստական բանականության հնարավորությունների կիրառությանը, ապա վերը նշված գործընթացներն ու կանխատեսումները վկայում են խնդրով լրջագույնս զբաղվելու անհրաժեշտության մասին:

Մեր կարծիքով արհեստական բանականության գործիքների կիրառությունն ու տեղայնացումը հնարավոր է՝

- հանցագործությունների կանխարգելման ոլորտում,
- մինչդատական վարույթի և,
- դատական վարույթի ընթացքում:

Ստորև ներկայացնենք դրանցից յուրաքանչյուրն՝ ըստ առանձին ուղղությունների:

Հանցագործությունների կանխարգելման ոլորտում արհեստական բանականության գործիքների կիրառության հնարավորությունները:

Ինչքան էլ, որ մարդկային միտքն իր տեսակով զարգացած լինի, չի կարող օժտված լինել թվային մտածողությամբ: Մարդն ունի անալոգիական մտածողություն (Закарайя, 2019, էջ 16): Անալոգիական մտածողությունը (անգլ.՝ analogical thinking) վերաբերում է խնդիրների լուծման և նոր գաղափարների մշակման գործընթացին՝ օգտագործելով համեմատություններ և փոխաբերություններ: Այն հիմնված է անալոգիաների վրա՝ երբ մեկ իրավիճակի կամ խնդրի լուծումը կիրառվում է այլ, բայց նմանատիպ իրավիճակների կամ խնդիրների համար:

Ի տարբերություն անալոգիական մտածողության, թվային մտածողությունը (անգլ.՝ digital thinking**)** վերաբերում է խնդիրների լուծման, որոշումների կայացման և տեղեկատվության վերլուծության մեթոդներին, որոնք հարմարեցված են թվային տեխնոլոգիաների և միջավայրերի կիրառման համար: Այն ներառում է մի շարք հմտություններ և մեթոդաբանություններ, որոնք օգնում են մարդկանց հասկանալ և օգտագործել տեխնոլոգիաներն

առավել արդյունավետ կերպով:

Հանցագործությունների կանխարգելման ոլորտում արհեստական բանականության կիրառումը մեծ հնարավորություններ է ընձեռում, որոնք կարող են նպաստել աշխատանքի ավելի արդյունավետ և ժամանակակից մեթոդների զարգացմանը: Արհեստական բանականության միջոցով կարելի է կանխատեսել հանցագործություններ, հայտնաբերել կասկածելի գործունեություններ և վերլուծել հսկայական ծավալի տվյալներ:

Ստորև ներկայացնենք հանցագործությունների կանխարգելման ոլորտում այն հիմնական ուղղությունները, որտեղ կարող է օգտագործվել արհեստական բանականության գործիքները.

1. Կանխատեսողական վերլուծություն (Predictive Policing) (Artificial intelligence and predictive policing: risks and challenges, 2022, էջ 4)

Արհեստական բանականության կիրառմամբ իրավապահ մարմինները կարող են կանխատեսել հնարավոր հանցագործությունները՝ հիմնվելով նախկինում ստացված տվյալների վրա, ինչպես օրինակ՝ ուսումնասիրել հանցագործությունների պատմությունը, բնակչության տեղաշարժի վերաբերյալ տվյալները, սպասարկվող տարածքի առանձնահատկությունները և այլն: Այս մեթոդով հնարավոր է կանխատեսել, թե որտեղ և երբ կարող են տեղի ունենալ նոր իրավախախտումներ, ինչը թույլ կտա ձեռնարկել համապատասխան կանխարգելիչ գործողություններ: Հարկ է նշել, որ ներկայումս այս աշխատանքը ՀՀ իրավապահ մարմիններում, այդ թվում՝ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներում իրականացվում է ծառայողների կողմից զուտ մաթեմատիկական հաշվարկների ձևաչափով՝ առանց հիշյալ գործիքների կիրառության:

2. Տվյալների վերլուծություն և մոդելավորում

Արհեստական բանականությունը կարող է վերլուծել մեծածավալ տվյալներ՝ որոնելով հանցագործությունների մեջ կրկնվող հատկանիշները, կատարման եղանակները: Այս մեթոդը թույլ կտա օպերատիվ կերպով նախապես հայտնաբերել հանցավոր միտումները: Օրինակ, վերլուծելով սոցիալական ցանցերի տվյալները, բանկային գործողությունները կամ տեսահսկման համակարգերի պատկերները, արհեստական բանականությունը կարող է հայտնաբերել հնարավոր վտանգավոր վարքագիծ կամ հանցագործության նախանշանները:

3. Տեսահսկման ավտոմատացում

Արհեստական բանականության կիրառմամբ կարելի է ավտոմատացնել տեսահսկման համակարգերը՝ իրական ժամանակում հայտնաբերելով անձանց իրենց կասկածելի գործողություններով: Օրինակ՝ արհեստական բանականությունը կարող է օգնել հայտնաբերել անձանց տարօրինակ պահվածքը հասարակական վայրերում կամ ապահովել ֆիզիկական օբյեկտների անվտանգությունը:

4. Մեքենայական ուսուցում և վարքագծի վերլուծություն

Մեքենայական ուսուցման ալգորիթմները կարող են օգտագործվել հանցագործների վարքագիծը վերլուծելու և կանխատեսելու համար, օրինակ՝ պարզելու, թե ինչպես են նրանք փոխազդում որոշակի միջավայրում կամ

ինչպես են գործում հանցավոր խմբերը: Սա կարող է օգտակար լինել թմրամիջոցների ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցավորության և կիբերհանցագործությունների դեմ պայքարում:

5. Խաբեությունների և ֆինանսական հանցագործությունների կանխարգելում

Արհեստական բանականությունը կարող է օգտագործվել ֆինանսական ոլորտում չարաշահումներն ու կեղծիքները հայտնաբերելու համար: Մեքենայական ուսուցման մոդելները կարող են վերլուծել ֆինանսական գործարքները՝ արձանագրելով հնարավոր խաբեություններն ու կասկածելի գործարքները: Օրինակ՝ բանկային քարտերի տվյալների վերլուծության միջոցով արհեստական բանականությունը կարող է կանխել ֆինանսական բնույթի հանցագործությունները:

6. Կիբերհանցագործությունների դեմ պայքար

Ըստ էության արհեստական բանականությունն ունի հսկայական պոտենցիալ կիբերհանցագործությունների կանխարգելման ոլորտում, մասնավորապես՝

– արգելափակելու կիբերհարձակումները,
– իրական ժամանակում հայտնաբերելու անվտանգային խախտումները,
– վերլուծելու կիբեռմիջավայրի սպառնալիքները:

Օրինակ՝ արհեստական բանականությունը կարող է վերլուծել ցանցային երևույթները, հայտնաբերել կասկածելի գործողություններն ու արգելափակել կիբերհարձակումները:

7. Բնական լեզվի մշակում (NLP) (Guida, Mauri, 1986, էջ 1026–1035)

Արհեստական բանականության վրա հիմնված բնական լեզվի մշակումը (անգլ.՝ Natural Language Processing) կարող է վերլուծել տարբեր տեքստեր, հաղորդագրություններ, էլեկտրոնային նամակներ և սոցիալական մեդիա հաղորդագրություններ՝ հայտնաբերելով հանցագործության կատարման դրդապատճառները, սպառնալիքները, ինչպես նաև հանցագործների միջև հնարավոր շփումները:

8. Դիմանկարների ավտոմատացում և կենսաչափական նույնականացում

Արհեստական բանականությունը լայնորեն կարող է կիրառվել նաև դեմքի ճանաչման տեխնոլոգիաներում, ինչը թույլ կտա իրավապահ մարմիններին կենսաչափական տվյալների օգտագործմամբ արագ նույնականացնել կասկածելի անձանց կամ նրանց գտնվելու վայրերը:

Հիշյալ ոլորտները սպառիչ չեն և դրանց շրջանակը կարելի է էլ ավելի ընդլայնել՝ ելնելով գործունեության տեսակից և առաջադրված խնդիրների պահանջներից:

Այսպիսով, միանշանակ է, որ արհեստական բանականության գործիքների ճշգրիտ կիառությունը կարող է կարևոր դերակատարում ունենալ հանցագործությունների, ինչու չէ նաև հանցավորության կանխարգելման աշխատանքներում:

Մինչդատական վարույթի ընթացքում արհեստական բանականության գործիքների կիրառության հնարավորությունները:

Մինչդատական վարույթի ընթացքում արհեստական բանականության գործիքների կիրառումը կարող է նպաստել գործերի ավելի արդյունավետ և օպերատիվ քննությանը: Արհեստական բանականության գործիքները կարող են օգտակար լինել բոլոր փուլերում՝ սկսած նախնական տվյալների վերլուծությունից մինչև որոշումների կայացում և ռիսկերի գնահատում: Ստորև ներկայացնենք մի քանի ուղղություններ, որտեղ արհեստական բանականությունը կարող իր կիրառությունն ունենալ.

1. Տվյալների և փաստաթղթերի վերլուծություն

Մինչդատական վարույթի ընթացքում մեծ ծավալի փաստաթղթեր, ապացույցներ և տվյալներ են հավաքվում, որոնց վերլուծությունը կարող է ժամանակատար և բարդ լինել: Արհեստական բանականության կիրառությունը կարող է ավտոմատացնել փաստաթղթերի վերամշակման գործընթացը՝ արագացնելով դրանց բովանդակության ուսումնասիրությունը: Բացի այդ, արհեստական բանականությունը կարող է վերլուծել մեծ ծավալի տվյալներ՝ արագ գտնելով համապատասխան տեղեկությունները: Ներկայացված օրենսդրական կամ նախադեպային որոշումների առկայության պարագայում արհեստական բանականությունը կարող է վերլուծել գործի առանձնահատկությունները և առաջարկել համապատասխան իրավական փաստարկներ և ինքնատիպ լուծումներ:

2. Ավտոմատացված փնտրողական հետազոտություն

Արհեստական բանականության գործիքները, ինչպիսիք են իրավական որոնման և իրավական վերլուծության ծրագրերը, կարող են օգտագործվել օրենքների, որոշումների, նախադեպերի և այլ իրավական փաստաթղթերի արդյունավետ որոնման համար: Օրենսդրական բարդ և բազմակողմ կարգավորումների պարագայում արհեստական բանականությունը կարող է օգնել արագ գտնել պահանջվող ճշգրիտ տեղեկությունները:

3. Ռիսկերի գնահատում

Արհեստական բանականությունը կարող է կիրառվել ռիսկերի գնահատման համար, հատկապես, երբ խոսքը վերաբերում է կալանքի և դրանից ազատման ռիսկերին: Օրինակ՝ արհեստական բանականությունը կարող է վերլուծել տվյալներ՝ կապված մեղադրյալի անցյալի, սոցիալական վարքագծի և քրեական պատմության հետ. տրամադրել կանխատեսումներ այն մասին, թե որքանով է հավանական, որ անձը կրկին կկատարի հանցագործություն կամ կխուսափի դատաքննությունից:

4. Հանրային պաշտպանություն և իրավաբանական խորհրդատվություն

Արհեստական բանականությունը կարող է կիրառվել իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու նպատակով, մասնավորապես այն դեպքերում, երբ քաղաքացիները չունեն հասանելիություն պրոֆեսիոնալ իրավաբանական ծառայություններին: Առցանց հարթակներում օգտատերերի հարցերի և գործի մանրամասների վերաբերյալ արհեստական բանակա-

նությունը կարող է տրամադրել լայն սպեկտորի իրավական բնույթի խորհուրդներ:

Ավտոմատացված համակարգերը կարող են վերլուծել գործի հանգամանքները, նախկին դատական գործերը և փաստաբանական գործունեության մեթոդները և առաջարկել համապատասխան ռազմավարություններ:

5. Արդարադատության նկատմամբ կողմնակալության նվազեցում

Մինչդատական փուլում դատավարական սխալները կարող են ազդել օբյեկտիվ որոշումների կայացման վրա: Արհեստական բանականության գործիքները կարող են օգտագործվել առավելապես արդար որոշումների կայացման համար՝ նվազեցնելով սուբյեկտիվ գնահատման հավանականությունը:

6. Կիբերհանցագործությունների վերաբերյալ գործերի քննություն

Արհեստական բանականությունը կարող է կիրառվել կիբերհանցագործությունների քննության համար՝ վերլուծելով էլեկտրոնային բնույթ կրող ապացույցները, ցանցային տվյալները: Մասնավորապես, հնարավոր է բացահայտել հանցագործության բաղադրիչ տարրեր կամ այլ ապացույցներ, որոնք կարող են աննկատ լինել մեծածավալ տվյալներում:

Կիբերհանցագործությունների ոլորտում արհեստական բանականությունը կարող է կանխատեսել նաև հնարավոր սպառնալիքները՝ հիմնված նախկինում կատարված հարձակումների վերլուծության վրա:

7. Տեսաձայնագրությունների վերլուծություն

Արհեստական բանականությունը կարող է ինքնաշխատ եղանակով վերլուծել ձայնագրությունները, տեսանյութերը և հայտնաբերել անհրաժեշտ տվյալներ, գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ: Օրինակ՝ արհեստական բանականության միջոցով կարելի է վերլուծել հարցաքննությունների տեսաձայնագրությունները, հարցերին տրված պատասխանների տրամաբանական լինելու հանգամանքը պարզելու համար: Կարելի է վերլուծել նաև հարցաքննվողի ձայնային տվյալները, պարզելու վերջինիս հուզական վիճակները:

Այս ամենով հանդերձ պետք է փաստենք, որ մինչդատական վարույթի ընթացքում արհեստական բանականության կիրառության հնարավորություններն այսքանով չեն սահմանափակվում: Փաստ է, որ այս գործիքների կիրառությունը կարող է մեծապես նպաստել քննության արդյունավետության բարձրացմանն ու արդարադատության իրականացմանը:

Դատական վարույթի ընթացքում արհեստական բանականության գործիքների կիրառության հնարավորությունները:

Դատական վարույթի ընթացքում արհեստական բանականության գործիքների կիրառումը կարող է զգալիորեն բարձրացնել արդարադատության համակարգի գործունեության արդյունավետությունը և նպաստել որոշումների ավելի օբյեկտիվ և ժամանակին կայացմանը: Արհեստական բանականությունը կարող է օգտագործվել տվյալների վերլուծության, ապացույցնե-

րի գնահատման, որոշումների ավտոմատացման և դատական գործընթացների արագացման համար: Ահա մի քանի հիմնական հնարավորություններ, որտեղ արհեստական բանականությունը կարող է կիրառվել դատական վարույթի ընթացքում.

1. Ավտոմատացված իրավաբանական հետազոտություն

Դատավարության ընթացքում արհեստական բանականության գործիքները կարող են օգնել վերլուծել նախադեպեր, օրենսդրական ակտեր և դատական որոշումներ՝ դատավորներին առաջարկելով անհրաժեշտ իրավական տեղեկություններ: Արհեստական բանականությունը կարող է աջակցել նաև դատական նիստերի ընթացքում՝ արագ գտնելով գործին վերաբերվող իրավական ակտերը, դրանց առանձին կարգավորումները, ինչպես նաև ժամանակի ընթացքում դրանցում կատարված փոփոխություններն ու լրացումները:

2. Ավտոմատացված դատական որոշումների վերանայում

Արհեստական բանականությունը կարող է կիրառվել որոշումների, վարույթի նյութերի վերանայման և վերլուծության համար: Մասնավորապես, այն կարող է ավտոմատացնել դատական փաստաթղթերի վերլուծության գործընթացը՝ օգնելով կողմերին և դատավորներին վերլուծել բարդ փաստարկները և դրանց իրավական կարգավորումները: Բացի այդ, արհեստական բանականությունը կարող է վերլուծել տարբեր գործերով կայացված որոշումները՝ գնահատելով դրանց համապատասխանությունը օրենքին և նախադեպային իրավունքի դրույթներին:

3. Ապացույցների գնահատում և վերլուծություն

Դատական վարույթի ընթացքում արհեստական բանականությունը կարող է օգնել ապացույցների վերլուծության գործընթացում, մասնավորապես, երբ անհրաժեշտ է ուսումնասիրել մեծ ծավալի տվյալներ: Օրինակ՝ թվային ապացույցների (էլեկտրոնային նամակներ, սոցիալական ցանցերի տվյալներ) ուսումնասիրությունը արհեստական բանականության միջոցով կարող է օգտակար լինել ապացույցների ավելի արագ և օբյեկտիվ գնահատման գործում:

Արհեստական բանականությունը կարող է կիրառվել նաև տեսաձայնագրությունների վերլուծության համար, կարող է օգնել վերականգնել վնասված փաստաթղթերը, տեսաձայնագրությունները, ապահովել ավելի բարձր որակ և ամբողջականություն:

4. Կողմնակալության նվազեցում

Դատական գործընթացի վրա կարող է իր ազդեցությունն ունենալ մարդու սուբյեկտիվ կողմնակալ վերաբերմունքը: Առավելապես հիմնվելով փաստերի և տվյալների վերլուծության արդյունքների վրա, արհեստական բանականության գործիքները կարող են օգնել նվազեցնել որոշումների կայացման ընթացքում մարդկային գործոնը կամ կողմնակալ մոտեցումը: Այդպիսով, գնահատելով տվյալների հիման վրա ռիսկերն ու կանխատեսումները, այն կարող է ապահովել կայացվող որոշումների առավել օբյեկտիվությունը:

5. Դատական նիստերի ավտոմատացում

Արհեստական բանականությունը կարող է ավտոմատացնել որոշակի գործընթացներ դատական նիստերի ընթացքում, ինչպիսիք են՝ փաստաթղթերի կազմումը, նիստերի իրականացման ընթացակարգերի վերահսկումը: Արհեստական բանականությունը նիստերի ավարտից անմիջապես հետո, դատավորների աշխատանքը հեշտացնելու նպատակով, կարող է իրական ժամանակում ստեղծել նիստերի տեքստային սղագրությունները: Բացի այդ, արհեստական բանականությունը կարող է գործերի կառավարման ավտոմատացման միջոցով օգնել դատական վարույթի պատշաճ իրականացմանը, մասնավորապես՝ տեղեկացնել դատական նիստերի ժամկետների մասին, կամ ինքնաշխատ եղանակով վարել փաստաթղթաշրջանառությունը:

6. Ռիսկերի և կանխատեսումների վերլուծություն

Արհեստական բանականության գործիքները կարող են կիրառվել նաև ռիսկերի գնահատման համար, մասնավորապես՝ դատական վճիռներ կայացնելուց առաջ: Այն կարող է գնահատել մեղադրյալի վարքագիծը, անցյալը և կանխատեսել կրկին անգամ հանցագործություն կատարելու ռիսկերը կամ նրան ազատ արձակելու դեպքում հնարավոր վտանգները:

Այն կարող է նաև տվյալների վերլուծության վրա հիմնվելով եզրահանգումներ ներկայացնել, թե որ խափանման միջոցները կարող են ավելի արդարացված և կիրառելի լինել տվյալ գործի շրջանակներում:

7. Միջնորդությունների և դատական հարցումների ինքնաշխատ վերլուծություն

Արհեստական բանականությունը կարող է նաև նախկինում քննված նմանատիպ գործերի հետ համեմատականներ անցկացնելով, վերլուծել դատավարության ընթացքում ներկայացված բազմաթիվ միջնորդությունները: Այն կարող է տրամադրել լուծումներ նախկինում արված նմանատիպ միջնորդությունների վերաբերյալ: Արհեստական բանականությունը կարող է օգտագործվել նաև վերլուծությունների արդյունքներով դատարանին հասցեագրված հարցումներին պատասխանելու նպատակով:

8. Վկաների հարցաքննության վերլուծություն

Արհեստական բանականության գործիքների կիրառությունը կարող է օգտակար լինել նաև վկաների հարցաքննությունների ժամանակ՝ վերլուծելով նրանց խոսքի առանձնահատկությունները, հույզերն ու տրամադրությունը՝ պարզելու, թե որքանով են դրանք հավաստի և համահունչ գործի փաստերին: Արհեստական բանականությունը կարող է վերլուծել վկաների վարքագիծը՝ փորձելով հայտնաբերել նրանց խոսքի մեջ հնարավոր կեղծիքներն ու անճշտությունները: Արհեստական բանականության գործիքները կարող են գնահատել վկաների պատասխանների տրամաբանությունը և պարզել, թե որքանով են դրանք համապատասխանում գործի այլ տվյալներին:

9. Տեղեկատվության հասանելիություն և արագացում

Արհեստական բանականությունը կարող է ավելի արագ և ավելի համակարգված ձևով տեղեկատվություն տրամադրելով արագացնել դատարանում ներկայացվող փաստարկների և ապացույցների հասանելիությունը:

Դատավարության ընթացքում այն կարող է ապահովել անհրաժեշտ տեղեկությունների արագ որոնում և մատչելիություն՝ օգնելով կողմերին կամ դատավորներին հասնել ավելի օպերատիվ որոշումների կայացման:

Այս ամենով հանդերձ պետք է նկատի ունենալ, որ արհեստական բանականությունը աշխատում է մեծածավալ աղբյուրների հետ, ինչը պահանջում է ապահովել բարձր մակարդակի տվյալների ճշգրտություն, գաղտնիություն և հատկապես անվտանգություն:

Արհեստական բանականության գործիքների կիրառումը դատական վարույթի ընթացքում կարող է զգալիորեն բարձրացնել արդարադատության արդյունավետությունը, սակայն անհրաժեշտ է շարունակաբար վերահսկել դրանց կիրառման թե՛ բարոյական, թե՛ իրավական կողմերը՝ ապահովելով արդարադատության պատշաճ իրականացումը:

Ինչ խոսք, ներկայացված ոլորտներում հիշյալ հնարավորությունների կիրառության վերլուծությունը շատ դեպքերում կրկնվող կամ նույնական կարող է թվալ: Սակայն, եթե հաշվի առնենք, որ ասվածը վերաբերում է յուրօրինակ առանձնահատկություններով օժտված տարբեր փուլերին, մեր կարծիքով, տեղին է արհեստական բանականության գործիքներից յուրաքանչյուրը դիտարկել հատկապես կոնկրետ ոլորտին բնորոշ խնդիրների առավել արդյունավետ լուծման համատեքստում:

Եզրակացություն

Ելնելով ներկայացված հետազոտության տրամաբանական արդյունքներից, Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխան գերատեսչությունների կողմից արհեստական բանականության կիրառության պատշաճ գործընթացն ապահովելու նպատակով, առաջարկվում է.

1. Որպես իրավական ապահովման միջոց՝ առաջին հերթին համապատասխան միջազգային փաստաթղթերի անդամակցության նպատակով, նախաձեռնել անհրաժեշտ ներպետական գործընթաց:

2. Միջազգային փաստաթղթերի վավերացման ավարտից հետո իրականացնել ընդունված չափորոշիչներին համապատասխան օրենսդրական, ինչպես նաև գործնական, այդ թվում՝ պատասխանատու անձանց կողմից գիտելիքների ձեռքբերմանն ուղղված քայլեր:

3. Հանցագործությունների կանխարգելման գործընթացի ավտոմատացման, ինչպես նաև՝ մինչդատական և դատական վարույթների առավելագույն արդյունավետությունն ապահովելու նպատակով մշակել և ընդունել նորագույն տեխնոլոգիաների կիրառությունն ապահովող գերատեսչական ակտեր:

4. Քննարկվող ոլորտներում արհեստական բանականության գործիքների կիրառության հնարավոր գույքագրումից հետո, լոկալ մակարդակներում ներդնել անհրաժեշտ տեխնիկածրագրային միջոցներ:

Այս ամենով հանդերձ անհրաժեշտ է նաև, համապատասխան միջազգային չափորոշիչների պահպանման, ինչպես նաև անձանց իրավունքների պատշաճ իրացման ապահովման նպատակով, որպես պարտադիր պահանջ,

առանձնահատուկ ուշադրություն դարձնել նորագույն տեխնոլոգիաների ներդրման ռիսկերի գնահատման և համակարգերի գործարկման անվտանգային բաղադրիչներին:

Օգտագործված գրականության ցանկ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք»: Ընդունվել է 30.06.2021թ.: ՀՕ-306-Ն: ՀՀՊՏ: 2021թ. Հոդ. 214, 243, 245-249, 327:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք»: Ընդունվել է 27.05.2021թ.: ՀՕ-199-Ն: ՀՀՊՏ № 28, մաս 1-ին: 2021թ. Հոդ. 2:

Բարսեղյան, Գ., *Արհեստական բանականության քրեական պատասխանատվություն. տեսական և կիրառական ասպեկտներ // Օրինականություն № 121, 2021, էջեր 17-25:*

Թևոսյան, Լ., *Արհեստական բանականության իրավական կարգավորման հիմնախնդիրները հեղինակային իրավունքի համատեքստում // Օրինականություն № 116, 2020, էջեր 65-70:*

ՀՀ ոստիկանության պետի 2013 թվականի մարտի 15-ի թիվ 777-Ա հրաման

Սիմոնյան, Ս., *Հեղինակային իրավունքի փարածումը արհեստական բանականության օգտագործմամբ ստեղծված աշխատանքների նկատմամբ // Օրինականություն № 122, 2021, էջեր 28-32:*

Սիմոնյան, Տ., *Իրավաբանի գործնական մարտահրավերները XXI դարում. արհեստական բանականություն // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1), 2018, էջեր 34-45:*

Սուքիասյան, Ն., *Արհեստական բանականությունը և դրա իրավական կարգավորման որոշ հարցերը // Օրինականություն № 131, 2022, էջեր 72-78:*

Քիսինջեր, Հ., Շմիդտ, Է., Հաթենլոքեր, Դ., (2024) *// Արհեստական բանականությունը և մարդկության ապագան. - Եր.: Newmag, 2024. - 272:*

Бахтеев, Д.В. (2022). *Концептуальные основы теории криминалистического мышления и использования систем искусственного интеллекта в расследовании: Дисс. ... докт. юрид. наук. Екатеринбург.*

Бадмаева, М.Х. (2023). *Социально-философские проблемы и принципы применения систем искусственного интеллекта: Дисс. ... канд. юрид. наук. Улан-Удэ.*

Закарайя, А., (2019). *Homo Futurus. Облачный Мир: эволюция сознания и технологий / Москва: Издательство «АСТ» 368:*

Кондюрина, Ю.А. (2020). *Принципы цивилистического процесса в системе электронного правосудия: Дисс. ... канд. юрид. наук. Саратов.*

Луконина, Ю.А. (2023). *Цифровая цивилистическая процессуальная форма: теоретико-прикладные аспекты: Дисс. ... канд. юрид. наук. Саратов.*

Марченко, А.Ю. (2022). *Правовой анализ новейшего законодательства ЕС о применении технологий искусственного интеллекта: Дисс. ... канд. юрид. наук. М.*

Щитова, А.А. (2022). *Правовое регулирование информационных отношений по использованию систем искусственного интеллекта: Дисс. ... канд. юрид. наук. М.*

Council of Europe Framework Convention on Artificial Intelligence and Human Rights, Democracy and the Rule of Law: https://rm.coe.int/1680afae3c (վերջին մուտք՝ 14.10.2024):

EUCPN (2022). *Artificial intelligence and predictive policing: risks and challenges. Brussels: EUCPN.*

Guida, G., Mauri, G. (1986). *"Evaluation of natural language processing systems: Issues and approaches," inProceedings of the IEEE, vol. 74, no. 7, pp. 1026-1035, July 1986, doi: 10.1109/PROC.1986.13580.*

The European Union AI Act: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32024R1689 (վերջին մուտք՝ 14.10.2024):

References

«Hayastani Hanrapetutyan kreakan orensgirk» [Criminal Code of the Republic of Armenia]. Yndunvel e 27.05.2021t.. HO-199-N. HHPT № 28, mas 1-in. 2021t. Hod. 2. (In Arm.)

«Hayastani Hanrapetutyan kreakan datavarutyan orensgirk» [Criminal Procedure Code of the Republic of Armenia]. Yndunvel e 30.06.2021t.. HO-306-N. HHPT. 2021t. Hod. 214, 243, 245-249, 327. (In Arm.)

HH vostikanutyan peti 2013 tvakani marti 15-i tiv 777-A hraman [Order No. 777-A of the RA Police Chief] (In Arm.)

Kisinjer, H., Shmidt, E., Hatenloker, D., (2024) // Arhestakan banakanutyuny yev mardkutyan apagan. [Artificial Intelligence and the Future of Humanity] - Yer.. Newmag, 2024. - 272: (In Arm.)

Barseghyan, G., Arhestakan banakanutyan kreakan pataskhanatvutyun. tesakan yev kirarakan aspektner [Criminal liability of artificial intelligence. theoretical and applied aspects] // Orinakanutyun № 121, 2021, ejer 17-25. (In Arm.)

Tevosyan, L., Arhestakan banakanutyan iravakan kargavorman himnakhndirnery heghinakayin iravunki hamatekstum [Problems of legal regulation of artificial intelligence in the context of copyright] // Orinakanutyun № 116, 2020, ejer 65-70. (In Arm.)

Simonyan, S., Heghinakayin iravunki taratsumy arhestakan banakanutyan ogtagortsmamb steghtsvats ashkhatankneri nkatmamb [Spread of copyright to works created using artificial intelligence] // Orinakanutyun № 122, 2021, ejer 28-32. (In Arm.)

Simonyan, T., Iravabani gortsnakan martahravernery XXI darum. arhestakan banakanutyun [Practical challenges of a lawyer in the XXI century. artificial intelligence] // YePH iravagitutyan fakulteti profesoradasakhosakan kazmi gitazhoghovi nyuteri zhoghovatsu, 1(1), 2018, ejer 34-45. (In Arm.)

Sukiasyan, N., Arhestakan banakanutyuny yev dra iravakan kargavorman vorosh hartsery [Artificial intelligence and some issues of its legal regulation] // Orinakanutyun № 131, 2022, ejer 72-78. (In Arm.)

Bahteev, D.V. (2022). Konceptualnye osnovy teorii kriminalisticheskogo myshleniya i ispolzovaniya sistem iskusstvennogo intellekta v rassledovanii [Conceptual foundations of the theory of criminalistic thinking and the use of artificial intelligence systems in investigation]: Diss. ... dokt. yurid. nauk. Ekaterinburg. (In Rus.)

Badmaeva, M.H. (2023). Socialno–filosofskie problemy i principy primeneniya sistem iskusstvennogo intellekta [Social–philosophical problems and principles of application of systems of artificial intelligence]: Diss. … kand. yurid. nauk. Ulan–Ude. (In Rus.)

Zakaraja, A., (2019). Homo Futurus. Oblachnyj Mir: evolucia soznania i tehnologij [Homo Futurus. Cloudy World. evolution of consciousness and technology] / Moskva: Izdatelstvo «AST» 368: (In Rus.)

Kondurina, U.A. (2020). Principy civilisticheskogo processa v sisteme elektronnogo pravosudiya [Principles of the civil process in the system of electronic justice]: Diss. … kand. yurid. nauk. Saratov. (In Rus.)

Lukonina, U.A. (2023). Cifrovaya civilisticheskaya processualnaya forma: teoretiko–prikladnye aspekty [Digital civil procedural form. theoretical and practical aspects]: Diss. … kand. yurid. nauk. Saratov. (In Rus.)

Marchenko, A.U. (2022). Pravovoj analiz novejshego zakonodatelstva ES o primenenii tehnologij iskusstvennogo intellekta [Legal analysis of the latest legislation of the EU on the application of artificial intelligence technologies]: Diss. … kand. yurid. nauk. M. (In Rus.)

Sitova, A.A. (2022). Pravovoe regulirovanie informacionnyh otnoshenij po ispolzovaniyu sistem iskusstvennogo intellekta [Legal regulation of information relations on the use of artificial intelligence systems]: Diss. … kand. yurid. nauk. M. (In Rus.)

Council of Europe Framework Convention on Artificial Intelligence and Human Rights, Democracy and the Rule of Law: https://rm.coe.int/1680afae3c (accessed: 14.10.2024):

EUCPN (2022). *Artificial intelligence and predictive policing: risks and challenges. Brussels: EUCPN.*

Guida, G., Mauri, G. (1986). *"Evaluation of natural language processing systems: Issues and approaches," inProceedings of the IEEE, vol. 74, no. 7, pp. 1026–1035, July 1986, doi: 10.1109/PROC.1986.13580.*

The European Union AI Act: https://eur–lex.europa.eu/legal–content/EN/TXT/?uri=CELEX–%3A32024R1689 (accessed:

Акоп Петросян
Преподаватель кафедры права
международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент
Эл. адрес: hakob.petrosyan@eiu.am

ПРИМЕНЕНИЕ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА В ПРОФИЛАКТИКЕ И РАССЛЕДОВАНИИ ПРЕСТУПЛЕНИЙ

В статье рассматриваются возможности применения инструментов искусственного интеллекта, которые пользуются большим общественным спросом на текущем этапе развития человечества, для предотвращения преступлений и реализации уголовных производств. Основное внимание

уделяется их применению в трех отдельных процессах или этапах уголовного судопроизводства: в профилактической работе по борьбе с преступностью, в досудебных и судебных производствах. Проведенное исследование и результаты анализа приводят нас к выводу, что использование максимальных возможностей предлагаемых инструментов значительно повысит эффективность правоохранительных органов.

Ключевые слова: предотвращение преступлений, системы прогнозирования преступлений, искусственный интеллект, аналоговое мышление, система алгоритмов, цифровое мышление.

Hakob Petrosyan
Lecturer of the Law Department at
Eurasia International University,
Ph. D. in Law, Associate Professor
Email: hakob.petrosyan@eiu.am

APPLICATION OF ARTIFICIAL INTELLIGENCE IN CRIME PREVENTION AND INVESTIGATION PROCESSES

The article addresses the possibilities of applying artificial intelligence tools, which are in high public demand at the current stage of humanity's development, for crime prevention and the implementation of criminal proceedings. Their use is primarily considered in three separate processes or stages of criminal proceedings: general preventive work against crime, pre–trial, and trial proceedings. Based on the research and analysis, we conclude that applying the maximum potential of these tools will significantly increase the efficiency of law enforcement agencies.

Key words: crime prevention, crime prediction systems, artificial intelligence, analog thinking, algorithm systems, digital thinking.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. հոկտեմբերի 20–ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 4–ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26–ին:

Գևորգ Իսրայելյան
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ gevorg.israyelyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2024.2-40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հեղինակի հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական գործունեության իրավական հիմքերն ունեն կարգավորման թերություններ, մասնավորապես՝ վարչական իրավունքի կարգավորման ոլորտում: Բացի այդ, ներկայումս չկա մեկ միասնական նորմատիվ իրավական ակտ, որը փորձագիտական գործունեության համար հիմնարար նշանակություն ունենա, սահմանի հիմնական հասկացությունները, կարգավորի փորձաքննությունների նշանակման, կազմակերպման, անցկացման ընդհանուր մոտեցումները, բեռնաթափի ճյուղային օրենսդրությունն անհարկի նույնաբանական կարգավորումներից, ունենա ավելի լայն ընդգրկվածություն՝ ներառելով նաև արտադատական փորձաքննությունների տեսակները:

Նշված իրավիճակի շտկման համար առաջարկությունների ներկայացմանն է ուղղված սույն հետազոտությունը:

Հիմնաբառեր. փորձագիտական գործունեություն, իրավական հիմքեր, վարչական վարույթ:

Ներածություն

Փորձագիտական գործունեության իրավական հիմքերը բազմազան են, դրանց թվին են դասվում դատավարական օրենսդրությունը, նորմատիվ իրավական այլ ակտերը: Մեր հետազոտության արդյունքները հավաստում են, որ

իրավական հիմքերն ունեն կարգավորման թերություններ, մասնավորապես՝ վարչական իրավունքի կարգավորման ոլորտում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում ներկայումս չկա մեկ միասնական նորմատիվ իրավական ակտ, որը հիմնարար նշանակություն ունենա փորձագիտական գործունեության համար, սահմանի հիմնական հասկացությունները, կարգավորի փորձաքննությունների նշանակման, կազմակերպման, անցկացման ընդհանուր մոտեցումները, բեռնաթափի ձյուղային օրենսդրությունն անհարկի նույնաբանական կարգավորումներից, ունենա ավելի լայն ընդգրկվածություն՝ ներառելով նաև արտադատական փորձաքննությունների տեսակները:

Սույն հետազոտության նպատակն է փորձագիտական գործունեության իրավական հիմքերի թերությունների վերհանումը, իսկ խնդիրն է ստեղծված իրավիճակի շտկմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Մեթոդը

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել վերլուծության, ձևական իրավական և տրամաբանական մեթոդները:

Փորձագիտական գործունեության իրավական կարգավորման առկա խնդիրները

Որպես հանցագործությունների և օրենքի այլ խախտումների դեմ պայքարին օժանդակող սոցիալական գործունեության յուրահատուկ տեսակ՝ փորձագիտական գործունեությունն ունի դատավարական, վարչական վարութային և այլ իրավական հիմքեր:

Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական գործունեության իրավական հիմքերին դասվում են դատավարական օրենսդրությունը, այդ թվում՝ Քրեական դատավարության օրենսգիրքը, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, Վարչական դատավարության օրենսգիրքը, ինչպես նաև «Ոստիկանության մասին» օրենքը և այլ նորմատիվ իրավական ակտեր:

Նշվածից ակնհայտորեն բխում է, որ այս պահին Հանրապետությունում փորձագիտական գործունեության իրավական հիմքերի ցանկը չի ներառում մեկ միասնական այնպիսի նորմատիվ իրավական ակտ, որն ունենա հիմնարար նշանակություն, սահմանի հիմնական հասկացությունները և կարգավորի փորձագիտական գործունեության ընդհանուր հարցերը, ունենա ավելի լայն ընգրկվածություն՝ ներառելով փորձաքննության արտադատական տեսակները, հնարավորություն տա բեռնաթափել ձյուղային օրենսդրությունը նույնաբանական կարգավորումներից: Այսպես, հիշատակված ակտի առկայության դեպքում կվերանա տարբեր նորմատիվ իրավական ակտերում փորձագետի հասկացությունը, կարգավիճակը, փորձաքննությունների տեսակները նախատեսող և կոնկրետ բնագավառի համար առանձնահատկություններ չունեցող այլ հարաբերությունները կարգավորող նորմերի կրկնության անհրաժեշտությունը, կբացառվի միևնույն հասկացությունների (օրինակ՝ ապացույցների) տարբեր ձևակերպումների առկայությունը՝ ապա-

հովելով միատեսակ եզրութաբանություն:

Հանուն արդարության անհրաժեշտ է հիշատակել, որ «Դատափորձագիտական գործունեության մասին» օրենք ընդունելու փորձ արվել է: Համանուն նախագիծը, որը շրջանառության մեջ էր դրվել 2023 թվականի դեկտեմբեր ամսին, առաջարկում էր կարգավորել դատափորձագիտական հաստատությունների և դատական փորձագետների իրավական կարգավիճակը, դատափորձագիտական գործունեության հետ կապված իրավական և կազմակերպական հարցերը: Սակայն նախագիծն ուներ կարգավորման թերություններ (Израелян, 2024, էջ 149): Այլ թերություններից բացի, մեր կարծիքով, ակնհայտ են հետևյալ բացթողումները.

1. Նախատեսված չէ իրավապահ վարչական վարույթներում փորձաքննությունների նշանակման և անցկացման հարցը, մինչդեռ վարչական (նյութական) իրավունքը պարունակում է փորձաքննություն նշանակելու լիազորություն սահմանող նորմեր: Օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 272-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ փորձագետ նշանակում է այն մարմինը (պաշտոնատար անձը), որի վարույթում գտնվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, այն դեպքում, երբ հատուկ գիտելիքների անհրաժեշտություն է զգացվում:

2. Նախատեսված չէ քրեաբանական փորձաքննության նշանակման և անցկացման հարցը:

Հայտնի է, որ հանցավորությունը պայմանավորում են բնույթով տարբեր գործոններ՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն: Տարբեր հանգամանքներով պայմանավորված այդ գործոնների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում իրավական բնույթի դետերմինանտները՝ օրենսդրության ժամանակավրեպ լինելը, իրավական ակտերում բացերի և կանոնակարգման թերությունների, քրեածին և զոհածին վտանգներ պարունակող կարգավորումների առկայությունը և այլն (Իսրայելյան, 2019, էջ 48, Шевчук, 2019, էջ 184): Դրանց դեմ պայքարի արդի գործիքներից է իրավական ակտերի քրեաբանական փորձաքննությունը: Այն իրավական ակտերի նախագծերի և հանցավորության դետերմինանտների ու կանխարգելման միջև փոխադարձ կապի բացահայտման նպատակով անցկացվող էմպիրիկ քրեաբանական հետազոտություն է, որը որոշակի մեթոդներով իրականացվում է հատուկ գիտելիքներ և իրավասություն ունեցող մարմինների կողմից՝ այնպիսի իրավական ակտերի ընդունման համար, որոնք կնպաստեն հանցավորության քանակական ցուցանիշների նվազմանը և ինքնավերարտադրմանը խոչընդոտելուն (Осипова, 2008, էջ 116):

Հայաստանի Հանրապետությունում քրեաբանական փորձաքննության կարգավորմանն են նվիրված «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 22.07.2004թ. № 1127-Ն որոշման մի քանի դրույթներ: Այսպես, նշված որոշման

3-րդ կետի «է» ենթակետի կարգավորումների համաձայն՝ Փորձաքննությունների ազգային բյուրոյի նպատակներից է իրավաստեղծ լիազորություններ ունեցող մարմինների որոշմամբ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննությունների կազմակերպումը և իրականացումը:

Իհարկե, թվարկված փորձաքննությունները չեն դասվում դատական փորձաքննությունների շարքին, սակայն դրանք իրավապահ գործունեությանն օժանդակելու կարևոր գործառույթ են իրականացնում, ուստի միասնական ակտում կարգավորման անհրաժեշտությունը զգացվում է:

Փորձագիտական գործունեության կարգավորման բացեր կան նաև գործող իրավակարգավորումներում: Խոսքը, մասնավորապես, վարչական (նյութական) օրենսդրության համապատասխան կարգավորումների մասին: Ինչպես վերը նշվեց, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 272-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ փորձագետ նշանակում է այն մարմինը (պաշտոնատար անձը), որի վարույթում գտնվում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, այն դեպքում, երբ հատուկ գիտելիքների անհրաժեշտություն է զգացվում: Համանման կարգավորում է նախատեսված նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասում: Սրանք, ըստ էության, վարչական վարույթում փորձաքննության նշանակման կարգի վերաբերյալ եզակի կարգավորումներ են, որոնք ոչ միայն մանրամասն չեն կանոնակարգում փորձաքննության կազմակերպական հարցերը, այլև աչքի են ընկնում իրենց անորոշությամբ՝ փորձաքննության նշանակման հարցը թողնելով նշանակող սուբյեկտի հայեցողությանը: Մինչդեռ որոշակի գործերով կոնկրետ հանգամանքների (օրինակ՝ ալկոհոլ, թմրամիջոց օգտագործած լինելը, պատճառված վնասի չափը և այլն) պարզման նպատակով փորձաքննության նշանակման պարտադիրությունը պետք է նախատեսել օրենքով:

Առկա խնդիրների լուծման առաջարկություններ

Վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է.

1. Խնդրո առարկա ոլորտի համար նախագծել միասնական ակտ, որը կանվանվի ոչ թե «դատափորձագիտական գործունեության», այլ «փորձագիտական գործունեության» մասին:

Հայտնի է, որ «դատափորձագիտական գործունեություն» եզրույթը մեկնաբանվում է որպես դատավարության ընթացքում կատարվող գործողությունների համակարգ, որոնք ներառում են իրավասու մարմինների կողմից դատական փորձաքննությունների նշանակման, կազմակերպման և անցկացման գործընթացը՝ կոնկրետ գործի փաստական հանգամանքների բացահայտման նպատակով: Այլ խոսքով՝ այդ գործունեությունն ուղղված է վարույթն իրականացնող մարմիններին այնպիսի փաստական տվյալներով ապահովելուն, որոնք, օրենսդրության պահանջներին համապատասխանելու դեպքում, ճանաչվում են դատական ապացույցներ և դրվում են համապատասխան դատավարական փաստաթղթի հիմքում (Ենգիբարյան, Հով-

սեփյան, 2020, էջ 8):

Սակայն, ինչպես վերը նշվեց, փորձագիտական գործունեությունն անհրաժեշտ է նաև վարչական, մասնավորապես՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով, որոնք քննվում են վարչական մարմինների կողմից:

Նմանապես, չպետք է մոռանալ նաև քրեաբանական փորձաքննության մասին: Որպես ոլորտի համար հիմնարար նշանակություն ունեցող իրավական հիմք՝ «Փորձագիտական գործունեության մասին» օրենքը պետք է ընդհանուր ձևով կանոնակարգի նաև իրավական ակտերի քրեաբանական փորձաքննությանն առնչվող հարաբերությունները: Նման կարգավորումը հիմք կհանդիսանա «Քրեաբանական փորձաքննության մասին» օրենքի ընդունման համար, որն ավելի մանրամասն կկանոնակարգի փորձաքննության այս տեսակի կապակցությամբ ծավալվող հարաբերությունները (Իսրայելյան, 2024, էջ 26):

Այլ կերպ ասած, պետք է հաշվի առնվեն փորձաքննությունների արտադատական տեսակները, որոնք օժանդակում են իրավապահ գործունեությանը:

Վերոգրյալի տրամաբանությունից ելնելով՝ դասական սուբյեկտներից բացի (մինչդատական վարույթ իրականացնող մարմին, դատարան), փորձաքննություն նշանակող սուբյեկտների թվին պետք է դասել նաև վարչական մարմիններին, ինչպես նաև իրավաստեղծ մարմիններին՝ քրեաբանական փորձաքննության նշանակման հարցերով:

2. Վարչական (նյութական) օրենսդրության համապատասխան կարգավորումների կատարելագործման համար նախատեսել լրացուցիչ նորմ, որը կկարգավորի փորձաքննության նշանակման պարտադիր դեպքերը: Իսկ մինչև վերոգրյալ օրենքի ընդունումը մանրամասն պետք է կարգավորվեն հետևյալ հարցերը.

1) փորձաքննության ուղարկվող օբյեկտների ցանկը,

2) համեմատական հետազոտության համար նմուշների նախապատրաստությունը,

3) փորձագիտական կազմակերպության ընտրության հարցը,

4) փորձաքննություն նշանակելու որոշման կայացման կարգը և այլն (Բեւ, 2015, էջ 194):

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.

1. Փորձագիտական գործունեության իրավական հիմքերը բազմազան են, դրանց թվին են դասվում դատավարական օրենսդրությունը, նորմատիվ իրավական այլ ակտերը: Մեր հետազոտության տվյալները հավաստում են, որ իրավական հիմքերն ունեն կարգավորման թերություններ: Խոսքը, մասնավորապես, վարչական (նյութական) օրենսդրության համապատասխան կարգավորումների մասին, որոնք ոչ միայն մանրամասն չեն կանոնակարգում փորձաքննության կազմակերպական հարցերը, այլև աչքի են ընկնում իրենց անորոշությամբ՝ փորձաքննության նշանակման հարցը թողնելով նշա-

նակող սուբյեկտի հայեցողությանը: Մինչդեռ որոշակի գործերով կոնկրետ հանգամանքների (օրինակ՝ ալկոհոլ, թմրամիջոց օգտագործած լինելը, պատճառված վնասի չափը և այլն) պարզման նպատակով փորձաքննության նշանակման պարտադիրությունը պետք է նախատեսել օրենքով:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում ներկայումս չկա մեկ միասնական նորմատիվ իրավական ակտ, որը փորձագիտական գործունեության համար ունենա հիմնարար նշանակություն, սահմանի հիմնական հասկացությունները, կարգավորի փորձաքննությունների նշանակման, կազմակերպման, անցկացման ընդհանուր մոտեցումները, ներառի փորձաքննության արտադատական տեսակները, բեռնաթափի ճյուղային օրենսդրությունն անհարկի նույնաբանական կարգավորումներից:

2. Վերը թվարկված խնդիրների լուծման նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է.

1) Քննարկվող ոլորտի համար նախագծել միասնական ակտ, որը կկարգավորի փորձաքննությունների նշանակման, կազմակերպման և անցկացման ընդհանուր բնույթի հարցերը, կսահմանի հիմնական հասկացությունները, կներառի փորձաքննությունների արտադատական տեսակները, որոնք օժանդակում են իրավապահ գործունեությանը, կբեռնաթափի ճյուղային օրենսդրությունն անհարկի նույնաբանական կարգավորումներից:

2) Վարչական (նյութական) օրենսդրության համապատասխան կարգավորումների կատարելագործման համար նախատեսել լրացուցիչ նորմ, որը կկարգավորի փորձաքննության նշանակման պարտադիր դեպքերը, անցկացման կարգի մանրամասները:

Օգտագործված գրականության ցանկ

«Դատաիորձագիտական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ //https://www.e-draft.am/projects/6591/about (վերջին մուտք՝ 04.01.2024):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, ընդունվել է 06.12.1985թ.: ՀՍՍՀ ԳՍՏ 1985/23:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 18.02.2004թ.: ՀՕ-41-Ն: ՀՀՊՏ 2004.03.31/18(317): Հոդ.413:

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության № 1127-Ն որոշում, ընդունվել է 22.07.2004թ.:

Ենգիբարյան Վ. Գ., Հովսեփյան Ա. Ն., Դատական փորձաքննությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները / Վ. Գ. Ենգիբարյան, Ա. Ն. Հովսեփյան. – Եր.: *ՀՀ արդարադատության ակադեմիա, 2020. – 332 էջ:*

Իսրայելյան Գ., Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննության իրավական կարգավորման կատարելագործման խնդիրը Հայաստանի Հանրապետությունում // Բանբեր Եվրասիա համալսարանի, № 1,

2024, էջեր 24–32:

Իսրայելյան Գ. Վ., Կիրառական քրեաբանության արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտագործնական ձեռնարկ: Երևան, Հեղ. հրատ., Աստղիկ գրատուն, 2019. – 192 էջ:

Исраелян Г. Некоторые вопросы совершенствования регулирования общих положений проекта закона Республики Армения «О судебноэкспертной деятельности» // Национальные и международные тенденции и перспективы развития судебной экспертизы: сборник докладов Научно-практической конференции с международным участием, г. Нижний Новгород, 22–23 мая 2024 г. Нижний Новгород: ННГУ, 2024 С. 148–151.

Рец Д. С. Применение криминалистических методов в административном производстве // Вестник КГУ им. Н.А. Некрасова № 3, 2015, 191–195.

*Осипова Е.С. Понятие и сущность криминологической экспертизы нормативно-правовых актов //*https://sun.tsu.ru/mminfo/000063105/312/image/312-113.pdf (վերջին մուտք՝ 24.09.2024):

*Шевчук Н.Н. Криминологическая экспертиза как мера предупреждения правонарушений //*Вестник Полоцкого государственного университета. Экономические и юридические науки. 2019. № 6. С. 181–188:

References

«Datapordzagitakan gortsuneutyan masin» Hayastani Hanrapetutyan orenqi nakhagits // https://www.e-draft.am/projects/6591/about (verjin mutq՝ 04.01.2024).

Varchakan iravakhakhtumneri veraberyal Hayastani Hanrapetutyan orensgirq, yndunvel e 06.12.1985t.: HSSH GST 1985/23.

«Varchararutyan himunqneri ev varchakan varuyti masin» Hayastani Hanrapetutyan orenq, yndunvel e 18.02.2004t. HO-41-N. HHPT 2004.03.31/18(317). Hod. 413.

«Hayastani Hanrapetutyan gitutyunneri azgayin akademiayi «Pordzaqnnutyunneri azgayin byuro» petakan voch arevtrayin kazmakerputyun steghtselu ev nra kanonadrutyuny hastatelu masin» Hayastani Hanrapetutyan karavarutyan № 1127-N voroshum, yndunvel e 22.07.2004t.

Engibaryan V. G., Hovsepyan A. N., Datakan pordzaqnnutyunneri tesakan ev gortsnakan ardi himnakhndirnery / V.G. Engibaryan, A. N. Hovsepyan. – Er.: HH ardaradatutyan akademia, 2020. – 332 ej:

Israyelyan G., Normativ iravakan akteri nakhagtseri qreabanakan pordzaqnnutyan iravakan kargavorman katarelagortsman khndiry Hayastani Hanrapetutyunum // Banber Evrasia hamalsarani, № 1, 2024, ejer 24–32:

Israyelyan G. V., Kirarakan qreabanutyan ardi khndirnery Hayastani Hanrapetutyunum: Gitagortsnakan dzernark: Yerevan, Hegh. hrat., Astghik gratun, 2019. – 192 ej.

Israyelyan G. Nekotorye voprosy sovershenstvovaniya regulirovaniya obshikh polojenih proekta zakona Respubliki Armenia «O sudebnoekspertnoi deyatelnosti» // Natsionalnye i mejdunarodnye tendencii i perspektivy razvitiya sudebnoi ekspertizy: sbornik dokladov Nauchno-prakticheskoi konferencii s mejdunarodnim uchastiem, g. Nijnih Novgorod, 22–23 may 2024 g. Nijnih Novgorod: NNGU, 2024 S. 148–151.

Rec D. S. Primenenie kriminalisticheskikh metodov v administrativnom proizvodstve // Vestnikестник KGU im. N.A. Nekrasovaa № 3, 2015, 191–195.

Osipova E. S. Ponyatie i shushnosth kriminologicheskoi ekspertizy normativno-pravovikh aktov //https://sun.tsu.ru/mminfo/000063105/312/image/312-113.pdf (verjin mutq՝ 24.09.2024).

Shevchuk N. N. Kriminologicheskaya ekspertiza kak mera preduprejdenia pravonarushenih // Vestnik Polochkogo gosudarstvennogo universiteta. Ekonomicheskie i yuridicheskie nauki. 2019. № 6. S. 181–188.

Геворг Исраелян
Преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент
Эл. адрес: gevorg.israyelyan@eiu.am

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРАВОВЫХ ОСНОВ ЭКСПЕРТНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Правовые основы экспертной деятельности разнообразны, к их числу относятся процессуальное законодательство и иные нормативные правовые акты. Результаты исследования автора подтверждают, что правовые основы имеют недостатки регламентирования. Речь идет, в частности, о соответствующих нормах административного (материального) законодательства, которые не только детально не регламентируют организационные вопросы экспертизы, но и отличаются своей неопределенностью, оставляя вопрос о назначении экспертизы на усмотрение назначающего субъекта. Между тем, для выяснения конкретных обстоятельств (употребление алкоголя, наркотиков, размер причиненного ущерба и т.п.) в определенных случаях обязательность назначения экспертизы должна быть закреплена в законе.

Кроме того, в настоящее время в Республике Армения не существует единого нормативного правового акта, который имел бы основополагающее значение для экспертной деятельности и регулировал общие подходы назначения, организации и проведения экспертиз, разгружал отраслевое законодательство от тавтологических понятий, предусматривал внесудебные виды экспертиз.

Для решения указанных проблем автор считает необходимым: 1) Разработать единый нормативный правовой акт, который будет регулировать основные понятия, общие вопросы назначения, организации и проведения экспертиз, включать внесудебные виды экспертиз, обеспечивающие правоохранительную деятельность, разгружать отраслевое законодательство от тавтологических понятий; 2) В целях совершенствования соответствующих норм административного (материального) законодательства предусмотреть

дополнительную норму, которая будет регулировать обязательные случаи назначения экспертизы, детали процедуры ее проведения.

Ключевые слова: экспертная деятельность, правовые основы, административное производство.

Gevorg Israyelyan
Lecturer of the Law Department at Eurasia International University,
Ph.D. in Law, Associate Professor
Email: gevorg.israyelyan@eiu.am

SOME PROBLEMS OF IMPROVING THE LEGAL BASIS EXPERT ACTIVITY IN THE REPUBLIC OF ARMENIA

The legal basis of expert activity is diverse, including procedural legislation and other regulatory legal acts. The results of the author's research confirm that the legal framework has regulatory shortcomings. In particular, the relevant norms of administrative (material) legislation not only fail to regulate the organizational aspects of expert examination in sufficient detail but also exhibit uncertainty, leaving the appointment of an examination at the discretion of the responsible authority. Meanwhile, in order to clarify specific circumstances (alcohol, drug use, the amount of damage caused, etc.), in some cases, the obligation to appoint an examination should be established by law.

In addition, at present, there is no single regulatory legal act in the Republic of Armenia that would be fundamental for expert activity, regulate general approaches to the appointment, organization, and conduct of examinations, relieve sectoral legislation from tautological concepts, and provide for non-judicial types of examinations.

To solve these problems, the author considers it necessary to: 1) develop a unified regulatory legal act that will regulate key concepts, general issues of appointment, organization and conduct of examinations, relieve sectoral legislation from tautological concepts and include non-judicial types of examinations that support law enforcement activities. 2) improve the relevant norms of administrative (material) legislation by introducing an additional provision that will regulate mandatory cases of appointing an expert examination and the details of its procedure.

Key words: expert activity, legal bases, administrative proceedings.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. նոյեմբերի 20-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 25-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Հասմիկ Հակոբյան
Երևանի պետական համալսարանի սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ռազմավարական վերլուծությունների և վերահսկողության բաժնի մասնագետ
Էլ. հասցե՝ hasmikhakobyanm95@gmail.com

DOI: 10.53614/18294952–2024.2–49

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԿԱՊԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏ. ՏԵՍԱԿԱՆ–ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրության շրջանակներում քննարկման առարկա է դարձվել սեփականության իրավունքի և կոռուպցիայի կապն ու դրանց սահմանադրաիրավական նշանակությունը: Նշյալ հիմնահարցերի համատեքստում դիտարկվել են ինչպես սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բնույթն ու այդ հարցի առնչությամբ առկա տեսական մոտեցումները, այնպես էլ կոռուպցիայի՝ որպես պետականության հիմքերը կազմալուծող երևույթի բնույթն ու դրա դեմ պայքարի սահմանադրաիրավական ասպեկտները:

Կարևորելով համալիր ուսումնասիրության իրականացման անհրաժեշտությունը՝ աշխատանքում ներկայացվել են սեփականության իրավունքի բնույթի վերաբերյալ տեսական տարբեր մոտեցումներ՝ չսահմանափակվելով սեփականության միայն սահմանադրաիրավական բնույթը մատնանշող տեսակետներով: Միևնույն ժամանակ ներկայացված տեսակետների համալիր վերլուծության արդյունքում ձևավորվել է այն մոտեցումը, որ սեփականության իրավունքն ունի սահմանադրաիրավական բնույթ, այն անմիջականորեն փոխկապակցված է կոռուպցիայի հետ, ուստի այս երկու իրողությունների բնույ-

թով պայմանավորված հարկ է ինչպես սեփականության իրավունքն, այնպես էլ դրա սահմանափակումն ու այդ համատեքստում կոռուպցիայի դեմ պայքարը դիտարկել նախ սահմանադրաիրավական համատեքստում:

Հիմնաբառեր. սեփականություն, սեփականության իրավունք, կոռուպցիա, սահմանադրաիրավական, կոռուպցիայի դեմ պայքար, սեփականության իրավունքի սահմանափակում:

Ներածություն

Սեփականության իրավունքն իրավամբ կարող ենք համարել բավականին ուսումնասիրված և բազմակողմանի դիտարկված ինստիտուտ, սակայն այդ հանգամանքը չի խոչընդոտում անդրադառնալ սեփականության իրավունքի էության բացահայտմանը՝ այն դիտարկելով բովանդակային այնպիսի հարթություններում, որոնց համատեքստում չի քննարկվել: Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բնույթի մատնանշումն ինքնանպատակ չէ, քանի որ տեսական հարթության շրջանակներում կարևոր է յուրաքանչյուր ինստիտուտի դիտարկումն այնպիսի համատեքստում, որը բխում է տվյալ ինստիտուտի իրական բնույթից և էությունից և համահունչ է այդ ինստիտուտի հիմնական նշանակությանը:

Միևնույն ժամանակ կարևոր նշանակություն ունի սեփականության իրավունքի փոխկապակցվածության հիմնահարցի պարզաբանումն այնպիսի արատավոր երևույթի հետ, ինչպիսին կոռուպցիան է: Այս համատեքստում կոռուպցիան դիտարկելով որպես պետականության հիմքերը կազմալուծող երևույթ, կարևոր է վեր հանել ինչպես դրա կապը սեփականության իրավունքի հետ, այնպես էլ այդ երևույթների դիտարկումը հենց սահմանադրաիրավական ասպեկտներով՝ հաշվի առնելով դրանց բնույթն ու նշանակությունը:

Ուսումնասիրության նպատակը սեփականության իրավունքի և կոռուպցիայի միջև գոյություն ունեցող կապի վերհանումն է, ինչպես նաև դրանց սահմանադրաիրավական նշանակության ընդգծումը:

Մեթոդ

Ուսումնասիրության իրականացման շրջանակներում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավական մեթոդները: Մասնավորապես, մեր կողմից լայնորեն կիրառվել են համակարգային կառուցվածքային, իրավահամեմատական, իրավական վերլուծության մեթոդները:

Արդյունքներ և քննարկում

XVIII դարի լուսավորիչների հայեցակետում սեփականության հիմնախնդիրը շաղկապվում է իրավական պետության նրանց իդեալի հետ: Ըստ այդմ՝ իրավունքից հետո սեփականությունը քաղաքակրթության երկրորդ հրամայականն է (Միրումյան, 2003, էջ 210): Այսինքն սեփականությունն ի սկզբանե

կապվում է պետության և իրավունքի ստեղծման հետ և դրվում դրանց հիմքում, ինչը, մեր դիտարկմամբ, պետք է ունենա ելակետային նշանակություն սեփականության իրավունքի էության բացահայտման հարցում:

Հեգելը մարդուն դիտում է որպես իրեն պատկանող սեփականության հետ անբաժանելի անձ: Ըստ Հեգելի, ցանկացած մարդու, քաղաքացու սեփականությունը հանդիսանում է նրա ազատության, հնարավորությունների զարգացման նախապայմանը: Հեգելը մարդու ազատությունների իրականացման մեջ իրավունքի և պետության դերը ցույց է տալիս սեփականության միջոցով: Նրա կարծիքով՝ սեփականության նկատմամբ անձի իրավունքը տրվում է ծննդյան պահից և չի կարող նրանից բաժանվել: Հեգելյան փիլիսոփայության տեսական կառուցվածքում «ազատություն», «իրավունք» և «սեփականություն» կատեգորիաների կենտրոնում մարդն է (Гегель, 1990, էջ 100): Այսինքն՝ սեփականությունն անմիջականորեն կապվում է մարդու էության, բնույթի և դրանցից բխող պահանջմունքների հետ, ուստի սեփականության իրավունքի ձեռբերման, դեպի այս կամ այն սեփականությանը ձգտելու կամ որևէ երևույթի նկատմամբ սեփականության իրավունք ստանալու նկրտումները բխում են անձի էությունից, նրա առջև ծառացած մարտահրավերներից և գոյություն ունեցող խնդիրներից: Այս համատեքստում սեփականության իրավունքը նախքան սուբյեկտի՝ իրեն պատկանող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավական հնարավորություն դիտարկելը, ընկալվում է որպես անձի էությունից բխող, նրա հիմնական իրավունքների և ազատությունների հիմքը կազմող սահմանադրահիրավական ինստիտուտ:

Իսկ դեռևս 18-րդ դարի վերջին անգլիացի փիլիսոփա Ջոն Լոքը հայտարարել է մարդու անկապտելի իրավունքների սրբազան անձեռնմխելիության մասին, որոնցից կարևոր են կյանքի, ազատության և սեփականության իրավունքները (Локк, 1960, էջ 8):

Վերոգրյալ տեսական պատկերացումները սեփականության իրավունքի վերաբերյալ հնարավորություն են ընձեռում ձևավորելու այն գաղափարը, որ սեփականության իրավունքն իրապես իրավական պետության գաղափարական հիմքն է, որի շուրջ խարսխվում են մի շարք այլ հիմնարար իրավունքներ և ազատություններ: Վերոնշյալ համատեքստում ցանկանում ենք անդրադառնալ տեսական հարթության շրջանակներում առաջ քաշված այն բանավեճին, թե իրավունքի որ ճյուղի կարգավորման առարկան է հանդիսանում սեփականության իրավունքը:

Գիտական գրականության մեջ իրավունքի ինստիտուտը բնորոշվում է որպես իրավական նորմերի համակցություն, որոնք կարգավորում են միասեռ հասարակական հարաբերությունները: Սեփականության հարաբերությունները կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերի միջոցով: Ուստի սեփականության իրավունքի ինստիտուտը ունի կոմպլեքսային բնույթ (Քրմոյան, 2002, էջ 198):

Սեփականության իրավունքը տեսական գրականության շրջանակներում ներկայացվում է որպես՝

1. իրավական նորմերի հավաքածու, որը ընձեռում և դրա հետ մեկտեղ սահմանափակում է սեփականատիրոջ ազատությունը,
2. ազատություն, որը ընձեռվում և սահմանափակվում է իրավունքի նորմերով (Սեյրանյան, 2015, էջ 41):

Սեփականության իրավունքը, որպես սահմանադրաիրավական ինստիտուտ գիտական աշխատություններում նեղացվում և ներկայացվում է շատ աղքատիկ ձևով: Որոշ հեղինակներ թերագնահատում են սահմանադրական իրավունքի դերը սեփականության հարաբերությունների կարգավորման հարցում: Օրինակ՝ Ե.Ս. Սուխանովը այս հարցի վերաբերյալ կարծիք է արտահայտել, որ սեփականության հարաբերությունները իրավաբանորեն կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով: Իրավական նորմերի համակցությունը, որոնք կարգավորում են սեփականության հարաբերությունները, ունեն համալիր, միջճյուղային բնույթ, որոնց հիմքն են կազմում անկասկած քաղաքացիական իրավունքի նորմերը (Суханов, 1991, էջ 17):

Այս տեսակետի հիմք է հանդիսացել այն փաստը, որ սեփականության իրավունքն առավել մանրամասնորեն կարգավորվում է քաղաքացիական իրավունքի կողմից: Այդ է պատճառը, որ առավել հաճախ սեփականության իրավունքը դիտվում է որպես քաղաքացիական իրավունքի ինստիտուտ:

Սակայն բերված տեսակետը թերի է այն առումով, որ անտեսված է սահմանադրության նշանակությունը՝ սեփականության հարաբերությունների կարգավորման հարցում: Ավելի ճիշտ սխալ ձևով է մեկնաբանվում սահմանադրական իրավունքի տեղը սեփականության իրավունքը կարգավորող իրավունքի ճյուղերի շարքում: Ասել, որ սեփականության իրավունքի կարգավորման հարցում հիմք են հանդիսանում քաղաքացիական իրավունքի նորմերը, կնշանակի նվազեցնել սեփականության իրավունքի դերն ու նշանակությունը: Ճիշտ կլինի ասել, որ սեփականության հարաբերությունների կարգավորման հիմք են հանդիսանում սահմանադրական իրավունքի նորմերը, սակայն առավել մանրամասն սեփականության իրավունքը կարգավորվում է քաղաքացիական իրավունքի կողմից (Քրմոյան, 2002, էջ 199):

Հետաքրքիր է այս հարցի կապակցությամբ բերել նույն Ե. Սուխանովի կարծիքը այն մասին, որ իրավունքն առաջանում է հենց սեփականության հարաբերությունների պաշտպանության համար: Այդպիսի պաշտպանությունը կազմում է տնտեսական հարաբերությունների կարգավորման իրավական բովանդակությունը, իսկ սեփականության իրավունքը այդ տեսանկյունից դառնում է ամբողջ իրավական համակարգի կենտրոնական ինստիտուտներից մեկը (Суханов, 1991, էջ 23):

Այո, սեփականությունը հանդիսանում է իրավական համակարգի կենտրոնը և սեփականության սահմանադրաիրավական կարգավորումից է կախված այդ իրավունքի հետագա կարգավորումը իրավունքի այլ ճյուղերի կողմից: Եվ այդ պարագայում սխալ է սեփականության իրավունքը համարել միայն քաղաքացիական իրավունքի ինստիտուտ և քաղաքացիական իրավունքը բնորոշել որպես սեփականության հարաբերությունների կարգավորման հիմնական իրավունքի ճյուղ: Ճիշտ կլինի ասել, որ սեփականության

իրավունքը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի ինստիտուտ, որի հիմքերը ամրագրվում են սահմանադրական իրավունքի կողմից (Քրմոյան, 2002, էջ 200):

Ներկայում սեփականության իրավունքը նախևառաջ քննարկվում է սահմանադրաիրավական մակարդակով (մակրո ասպեկտով), քանի որ սեփականության իրավունքի էությունն ամենից առաջ հենց սահմանադրա-իրավական հարթությունում է բացահայտվում: Այս հարթությունում է ակնդետ երևում, թե ինչ դեր է խաղում սեփականության իրավունքի ինստիտուտը ժամանակակից քաղաքացիական հասարակության պայմաններում, որքանով է այն նպաստում անձի ազատության ապահովմանը (Քամալյան, 2018, էջ 76):

Եթե փորձենք ամփոփել վերոնշյալ բոլոր մոտեցումները՝ կնկատենք, որ սեփականության և սեփականության իրավունքի շուրջ ձևավորվող հարաբերություններն իրապես կազմում են մարդկանց կենսագործունեության հիմքը, այն առանցքը, որի շուրջ ծավալվում է մարդկանց իրավունքների և պարտականությունների հոսքը, իսկ յուրաքանչյուր առանցքային և հիմնարար իրավական ինստիտուտ կամ ենթահարց, իր ամրագրումն է ստանում նախ սահմանադրական իրավունքի մակարդակով՝ հանդիսանալով սահմանադրական իրավունքի առարկա:

Ըստ այդմ, կարևոր ենք համարում բացահայտել սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բնույթը՝ Սահմանադրությամբ սեփականության իրավունքի վերաբերյալ առկա կարգավորումների լույսի ներքո.

Ինչպես 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության, այնպես էլ 2005 և 2015 թվականներին կատարված սահմանադրական փոփոխություններով Սահմանադրության մակարդակով կարևորվում է սեփականության պաշտպանությունն ու սեփականության իրավունքի երաշխավորումը:

Մասնավորապես, Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին գլխի 10-րդ հոդվածի 1-ին մասով նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Այս հանգամանքի ամրագրումը սահմանադրական կարգի հիմունքներում արդեն իսկ խոսում է այն մասին, որ սեփականության իրավունքը սահմանադրական իրավունքի առանցքային ինստիտուտներից է, որի իրավական ամրագրման ակունքն ու սկզբնաղբյուրը հենց Սահմանադրությունն է:

Միևնույն ժամանակ սեփականության իրավունքը սահմանադրական մակարդակով առավել մանրամասն կարգավորման է ենթարկվել Սահմանադրության՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխի 60-րդ հոդվածի շրջանակներում: Մասնավորապես, Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Սահմանադիրը սեփականության իրավունքի պաշտպանության լույսի ներքո դիտարկում է նաև յուրաքանչյուրի ժառանգելու իրավունքը:

Սահմանադրական վերոնշյալ կարգավորման բովանդակության գնահատման արդյունքում իրավամբ կարող ենք նշել, որ սահմանադրորեն նախանշվում են այն իրավազորությունները, որոնք կազմում են սեփականության իրավունքի բովանդակությունը, մասնավորապես՝ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավական հնարավորությունները: Ավելին, սահմանադիրը նախանշում է նաև, որ այս իրավունքի պաշտպանությունը տարածվում է բացառապես օրինական հիմքով ձեռք բերված սեփականության վրա՝ բացառելով նաև ոչ օրինական ձևով ձեռք բերված սեփականությունը սահմանադրորեն երաշխավորված սեփականության լույսի ներքո պաշտպանելու հնարավորությունը: Այս կարևոր և սկզբունքային մոտեցումները հանդիսանում են սեփականության իրավունքի հիմնական էությունը, ուստի իրավունքի ցանկացած այլ ճյուղի կողմից նախատեսվող իրավակարգավորումները պետք է բխեն այս սկզբունքներից և ծառայեն դրանց կենսագործմանը:

Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանն իր որոշումներում անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանը՝ ևս մեկ անգամ ընդգծելով սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բնույթը և ներկայացնելով առանցքային դիրքորոշումներ սեփականության իրավունքի բովանդակային սահմանների վերաբերյալ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի հունվարի 31-ի ՍԴՈ-1340 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանի գնահատմամբ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված դրույթները կազմում են սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը՝ ամրագրելով այն իրավազորությունները, որոնցից յուրաքանչյուր ոք անարգել պետք է կարողանա օգտվել սեփականության հիմնական իրավունքն իրականացնելիս, այսինքն՝ անձը պետք է առանց որևէ խոչընդոտի կարողանա իրականացնել սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու իրավունքը, օգտագործելու իրավունքը, տնօրինելու իրավունքը, ինչպես նաև ժառանգելու իրավունքը: Միևնույն ժամանակ, սահմանադիրը նշված իրավունքների իրականացումը երաշխավորելու՝ պետության պոզիտիվ պարտականության կատարումը պայմանավորում է բացառապես օրինական հիմքերով ձեռք բերված սեփականությամբ: Հետևաբար, միայն օրինական հիմքով ձեռք բերված սեփականության դեպքում անձը հանրային իշխանություններից կարող է պահանջել սեփականության հիմնական իրավունքի մաս կազմող՝ վերը նշված իրավունքների իրականացման երաշխավորում»:

Մեկ այլ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «Սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև՝ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն: Այն միջազգային իրավական ամրագրում է ստացել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 17-րդ), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունում, որի 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Միաժամանակ, հիշյալ արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասն արտոնում է օրենքով նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք պայմանավորված են հանրային շահերով կամ անհրաժեշտ են հարկերի, տուրքերի կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:» (ՍԴՈ-1432, 30.10.2018):

Սահմանադիրը նախատեսում է ոչ միայն սեփականության իրավունքի հիմնական բովանդակությունը, այլև դրա սահմանափակման հիմքերը, մասնավորապես, նշելով, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրական մակարդակով սեփականության իրավունքի սահմանափակման հիմքերի հստակ նախատեսումը նույնպես նախանշում է այն սահմանները, որոնց համատեքստում իրավունքի մյուս ճյուղերի կողմից կարող են կարգավորման ենթարկվել սեփականության իրավունքի սահմանափակման դեպքերը:

Սեփականության իրավունքի վերաբերյալ իր որոշումներից մեկով Վճռաբեկ դատարանը նույնպես արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «(...) Գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն (...)» (Վռաբեկ դատարանի՝ Ա. Հայրապետյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշումը):

Վերոնշյալ հանգամանքները վկայում են սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բնույթի, սահմանադրական մակարդակով դրա հիմնարար կողմերի ամրագրման անհրաժեշտության մասին, ուստի իրավամբ կարող ենք նշել, որ սեփականության իրավունքը և այդ իրավունքի շուրջ ձևավորվող հարաբերությունները՝ իրավունքի պաշտպանության և իրավաչափ սահմանափակման առումներով, հանդիսանում են սահմանադրական իրավունքի առարկա, այլ է հարցը, որ այդ իրավունքի իրացման մի շարք մանրամասներ և մասնավոր դեպքեր իրենց արտացոլումն են գտնում ինչպես քաղաքացիաիրավական նորմերի, այնպես էլ իրավունքի այլ ճյուղերի կարգավորման տիրույթում:

Սակայն քաղաքացիաիրավական նորմերը, որքան էլ պարունակեն սեփականության իրավունքի վերաբերյալ տարբեր կարգավորումներ, երբևէ չեն կարող նախանշել ելակետային չափանիշներ, որոնք ազդեցություն ունենան սեփականության իրավունքի էության, բնույթի, նշանակության, դրա բովանդակային սահմանների և սահմանափակումներին ներկայացվող պահանջների վրա: Այս բոլոր հանգամանքները նախատեսվում են սահմանադ-

րական մակարդակով, ուստևի հենց սահմանադրական մակարդակով է որոշվում սեփականության իրավունքի բնույթը, իսկ քաղաքացիաիրավական նորմերն ընդամենը նախատեսում են այս իրավունքի իրացման մանրամասները՝ անվերապահորեն հետևելով սահմանադրական կարգավորումներին, քանի որ հակառակ պարագայում, դառնալով սահմանադրաիրավական վեճի առարկա, կարող են ճանաչվել հակասահմանադրական և դադարել գոյություն ունենալուց: Ավելին, սեփականության իրավունքին առնչվող հիմնահարցեր քննարկվում են ոչ միայն քաղաքացիաիրավական, այլև քրեաիրավական հարաբերությունների համատեքստում, մասնավորապես, հանցավոր գույքը օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունից տարբերակելու, ինչպես նաև հանցավոր ծագում ունեցող գույքի հետ կապված գործարքները արգելելու համար համարժեք և արդյունավետ մեխանիզմներ մշակելու առումներով, սակայն այդ հանգամանքները չեն կարող ստվերել սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բնույթը:

Ամփոփելով գտնում ենք, որ իրավական յուրաքանչյուր ինստիտուտի ՝ այս կամ այն իրավունքի ձյուղին պատկանելության բացահայտման հարցում կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե իրավունքի որ ճյուղի կողմից են տրվում տվյալ ինստիտուտի կամ իրավունքի առանցքային, ելակետային գաղափարները, որոնք չեն կարող փոփոխվել կամ խեղաթյուրվել իրավունքի այլ ճյուղերի կողմից: Իհարկե վերոնշյալ մոտեցմանը կարող են ներկայացվել հակափաստարկներ առ այն, որ Սահմանադրությամբ տրվում են բոլոր իրավունքների և իրավական գրեթե բոլոր ինստիտուտների առանցքային և հիմնարար գաղափարները, որոնց պետք է համապատասխանեն օրենսդրական մյուս կարգավորումները, սակայն սեփականության և սեփականության իրավունքի շուրջ ձևավորվող հարաբերությունները, ինչպես արդեն նշեցինք, հանդիսանում են պետության և իրավունքի ձևավորման և կայացման հիմքը, իսկ այդպիսի ինստիտուտները հանդիսանում են հենց սահմանադրական իրավունքի կարգավորման առարկա:

Պետականության և իրավունքի կայունության ապահովման հարցում չափազանց կարևոր դերակատարում ունի նաև կոռուպցիայի դեմ պայքարը, քանի որ կոռուպցիան այն հիվանդությունն է, որն ամբողջությամբ կազմալուծում է պետականությունն ու դրա հիմքերը՝ լուրջ վտանգներ ստեղծելով անձանց իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանության հարցում: Այս ամենով պայմանավորված իրավունքի տարբեր ճյուղերի, գլխավորապես քրեական իրավունքի շրջանակներում մշտապես մշակվել և մշակվում են պատասխանատվության տարբեր մեխանիզմներ կոռուպցիոն բնույթ կրող իրավախախտումների համար: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, խնդիրն առավել համակարգային և համալիր բնույթ է կրում, ուստի կոռուպցիան և կոռուպցիայի դեմ պայքարը չեն կարող համարվել միայն քրեական իրավունքի կարգավորման առարկա: Ավելին՝ գտնում ենք, որ այս արատավոր երևույթները՝ կապված լինելով պետականության և իրավունքի գերակայության ապահովման հետ, մեծապես առնչվում են հենց սահմանադրական իրավունքի հետ, քանի որ պետականության և իրավունքի հիմ-

քերը նախատեսվում են հենց Սահմանադրությամբ, ուստի այդ հիմքերը կազմալուծող երևույթների դեմ պայքարը նույնպես պետք է սկսել հենց սահմանադրաիրավական մակարդակով:

Վերոգրյալ նկատառումների լույսի ներքո կարևոր ենք համարում անդրադառնալ նաև սեփականության, սեփականության իրավունքի և կոռուպցիայի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի միջև փոխադարձ կապին:

Կարելի է ասել, որ կոռուպցիան կամ դրան հակվածությունը միշտ կամ գրեթե միշտ ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են սեփականության, ըստ այդմ նաև սեփականության իրավունքի հետ: Մասնավորապես, կոռուպցիոն բնույթի մտադրությունների հիմքում շահ կամ օգուտ ստանալն է, ըստ այդմ երբ մենք ունենք կոնկրետ հնարավորություն դիմելու կոռուպցիոն որևէ դրսևորման, այդ հնարավորությունները գլխավորապես կրում են նյութական բնույթ կամ հետագայում են պատրաստվում նյութականացվել, և վերջում, երբ մենք արդեն իսկ դիմում ենք կոնկրետ կոռուպցիայի, ինչպես մեր քայլերը, այնպես էլ հետագա արդյունքներն ուղղված են շահ կամ օգուտ ստանալուն կամ տալուն, ուստի կոռուպցիան բոլոր դեպքերում պտտվում է սեփականության առանցքի շուրջ: Ավելին, կարելի է ասել՝ կոռուպցիայի ծագումը նույնպես կապված է հենց սեփականության և սեփականության իրավունք ձեռք բերելու հետ, քանի որ կոռուպցիոն դրսևորումներ ունեցող արարքի կատարման հակվածության վերջնաարդյունքը շահի կամ օգուտի ստացումն է:

Վերոգրյալից հետևում է, որ կոռուպցիան և սեփականությունը /սեփականության իրավունքը/ փոխկապակցված երևույթներ են, ուստի կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների գործադրումն ու հատկապես սեփականության իրավունքի պաշտպանությունն ու դրա սահմանափակումը պետք է դիտարկել համալիր հետազոտության շրջանակներում՝ կարևորելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սեփականության իրավունքի սահմանադրաիրավական պաշտպանության առարկա հանդիսանալու, այսինքն՝ օրինական հիմքով ձեռք բերված լինելու, կոռուպցիոն դրսևորում ունեցող արարքի և կոնկրետ սեփականության միջև կապի, կոռուպցիոն դրսևորում ունեցող արարքների դեմ հասցեական պայքար մղելու հանգամանքների գնահատման համատեքստում:

Կոռուպցիայի՝ որպես պետականության և պետական ինստիտուտները կազմալուծող երևույթի, սեփականության իրավունքի՝ որպես սահմանադրաիրավական կարևոր ինստիտուտի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների գործադրման հարցում Սահմանադրությամբ ամրագրված՝ իրավունքների և ազատությունների սահմանափակումներին ներկայացվող պահանջներին համահունչ կիրառվելու հրամայականի պայմաններում կոռուպցիայի և սեփականության իրավունքի կապն ու սեփականության իրավունքի էության դիտարկումը կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում առաջին հերթին պետք է քննարկման առարկա դարձվեն հենց սահմանադրաիրավական ասպեկտներով՝ հաշվի առնելով դրանց առնչությամբ հիմնաքարային հարցերին մանրամասնորեն անդրադառնալու և այդ հարցերի

քննարկումը միայն նեղ ոլորտային (քրեական կամ քաղաքացիական) շրջանակներով չսահմանափակելու կարևորությունը:

Մասնավորաբար, եթե քրեական իրավունքի շրջանակներում շեշտադրվում է կոռուպցիոն բնույթի կոնկրետ հանցագործությունները, դրանց կատարման առանձնահատկությունները, դրանց կանխման հնարավորությունները բացառապես քրեաիրավական ասպեկտներով, իսկ մասնավոր իրավունքի համատեքստում արդի պայմաններում կարևորվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի արդյունավետ գործարկումը, ոչ օրինական հիմքով ձեռք բերված սեփականության բացահայտումը, գույքի ուսումնասիրության պատշաճ իրականացումը, հայցերի ներկայացումն ու հայցի ապահովման միջոցների արդյունավետ գործարկումը, ապա սահմանադրաիրավական ասպեկտներով հնարավոր է դիտարկել վերոթվարկյալ երևույթների առաջացման իրական նախադրյալները, դրանց բուն էությունն ու բացասական ազդեցությունը պետական իշխանություն–հասարակություն հարաբերությունների, սահմանադրականության և իրավունքի գերակայության ապահովման շրջանակներում: Ավելին, նշյալ համատեքստերում դիտարկվող խնդիրների քննարկումը հնարավորություն կընձեռի առավել հեռանկարային և արդյունավետ լուծումներ առաջադրել դրանց հաղթահարման հարցում, քանի որ յուրաքանչյուր խնդրին արդյունավետ լուծում գտնելու համար նախ հարկ է վեր հանել խնդրի բուն էությունն ու նշանակությունը, խորքային բնույթն ու առաջացման իրական պատճառները:

Ողջ վերոգրյալը հնարավորություն է տալիս փաստելու, որ կոռուպցիայի դեմ պայքարը, այդ հարցում սեփականության իրավունքի սահմանափակման խնդիրներն ունեն սահմանադրաիրավական ասպեկտներ, ուստի այդ համատեքստում դրանց դիտարկումն իրենից մեծ կարևորություն է ներկայացնում ինչպես նշյալ ինստիտուտների և դրանց շուրջ ձևավորված հիմնախնդիրների բացահայտման ու լուծումների առաջադրման, այնպես էլ իրավունքի այլ ճյուղերի համատեքստում նշյալ խնդիրների քննարկման տեսանկյունից:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ հարկ է առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

Սեփականության իրավունքն ու կոռուպցիան փոխկապակցված են միմյանց հետ՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ կոռուպցիոն յուրաքանչյուր դրսևորում ենթադրում է ձգտում դեպի սեփականության իրավունք կամ այն հետագայում ձեռք բերելու միտում, ինչից հետևում է, որ կոռուպցիային հակվածությունը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների գործադրումը աղերսվում են սեփականության իրավունքի, ինչպես նաև դրա սահմանափակման իրավաչափության գնահատման հարցերի հետ:

Հաշվի առնելով մի կողմից սեփականության իրավունքի՝ որպես անձի հիմնարար իրավունքների և ազատությունների առանցքը կազմող արժեքի, մյուս կողմից կոռուպցիայի՝ որպես պետականության հիմքերը կազմալուծող երևույ-

թի էությունը՝ հարկ է վերոնշյալ երկու իրավական ինստիտուտները դիտարկել նախնառաջ սահմանադրաիրավական համատեքստում՝ կարևորելով դրանց բնույթը կազմող հիմնահարցերի վերհանման անհրաժեշտությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Միրումյան, Ռ. (2003). *Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ:* Մեթոդաբանական վերլուծություն: Երևան:

Սեյրանյան, Ի. (2015). Սեփականության իրավունքը որպես տնտեսական և իրավական կատեգորիա, *ԼՂՀ դատական իշխանություն,* № 3, 2015 էջ 37-44:

Քամալյան, Ն. (2018). Սեփականության և սեփականության իրավունքի հասկացությունը և փոխադարձ կապը, *Դատական իշխանություն,* 11 – 12 (233-234), Երևան:

Քրմոյան, Ս. (2002) Սեփականության իրավունքը որպես սահմանադրական իրավունքի ինստիտուտ, *Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու,* Իրավագիտություն, 2002, հատոր 4, Երևան, էջ 198-212:

Суханов Е.А. (1991). *Лекции о праве собственности.* М., Юрид. лит.

Гегель, Г. В. (1990). *Философия права.* Введение. Перевод Б.Г.Столпнера и М.И.Левиной. Редакторы и составители тома Д.А.Керимов и В.С.Нерсесянц. М.: Мысль.

Локк Д. (1960). *Избранные философские произведения.* М., Т. 2.

References

Mirumyan, R. (2003). *Patmapilisopayakan hayecakargery XIX dari hay pilisopayutyan mej,* Metodabanakan verlucutyun, [Historical-philosophical concepts in 19th century Armenian philosophy, Methodological analysis], Yerevan. (In Arm.)

Seyranyan, I. (2015). Sepakanutyan iravunqy vorpes tntesakan ev iravakan kategoria, [Property rights as an economic and legal category], *LGHH datakan ishkhanutyun,* № 3, 2015 ej 37-44. (In Arm.)

Qamalyan, N. (2018). Sepakanutyan ev sepakanutyan iravunqi haskatsutyuny ev pokhadardz kapy, [The concept and interrelationship of ownership and property rights], *Datakan ishkhanutyun,* ej 11-12, Yerevan. (In Arm.)

Qrmoyan S. (2002) Sepakanutyan iravunqy vorpes sahmanadrakan iravunqi institut, [The right to property as an institution of constitutional law], Kantegh. Gitakan hodvatsneri zhoghovatsu, Iravagitutyun, 2002, hator 4, Yerevan, ej 198-212. (In Arm.)

Sukhanov, Ye. A. (1991). *Lektsii o prave sobstvennosti* [Lectures on property rights]. M., Yurid. lit. (In Russ.)

Hegel, G. W. (1990). *Philosophia prawa.* Vvedenie. [Philosophy of Law, Introduction]. Perevod B.G. Stolpnera i M.I. Levinoy. Redaktory i sostaviteli toma D.A. Kerimov i V.S. Nersesyants. M.: Mysl. (In Russ.)

Lok, D. (1960). *Izbrannie philosophskie proizvedenia* [Selected philosophical works]. M., T. 2. (In Russ.)

Асмик Акобян
Специалист отдела стратегического анализа и контроля Центра финансового мониторинга Центрального банка РА, соискатель кафедры конституционного права ЕГУ
Эл. адрес: hasmikhakobyanm95@gmail.com

КОНСТИТУЦИОННАЯ ПРИРОДА ПРАВ СОБСТВЕННОСТИ И СВЯЗЬ С КОРРУПЦИЕЙ. ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

В рамках данного исследования рассмотрена связь между правами собственности и коррупцией и их конституционное значение. В контексте указанных вопросов анализируются как конституционно-правовая природа прав собственности, так и существующие теоретические подходы к данной проблеме. Кроме того, изучена природа коррупции как явления, подрывающего основы государственности, а также конституционно-правовые аспекты борьбы с ней.

Подчеркивая необходимость комплексного исследования, в работе представлены различные теоретические подходы к природе права собственности, не ограничивающиеся точками зрения, указывающими на конституционную природу собственности. В силу взаимосвязи этих двух явлений необходимо рассматривать как право собственности и его ограничения, так и борьбу с коррупцией прежде всего в конституционном контексте.

Ключевые слова: Собственность, права собственности, коррупция, конституционная природа, борьба с коррупцией, ограничение прав собственности.

Hasmik Hakobyan
Specialist of Strategic Analysis and Control Department, Financial Monitoring Center, Central Bank of RA, Ph.D. student at the YSU Chair of Constitutional law
Email: hasmikhakobyanm95@gmail.com

THE CONSTITUTIONAL NATURE OF PROPERTY RIGHTS AND THE RELATIONSHIP WITH CORRUPTION. THEORETICAL AND LEGAL ANALYSIS

This study explores the connection between property rights and corruption, as well as their constitutional implications. In this context, both the constitutional and legal nature of property rights and the existing theoretical approaches to this issue are analyzed. In addition, the nature of corruption as a phenomenon that undermines the foundations of statehood, as well as the constitutional and legal aspects of combating it, are considered.

Emphasizing the for a comprehensive study, this work presents various theoretical approaches to the nature of property rights, not limited to perspectives

recognizing only their constitutional nature. Due to the interconnectedness of these two realities, it is necessary to consider both the property rights and their limitations, as well as the fight against corruption, primarily within the constitutional context.

Key words: property, property rights, corruption, constitutional nature, fight against corruption, limitation of property rights.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. նոյեմբերի 11-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 14-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Երանուհի Մանուկյան
Երևանի պետական և Եվրասիա միջազգային համալսարանների դասախոս, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ e.manukyan@ysu.am

DOI: 10.53614/18294952-2024.2-62

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է հակակոռուպցիոն ռազմավարության մշակմանը, հակակոռուպցիոն հանձնաժողովների գործունեությանը, ինչպես նաև այն հնարավորություններին ու խոչընդոտներին, որոնք կարող են նպաստել կամ խանգարել հակակոռուպցիոն ռազմավարության մշակման հարցում: Տվյալ վերլուծության համար հիմք են հանդիսացել հայտնի հետազոտողների տեսական ու գործնական համակողմանի վերլուծության արդյունքներ, որոնք հիմնվում են միջազգային փորձի վրա:

Արդյունավետ հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը պահանջում է ինստիտուցիոնալ բարեփոխումների, իրավական մեխանիզմների և հանրային ներգրավվածության համադրություն: Հակակոռուպցիոն հանձնաժողովները վճռորոշ դեր են խաղում կանխարգելիչ միջոցառումների իրականացման, կոռուպցիոն դեպքերի հետաքննության և հաշվետվողականության ապահովման գործում: Այնուամենայնիվ, տարբեր խոչընդոտներ, ինչպիսիք են քաղաքական ազդեցությունը, ռեսուրսների բացակայությունը և իրավական բացերը, կարող են խոչընդոտել դրանց արդյունավետ գործառնությանը: Համակողմանի վերլուծելով տվյալ հիմնախնդիրը՝ հոդվածը նպատակ ունի նպաստել հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ դիսկուրսին՝ առաջարկելով պատկե-

բացումներ այն մասին, թե ինչպես կարող են մշակված ռազմավարությունները բարելավել հասարակական հարաբերությունները: Եզրակացությունները ամփոփում են համակարգված մոտեցման կարևորությունը՝ համատեղելով իրավական, ինստիտուցիոնալ և հասարակական ջանքերը կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար:

Հիմնաբառեր. հակակոռուպցիա, ռազմավարություն, հասարակություն, էթիկա, կոռուպցիա, սոցիալական, քաղաքական:

Ներածություն

Կոռուպցիան այնպիսի սոցիալական երևույթ է, որն առանց էական ու հետևողական հակազդեցության կարող է կազմալուծել սոցիալական միջավայրը՝ վտանգելով պետության անվտանգության ապահովման հեռանկարները: Այս իսկ պատճառով, գրեթե բոլոր երկրների համար օրակարգային է դառնում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը: Տվյալ քաղաքականության շնորհիվ՝ պետությունն ու հասարակությունը կարող են արձագանքել, թե որոնք են իրավապահ համակարգի թերությունները և ինչպես է հնարավոր նվազագույնի հասցնել կոռուպցիոն երևույթները: Մեթոդաբանական իմաստով սկզբունքային նշանակություն ունեցող այս կանխավարկածի համատեքստում գիտական ու գործնական հնչեղություն է ստանում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման հետ առնչվող հիմնահարցերի, դրանցում գործառնող իրարամերժ սկզբունքների, հիմնախնդիրների համակողմանի վերլուծությունները: Հարցադրումների այս շարքը իսկ վկայում է, որ տվյալ հետազոտության թեման արդիական է, քիչ հետազոտված և այդ իմաստով՝ նորարարական:

Մասնագիտական գրականության մեջ տվյալ հիմնախնդրի վերլուծությունն առաջադրված շեշտադրումների տեսանկյունից գրեթե չի քննարկվել: Ավելին, ժամանակակից իրողությունների տրամաբանությունն արտացոլող հետազոտություններում և վերլուծություններում նկատվում է տվյալ հիմնախնդրի բովանդակության և գործառույթների պարզեցման և աղքատացման որոշակի միտում: Այս տեսանկյունից տվյալ հետազոտության մեջ փորձ է արվում հաղթահարել այդ միակողմանիությունը՝ տալով առավել ամբողջական նկարագիր:

Վերլուծության ենթարկելով հակակոռուպցիոն քաղաքականության պատմական և քաղաքակրթական տեսանկյունները և անդրադառնալով դրա քաղաքական (ինքնիշխանություն, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն և այլն) և տնտեսական (մրցակցություն, շուկայական հարաբերություններ, ազատ ձեռներեցություն և այլն) ինստիտուտների ձևավորման հիմնահարցերին՝ տվյալ հետազոտության մեջ արտացոլվել են արդի քաղաքակրթության սոցիոմշակութային կյանքում տեղի ունեցող այն վերափոխումները, որոնց հետևանքով հիմնովին փոփոխվում և նոր գործառույթներ են ձեռք բերում հասարակական հարաբերությունները:

Մեթոդ

Հոդվածի համար մեթոդաբանական հիմք է հանդիսացել հետազոտության որակական մեթոդը, որի օգնությամբ հիմնավորվել է հակակոռուպցիոն քաղաքականության ռազմավարության մշակման առանձնահատկությունները: Հետազոտման հիմք են հանդիսացել նաև համանմանության, արտարկման, վերլուծության և համադրության մեթոդները:

Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնադրույթների և էթիկական կանոնակարգերի մշակումը

Կոռուպցիայի կանխարգելումը բազմաշերտ ու բարդ աշխատանք է, որի շրջանակներում սովորաբար իրականացվում է մեծ թվով համաժամանակյա կամ հաջորդական գործողություններ, որոնք անհրաժեշտ է հստակորեն համակարգել՝ դրանց հետևողականությունն ու արդյունավետությունը ապահովելու համար: Հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը ենթադրում է, ինչպես օրենսդրական դաշտի ամրապնդում, այնպես էլ հասարակության իրազեկվածության բարձրացում: Հակակոռուպցիոն իրազեկվածության մակարդակի բարձրացումը հիմնականում ուղղված է բարեվարքության ամրապնդմանը, էթիկական կանոնակարգերի մշակմանը, որոնք ենթադրում են նաև գործընկերային հարաբերությունների հաստատում քաղաքացիական հասարակության տարաբնույթ կառույցների հետ: Էթիկական կանոնակարգերի մշակումը անհարժեշտություն է, քանի որ լավ մշակված կանոնակարգը կամ արժեքների հռչակագիրն այնպիսի օգտակար գործիքներ են, որոնք հստակեցնում են բարոյական արժեքների ու չափորոշիչների նշանակությունը: Շատ դեպքերում կանոնակարգը վերահաստատում և զարգացնում է օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված արժեքներն ու սկզբունքները: Ի տարբերություն օրենքների, որոնք համապարտադիր նշանակություն ունեն, որտեղ հստակ պատժամիջոցներ են նախատեսված խախտումների համար, ապա էթիկական կանոնակարգերի հիմնական գործառույթը էթիկական իրազեկվածությունը բարձրացնելն է:

Մասնագիտական գրականության մեջ տարբերակվում է էթիկայի կանոնակարգի երկու մշակութային ձևեր.

1. կանոնակարգեր, որոնք բխում են էթիկայի նկատմամբ մշակութային մոտեցումից, որը հիմնված է իրավական համապատասխանության սկզբունքի վրա, և
2. կանոնակարգեր, որոնք բխում են մշակութային մոտեցումից, որը հիմնված է բարեվարքության և ոգեշնչման սկզբունքի վրա (Demmke, Bossaert, 2004, էջ 56):

Առաջինը հիմնականում վայրընթաց մոտեցում է և հիմնված է կանոնների և օրենքների վրա: Երկրորդ մոտեցմամբ խրախուսվում է էթիկական վարքագիծը՝ իրազեկության և մոտիվացիայի բարձրացման միջոցների լայն կիրառմամբ: Այս երկու մոտեցումները միմյանց չեն բացառում և կարող են ժամանակ առ ժամանակ համատեղվել:

Անկախ էթիկական կանոնակարգերի ձևավորման հրատապությունից, պետք է փաստել, որ հակակոռուպցիոն ռազմավարության քաղաքականութ-

յան մշակումը ամենևին էլ դյուրին գործունեություն չէ, քանի որ անմիջականորեն կախված է իրավապահ մարմինների գործառութային իրացումներից, ուստի կարող է դերերի ու պարտականությունների բաշխման հետ կապված տարաձայնություններ առաջանալ: Մյուս դժվարությունը պայմանավորված է նրանով, որ զանգվածային գիտակցության մեջ պայքարի ռեպրեսիվ մեթոդն ավելի ընդունելի ու հասկանալի է հասարակության կողմից, ուստի համալիր երկարաժամկետ միջոցառումների իրականացումը կարող է հասարակության մեջ թերահավատության և տարվող քաղաքականության նկատմամբ դժգոհության ալիք բարձրացնել: Մասնավորապես, կարող է տպավորություն ստեղծվել, որ ոչ թե իրական պայքար է տեղի ունենում, այլ ընդամենը կոռուպցիայի դեմ պայքարի իմիտացիա: Այնուամենայնիվ, տվյալ ռազմավարության անհարժեշտությունը հիմնովին հակակշռում և գերակշռում է թերությունները, ուրվագծելով այն ուղիները, որոնք նվազեցնում են կոռուպցիայի մակարդակը՝ ապահովելով տնտեսական առաջընթացը:

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը էթիկական հրամայական է, քանի որ կոռուպցիան խոչընդոտում է ներքին և արտաքին ներդրումները, սահմանափակում է առևտուրը, աղավաղում է պետական ծախսերի չափերը և կառուցվածքը, հանգեցնում է ստվերային տնտեսության աճին, խորացնում է սոցիալական անհավասարությունը և այլն: Այստեղ հարկ է նշել, որ պետական ծառայողների մի մասը իրենց մասնագիտական գործունեությունն անցկացնում են արդար և բարեխղճորեն, իսկ մյուս մասը չարաշահում է իր պաշտոնական դիրքը և այն օգտագործում սեփական օգուտի համար, ծավալում է ապօրինի գործունեություն նպաստելով կոռուպցիայի ավելացմանը: Նաև կարևոր է նշել, որ մեր օրերում մարդկանց մոտ նկատվում է կոռուպցիայի դեմ պայքարի կարևորության գիտակցումը:

Կոռուպցիայի մեջ կարող է ներգրավվել ցանկացած անձ, ով օժտված է դիսկրեցիոն՝ սեփական հայեցողությամբ իրեն չպատկանող ռեսուրսների բաշխման իշխանությամբ (իրավապահ մարմինների աշխատակից, դասախոս, պատգամավոր, բժիշկ և այլն):

Կոռուպցիան պետք է հստակ սահմանազատել պաշտոնական դիրքի չարաշահման հետ կապված այլ հանցանքներից՝ յուրացման, վատնման համապատասխան որակյալ տեսակից և այլն, քանի որ կոռուպցիայի պարագայում օգտագործվում է ոչ միայն պաշտոնական դիրքը, այլև դրա վրա հիմնված հեղինակությունը, հնարավորությունները, կապերը:

Կոռուպցիայի առումով առավել խոցելի է պետական կառավարման համակարգը, մասնավորապես՝ դատական իշխանությունը, ոստիկանությունն ու առողջապահական համակարգը: Այս իրավիճակն է արձանագրվել ոլորտների մեծ մասում՝ կառավարման ցուցանիշների ցածր կատարողականների հիման վրա: Ուստի հակակոռուպցիոն քաղաքականության հաջողությունը պայմանավորված է նաև նրանով, որ իշխանության տարբեր թևերի միջև համագործակցությունը խթանելու գիտակցումից ելնելով, անհրաժեշտ է հստակեցնել վերջիններիս պատասխանատվության տիրույթները:

Հակակոռուպցիոն քաղաքական մարտավարությունը պետք է ներառի մի-

ջոցառումներ, որոնք ուղղված են պետության ու հասարակության բազմակողմ ու հետևողական ջանքերի իրականացմանը, վերացնելու տարբեր մակարդակներում կոռուպցիան ծնող պայմանները, պատճառները, բարձրացնելու կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման հնարավորությունն ու պատճառաբանված վնասի դիմաց պատժի անխուսափելիությունը, ստեղծելու հասարակության բացասական դիրքորոշում կոռուպցիայի բոլոր դրսևորումների նկատմամբ (Մանուկյան, Ստեփանյան, Իլյուշինա, 2021, էջ 213):

Հաշվի առնելով տվյալ երկրում կոռուպցիայի առկայությանն ու աճին նպաստող պատճառները, հակակոռուպցիոն միջոցառումները կարող են օրինակ ներառել հետևյալ մեթոդները. վերահսկողություն քաղաքական գործիչների եկամուտների նկատմամբ, հանրային գնումների կամ պետական ունեցվածքի սեփականաշնորհման ընթացակարգերի բարելավում, օրենսդրության լրամշակում կոռուպցիոն վարքագծի հստակ սահմանումներով և այլն: Վերջին տարիներին ժողովրդավար պետությունները հանդես են եկել կոռուպցիայի դեմ ուղղված քաղաքական ու հասարակական նորանոր նախաձեռնություններով: Այդ նպատակով ստեղծվել է «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» (ԹԻ) միջազգային կազմակերպությունը: Այն իրականացնում է կոռուպցիայի մասին հետազոտություններ տարբեր երկրներում, տարբեր մակարդակներում, մշակում և տարածում է հակակոռուպցիոն չափորոշիչներ: Հայաստանը անդամակցել է մի շարք հակակոռուպցիոն նախաձեռնությունների և մարմինների. 2005թ մայիսի 19-ին Հայաստանը ստորագրել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան, ինչպես նաև միացել է հակակոռուպցիոն պայքարի միջազգային հեղինակավոր կազմակերպություններին (ԵՄ և OECD անցումային երկրների հակակոռուպցիոն ցանց), ընդունել ԵՄ կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական և քրեական իրավունքների մասին կոնվենցիաներ: Գաղտնիք չէ, որ կոռուպցիոն ռիսկերը, մասնավորապես կաշառքն իր յուրահատուկ դրսևորումն ունի կրթության բնագավառում և առավել տարածված է բուհական համակարգում: Յուրաքանչյուր բուհ ունի կոռուպցիայի դեմ պայքարի իր սեփական և ինչու չէ նաև արդյունավետ տարբերակները, բայց ունենալ տարբերակներ և ապահովել դրանց կիրառումը՝ դրանք տարբեր բաներ են, քանի որ ոչ բոլոր դեպքերում են միջոցները արդարացնում նպատակները:

Կոռուպցիան՝ որպես համամարդկային երևույթ, տարածված է ողջ աշխարհում: Դա ենթադրում է կոռուպցիայի հետ կապված խնդիրների առկայություն և նման հանցավոր և բացասական երևույթի դեմ պայքարի անհրաժեշտություն աշխարհի բոլոր երկրներում: Կոռուպցիայի հաղթահարման համար անհրաժեշտ է ցուցաբերել համակարգված մոտեցում, ինչը պետք է արտահայտվի պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման և հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիական հասարակության ողջ ներուժի «զինվորագրման» մեջ: Միայն այս դեպքում նկատելի կլինի կոռուպցիայի մակարդակի նվազեցումը: Կոռուպցիան սոցիալական երևույթ է, ուստի, դրա դեմ պայքարի շրջանակներում արդյունքի հասնելու համար հարկ է ուշադրություն դարձնել պետություն-հասարակություն կառուցողա-

կան և շարունակական համագործակցությանը: Կոռուպցիան, ընդհանուր առմամբ, կարելի է բնորոշել որպես վստահված իշխանության չարաշահում անձնական նպատակներով (McCusker, 2006): Կոռուպցիան, թուլացնելով օրենքի իշխանությունը և վտանգի տակ դնելով պետության հեղինակությունը, մեծապես արգելակում է երկրի զարգացումն ու տնտեսական աճը:

Հակակոռուպցիոն ռազմավարության քաղաքականության մշակման միջազգային փորձառությունը

Միջազգային կազմակերպությունները, կառավարություններն ու մասնավոր հատվածը, գիտակցելով կոռուպցիայի լուրջ խոչընդոտ հանդիսանալն արդյունավետ կառավարման, տնտեսական աճի, պետական և միջազգային կայունության համար, ձեռնամուխ են եղել հակակոռուպցիոն օրենսդրության, քաղաքականության և դրա դեմ պայքարի մի շարք միջոցների մշակմանը: Հակակոռուպցիոն պայքարի պրակտիկային հայտնի են կոռուպցիայի հակազդման հետևյալ միջոցները և մեթոդները՝

1. Օմբուդսմեն՝ մասնավոր անձանց բողոքները քննարկող անձ
2. Իրավական հաստատությունների ուժեղացում՝ ազնվության և պատասխանատվության բարձրացման համար
3. Վարքագծի կանոնագիրք
4. Կոռուպցիայի դեմ պայքարը համակարգող խորհուրդ
5. Գլխավոր աուդիտոր (հաշվեքննիչ)
6. Պետական ծառայության բարեփոխում
7. Հակակոռուպցիոն անկախ մասնագիտացված հանձնաժողով
8. Կառավարական հաստատությունների ուժեղացում
9. Բյուջեի ձևավորման բաց գործընթացներ
10. Պետական գնումների մրցակցային գործընթացներ
11. Ժամանակակից ֆինանսական կառավարում (Այվազյան, Յազիձյան, 2005, էջ 26):

Վերոնշյալ միջոցներն ու մեթոդները **«ամբողջականության համակարգի»** («integrity system”) և **«հորիզոնական ենթահաշվետվության»** (“horizontal accountability») հայեցակարգերի անհրաժեշտ բաղադրիչներն են:

Ընդհանրապես, ամբողջականությունը (integrity) տվյալ դեպքում կոռուպցիայի դեմ ձեռնարկվող համակարգված և գիտակցված քայլերի ամբողջականությունն է: «Ամբողջականության համակարգը» (“integrity system) զսպիչների և հակակշիռների մի համակարգ է, որն ապահովում է իշխանության տարբեր ճյուղերի և մարմինների փոխադարձ ենթահաշվետվությունը (Alistar, Calistru, Cogpénaru, Miroiu, 2010, էջ 67): Այստեղ առանցքային հասկացություններն են՝ ենթահաշվետվությունը, թափանցիկությունը, կանխարգելումը և պատիժը: «Հորիզոնական ենթահաշվետվության համակարգի էությունն այն է, որ իշխանությունն ապակենտրոնացված է, ոչ ոք մենաշնորհ չունի և գոյություն ունի յուրաքանչյուրի անհատական պատասխանատվությունը: Այն ուղղված է «վերից վար» սկզբունքի վրա հիմնված համակարգից ներբա-

զատվելուն: Վերջինիս դեպքում կառավարող վերնախավը հրամաններ է արձակում, որոնց այս կամ այն չափով ենթարկվում են ուղղահայաց համակարգի մյուս բոլոր օղակները: «Հորիզոնական ենթահաշվետվության համակարգի» պայմաններում նախատեսվում է անցում ուղղահայաց պատասխանատվության համակարգից դեպի հորիզոնական ենթահաշվետվության համակարգ, այսինքն՝ «վերևները» ենթահաշվետու են «ներքևներին», այլ ոչ ընդհակառակը:

Կախված նրանից, թե ինչ գործառույթ է իրականացնում տվյալ գործակալությունը և թե իշխանության որ ճյուղի առաջ է նա պատասխանատու տվյալ գործունեության համար՝ առանձնացվում են չորս խումբ հակակոռուպցիոն հանձնաժողովներ՝

Համընդհանուր մոդել – այս մոդելն օժտված է կանխարգելիչ, հաղորդակցական, հետաքննչական գործառույթներով և ենթադրում է հաշվետվողականություն գործադիր իշխանության մարմնին: Մոդելի առավելությունը հիմնավորվում է նրանով, որ այն օժտված է ուժեղ մանդատով, ինչից էլ բխում է, որ այն իրավասու է կիրառել տարբեր հակակոռուպցիոն մոտեցումներ կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր հիմնական ուղղություններով: Այս մոդելը բարձրացնում է արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում և նվազեցնում է բյուրոկրատիան, հակակոռուպցիոն համակարգը դարձնելով ավելի պարզ: Արդյունքում, առկա է լինում հակակոռուպցիոն մարմին, որը, հանցագործությունների քննության գործառույթն իրականացնելիս, կարող է բացահայտել կոռուպցիոն սխեմաներ, այնուհետև, կանխարգելիչ և կրթական գործառույթներն իրականացնելիս, կազմել դրանց վերացմանն ուղղված իրավական ակտերի նախագծեր և մշակել հակակոռուպցիոն կրթական մեխանիզմներ: Հասարակության համար բարձրանում է հակակոռուպցիոն պայքարի թափանցիկության և տեսանելիության մակարդակը՝ բացառելով հակակոռուպցիոն մարմինների գործունեության վերաբերյալ շփոթությունը հանրության շրջանում: Չեզոքանում է գերատեսչական շահերի ռիսկը, նվազում են շահերի բախման իրավիճակները և միջգերատեսչական անառողջ մրցակցությունը (Մանուկյան, 2021, էջեր 54–55):

Հետաքննչական մոդել – այն փոքր և կենտրոնացված հետաքննչական հանձնաժողով է, որը հաշվետու է գործադիր իշխանության մարմնին:

Խորհրդարանական մոդել – որտեղ համապատասխան մարմինը հաշվետու է խորհրդարանական հանձնաժողովների առաջ: Տվյալ մոտեցման համաձայն կոռուպցիայի դեմ պայքարում առավել արդյունավետ է կազմակերպական կառուցվածքի թիրախավորումը այլ ոչ թե անհատների:

Բազմապրոֆիլ մոդել – տվյալ մոդելը ներառում է տարբեր գործակալություններ, որոնք համարվում են ինքնուրույն, սակայն միասին կազմում են հակակոռուպցիոն գործակալությունների ցանցը: Մի շարք մասնագետներ կարծում են, որ կոռուպցիայի կանխարգելման կարևոր տարրերից են հակակոռուպցիոն օրենսգրքերի առկայությունն ու դրանց գործնականում կիրառումը, միաժամանակ կարևորելով համապատասխան կարգավորման մեխանիզմների ներդրումը (Johan, Heilbrunn, 2004, էջ 7):

Հետազոտողների մի մասը համակված սկեպտիցիզմով պնդում են, որ արմատավորված կոռուպցիան, հովանավորչության ուժեղ ցանցերը, մասնավոր ձեռնարկության և պետական հիմնարկության միջև հստակ տարանջատման բացակայությունը, ինչպես նաև քաղաքական ու բիզնես վերնախավերի մասնակի հանընկնումն այն համոզման են հանգեցնում, որ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ջանքերն առանձնապես մեծ արդյունք չեն ունենա: Այնուամենայնիվ, առաջատար պետությունների զարգացման փորձը գալիս է փարատելու տվյալ թերահավատությունը, ևս մեկ անգամ հաստատելու, որ ընդհանուր առմամբ, իրենց գործունեության մեջ որոշակի հաջողությունների հասնելու համար կոռուպցիայի դեմ ակտիվ պայքարում ներգրավված մասնագիտացված մարմինները, հատկապես դատախազական գրասենյակները, պետք է ապահովեն օրենքով սահմանված խիստ պատժամիջոցները (Pope, 2004, էջ 12):

Չնայած, շատ երկրներ լուրջ դժվարությունների են բախվում միջազգային չափորոշիչներին համապատասխանելու հարցում՝ քաղաքական կամ այլ պատճառներով: Այսպիսով, կոռուպցիայի կանխարգելումն ու վերահսկումը իրավասությունների վրա մեծապես հիմնված, պետական և ոչ պետական կառույցների կողմից իրականացվող քաղաքականության գործընթացներ են, որոնք ուղղված են կոռուպցիոն դրսևորումների և դրանց ծավալի նվազեցմանը: Կոռուպցիայի վերահսկողությունն ավելի արդյունավետ դարձնելու ջանքերը պահանջում են համատեղել պատժիչ միջոցառումները՝ կանխարգելիչ միջոցառումների հետ, խթանները՝ սահմանափակումների հետ, բարեվարքության ներքին ստանդարտները՝ արտաքին փոխառված չափանիշների հետ, ինչպես նաև կիրառել ընթացակարգային, ինստիտուցիոնալ, կառուցվածքային և կրթական միջոցառումներ, էթիկայի սկզբունքներ և բարոյական կարգավորումներ: Այս բոլոր կառուցվածքային տարրերը համակցված կարող են գործառնել, եթե արմատավորվի բարեվարքության կայուն համակարգը, ինչը պահանջում է ինչպես հզոր քաղաքական կամքի առկայություն, այնպես էլ՝ պետական շահի գերակայությունը գիտակցող առաջնորդներ:

Եզրակացություն

Կոռուպցիան միջազգային մակարդակի սպառնալիք է, որը խարխլում է իրավունքի գերակայությունը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքները, արդարադատությունն ու սոցիալական արդարությունը, կառավարումը, անաչառությունը և հասարակական արդարությունը, խեղաթյուրում է մրցակցությունը, խոչընդոտում է տնտեսական զարգացմանն ու վտանգում ժողովրդավարական հաստատությունների և հասարակության բարոյական հիմքերի կայունությունը, վտանգում շուկայական տնտեսության պատշաճ և օրինական գործունեությունը:

Կոռուպցիայի կանխարգելման նպատակով համագործակցելով միջազգային կառավարական կամ ոչ կառավարական կառույցների հետ և օրենսդրության մեջ ամրագրելով այդ երևույթի բացասական ազդեցությունը և դրա

դեմ սահմանվող պատիժները ու հարկադրանքի այլ միջոցները, իրազեկելով հանրությանը այդ մասին, հնարավորություն կստեղծվի նվազեցնել կոռուպցիայի մակարդակը:

Այսպիսով, ուսումնասիրելով կոռուպցիայի դրսևորման ժամանակակից եղանակները և դրա դեմ պայքարը փոփոխվող աշխարհում պետք է նշել, որ այսօր ՝ չնայած մի շարք միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև պետության ներսում գործող տարբեր մարմինների գոյությանը, կոռուպցիան, ցավոք, շարունակում է տարածում գտնել օրեցօր զարգացող աշխարհում: Կարող ենք նշել, որ կոռուպցիայի դեմ որոշակի «դեղատոմս», այսինքն ՝ հակակոռուպցիոն պայքարի պատրաստի միջոցների համախումբ, գոյություն չունի: Սակայն արդեն իսկ առկա միջազգային լավագույն փորձի հիման վրա որոշ մեխանիզմների կիրառումը ազգային (ներպետական) մակարդակներում և հետևողական պայքարը կուղենշեն և հասանելի կդարձնեն կոռուպցիայի մակարդակի նվազեցումը: Կոռուպցիայի դեմ վճռական պայքարը սովորաբար կարող է ձեռնարկվել կամ իշխանության (վերևից ներքև), կամ հասարակության (ներքևից վերև), կամ էլ (ամենաարդյունավետ տարբերակ) երկուսի՝ իշխանության ու ժողովրդի համագործակցությամբ: Իսկ հասարակական գիտակցության մեջ ձևավորված է կոռուպցիայի՝ անհաղթահարելիության կայուն կարծրատիպը: Կարծում եմ, կոռուպցիայի դեմ պայքարը կարող է ավելի արդյունավետ լինել, եթե օրենսդիր մարմնի կողմից համապատասխան փոփոխությունների հիման վրա առանձնացված հանցագործությունների համար նախատեսվի ավելի խիստ պատիժներ, որն էլ կունենա իր կանխարգելիչ ազդեցությունը հասարակության անդամների և պետական-քաղաքական գործիչների վրա: Պետք է այս խնդրին ցուցաբերել համակարգված մոտեցում, և պետական իշխանության մարմինների կողմից քաղաքական կամք և հասարակության կողմից դրա էության հասկացում, ճիշտ գնահատում և համապատասխան վարքագծի դրսևորում:

Այսպիսով, կարելի է ասել, որ կոռուպցիան լինելով խմբակային բնույթի, «փակ» հարաբերությունների նորմերի արմատավորման ու վերարտադրության որոշիչ նախադրյալներից մեկը, վեր է ածվել հասարակության զարգացումը կաշկանդող երևույթի՝ արգելակիչ դեր կատարելով մարդու հնարավորությունների ու ազատությունների աճին, հավասարությանն ու կառավարմանը մասնակցության տեսանկյունից:

Օգտագործված գրականության ցանկ

Մանուկյան, Ե. Կ. (2021). *Կոռուպցիայի հիմնախնդրի սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը*, Եր., 01, Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի:

Այվազյան, Ա., Ցազիճյան, Գ. (2005). *«Հակակոռուպցիոն ռազմավարության միջազգային փորձը»*, գիտական նյութերի հատընտիր, Երևան:

Demmke, C. and Bossaert, D. (2004). *Ethics in the Public Services of the European Union Member States. Survey for the 42an meeting of the directors-general of the public service of the Europen Union member states.*

Menny, E. (1999). *Corruption*, London

Jeremy Pope (2000). *Confronting corruption: The elements of a national integrity system*, Transparency International Source Book.

Johan, R. Heilbrunn (2004). *Anti-Corruption Commissions Panacea or RTeal Medicine to Fight Corruption?* World Bank Institute.

Yeranuhi Manukyan, Marina Ilushina, Ani Stepanyan (2023). *Methodological Foundations of Socio-Philosophical and Legal Analysis of Corruption*, Wisdom.

Rob McCusker, (2006). *Review of anti-corruption strategies*, Technical and Background Paper, No. 23, Australian Institute of Criminology.

Robert Klingaard (2001). *"International Cooperation Against Coouption",* Finace & Development/ March.

Victor Alistar, Elena Calistru, Iuliana Cogpénaru, Monica Miroiu (2010). *"Integrity and Resistance of Corruption of the Law Enforcement Bodies in South Eastern European Countries"*, Transparency International Romania.

References

Manukyan, E. K. (2021). *Kor'owpciayi himnaxndri social-pilisopayakan verlowcowtyowny [Socio-philosophical analysis of the problem of corruption],* Er., 01, Banber Evrasia mijazgayin hamalsarani (In Arm.)

Ayvazyan, A., Yazitwyan, G. (2005). *«Hakakorowpcion razmavarowtyan mijazgayin pordy»* [International experience in anti-corruption strategies], gitakan nyowteri hatyntir, Erevan, (In Arm.)

Demmke, C. and Bossaert, D. (2004). *Ethics in the Public Services of the European Union Member States. Survey for the 42an meeting of the directors-general of the public service of the Europen Union member states.* (In Engl.)

Menny, E. (1999). *Corruption*, London (In Eng.)

Jeremy Pope (2000). *Confronting corruption: The elements of a national integrity system*, Transparency International Source Book, (In Eng.)

Johan, R. Heilbrunn (2004). *Anti-Corruption Commissions Panacea or RTeal Medicine to Fight Corruption?* World Bank Institute, (In Eng.)

Yeranuhi Manukyan, Marina Ilushina, Ani Stepanyan (2023). *Methodological Foundations of Socio-Philosophical and Legal Analysis of Corruption*, Wisdom (In Eng.)

Rob McCusker (2006). *Review of anti-corruption strategies*, Technical and Background Paper, No. 23, Australian Institute of Criminology, (In Eng.)

Robert Klingaard (2001). *"International Cooperation Against Coouption",* Finace & Development/ March (In Eng.)

Victor Alistar, Elena Calistru, Iuliana Cogpénaru, Monica Miroiu (2010). *"Integrity and Resistance of Corruption of the Law Enforcement Bodies in South Eastern European Countries"*, Transparency International Romania (In Eng.)

Ерануи Манукян
Преподаватель Ереванского государственного унивеситета и Международного Университета Евразия, кандитат философских наук, доцент
Эл.адрес: e.manukyan@ysu.am

ОСОБЕННОСТИ РАЗРАБОТКИ СТРАТЕГИЧЕСКОЙ ПОЛИТИКИ АНТИКОРРУПЦИИ

Статья посвящена разработке антикоррупционной стратегии, деятельности антикоррупционных комитетов, а также возможностям и препятствиям, которые могут способствовать или препятствовать разработке антикоррупционной стратегии. Основой данного анализа стали результаты комплексного теоретического и практического анализа известных исследователей, базирующиеся на международном опыте.

Разработка эффективной стратегии борьбы с коррупцией требует сочетания институциональных реформ, правовых механизмов и участия общественности. Комиссии по борьбе с коррупцией играют решающую роль в реализации превентивных мер, расследовании случаев коррупции и обеспечении подотчетности. Однако различные препятствия, такие как политическое влияние, нехватка ресурсов и правовые пробелы, могут помешать их эффективности. Путем всестороннего анализа проблемы статья стремится внести вклад в дискурс по антикоррупционной политике, предлагая понимание того, как разработанные стратегии могут улучшить взаимодействие с общественностью. В выводах подчеркивается важность системного подхода, объединяющего правовые, институциональные и общественные усилия для эффективной борьбы с коррупцией.

Ключевые слова: противодействие коррупции, стратегия, общество, этика, коррупция, социальная, политическая.

Yeranuhi Manukyan
Lecturer at Yerevan State University and Eurasia International University
Ph.D. in Philosophy, Associate Professor
Email: e.manukyan@ysu.am

FEATURES OF DEVELOPING AN ANTI–CORRUPTION STRATEGY

The article is devoted to the development of an anti–corruption strategy, the activities of anti–corruption committees, as well as opportunities and obstacles that may facilitate or hinder the development of an anti–corruption strategy. This analysis is based on the results of a comprehensive theoretical and practical analysis by renowned researchers based on international experience. Developing an effective anti–corruption strategy requires a combination of institutional reforms, legal mechanisms and public participation. Anti–corruption commissions

play a crucial role in implementing preventive measures, investigating corruption and ensuring accountability.

However, various obstacles such as political influence, lack of resources and legal gaps can hinder their effectiveness. Through a comprehensive analysis of the problem, the article seeks to contribute to the discourse on anti-corruption policy by offering insights into how developed strategies can improve public relations. The conclusions emphasize the importance of a systemic approach that integrates legal, institutional and public relations efforts to effectively combat corruption.

Key words: anti-corruption, strategy, society, ethics, corruption, social, political.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. նոյեմբերի 26-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 29-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Լիլիթ Մակարյան
Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու
https://orcid.org/my-orcid?orcid=0009-0008-4696-1962
Էլ. հասցե՝ l.makaryan@ysu.am

Մարինե Գևորգյան
Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ
https://orcid.org/0000-0002-3569-4132
Էլ. հասցե՝ marine.gevorgyan@ysu.am

DOI: 10.53614/18294952–2024.2–74

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ. 1988–1992 ԹԹ. ՍՈՒՄԳԱՅԻԹԻ, ԲԱՔՎԻ ԵՎ ՄԱՐԱՂԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ադրբեջանի հակահայ քաղաքականությունը 1988–1991 թվականներին բնորոշվում էր ընդգծված ազգայնականությամբ, ազգային հակամարտություններով և բռնարարքներով, որոնք հատկապես ուժգնացել էին Ղարաբաղյան հակամարտության ֆոնին: Այս տարիների ընթացքում Ադրբեջանի իշխանությունները և հասարակությունը սարսափելիորեն թշնամացել էին հայերի դեմ, որոնց արդյունքում և ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների թողտվությամբ էլ տեղի էին ունեցել բազմաթիվ բռնություններ: Բաքվի հակահայ քաղաքականությունը կարելի է բաժանել մի քանի հիմնական փուլերի, որոնցից հատկապես կարևոր են 1988թ. սեպտեմբերի վերջին սկսված զանգվածային անկարգությունները, որոնք դարձան առիթ հայերի զանգվածային ջարդերի համար՝ ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում: 1988թ. փետր-

վարին սկսվեցին առաջին ցույցերը Երևանում և Ստեփանակերտում՝ կապված Լեռնային Ղարաբաղի հարցի հետ, որտեղ հայերը պահանջում էին ինքնորոշման իրավունք: Սա սաստկացրեց ադրբեջանական ազգայնական դրսևորումները, որի արդյունքը դարձավ հայերի նկատմամբ ատելությունը: Անկարգությունները սկսվեցին 1988 թվականի փետրվարին Սումգայիթում (Ադրբեջան)՝ հայերի նկատմամբ տեղի ունեցած սարսափելի ջարդերի տեսքով, ապա շարունակվեցին Բաքվում, Կիրովաբադում, Մարաղայում և այլուր: Մինչ օրս Սումգայիթի և այլ վայրերում հայերի նկատմամբ ցեղասպան քաղաքականություն իրականացրած Բաքվի գործողությունները չեն ստացել համապատասխան միջազգային գնահատական: Սույն գիտական հոդվածը իր եզրահանգումներով հանդերձ կարող է գործնական նշանակություն ունենալ հայագիտության, դիվանագիտության և միջազգային հարաբերություններով, մասնավորապես խնդրո առարկա հիմնահարցով հետաքրքրված հետազոտողների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակի համար:

Հիմնաբառեր: Ղարաբաղյան հակամարտություն, սումգայիթյան ջարդեր, Բաքու, Մարաղա, «Վերակառուցում», արցախահայություն, հակահայ քաղաքականություն, խորհրդային իշխանություններ, ազգերի ինքնորոշման իրավունք:

Ներածություն

Ադրբեջանի հակահայ քաղաքականությունը Սումգայիթում, Բաքվում, Մարաղայում առանձնահատուկ դեր են ունեցել հայ ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի իրականացրած ատելության և բռնությունների համատեքստում: Սումգայիթը, որը գտնվում է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից մոտ 30 կմ հեռավորության վրա, հայտնի է 1988 թ. այն իրադարձություններով, որոնք բուռն արձագանք գտան ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև միջազգային հանրության շրջանում: Այդ ժամանակ, երբ Արցախյան շարժման հետ մեկտեղ հայերի հանդեպ հակահայկական տրամադրությունները ուժեղանում էին, Սումգայիթում հայ բնակչության հանդեպ սկսվեցին զանգվածային բռնություններ: 1988թ. փետրվարի 27–29-ին տեղի ունեցան զանգվածային հարձակումներ հայերի վրա, որոնք ուղեկցվեցին սպանություններով, բռնաբարություններով, հրկիզումներով և հայերին իրենց տներից դուրս մղելով: Պաշտոնական տվյալների համաձայն՝ 26 հայ զոհվեց, հազարավոր մարդիկ մնացին անօթևան: Այս դեպքերը, որոնք տեղի ունեցան Ադրբեջանի իշխանությունների ու ոստիկանության աչքի առջև, ցույց տվեցին, թե որքան բացահայտ ու համակարգված կերպով կարող են տեղի ունենալ հակահայկական գործողություններ՝ իշխանությունների ու հասարակության որոշ շրջանակների աջակցությամբ:

Հակահայ հիստերիայի հաջորդ դրվագը ադրբեջանական մյուս քաղաքներում էր, հատկապես Բաքվում 1990թ. հունվարի 13–20, որին հաջորդեց Հյուսիսային Արցախը հայաթափելու «Օղակ» գործողությունը՝ ԽՍՀՄ ներքին

զորքերի և ադրբեջանական օմոնականների անմիջական կատարմամբ, իսկ ամենասարսափելին կապված է Մարաղայի ողբերգական դեպքերի հետ, որի ահասարսուռ տեսարանները ցնցել էր Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսին: Մարաղայի կոտորածը տեղի է ունեցել 1992թ. ապրիլի 10-ին՝ Արցախյան պատերազմի ռազմական գործողությունների ընթացքում, երբ Ադրբեջանը և հայկական ուժերը պայքարում էին Արցախի վերահսկման համար: Մարաղա գյուղը, որը գտնվում էր Արցախի տարածքում, դարձավ ադրբեջանական զորքերի հարձակումների թիրախ, որի ժամանակ Մարաղայի հայ բնակչությունը ենթարկվեց վայրագությունների, որոնք բազմաթիվ դեպքերով հատկանշվում էին անմարդկային դաժանությամբ՝ սպանություններ, հրկիզումներ, բռնություններ և պլանավորված կոտորածներ: Մարաղայի կոտորածի ընթացքում զոհվեց մոտ 50 մարդ, իսկ գյուղի մնացած բնակիչները կամ բռնաբարությունների ենթարկվեցին, կամ էլ ձերբակալվեցին և տեղափոխվեցին ճամբարներ, մատնվեցին գերության, որոնցից շատերի ճակատագիրը մինչ օրս անհայտ է: Հատկանշական է, որ Ադրբեջանի իշխանությունները ու լրատվամիջոցները այդ ժամանակ չդատապարտեցին այս գործողությունները, այլ հակառակը՝ փորձեցին խեղաթյուրել իրականությունը՝ ներկայացնելով, որ հայկական ուժերը «հարձակվել» են խաղաղ բնակչության վրա: Սույն գիտական հոդվածում փորձ է կատարվել վեր հանել պատմական փաստերը, այդ թվում՝ խորհրդային, ինչպես նաև ադրբեջանական մամուլի էջերից առանձնացնել այն անհերքելի ապացույցները, որոնք այսօր միջազգային հանրության շրջանում նոր լույս կսփռեն Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության դրսևորումների վրա:

Մեթոդ

Աշխատանքը գրելիս օգտագործվել են պատմաքննական, պատմահամեմատական, վերլուծական մեթոդները: Հոդվածը շարադրվել է նորահայտ փաստերի հիման վրա, որոնցով ընդգծվել են Ադրբեջանի վարած հայահալած քաղաքականության դրսևորումները, նկարագրվել են Սումգայիթյան ցեղասպանության մի շարք անմիջական մասնակիցների դատավարության դրվագները:

Ադրբեջանի էթնիկ զտման քաղաքականությունը ԽՍՀՄ վերջին տարիներին. Սումգայիթի և Բաքվի հայերի կոտորածները

ԽՍՀՄ-ում ազգային հիմնախնդիրները սրվեցին, երբ 1980-ականներին ազդարարվեց գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքականությունը, որի կարևորագույն բաղադրիչներից էր «Հրապարակայնացում» կարգախոսը, ինչն էլ հույս էր ներշնչում հայ ժողովրդին խորհրդային իշխանությունների երբեմնի կայացրած անարդարացի որոշումների շտկման և պատմական արդարության վերականգնման համար: Ի պատասխան արցախահայության արդարացի պահանջներին, որոնք հիմնված էին քաղաքակիրթ աշխարհի

որդեգրած ժողովրդական և միջազգային իրավունքի սկզբունքների, ինչպես նաև ԽՍՀՄ 1978 թ. Սահմանադրության վրա, ստորագրահավաք կազմակերպեցին և հարյուր հազարի հասնող ստորագրված պահանջագիրը 1988 թ. հանձնեցին ԽՍՀՄ ղեկավարությանը: ԼՂԻՄ մարզային խորհուրդը և ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը 1988 թ. համապատասխան որոշումներով դիմեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ ժամանակին կայացված անարդարացի որոշումը շտկելու և Արցախը Խորհրդային Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին վերամիավորելու խնդրանքով: Դրան ի պատասխան՝ Ադրբեջանի իշխանությունները 1988–1990 թթ. ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների թողտվությամբ իրականացրին արցախահայության բռնի տեղահանումներ, ջարդեր, էթնիկ զտումներ, ինչպես օրինակ՝ Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Մինգեչաուրում և այլ բնակավայրերում: Մասնավորապես 1988թ. Սումգայիթում հայերի նկատմամբ իրականացված բռնությունների և ոճրագործության դատավարության ընթացքի վերաբերյալ այդ ամիսներին «Московские новости» թերթում հատուկ թղթակից Վիկտոր Լոշակը տեղեկություններ է հաղորդում: Թերթի այդ հոդվածում նշվում է, որ ԽՍՀՄ դատախազությունը այդ կապակցությամբ Սումգայիթում կենտրոնացրել է հարյուրավոր քրեագետների և քննիչների, աշխատում են մոսկովյան բժշկական էքսպերտներ: Քննության շարժառիթներն էին ջարդերը, սպանությունները, բռնաբարությունները: Առողջապահության քաղաքային բաժանմունքի ղեկավար Վագիֆ Կաղրամանովը հաղորդում էր, որ, քանի որ կյանքի սպառնալիք կար, ուստի հայերին էվակուացրել էին մշակույթի տանը: Դրա ականատեսն էր եղել հիվանդանոցի խոհարար Էմմա Սարգսյանը՝ իմանալով հանդերձ արդեն, որ ջարդարարների կողմից սպանվել էր ամուսինը: Թերթի հաղորդմամբ Սումգայիթի դատախազ Իսմեթ Գահիբովը ձերբակալման սանկցիա էր արդեն տվել 60 հոգու: Ի. Գահիբովը նշել է, որ «Չեմ կարող հավատալ, որ գազան-հանցագործներին ադրբեջանցի մայր է ծնել...» («Московские новости», №16, 17 апреля, 1988):

«Коммунист Сумгаита» թերթը ևս անդրադարձել էր հայերի նկատմամբ Սումգայիթում կազմակերպված սպանդին, իրենց պարտականություններում թերացող և ոճրագործությունը թողտվող ադրբեջանցի չինովնիկների պաշտոնանկություններին և իրավական գործընթացին: Մասնավորապես հիշատակվում է, որ տեղի ունեցած ողբերգության ամենամեծ մեղքը Սումգայիթի քաղկոմի 1-ին քարտուղար Դ. Մ. Մուսլիմ-Զադեհինն է, ով նույնիսկ անտեսելով ԽՄԿԿ Կենտկոմի հրահանգները, չէր վերադարձել արձակուրդից: Վերջինս ազատվում է զբաղեցրած պաշտոնից և հեռացվում ԽՄԿԿ-ից: Նույն ճակատագրին է արժանանում նաև Սումգայիթի քաղաքային ներքին գործերի բաժանմունքի ղեկավար Խ. Խ. Զաֆարովը: Մի շարք քաղաքային կուսակցական ղեկավար գործիչների, ինչպիսիք էին Սումգայիթի քաղաքային կոմիտեի 2-րդ քարտուղար Մ. Ա. Բայրամովը, Սումգայիթի քաղկոմի քարտուղար Ա. Խ. Սամոլազովը, տրվում են խիստ նկատողություններ և այդ մասին գրանցում են ԽՍՀՄ հաշվառման քարտերում (Коммунист Сумгаита, 20 марта 1988): Ադրբեջանի պաշտոնյաների անգործությունն ու թողտվութ-

յունն ակնհայտ էր, որոնք որևէ գործնական քայլեր չէին իրականացրել՝ կանխելու հայերի դեմ նախօրոք ծրագրված և կազմակերպված հարձակումներն ու սպանդը:

Նույն «Коммунист Сумгаита» թերթում թղթակիցը հարցազրույց էր վերցրել Սումգայիթի ժողովրդական դատարանի նախագահ Սախիբ Մամեդովից: Վերջինս նշում էր, որ այդ ժամանակ արդեն 444 մարդ կանգնել է դատարանի առաջ, նրանցից շատերի մոտ սառը զենքեր ու դանակներ են հայտնաբերվել, նույնիսկ անուններ է նշում, ինչպես օրինակ Բաքվում Լենինի անվան խողովակների արտադրամասի փականագործ Ա. Էպշտեյնը, «Շիրվան» երկաթուղային կայարանի փականագործ Ն. Նաջափովը, САЗа վերանորոգչական մեխանիկական գործարանի խառատ Ռ. Ռասուլովը, տաքսիմոտոցիկլային պարկի վարպետ Ա. Ալեքպերովը, գազափրկարարական ծառայության աշխատակից Վ. Մամեդովը: 30 հոգի գործով անցնողներից ոչ մի տեղ չեն աշխատել և Ս. Մամեդովի գնահատմամբ դա պետք է անհանգստացնի իրավապահ մարմիններին («Коммунист Сумгаита», 20 марта 1988):

«Известия» թերթին տված հարցազրույցում ԽՍՀՄ Գլխավոր դատախազ Ա. Կատուսևը նշում է, որ անկասկած Սումգայիթում տեղի ունեցածը կապված է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի հետ և որ հաստատված է, որ խուլիգանական տարրեր են գործել: Կատուսևի հետ հարցազրույցում նշվում է, որ փետրվարի 27-ին Լենինի անվան հրապարակում հավաքվել է բազմամարդ ամբոխ, հիմնականում երիտասարդներ և կոչ են արել հարձակվել հայերի վրա, փետրվարի 28-ին իրավիճակը հասել է գագաթնակետին, ադրբեջանցիներից բաղկացած խմբերը՝ զինված փայտերով, քարերով և այլ առարկաներով, հարձակվել են հայերի բնակարանների վրա և իրականացրել դաժան բռնություններ, ավիրել նրանց գույքը: Բռնարարների շարքում են եղել նաև դատապարտված անձինք: Այդ ամենի հետևանքով սպանվել է 32 մարդ, որից 26-ը՝ հայեր, ջարդուփշուր են արել և վառել 50 կենցաղային նշանակության օբյեկտներ, թալանել մոտ 200 բնակարաններ («Известия», 20 августа 1988г):

Վիկտոր Լոշակը «Московские новости» թերթում մանրամասներ է հաղորդում Սումգայիթում տեղի ունեցած ոճրագործության դատավարություններից մեկի վերաբերյալ: Նա հաղորդում է, որ Սումգայիթյան ոճրագործության դատավարությունը քննում էր Ադրբեջանի գերագույն դատարանը՝ Ալբերտ Կլոկովի նախագահությամբ: Դատավարությամբ անցնում էր ծեփագործների բրիգադավար Սալեհ Իսմայիլովի և բակերի հավաքարար Չիմնազ Աբասովայի 8 զավակներից Թարեն: Վերջինս չէր ժխտել մեղադրանքը, առ այն, որ ինքն է ծեծված, ասֆալտին նետված Շահեն Սարգսյանի գլխին մետաղաձողով սարսափելի երկու հարված հասցրել: Դա այն դեպքում, որ չի ճանաչել ո՛չ Շահեն Սարգսյանին, ո՛չ էլ նրա որդիներին: Դատավարության բոլոր օրերին Սումգայիթի 9-րդ միկրոշրջանի դատարանի փոքրիկ դահլիճը շրջապատված էր միլիցիայի բազմաթիվ կարգախմբերով: Պարզ չէր, թե ինչպես էր ստացվել, որ փետրվարի 28-ին և փետրվարի 29-ին քաղաքի շատ հեռախոսներ անջատված են եղել: Ո՞վ պետք է պատասխան տար այդ ամե-

նի համար, մինչդեռ անհրաժեշտ էր մարդկանց էվակուացնել: Ակներև էր այն մարդկանց անգործությունը, ումից իրավունք ունեին պաշտպանություն սպասելու, ավելին, այդ նույն չինովնիկները խրախուսել են ամբոխին՝ հայերին կոտորելու հարցում: Խրախուսել են ու դրդել սպանությունների և բռնարարությունների, 200 բնակարանների, 50 խանութների ու կրպակների ավերման, 20 ավտոմեքենաների հրկիզման: Ասվածի ապացույցն այն է, որ Սումգայիթի միլիցիայի ավելի քան տասնյակ ղեկավար սպաներ վտարվել են համակարգից, ԽՍՀՄ դատախազությունը հատուկ քննություն է կատարել: Արդեն ձերբակալվել էին 80 հոգի՝ մեծամասնությունը բանվորներ և կոմերիտականներ, գյուղաբնակներ, գործարանային հանրակացարանների բնակիչներ: 365 ընտանիքներ (խոսքը հայկական ընտանիքների մասին է) դեռևս այլ քաղաքներում էին: Սումգայիթի բոլոր իրադարձությունների կենտրոն է եղել ավտոկայարանը, այստեղ էլ հավաքվել են խուլիգանները, որտեղից էլ սկսել են արշավը: Պետական մեղադրող ԽՍՀՄ գլխավոր դատախազի օգնական Վյաչեսլավ Լեբեդևը, խնդրել է Թ. Իսմայիլովին դատապարտել 15 տարվա ազատազրկման: Ավելի քան 5 ժամ խորհրդակցելով՝ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն դատարանը մայիսի 16-ին կայացրեց դատավճիռը, որով Թ. Իսմայիլովը դատապարտվել է ազատազրկման՝ 15 տարի ժամկետով («Московские новости», 22 мая, 1988г.: «Արարատ», 2 հունիսի, 1988, Բեյրութ, էջ 2): Սակայն Սումգայիթ քաղաքում հայերի հանդեպ իրագործած բռնություններ կատարողներն ու կազմակերպիչները չկրեցին իրենց պատիժը, քանի որ ԽՍՀՄ-ը փլուզվեց, ավելին՝ անկախացած Ադրբեջանում նրանցից շատերը արժանացան բարձր պետական պաշտոնների:

Խորհրդային Ադրբեջանում և նրա կազմ ներառված Լեռնային Ղարաբաղում և Նախիջևանում հայերի հանդեպ էթնիկ զտումների, պետականորեն հովանավորվող բռնությունների մասին են վկայում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանների աշխատանքների քրոնիկոնը, որոնք արտացոլվել են ԽՍՀՄ մամուլի էջերում: Մասնավորապես Բաքվում հայերի ջարդեր կազմակերպելու կապակցությամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի՝ 1990 թ. փետրվարի 19-ին կայացած երկու պալատների համատեղ դռնփակ լիագումար նիստում ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովը պատասխանում է ակադեմիկոս Աբասովի այն մեղադրանքներին, որ ԽՍՀՄ զորքերը մտել են Բաքու գիշերը՝ մթության քողի տակ, հանկարծակի: Մասնավորապես Դ. Յազովը նշում է, որ մի ամբողջ շաբաթ շարունակ, ամբոխություններ էին պատրաստվում՝ մի դեպքում մինչև 200 կմ երկարությամբ, մի այլ դեպքում՝ մինչև 60 կմ, ոչ թե ինչ-որ թափոններից էին այդ ամբոխությունները կառուցվում, այլ նոր «Կրազներով», «Կամազներով», դրանց արանքում պարտադիր կերպով բենզատար մեքենաներ էին դնում: Այդ ամենը եռակցվում էր, ամրացվում, պատրաստվել էին հրկիզող խառնուրդով շշեր և այդ ամենը պահպանվում էր գրոհայինների կողմից: Ամեն մի բարիկադում 70-ից մինչև 700 մարդ էր գտնվում: Դ. Յազովը հռետորական հարց է ուղղում, որ միթե դա հանկարծակիություն էր: Դ. Յազովի ելույթի ընթացքում ադրբեջանցի պատգամավորները սկսում են դուրս գալ դահլիճից: Նիստում

նշում է նաև ադրբեջանական սադրանքների մասին, որ թաղել էին 49 մարդ, փորել 150 գերեզման, որպեսզի ինչ-որ ձևով պատասխանատվությունից խուսափեն իրենց սեփական ժողովրդի առաջ, մեղքը գցեն Կենտրոնի վրա: Դ. Յազովը հիշատակում է ԽՍՀՄ զինվորների նկատմամբ Բաքվում կիրառված բռնությունների դեպքերից, որին նրբանցքում շշմեցրել, քարշ էին տվել բնակարան, մերկացրել և վզին օղակ գցած նետել գերեզմանոց: Ըստ նրա՝ այդ սերժանտը կենդանի էր մնացել, կարողացել էր դուրս պրծնել օղակից, իսկ չորս զինվոր մինչև այժմ էլ դեռ չեն գտնվել, իսկ եթե ոմանց էլ գտել են, ապա որովայնը գնդակներով ծակած: Բոլոր զոհվածների զննումը ցույց է տալիս, որ նրանց կեսը մեջքից էին սպանվել: Դ. Յազովն իր ելույթում նշում է, որ պետք է դատապարտել ազգայնականությունը՝ որպես երևույթ՝ շեշտելով, որ վերջիվերջո հարկավոր է սահմանել այն կարգավիճակը, որ պետք է ունենա Լեռնային Ղարաբաղը («Ավանգարդ», մարտի 7, 1990): ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովի այս ելույթը հստակ ապացուցում է, որ Ադրբեջանում հայերի հանդեպ կիրառված բռնությունները կապված էին Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ: Նույնիսկ ԽՍՀՄ բարձրաստիճան զինվորական ղեկավարությունը՝ ի դեմս Յազովի հասկանում էր, որ անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղին կարգավիճակ սահմանել:

Լեռնային Ղարաբաղում ԽՍՀՄ ղեկավարության բարձր հովանու ներքո 1991 թ. ապրիլի 30-ից սկսվեց «Օղակ» գործողությունը: ԽՍՀՄ ներքին զորքերի և ադրբեջանական հատուկ ջոկատայինների կողմից օղակի մեջ վերցվեց Արցախի բնակավայրերը: Գետաշենից և Մարտունաշենից հայ բնակչությանը ստիպեցին լքել իրենց բնակավայրերը: Մինչև 1991 թ. աշուն ձգված «Օղակ» գործողության հետևանքով Լեռնային Ղարաբաղի իրենց հայրենի բնակավայրերից՝ Խանլարի, Շահումյանի, Մարտակերտի, Շուշիի, Հադրութի շրջանների տասնյակ գյուղերից բռնի տեղահանվեցին հայ բնակչությունը (Манасян, 2005, էջ 68-69): Ինչպես Վ. Կազիմիրովն է իր գրքում նշում, այդ գործողության նպատակը հայկական անօրինական զինված կազմավորումների զինաթափումն էր, բայց հանգեցրեց խաղաղ բնակչության հանդեպ բռնությունների, Հյուսիսային Արցախի բնակավայրերից հայ բնակչության զանգվածային տեղահանությունների (Казимиров, 2009, էջ 26):

Խորհրդային Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի դրության, շրջափակման, ջարդերի և այնտեղ մարդու իրավունքների վերաբերյալ Եվրոխորհուրդը դեռևս 1988-1991 թթ. ընդունել է մի շարք բանաձևեր, մասնավորապես 1988թ. հուլիսի 7-ի (European Parliament Resolution on the situation in Soviet Armenia), 1990թ. հունվարի 18-ի (European Parliament resolution on the situation in Armenia) և 1991թ. մարտի 14-ի (European Parliament Resolution on the blockade of Armenia and the human rights situation there, 14 մարտի 1991, «Ազատամարտ», 15 մարտի 1991) բանաձևերում ուշադրություն էր հրավիրում այն փաստին, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության 80 տոկոսը հայեր են և Ադրբեջանի կազմ է մտցվել 1923թ., բանաձևերում դատապարտում էր Սումգայիթի և Բաքվի հայության ջարդերը, հայերի զանգվածային տեղահանությունը, 300 հազար հայ փախստականների դրությունը Սումգայիթ և Բաքու

քաղաքներից, ինչպես նաև երկրաշարժը և հայերի ջարդերն Ադրբեջանում ի հայտ են բերել 500 հազար հայերի ծանր դրություն, Հայաստանի շրջափակման, էլեկտրաէներգիայի և գազի տագնապը, որից տառապում է Հայաստանը շրջափակման պատճառով, Լեռնային Ղարաբաղի Շահումյանի և Գետաշենի վրա հարձակումները, Ադրբեջանում, հատկապես Սումգայիթում և Կիրովաբադում հայերի ջարդերը: Եվրոխորհուրդը կոչ էր անում ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին անհապաղ որոշումներ ընդունել, որոնց կհաջորդեն գործնական քայլեր, որոնք ի զորու կլինեն ամբողջականորեն և վերջնականորեն դադարեցնելու շրջափակման դրությունը Հայաստանում և Ղարաբաղում, ինչպես նաև հարվածները՝ Ղարաբաղի և մերձակա շրջանների հայ բնակչության հանդեպ, որին կարծես փորձում են բռնի ուժով տեղահանել: Միաժամանակ Եվրոպառլամենտը որոշման մեջ կոչ է ուղղում Մ. Գորբաչովին, որպեսզի վերականգնեն Լեռնային Ղարաբաղի օրինական և սահմանադրական իշխանությունները՝ իրենց իրավունքների մեջ (European Parliament Resolution on the blockade of Armenia and the human rights situation there, 14 մարտի 1991, Ազատամարտ, 15 մարտի 1991):

1991 թ. սկսած՝ Ադրբեջանը սկսեց լայնածավալ պատերազմ՝ գոյության սպառնալիք ստեղծելով ոչ միայն ԼՂԻՄ-ի, այլև Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի համար: ԽՍՀՄ Սահմանադրությունը, միջազգային իրավունքը ամրագրել էին ազգերի ինքնորոշման հիմնարար դրույթները, իսկ Մ. Գորբաչովի որդեգրած «Վերակառուցման» քաղաքականությունը այդ իրավունքը իրացնելու և ԽՍՀՄ ազգային հիմնահարցերը ժողովրդական ճանապարհով լուծելու մեծ հնարավորություններ էին տալիս: Սակայն ԽՍՀՄ ղեկավարության որդեգրած ժողովրդական բարեփոխումների թեզերը կեղծ էին և կործանարար՝ գոյության պայքար մղող և անընդմեջ ձուլման սպառնալիքի տակ գտնվող ԽՍՀՄ ժողովուրդների համար, որոնք տարածքային վերաձևումների արդյունքում հայտնվել էին այս կամ այն խորհրդային հանրապետության կազմում: ԽՍՀՄ փլուզման գործընթացում և Ադրբեջանի սանձազերծած պատերազմի արդյունքում ԼՂԻՄ-ի հայ ժողովրդին այլ ելք չէր մնում, քան 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակելու իր անկախությունը («Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի 1991, ԼՂՀ անկախության հռչակագիր, 2 սեպտեմբերի 1991), որը միակ երաշխավորված անվտանգային մեխանիզմն էր ազգերի գոյատևման համար:

ԽՍՀՄ-ից անկախացման ուղին բռնեց նաև Ադրբեջանը: Վերջինը 1991 թ. հոկտեմբերի 18-ին ընդունեց Անկախության մասին Սահմանադրական ակտ, որի 1-ին 2-րդ, 3-րդ հոդվածներով Ադրբեջանն իրեն համարել է 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի իրավահաջորդը և այդպիսով Ադրբեջանի մասով չեղյալ համարել ԽՍՀՄ դաշնագիրը (Конституционный Акт Азербайджанской Республики, 18 октября 1991): Հիշեցնենք, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմ էր ներառվել 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի որոշմամբ, այսինքն՝ 1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետության կազմում Լեռնային Ղարաբաղը չի մտել, որը հիմնավորվում է նաև 1991թ. հոկտեմբերի 18-ի Ադրբեջանի անկախության մասին սահ-

մանադրական ակտով, իսկ արդյունքում ԽՍՀՄ փլուզման հետևանքով անկախացան և՝ Ադրբեջանը, և՝ նախկին ԼՂԻՄ-ը:

Ադրբեջանի հայատյաց քաղաքականության շարունակությունը անկախացումից հետո. Մարաղայի եղեռնագործությունը

1991 թ. դեկտեմբերի 21-ին Անկախ պետությունների համագործակցություն կազմակերպության համաձայնագրին («Алма-Атинская Декларация») միացան փաստացի գործող սահմաններով անկախացած Հայաստանը և Սահմանադրական ակտով իրեն 1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդ հռչակած Ադրբեջանը, այսինքն՝ առանց Լեռնային Ղարաբաղի:

Արդեն իսկ անկախացած Ադրբեջանը շարունակում էր հայահալած քաղաքականությունը նաև հաջորդ տարիներին: 1992 թ. ապրիլի 10-ին տևական հրետակոծումից հետո ադրբեջանական զինված ստորաբաժանումները ներխուժել են Մարաղա, ուր հայ աշխարհազորայինների փոքրաթիվ ջոկատին թեև հաջողվել էր Մարաղայից տարհանել բնակիչների մեծ մասին, բայց մոտ 118 անձ՝ հիմնականում տարեցներ, հաշմանդամներ, կանայք և երեխաներ, դեռ մնացել էին բնակավայրում: Նրանցից շատերը դաժանաբար խոշտանգվել, ապա սպանվել են ադրբեջանական բանակի զինվորների կողմից: Այդ ռազմական հանցագործությանը զոհ գնաց ավելի քան 50 մարդ, այդ թվում՝ 30 կին (ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Մարաղայում հայերի կոտորածի 30-րդ տարելիցի կապակցությամբ, 10 ապրիլի, 2022):

Մարաղայի եղեռնագործության փաստերն արձանագրված են Human Rights Watch-ի (Human Rights Watch, 1994, էջեր 7, 94) և Amnesty International-ի կողմից (Amnesty International, April 1993, էջ 9): Ինչպես վկայում է Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի անդամ և պալատի նախկին փոխխոսնակ, իրավապաշտպան բարոնուհի Քերոլայն Քոքսը, ով ողբերգությունից անմիջապես հետո «Christian Solidarity Worldwide» կազմակերպության մի խումբ ներկայացուցիչների հետ այցելել էր ավան, Մարաղայի գազանաբար սպանված բնակիչների մարմիններն անդամահատված էին, այլանդակված և հրկիզված: Բարոնուհի Քոքսը Մարաղան անվանել է «ժամանակակից Գողգոթա, միայն թե՝ շատ ավելի սարսափելի» (Interview with Caroline Cox): Գերեվարվածների մի մասին, այդ թվում՝ բոլոր երեխաներին, հետագայում հաջողվել է վերադարձնել, սակայն 19 պատանդների ճակատագիրն առ այսօր անհայտ է:

Երկու շաբաթ անց Մարաղան երկրորդ գրոհին է ենթարկվել, որի ընթացքում իրենց հարազատներին հուղարկավորելու համար Մարաղա վերադարձած բնակիչներն ադրբեջանական բանակի նոր վայրագությունների զոհն են դարձել: Մարաղայի վրա հարձակումը պայմանավորված չի եղել ռազմական անհրաժեշտությամբ. այն բացառապես ուներ Մարաղայի հայ խաղաղ բնակչության ոչնչացման նպատակ:

Մարաղայի ջարդերի կազմակերպիչները չեն պատժվել, ավելին՝ ջարդերի կազմակերպիչ, «Գուրթուլուշ» գումարտակի հրամանատար Շահին Թա-

լիբ օղլի Թագիևը Ադրբեջանի նախագահի 23.06.1993թ. թիվ 6 հրամանով ստացել է «Ադրբեջանի Ազգային Հերոս» կոչում («Հիմնավորում նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ»): Ինչպես ՀՀ ԱԳՆ 2022 թ. ապրիլի 10-ի հայտարարության մեջ է նշված. «Մարաղայի կոտորածը, որը դարձավ Սումգայիթում, Կիրովաբադում և Բաքվում կազմակերպված հայերի ջարդերի շարունակությունը, Ադրբեջանի իշխանությունների կողմից հայերի նկատմամբ ատելության և էթնիկ զտումների քաղաքականության հերթական դրսևորումն էր: Ադրբեջանի հայաշատ քաղաքներում և Լեռնային Ղարաբաղում հայերի կոտորածների կազմակերպիչների և իրականացնողների անպատժելիությունը, նրանց հերոսացումը և տարիներ ի վեր վարվող հայատյացության քաղաքականությունը հիմք դարձան նոր զանգվածային ոճրագործությունների իրագործման: Ներկայումս ադրբեջանական զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղում հայ քաղաքացիական բնակչության շարունակական թիրախավորումն ու հումանիտար ճգնաժամ ստեղծելուն ուղղված գործողությունները, ինչպես նաև ս.թ. մարտի 24-ից ՌԴ խաղաղապահ ուժերի պատասխանատվության գոտի ներխուժումը, որի հետևանքով ավելի քան 400 անձ ստիպված տեղահանվեց, վկայում են պաշտոնական Բաքվի իրական նպատակի մասին՝ ամբողջական էթնիկ զտումների ենթարկել Արցախը: Այսօր մենք հարգանքի տուրք ենք մատուցում Մարաղայի կոտորածների զոհերի հիշատակին: Հայաստանի Հանրապետությունը վերահաստատում է իր հանձնառությունը՝ ապահովելու Արցախի ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ, անվտանգ և արժանապատիվ կյանքի իրավունքը, և ընդգծում միջազգային հանրության ջանքերի հրատապությունը՝ կանխելու Լեռնային Ղարաբաղի հայության էքզիստենցիալ անվտանգության համար սպառնալիքները» (ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Մարաղայում հայերի կոտորածի 30-րդ տարելիցի կապակցությամբ, 10 ապրիլի, 2022)**:**

Մարաղայի ջարդերի ու դրանց աննախադեպ դաժանության մասին փաստում է նաև Թոմաս դե Վաալը՝ իր «Սև այգի. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջև» աշխատության մեջ (Томас Де Ваал, 2014, էջ 214):

Ադրբեջանի ցեղասպան գործողությունները սպառնալիք են հայ ժողովրդի անվտանգության տեսանկյունից և մինչ օրս չեն ստացել միջազգային, այդ թվում՝ իրավական գնահատական: Հայերի հանդեպ էթնիկ զտումների, ցեղասպանության, բռնի տեղահանության փաստերի վերհանումը, լուսաբանումը և հանրայնացումը միտված են զգոնության և կանխարգելման:

Եզրակացություն

Սումգայիթի և Բաքվի ջարդերը ԽՍՀՄ-ում ազգային հիմնահարցի և ազգերի ինքնորոշման իրավունքի շուրջ տիրող լարվածության ուղղակի դրսևորումներն էին: Մի կողմից, հայերը Լեռնային Ղարաբաղում ձգտում էին ինքնորոշվել, մինչդեռ ադրբեջանցիները դա տեսնում էին որպես իրենց տարածքային ամբողջականության սպառնալիք: Այս իրադարձությունները ինքնորոշման իրավունքի ոսպնյակի միջոցով ըմբռնելը ընդգծում է այն բար-

դությունները և վտանգները, որոնք առաջանում են, երբ այս սկզբունքը կիրառվում է բազմազգ պետության համատեքստում: Ազգերի ինքնորոշման իրավունքի իրացումը միակ երաշխավորված անվտանգային մեխանիզմն է մարդկության պատմության գոյության ընթացքում: Միջազգային հանրության և աշխարհաքաղաքական մեծ դերակատարների անվերապահ աջակցության շնորհիվ հնարավոր է կանխարգելել ցեղասպանության հակված պետությունների գործողությունները՝ հնարավորություն ստեղծելով՝ ազգերի համար սեփական բնօրրանում ազատ, անկախ, անվտանգ ապրելու և արարելու: Հայերի հանդեպ Ադրբեջանի էթնիկ զտումները, բռնությունները, ցեղասպան գործողությունները ցավոք չեն արժանացել միջազգային լայն արձագանքի, չի տրվել միջազգային գնահատական: Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Մարաղայում և այլ վայրերում հայերի հանդեպ Ադրբեջանի վայրագություններն ու անպատժելիության սինդրոմը վերջինի համար կանաչ լույս վառեցին 2020-2023թթ.՝ Արցախի ժողովրդի դեմ հերթական ցեղասպանական դրսևորումներն իրականացնելու, որի արդյունքում Արցախն ամբողջությամբ հայաթափվեց: Ազգերի, պետությունների միջև համերաշխության մթնոլորտի ձևավորում, կայուն խաղաղություն, համակեցություն հնարավոր է միայն այլատյացության պետական քաղաքականությունից հրաժարման, տարածքային նկրտումների զսպման, ուժի կիրառումից հրաժարվելու դեպքում:

Օգտագործված գրականության ցանկ

«Ավանգարդ», № 14, 7 մարտի 1990:

«Արարատ», 2 հունիսի 1988, Բեյրութ:

«Ազատամարտ», 15 մարտի 1991:

ԼՂՀ անկախության հռչակագիր, 2 սեպտեմբերի 1991: http://www.parliament.am/library/LGH/Laws/ankaxutyan% 20hrchakagir.pdf

«Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի 1991:

ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Մարաղայում հայերի կոտորածի 30-րդ տարելիցի կապակցությամբ, 10 ապրիլի, 2022 https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2022/04/10/Maragha_massacres/11399 (մուտք՝ 25.07.24):

Հիմնավորում նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ P-134 http://parliament.am/draft_docs8/P-134_himnavorum.pdf (մուտք՝ 20.07.24)

Алма-Атинская Декларация http://hrlibrary.umn.edu/russian/cis/Ralmatydecl.html

Казимиров, В.Н. (2009). Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта. М.: Междунар. отношения, Москва http://vn.kazimirov.ru/mir2009.files/Mir_Karabakhu_book_2009.pdf:

«Коммунист Сумгаита», № 34, 20 марта 1988.

Конституционный Акт Азербайджанской Республики, 18 октября 1991 https://nurlu.narod.ru/ARMA.htm (մուտք՝ 28.01.2024):

Манасян, А. (2005). *Карабахский конфликт: Ключевые понятия и хроника.* Ер.: НОФ «Нораванк» http://www.noravank.am/upload/pdf/37_ru.pdf

«Московские новости», № 16, 17 апреля, 1988:

«Московские новости», № 21, 22 мая, 1988:

Томас Де Ваал (2014). *Черный сад. Армения и Азербайджан между миром и войной.* Москва https://karabakhcenter.com/files/file/tomas_de_vaal_3.pdf

Amnesty International: *Azerbaydzhan: Hostages in the Karabakh conflict: Civilians Continue to Pay the Price.* April 1993 (POL 10/01/93).

European Parliament Resolution on the situation in Soviet Armenia. No C 235/106 *Official Journal of the European Communities* 12. 9. 88. Thursday, 7 July 1988 https://karabakhspace.commonspace.eu/sites/default/files/2021-08/European%20Parliament%20Resolution%20on%20the%20situation%20in%20Soviet%20Armenia%20%5BJoint%20resolution%20replacing%20Docs.%20B2-538%20and%20587%3A88%5D%2007.07.88.pdf

European Parliament resolution on the situation in Armenia. No C 38/82 *Official Journal of the European Communities* 19. 2. 90 Thursday, 18 January 1990 https://www.armenian-genocide.org/Karabakh.374/current_category.360/nagorno-karabakh_detail.html

European Parliament Resolution on the blockade of Armenia and the human rights situation there. No C 106/121 *Official Journal of the European Communities* 22. 4. 91, March 14, 1991 https://www.armenian-genocide.org/Karabakh.375/current_category.360/nagorno-karabakh_detail.html

Human Rights Watch: *Azerbaijan: Seven Years of Conflict in Nagorno-Karabakh.* 1994. https://www.hrw.org/reports/AZER%20Conflict%20in%20N-K%20Dec94_0.pdf

MARAGHA ՄԱՐԱԳԱ ՄԱՐԱՂԱ / part 3 (interview with Caroline Cox) https://youtu.be/eI4zsZzcytQ (մուտք՝ 20.03.24)

References

«Avangard», № 14, 7 marti 1990. (In Arm.)

«Ararat», 2 hunisi, 1988, Beyrut. (In Arm.)

«Azatamart» [Battle of Freedom], 15 marti 1991. (In Arm.)

NKR Declaration of Independence, 2 սեպտեմբերի 1991 http://www.parliament.am/library/LGH/Laws/ankaxutyan% 20hrchakagir.pdf (In Arm.)

«Hayastani Hanrapetutyun» [Republic of Armenia], 3 septemberi. (In Arm.)

HH AGN haytararut'yuny Maraghayum hayeri kotoratsi 30-rd tarelitsi kapaktsutyamb, 10 aprili, 2022 [Statement of the RA Ministry of Foreign Affairs on the occasion of the 30th anniversary of the massacre of Armenians in Maragha] https://www.mfa.am/hy/interviews-articles-andcomments/2022/04/10/Maragha_massacres/11399 (accessed: 25.07.24) (In Arm.)

Himnavorum nakhagtsi yndunman anhrazheshtut'yan veraberyal P-134 [Justification on the necessity of adopting the draft P-134], http://parliament.am/draft_docs8/P-134_himnavorum.pdf (accessed: 20.07.24) (In Arm.)

Alma-Ata Declaration http://hrlibrary.umn.edu/russian/cis/Ralmatydecl.html (In Rus.)

Kazimirov, V.N. (2009). Mir Karabakhu. Posrednichestvo Rossii v uregulirovanii nagorno-karabakhskogo konflikta [Peace to Karabakh. Russia's Mediation in the Settlement of the Nagorno-Karabakh Conflict]. M.: Mezhdunar. otnosheniya, Moskva. http://

vn.kazimirov.ru/mir2009.files/Mir_Karabakhu_book_2009.pdf (In Rus.)

Kommunist Sumgaita [Communist Sumgayit], No. 34, March 20, 1988.

Konstitutsionnyy Akt Azerbaydzhanskoy Respubliki [Constitutional Act of the Republic of Azerbaijan] 18 октября 1991 https://nurlu.narod.ru/ARMA.htm (accessed: 28.01.2024) (In Rus.)

Manasyan, A. (2005). *Karabakhskiy konflikt: Klyuchevyye ponyatiya i khronika* [Karabakh conflict: Key concepts and chronicle]. Yer.: NOF «Noravank»

«Moskovskiye novosti» [Moscow News], № 16, 17 aprelya, 1988:

«Moskovskiye novosti» [Moscow News], № 21, 22 maya, 1988:

Tomas De Vaal (2014). *Chernyy sad. Armeniya i Azerbaydzhan mezhdu mirom i voynoy* [Black Garden. Armenia and Azerbaijan between Peace and War], Moskva. https://karabakhcenter.com/files/file/tomas_de_vaal_3.pdf (In Rus.)

Amnesty International: *Azerbaydzhan: Hostages in the Karabakh conflict: Civilians Continue to Pay the Price.* April 1993 (POL 10/01/93) (In Eng.)

European Parliament Resolution on the situation in Soviet Armenia. No C 235/106 *Official Journal of the European Communities* 12. 9. 88. Thursday, 7 July 1988 https://karabakhspace.commonspace.eu/sites/default/files/2021-08/European%20Parliament%20Resolution%20on%20the%20situation%20in%20Soviet%20Armenia%20%5BJoint%20resolution%20replacing%20Docs.%20B2-538%20and%20587%3A88%5D%2007.07.88.pdf (In Eng.)

European Parliament resolution on the situation in Armenia. No C 38/82 *Official Journal of the European Communities* 19. 2. 90 Thursday, 18 January 1990 https://www.armenian-genocide.org/Karabakh.374/current_category.360/nagorno-karabakh_detail.html (In Eng.)

European Parliament Resolution on the blockade of Armenia and the human rights situation there. No C 106/121 *Official Journal of the European Communities* 22. 4. 91, March 14, 1991 https://www.armenian-genocide.org/Karabakh.375/current_category.360/nagorno-karabakh_detail.html (In Eng.)

Human Rights Watch: *Azerbaijan: Seven Years of Conflict in Nagorno-Karabakh.* 1994. https://www.hrw.org/reports/AZER%20Conflict%20in%20N-K%20Dec94_0.pdf (In Eng.)

MARAGHA ՄԱՐԱԳԱ ՄԱՐԱՂԱ / part 3 (interview with Caroline Cox) https://youtu.be/eI4zsZzcytQ (accessed: 20.03.24) (In Eng.)

Лилит Макарян
Доцент кафедры истории Армении ЕГУ, кандидат исторических наук
https://orcid.org/my-orcid?orcid=0009-0008-4696-1962
Эл. адрес: l.makaryan@ysu.am

Марине Геворгян
Доцент кафедры истории Армении ЕГУ
https://orcid.org/0000-0002-3569-4132
Эл. адрес: marine.gevorgyan@ysu.am

НЕКОТОРЫЕ ЭПИЗОДЫ АНТИАРМЯНСКОЙ ПОЛИТИКИ АЗЕРБАЙДЖАНА 1988–1992 ГГ: НОВЫЕ ПОДРОБНОСТИ ИНЦИДЕНТОВ В СУМГАИТЕ, БАКУ И МАРАГЕ

Антиармянская политика Азербайджана в 1988–1991 годах характеризовалась усилением национализма, национальными конфликтами и насилием, особенно усилившимися на фоне карабахского конфликта. В эти годы власти и общество Азербайджана были крайне враждебно настроены по отношению к армянам, в результате чего, с разрешения высших властей СССР, произошло множество актов насилия. Антиармянскую политику Баку можно разделить на несколько основных этапов, среди которых особое значение имеют начавшиеся в конце сентября 1988 года массовые беспорядки, ставшие поводом для массовых убийств армян как в Азербайджане, так и вокруг Нагорного Карабаха. В феврале 1988 года в Ереване и Степанакерте начались первые демонстрации, связанные с проблемой Нагорного Карабаха, где армяне требовали права на самоопределение. Это усилило азербайджанское националистическое движение, результатом которого стала ненависть к армянам. Беспорядки начались в феврале 1988 года в Сумгаите (Азербайджан) в виде страшной резни армян, затем продолжились в Баку, Кировабаде, Мараге и других местах. До сих пор действия Баку, проводившего политику геноцида против армян в Сумгаите и других местах, не получили соответствующей международной оценки.

Ключевые слова. Карабахский конфликт, Сумгаитские погромы, Баку, Марага перестройка, армяне Арцаха, антиармянская политика, советская власть, право наций на самоопределение.

Lilit Makaryan
Associate Professor of the Department of Armenian History at Yerevan State University, Ph.D. in History
https://orcid.org/my-orcid?orcid=0009-0008-4696-1962
Email: l.makaryan@ysu.am

Marine Gevorgyan
Associate Professor of the Department of Armenian History at Yerevan State University
https://orcid.org/0000-0002-3569-4132
Email: marine.gevorgyan@ysu.am

SOME EPISODES OF THE ANTI-ARMENIAN POLICY OF AZERBAIJAN 1988-1992: NEW DETAILS OF SUMGAYIT, BAKU AND MARAGHA INCIDENTS

Azerbaijan's anti-Armenian policy in 1988-1991 was characterized by heightened nationalism, national conflicts and violence, which rose especially against the background of the Karabakh conflict. During these years, the authorities and the society of Azerbaijan were terribly hostile towards the Armenians, as a result of which, and with the permission of the highest authorities of the USSR, many violences took place. Baku's anti-Armenian policy can be divided into several main stages, of which the mass riots that began at the end of September 1988, which became the occasion for mass massacres of Armenians both in Azerbaijan and around Nagorno-Karabakh, are particularly important. In February 1988, the first demonstrations began in Yerevan and Stepanakert related to the Nagorno Karabakh issue, where Armenians demanded the right to self-determination. This intensified the Azeri nationalist movement, leading to hatred towards Armenians. The riots began in February 1988 in Sumgait (Azerbaijan) in the form of terrible massacres against Armenians, then continued in Baku, Kirovabad, Maragha and other locations. To this day, the actions of Baku, which carried out a genocidal policy against Armenians in Sumgait and other places, have not received an appropriate international assessment and recognition.

Key words. Karabakh conflict, Sumgait pogroms, Baku, Maragha, Perestroika, Artsakh Armenians, anti-Armenian policy, Soviet authorities, right of self-determination of nations.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. հոկտեմբերի 30-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 11-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Հարություն Մաթևոսյան
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ
Էլ.հասցե՝ harutyun.matevosyan@edu.isec.am

DOI: 10.53614/18294952-2024.2-89

ԹԱԼԻԲԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ. ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՈԴԵԼ

Հոդվածի հիմնական նպատակն է ներկայացնել Թալիբանի ձևավորման քաղաքական, կրոնական և գաղափարական հիմքերը՝ ուշադրություն դարձնելով իսլամական արմատականության նոր մոդելին: Վերլուծվում են Աֆղանստանի տարածաշրջանային իրադարձությունները, որոնք նպաստեցին Թալիբանի գաղափարախոսության ձևավորմանը, ինչպես նաև անդրադարձ է կատարվում Դեոբանդիզմի ծայրահեղական դրսևորմանը: Հոդվածը մանրամասն քննարկում է սունիական կրոնական ուղղությունները, որոնք կարևոր ազդեցություն են ունեցել Թալիբանի գաղափարախոսության մշակման վրա: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել Թալիբանի կրոնաքաղաքական հայեցակարգային հիմքերը և դրանց ազդեցությունը ոչ միայն իսլամական աշխարհում, այլև տարածաշրջանային և գլոբալ քաղաքականության վրա: Թեմայի արդիականությունը պայմանավորված է Թալիբանի կողմից Աֆղանստանում իշխանության վերականգնմամբ և դրա հետևանքներով՝ ներառյալ տարածաշրջանային անվտանգությունը և միջազգային քաղաքականության նոր մարտահրավերները:

Հիմնաբառեր. Թալիբան, Իսլամ, Աֆղանստան, կրոնաքաղաքական խմբավորում, Սուննի, Դեոբանդիզմ:

Ներածություն

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունների արդյունքում միջազգային հանրության համար ի հայտ եկավ նոր թշնամի միջազգային ահաբեկչություն անվամբ: Ահաբեկչական գործողությունների արդյունքում, որին զոհ գնաց ավելի քան 3 հազար մարդ, ստիպեց փոխել Միացյալ Նահանգների և ընդհանրապես ողջ աշխարհի վերաբերմունքը ահաբեկչության վերաբերյալ: Ավելի, կարճ ժամանակահատվածում կտրուկ փոխվեց Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական ուղենիշները և ահաբեկչության դեմ պայքարը դարձավ թիվ մեկ ուղղությունը, որը քաղաքագիտական շրջանակներում ի հայտ եկավ որպես «ահաբեկչության դեմ պատերազմ» (war on terror) անվանումով: Ահաբեկչական գործողությունների իրականացման թիվ մեկ պատասխանատու հանդիսացող ալ-Կաիդա խմբավորման առաջնորդ Ուսամա բեն Լադենը ապաստան գտավ Աֆղանստանում, ուր տիրապետում էր Թալիբան կոչվող խմբավորումը, որը ճանաչում չուներ միջազգային հանրության կողմից: Ուստի այս հանգամանքով պայմանավորված, սկսվեց պայքար ոչ միայն ալ-Կաիդա-ի այլ հենց Թալիբանի դեմ, քանզի այն հանդիսանում էր Միջազգային ահաբեկչության աջակցման թիվ մեկ հովանավորը: Արդյունքում կարելի է խոսել Թալիբանի հայեցակարգային հիմքերի գաղափարական և կրոնական իմաստի ձևավորման վերաբերյալ, որը ազդեցություն է ունեցել ծայրահեղականության աջակցման, ինչպես նաև ներկայումս Աֆղանստանում տիրող իրավիճակի հետ:

Մեթոդ

Հոդվածում կիրառվել են ժամանակագրական, պատմական և համեմատական մեթոդներ: Ժամանակագրական մեթոդը օգտագործվել է դեպքերը դիտարկելու համար՝ հաշվի առնելով դրանց ժամանակագրական և տրամաբանական հաջորդականությունը: Պատմական մեթոդը թույլ է տալիս հասկանալ Թալիբանի հայեցակարգային հիմքերի ձևավորման էվոլյուցիան և համեմատականներ տանել ներկայիս իրավիճակի հետ:

Արդյունքներ և քննարկում

Իսլամը մշտապես եղել է աֆղանական հասարակության կյանքի գերակշիռ հատվածում: Ավանդաբար, Իսլամը Աֆղանստանում եղել է ավելի հանդուրժող մյուս կրոնական համայնքների նկատմամբ, այն մեծապես պայմանավորված էր մինչև 1992թ. հնդկական, սիկհերի[1] և հրեական համայնքների տնտեսության մեջ իրենց առանձնահատուկ դերով (Duggal, 1998): Հիմնականում նրանք ղեկավարել են քաղաքային կենտրոններում գլխավոր շուկաները և նրանք են եղել գլխավոր հարկատուները Աֆղանական թագավորների համար (Rashid, 2002, էջ 82): Աֆղանստանի քաղաքացիական պատե-

1 Սիկհերը միաստվածական կրոն է հիմնված Փենջաբում՝ Հնդաստանի հյուսիս-արևելյան մասում, Նանկու Գուրույի կողմից 15-րդ դարի վերջին: Հանդիսանում է աշխարհի 10 ամենատարածված կրոններից ամենաերիտասարդը:

րազմը մեծապես խաթարեց այդ համընդհանուր հանդուրժողականության մթնոլորտը: Ուստի, Իսլամը ևս բաժանվեց կրոնական ուղղությունների: Օգտվելով ստեղծված իրադրությունից ծայրահեղականները՝ ի դեմս Թալիբանի, հաջողվեց օգտագործել Իսլամը որպես «զենք» Աֆղանստանում իշխանության հասնելու համար:

Աֆղանստանի բնակչության 88% պատկանում է Սուննի Հանաֆիական ուղղությանը՝ սուննիական չորս ուղղություններից մեկին (Pew research, 2012): Սուննի Հանաֆիական դավանանքը, ըստ էության, ոչ հիերարխիկ և ապակենտրոնացված է, ինչը դժվարացրել էր 20-րդ դարի կառավարիչների համար կրոնական առաջնորդներին ուժեղ կենտրոնացված պետական համակարգի մեջ ներառելը: Բայց դարեր շարունակ այն ադապտացվեց աֆղանական ազատ հասարակության պայմաններին: Փուշթունների[2] համայնքում մոլլան, թեև հիմնականում անկիրթ էր, սակայն ապահովում էր մզկիթի կենտրոնական դերը համայնքային կյանքում: Աշակերտները կամ թալիբները սովորում էին փոքր մեդրեսեներում[3], որոնք ցրված էին ցեղային տարածքներում: Միջնադարում Հերաթը Աֆղանստանի մեդրեսեների համակարգի կենտրոնն էր, սակայն 17-րդ դարից սկսած աֆղանցի գիտնականները ճանապարհորդում էին Կենտրոնական Ասիա, Եգիպտոս և Հնդկաստան՝ սովորելու ավելի նորացված մեդրեսեներում, որպեսզի միանան ուլեմայի[4] շարքերին:

Աֆղանստանում Իսլամի մեկ այլ գործոն էր սուֆիզմի[5] տարածվածությունը, որը սկիզբ է առել Կենտրոնական Ասիայից և Պարսկաստանից: Սուֆիներն իրենց հավատքը կառուցում են աղոթքի, մտորումների, պարերի, երաժշտության և ֆիզիկական ցնցումների կամ պտույտների վրա՝ ճշմարտության մշտական որոնումներում: Այս ծեսերը մարդու ներսում ստեղծում են ներքին հոգևոր տարածություն, որտեղ արտաքինը չի կարող թափանցել: Յոթ դար առաջ հայտնի արաբ ճանապարհորդ Իբն Բաթուտան նկարագրել է սուֆիզմը. «Սուֆիական կյանքի հիմնարար նպատակն էր կոտրել մարդկային զգացողության շղարշը, որը մարդուն անջատում է Աստվածայինից և, հետևաբար, հաղորդակցություն և ներծծում Աստծո մեջ» (Batuta, 1984):

Աֆղանստանում երկու հիմնական սուֆիական ուղղությունները՝ Նաքշբանդիան և Քադերիան, մեծ դեր խաղացին հակասովետական դիմադրության միավորման գործում, քանի որ նրանք մոջահեդին[6] կուսակցություններից և էթնիկ խմբերից դուրս միավորումների և դաշինքների ցանց էին ստեղծում:

Մինչ Թալիբանի ձևավորումը իսլամական ծայրահեղականությունը երբեք չէր ծաղկել Աֆղանստանում: Սուննիական ավանդույթի շրջանակներում էին վահաբիները՝ Սաուդյան Արաբիայի խիստ վահաբիական դավանանքի հետևորդները: Այս շարժումը սկսվել է Աբդուլ Վահաբի կողմից (1703-1792),

2 Աֆղանստանում ամենամեծ էթնիկ խումբն են, ունեն իրանական ծագում, ինչպես նաև բնակվում են Աֆղանստանի հարավում:
3 Իսլամական կրոնական դպրոց:
4 Իսլամական հետազոտողների և գիտնականների խումբ:
5 Կրոնափիլիսոփայական միստիկական ուսմունք իսլամում:
6 Աֆղանական ընդդիմության զինվոր:

որպես արաբ բեդվիններին սուֆիզմի ազդեցությունից մաքրելու շարժում, վահաբիզմի տարածումը դարձավ Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականության հիմնական հարթակը 1970-ականների նավթային բումից հետո: Այնուամենայնիվ, երբ Սաուդյան Արաբիայի մատակարարումները ուղղվում էին վահաբի առաջնորդներին, որոնք փաշթուններ էին, փոքրաթիվ հետևորդներ հայտնվեցին: Աֆղանական պատերազմի սկզբնական փուլում սաուդցիները ուղարկեցին Սաուդյան Արաբիայում երկար ժամանակ բնակություն հաստատած աֆղանցու՝ Աբդուլ Ռասուլ Սայաֆին՝ Փեշավարում ստեղծելու վահաբիական կուսակցություն՝ Իթթիհադ ալ-Իսլամի՝ Իսլամական միասնություն: Վահաբի աֆղանները, որոնք նաև կոչվում են սալաֆիներ, դարձան թե՛ սուֆիների, թե՛ ավանդական ցեղային կուսակցությունների ակտիվ հակառակորդները, սակայն նրանք չկարողացան տարածել իրենց գաղափարները, քանի որ նրանց անսահման հակակրանքն էին ներկայացնում սովորական աֆղանները, ովքեր դա համարում էին օտար դավանանք: Արաբ մոջահեդդինը, ներառյալ Ուսամա Բեն Լադենը, ով միացավ ջիհադին, շահեց փաշթունների փոքր շրջանակների վստահությունը, հիմնականում իր տրամադրության տակ գտնվող ֆինանսական և ռազմական ռեսուրսների շնորհիվ: Չի կարելի մոռանալ նաև «Մուսուլման եղբայրներ» խմբավորման դերակատարությունը, որը այդ ժամանակ մեծ հեղինակություն էր վայելում ծայրահեղականների շրջանում (Oliver, 1994, էջ 95):

Աֆղանստանի իսլամիստների քաղաքական ձախողումը և իրականության վրա հիմնված տեսություններ ստեղծելու նրանց անկարողությունը մուսուլմանական աշխարհում տարածված երևույթ է: Մուսուլմանական հասարակությունները քսաներորդ դարում բաժանվեց երկու հակասական կառույցների միջև. Մի կողմից տոհմը, ցեղն ու էթնիկ խումբը, մյուս կողմից՝ պետությունն ու կրոնը: Դա փոքր խումբն է ընդդեմ ավելի մեծ հավատքի, կամ ցեղն ընդդեմ Ումմայի, որը եղել է հավատարմության և նվիրվածության հիմնական կիզակետը, այլ ոչ թե պետություն: Աֆղանստանի իսլամիստներին չի հաջողվել լուծել այս երկընտրանքը (Huntington, 1996, էջ 207-210):

Այսպիսով, կարող ենք պնդել, որ Տալիբանի ձևավորման հիմքում Աֆղանստանում կրոնական երեք հիմնական ուղղությունների ազդեցությունն էր, խոսքը գնում է վահաբիների, սուֆիների և իսլամական արմատականների մասին: Հատկապես վերջին խումբը մեծ ազդեցություն ունեցավ Թալիբանի հայեցակարգային ձևավորման վրա:

Թալիբանի ստեղծվել էր որպես իսլամական բարեփոխումների շարժում: Մուսուլմանական պատմության ընթացքում իսլամական բարեփոխումների շարժումները փոխեցին ինչպես հավատքի բնույթը, այնպես էլ քաղաքական ու սոցիալական կյանքը, քանի որ մուսուլման քոչվոր ցեղերը ոչնչացրեցին մուսուլմանական կայսրությունները, վերափոխեցին դրանք, այնուհետև իրենք ուրբանիզացվեցին և հետագայում ավերվեցին : Այս քաղաքական փոփոխությունը միշտ էլ հնարավոր է դարձել ջիհադի հայեցակարգի միջոցով: Արևմտյան միտքը, որը մեծապես ազդվել է միջնադարյան քրիստոնեական խաչակրաց արշավանքներից, միշտ ջիհադը պատկերել է որպես իսլամական պա-

տերազմ անհավատների դեմ: Բայց, ըստ էության, ջիհադը մուսուլմանի ներքին պայքարն է՝ ավելի լավ մարդ դառնալու, ինքն իրեն բարելավելու և իր համայնքին օգնելու համար: Ջիհադը նաև փորձադաշտ է Աստծուն հնազանդվելու և նրա պատվիրանները երկրի վրա իրականացնելու համար: Ջիհադը բարոյական կարգապահության և Իսլամին նվիրվածության և քաղաքական գործողությունների ներքին պայքարն է (Metcalf, 1982, էջ 79):

Իսլամի, ջիհադի և սոցիալական վերափոխումների թալիբների մեկնաբանությունը անոմալիա էր Աֆղանստանում, քանի որ շարժման վերելքը հակասովետական պատերազմից հետո չէր արտացոլում իսլամական տիրապետող միտումները: Պատահական չէ, այն պնդումները կապված Թալիբանի կրոնական և քաղաքական ինքնատիպության հնարավորությունների վերաբերյալ (Judith, 2023, էջ 83–90)

Այն եզրահանգումները, որ իսլամիստները ոգեշնչված չէին Իխվանի գաղափարներից, սուֆիական և ազգայանական շարժումներից, դրանք ոչ մի տեղ չեն տեղավորվում գաղափարների և շարժումների իսլամական սպեկտրում, որոնք առաջացել էին Աֆղանստանում 1974–1994 թթ. ավելի ակնառու են դառնում (Bleuer, 2019, էջ 59–64): Ուստի, առաջացած նոր վակուումը Թալիբանի լցրեց նոր գաղափարական մոտեցումներով, որը չէր ճանաչում ոչինչ, բացի իրենցից և ոչ մի իսլամի ձև, բացի իրենց սեփականից: Բայց նրանց գաղափարական հայեցակարգը ստեղծված էր Դեոբանդիզմ ծայրահեղական ձևի վրա, որը ուսուցանվում էր Պակիստանի իսլամական մեդրեսեներում Աֆղանցի փախստականներին: Դեոբանդիները՝ սուննի հանաֆիական Իսլամի ճյուղը, երկարատև պատմություն է ունեցել Աֆղանստանում, սակայն թալիբների կողմից դավանանքի մեկնաբանությունը զուգահեռներ չունի մուսուլմանական աշխարհում:

Դեոբանդիները առաջացել են Բրիտանական Հնդկաստանում, ոչ թե որպես ազդեցության հիման վրա, այլ հեռատես շարժում, որը կբարեփոխեր և կմիավորեր մուսուլմանական հասարակությանը, երբ այն պայքարում էր ապրելու գաղութային պետության սահմաններում, որը ղեկավարվում էր ոչ մուսուլմանների կողմից: Նրա հիմնական գաղափարախոսներն էին Մուհամմեդ Քասիմ Նանաուտավին (1833–1877) և Ռաշիդ Ահմեդ Գանգոհին (1829–1905), ովքեր հիմնադրեցին առաջին մեդրեսեն Դեոբանդում Նյու Դեհլիի մոտ: (Ralph, India, 1998, էջ 105):

Այս բարեփոխիչները կրթությունը տեսնում էին որպես նոր, ժամանակակից մուսուլման ստեղծելու միջոցը: Դեոբանդիները նպատակ ունեին կրթել գիտուն մուսուլմանների նոր սերունդ, ովքեր կվերականգնեին իսլամական արժեքները՝ հիմնված մտավոր ուսուցման, հոգևոր փորձառության, շարիաթի օրենքների և Տարիքայի վրա: Ուսուցանելով իրենց ուսանողներին, թե ինչպես պետք է շարիաթը մեկնաբանել՝ նրանք նպատակ ունեին ներդաշնակեցնել դասական շարիաթի տեքստերը ներկայիս իրողություններին: Դեոբանդիները սահմանափակող կերպով էին վերաբերվում կանանց դերին, դեմ էին մուսուլմանական համայնքում հիերարխիայի բոլոր ձևերին և մերժում էին շիաներին, սակայն թալիբները պետք է այս համոզմունքները հասց-

նեին ծայրահեղության, որը սկզբնական Դեոբանդիները երբեք չէին ճանաչի (Olsen, 1995, էջ 42–43):

Թալիբները հստակորեն ոչնչացրել են ուսման և բարեփոխման դեոբանդիի ավանդույթը, բանավեճը և կասկածը համարելով ոչ ավելին, քան հերետիկոսություն: Բայց դրանից նրանք առաջ են քաշել նոր, արմատական և, տարածաշրջանի կառավարությունների համար սպառնալից իսլամական մոդել: Թալիբները կտրականապես դեմ են մոդեռնիզմին և ցանկություն չունեն հասկանալու կամ ընդունելու առաջընթացի կամ տնտեսական զարգացման ժամանակակից գաղափարները: Թալիբները դեմ են նաև ցեղային և ֆեոդալական կառուցվածքներին, ինչպես Դեոբանդիները նրանք ևս դեմ են շիաներին և պայքարում են Իրանի դեմ (Giustozzi, 2022, էջ 20–30):

Թալիբների գիտելիքները աղքատիկ են իսլամական և աֆղանական պատմության, շարիաթի և Ղուրանի իմացության և քսաներորդ դարում մուսուլմանական աշխարհում տեղի ունեցած քաղաքական ու տեսական զարգացումների վերաբերյալ: Թեև քսաներորդ դարում իսլամական արմատականությունը գիտականության և բանավեճերի երկար պատմություն ունի, թալիբները նման պատմական պատկեր կամ ավանդույթ չունեն: Չկա թալիբների իսլամական մանիֆեստ կամ գիտական վերլուծություն Իսլամի կամ Աֆղանստանի պատմության վերաբերյալ: Նրանց ազդեցությունը արմատական իսլամական բանավեճին ամբողջ աշխարհում նվազագույն է, սեփական պատմության նկատմամբ նույնիսկ ավելի քիչ: Սա ստեղծել է խավարամտության այն իրավիճակը, որը բանավեճի տեղ չի թողնում նույնիսկ մուսուլմանների համար: Ուստի, այն պնդումները, որ իսլամական ծայրահեղական այս ձևը նոր բնույթ է հաղորդում արմատականությանը պահպանում է գիտականությունը (Al-Arian, 2019):

Թալիբանի նոր մոդելը հսկայական հետևանքներ է ստեղծել Պակիստանում և ավելի սահմանափակ չափով Կենտրոնական Ասիայի Հանրապետություններում: Պակիստանը, լինելով անկայուն պետություն, որը պատված է ինքնության ճգնաժամով, տնտեսական փլուզմամբ, էթնիկական և աղանդավորական բաժանումներով, այժմ բախվում է իսլամական նոր ալիքի, որը գլխավորում է նեոթալիբան խմբերի կողմից:

Մինչև 1998 թվականը թալիբների խմբերն արգելում էին հեռուստատեսությունը և տեսահոլովակները Փաշթունի գոտու երկայնքով գտնվող քաղաքներում, սահմանում էին շարիաթի պատիժներ, ինչպիսիք են քարկոծումը և անդամահատումը ի հեծուկս իրավական համակարգի, սպանելով պակիստանցի շիաներին և ստիպելով մարդկանց, հատկապես կանանց հարմարվել թալիբների հագուստի կանոններին և ապրելակերպ (Shafqat, 1998, էջ 110): Կենտրոնական Ասիայում, մասնավորապես, Տաջիկստանում և Ուզբեկստանում, նեոթալիբան գրոհայինները ոստիկանների կողմից ձերբակալվում են Ֆերգանա հովտում, որը սահմանակից է երկու երկրներին:

Թալիբները և նրանց աջակիցները մուսուլմանական աշխարհին և Արևմուտքին ներկայացնում են իսլամական ծայրահեղականության նոր ոճ, որը մերժում է մուսուլմանական չափավորության և Արևմուտքի հետ բոլոր

հարմարեցումները: ՄԱԿ-ի հումանիտար գործակալությունների կամ օտարերկրյա դոնորների խորհրդի հետ փոխզիջումներից թալիբների հրաժարումը, միջազգային ճանաչման և մուսուլմանական իշխող վերնախավերին որպես կոռումպացված ճանաչելը մեծացրեց բանավեճը մուսուլմանական աշխարհում և ոգեշնչեց իսլամական զինյալների ավելի երիտասարդ սերնդին: Թալիբները իսլամական ֆունդամենտալիզային նոր դեմք և նոր ինքնություն են տվել նրանք հանդես են գալիս որպես մեկը, ով հրաժարվում է ընդունել ցանկացած փոխզիջում և քաղաքական համակարգ, բացի իր սեփականից:

Եզրակացություն

Թալիբանի գաղափարախոսության ձևավորումը ցույց է տալիս, որ ծայրահեղական կրոնաքաղաքական շարժումների առաջացումը պայմանավորված է մի շարք գործոնների համակցությամբ, այդ թվում՝ պատմական ժառանգությունը, քաղաքական անկայունությունը, սոցիալ-տնտեսական ճգնաժամերը և արտաքին միջամտությունները: Աֆղանստանում այս գործոնները խաչմերուկվում են Իսլամի հատուկ դերի հետ հասարակության կառույցում, ինչը շարժման գաղափարական արմատները դարձնում է ավելի խորքային և ազդեցիկ: Թալիբանի հայեցակարգային ձևավորման կենտրոնում գտնվում է Դեոբանդիզմի ծայրահեղական մեկնաբանությունը, որը դուրս է գալիս իր դասական ըմբռնումներից և վերածվում խիստ պահպանողական, բացառող գաղափարական համակարգի: Շարժման գաղափարախոսությունը մերժում է Իսլամի բազմազանությունը՝ ստեղծելով յուրօրինակ մոնոպոլիա կրոնական դիսկուրսի դաշտում, ինչը հանգեցնում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հակասությունների սրմանը:

Թալիբանի վերածնունդը 2021 թվականին ցույց է տալիս, որ գաղափարական ծայրահեղական շարժումները կարող են վերակենդանանալ, երբ պահպանվում են դրանց առաջացման պատճառ հանդիսացող պայմանները: Աֆղանստանում առկա քաղաքական վակուումը, սոցիալ-տնտեսական դժվարությունները և տարածաշրջանային մրցակցությունները նպաստեցին Թալիբանի գաղափարախոսության նորից ակտիվացմանը: Շարժման ազդեցությունը դուրս է գալիս Աֆղանստանի սահմաններից՝ իր սատելիտ խմբերի միջոցով տարածվելով Պակիստան, Կենտրոնական Ասիա և նույնիսկ ավելի լայն իսլամական աշխարհ: Այս տարածումներն ընդգծում են, որ Թալիբանի պետք է դիտարկվի ոչ միայն որպես ազգային շարժում, այլև որպես գլոբալ իսլամական ծայրահեղականության նոր մոդել՝ հիմնված գաղափարական բացառության, սոցիալ-քաղաքական մեկուսացման և կրոնական ինտենսիվության սկզբունքների վրա: Այս հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ծայրահեղական շարժումների դեմ պայքարը պահանջում է համալիր մոտեցում, որը ներառում է ոչ միայն ռազմական միջոցառումներ, այլև կրթական, տնտեսական և քաղաքական ծրագրերի իրականացում: Թալիբանի գաղափարական ժառանգությունը ցույց է տալիս, որ ծայրահեղական շարժումների կենսունակությունը կախված է ոչ միայն գաղափարներից, այլ նաև տարածաշրջանային ու գլոբալ քաղաքական գոր-

ծոնսներից: Աֆղանստանի օրինակը փաստում է, որ այս շարժումները կարող են վերածվել միջազգային անվտանգության համար լուրջ մարտահրավերի, ազդելով ինչպես տարածաշրջանային կայունության, այնպես էլ գլոբալ քաղաքական հավասարակշռության վրա:

Օգտագործված գրականության ցանկ

Al-Arian, A. (2019). Taliban. *Oxford Bibliographies* Online. DOI: https://doi. org/10.1093/obo/9780195390155-0088

Battuta, I. (1984). Travel in Asia and Africa, 1325-1354, *Routledge and King Paul* London 1984.

Bleuer, C. (2019). *Afghanistan Analyst Bibliography*. https://www.afghanistan-analysts.org/wp-content/uploads/2019/03/AfghanistanBibliography2019.pdf

Duggal, K. (1988). Philosophy and Faith of Sikhism, *Himalayan Institute Press*.

Giustozzi, A. (2022). The Taliban at War: 2001 – 2021. New York: *Oxford University Press.*

Huntington, S. (1996). the Clash of Civilization and remarking of the World Order, *Simon and Schuste*r, New York, 1996.

Metcalf, B. (1982). Islamic Revival in British India 1860-1900, *Royal Book Company*, Islamabad, 1982.

Oliver, R. (1994). The Failure of Political Islam, *I.B.Tauris*, London, 1994.

Olsen, A. (1995). Islam and politics in Afghanistan, *Curzon press*, London.

Pew Research Center (2012). Religious Affiliation. *The World's Muslims: Unity and Diversity.*

Ralph H. Magnus (1998). Afghanistan: Mullah, Marx and Mujahid, *Harper Collins*, India.

Rashid, A. (2002). Taliban, *Yale University press*, London, 2002.

Shafqat, S. (1998). Civil military relations in Pakistan from Z.A., *Westview Press*, USA.

Tinnes, J. (2023). The Taliban. *Perspectives on Terrorism*, 17(3). https://www.jstor.org/stable/27255606

Арутюн Матевосян

Аспирант Института востоковедения Национальной академии наук Республики Армения

Эл. адрес: harutyun.matevosyan@edu.isec.am

ИДЕОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ТАЛИБАНА: НОВАЯ МОДЕЛЬ ИСЛАМСКОГО РАДИКАЛИЗМА

Основная цель статьи – представить политические, религиозные и идеологические основы формирования Талибана. Рассматривая события, происходившие в Афганистане в то время, и основные религиозно-политические тенденции, мы стремимся дать всесторонний обзор религиозно-политической ситуации в регионе. В статье уделяется особое внимание одной из идеологических основ Талибана – радикальной интерпретации деобандизма. Ключевые особенности суннитских религиозных движений подробно изучаются, а также то, как они способствовали формированию основных

идеологических принципов Талибана. Основная цель данного исследования – раскрыть концептуальные основы Талибана как религиозно-политической группы, подчеркнув его основную религиозную ориентацию и влияние этой ориентации, поскольку впоследствии Талибан стал правящей силой в Афганистане. Актуальность темы сохраняется в связи с продолжающейся нестабильностью в регионе, поддерживаемой Талибаном, а также новой реальностью, возникшей после вывода американских и коалиционных сил в 2021 году, что привело к приходу Талибана к власти в Афганистане. Это событие поставило перед новыми вызовами не только соседние страны, но и весь регион.

Ключевые слова: Талибан, ислам, Афганистан, религиозно-политическая группировка, сунниты, деобандизм.

Harutyun Matevosyan
Ph.D. student at Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia
Email: harutyun.matevosyan@edu.isec.am

THE IDEOLOGICAL FOUNDATIONS OF THE TALIBAN: A NEW MODEL OF ISLAMIC RADICALISM

The main purpose of the article is to present the political, religious, and ideological foundations of the formation of the Taliban. By addressing the events taking place in Afghanistan at the time and the main religio-political trends, we aim to provide a comprehensive overview of the religio-political situation in the region. The article focuses on one of the Taliban's ideological foundations: the radical interpretation of Deobandism. The key features of Sunni religious movements are examined in depth, along with how they contributed to the formation of the Taliban's main ideological principles. The primary goal of this study is to reveal the conceptual foundations of the Taliban as a religio-political group, highlighting its main religious orientation and the impact of that orientation as the Taliban later emerged as the ruling force in Afghanistan. The relevance of the topic remains due to the continued instability in the region maintained by the Taliban, as well as the new reality created by the withdrawal of American and coalition forces in 2021, which led to the Taliban taking power in Afghanistan. This development has posed new challenges not only for neighboring countries but also for the entire region.

Key words: Taliban, Islam, Afghanistan, religious-political group, Sunni, Deobandism.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. հոկտեմբերի 4-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. հոկտեմբերի 8-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Mher Vardanyan
Yerevan State University,
Faculty of Economics and Management,
PhD student Chair of Mathematical Modeling in Economics
Email: mher.vardanyan.g@gmail.com

DOI: 10.53614/18294952-2024.2-98

THE MODELING STRATEGY OF COMPLEXITY ECONOMICS WITH IMPLICATIONS IN OPTIMAL POLICY–MAKING

Expanding on previous work done in the domain of modeling complexity economics we formulated a strategy to use as a modeling guide for modeling complexity economics. We identified two cases of complexity economics modeling and using common variables used in many studies demonstrated typical pitfalls and gaps in related to the confounding effects of various variables which can lead to misleading results. Since the framework of complexity economics is essentially boundless, we also introduced a limitation for modeling optimal policymaking within this framework which we believe will guide future research into taking steps to unveil the true potential of modeling with decreasing abstraction layers.

Key words: complexity economics, modeling complexity, macroeconomics, policymaking.

Introduction

Economic complexity has emerged as a vital framework in understanding and shaping policymaking, reflecting the intricate interplay between productive capacities and economic growth. It has the potential to inform policies for fostering sustainable development, reducing inequality, and enhancing innovation. It provides a robust framework for understanding and addressing the challenges of

economic development. By linking productive knowledge to growth and social outcomes, it offers policymakers actionable insights into fostering innovation, reducing inequality, and achieving sustainable development. The integration of complexity metrics into policy frameworks represents a significant step toward data-driven economic planning and strategic resource allocation.

Literature review

Considerable progress has been made in understanding the complex dynamics of various parties interacting in a limited-resource environment. Economics, described by T. Sowell as the systematic study of cause and effect (Sowell, 2014, pp. 5-6) has been analyzed, at large, by aggregating various input-output metrics to gain a "summary" of the state of the economy and to guide the policy-making process. Complexity economics suggests a categorically different way of analyzing the economy by embracing non-aggregated, fine-grained details of the data and refusing to apply abstraction and aggregation in places where it is not necessary (Hidalgo, 2021, pp. 92-113). This line of thinking is not new, in fact, Simpson's Paradox, well-known among statisticians since the 1970s, describes a situation where via data partitioning one can observe higher overall incidence, despite observing lower incidence in each partitioned category (Wagner, 1982, pp.46-48). Furthermore, the proliferation of data science tools and advanced models with big data enabled us to analyze economics with less abstraction and allow more complexity to seep into our analysis. As described by Hidalgo et al, the main driving force for unveiling the complexity of an economy has been the introduction of measures of relatedness and measures of complexity (Hidalgo, 2021, pp. 92-113). The latter, as defined by Hidalgo et al, revolves around the export structure of an economy in question and is understood as a derivative of a bipartite network where countries are connected to their exports (Hidalgo and Hausmann, 2009, pp. 10570-10575). A simpler, yet more effective measure of complexity was suggested by Inoua S., a core component of which was the log value of the number of products a country makes, e.g. out of 772 products surveyed the USA makes all of them, while less diversified economies such as Yemen and Libya make 213 and 189, respectively (Inoua, 2023, p. 104793). This and other techniques of modeling complexity within economies and among their interactions have proven effective in identifying future growth and development strategies. Nevertheless, it is crucial to underline that acknowledging the complex nature of the economy and its dynamics and coming up with some one-digit statistics to describe the complexity is just one way of modeling and de-abstraction. Krakauer et al suggested considering machine learning models in the schema of modeling complexity as a pre-processing technique, e.g. in terms of encoding data, and complexity science as a post-processing technique for decoding various non-trivial dependencies captured by ML and decoding them into a coarse-grained schema of understanding (Krakauer, 2023, p. 1235202). The basic nature of ML modeling gives us considerable leverage in understanding complex phenomena, i.e. as described by Goodfellow et. al learning from experience E with respect to

some tasks T and a performance measurement P in a nutshell allows us to get a mapping of any relevant input–output pairs with varied degrees of interpretation (Goodfellow, 2016, p. 97). Nevertheless, as noticed by Molak, most ML models operate in the field of association rather than causation (Molak, 2023, p. 34), leaving us with a limited understanding of the variables that play a role in the modeling of a complex problem. This has the potential of working with confounding effects of various phenomena and leaves us wondering about the rank 2 and rank 3 levels of causality while most ML modeling efforts are essentially rank 1 associative models as defined by Pearl from casual perspective (Pearl, 2010, pp. 39–58).

Thus, a comprehensive strategy of approaching a modeling task in the framework of complexity economics should consider modeling a complexity economics phenomenon not only via machine learning but also from a causal perspective.

A broader perspective for understanding the modeling task of complexity economics can be derived from Hollings's definition of the dynamics of complex adaptive systems and the introduction of the concept of "panarchy" (Holling, 2001, pp. 390–405). The "panarchy" concept suggests that systems at various scales (ecological, economic, and social) operate through nested adaptive cycles. These cycles feature phases of growth, conservation, release, and reorganization. Adaptive cycles describe how systems accumulate resources, become rigid, and eventually undergo renewal and innovation. They integrate creativity with stability and highlight the importance of resilience and adaptive capacity. Sustainability involves creating and maintaining adaptive capacity, while development focuses on opportunities. Together, they balance change and persistence. Moreover, systems across different scales influence each other through "revolt" (small–scale disturbances affecting larger systems) and "remember" (larger systems stabilizing smaller ones) (Holling, 2001, pp. 390–405). Unique to human systems are foresight, communication, and technology, which enhance adaptability but can also lead to maladaptive traps if improperly managed. An earlier take on complexity by Herbert A. Simon suggests that hierarchical organization is fundamental to the structure, evolution, and functioning of complex systems. It provides efficiency, stability, and adaptability, making it a universal framework for studying systems across disciplines (Simon, 1977, pp. 245–261). Simon advocates a hybrid "Laplacian–Mendelian" approach: focusing on hierarchical laws between levels while acknowledging detailed underlying mechanisms that balance understanding emergent patterns with fundamental principles.

Another important consideration when it comes to modeling the complexity of economic systems is the accepted presumption of the character of economic growth. For our research scope, it is crucial to define endogenous growth theory, which challenges the neoclassical view by suggesting that long–term growth is driven by factors within the economic system, particularly the rate of technological progress. Endogenous growth theory implies that economic strategies should focus on fostering innovation and enhancing knowledge dissemination. It suggests that

societal arrangements and policies must balance the incentives for innovation while ensuring inclusiveness and long-term adaptability (Aghion, Howitt, Brant-Collett, and García-Peñalosa, 1998, pp. 68-71). The overall approach towards complex economic systems from the endogenous growth perspective is very similar to economic complexity assumptions. Furthermore, S. Albeaik et al, demonstrated an improvement to the existing ECI score: ECI+ consistent with the endogenous perspective (Albeaik, Kaltenberg, Alsaleh, and Hidalgo, 2017). ECI+ effectively integrates export diversity and product sophistication, offering a better understanding of how economies can transition to higher growth trajectories leaving us with better predictions of economic growth and analysis of the knowledge embedded within an economy.

Regardless of the chosen methodology to capture economic complexity, the reward of conducting such an analysis is, of course, the policy implications that follow. César A. Hidalgo identified 4 main dimensions in his 4Ws framework, by asking the questions:

1. What – the specific sectors or activities that regions should diversify into, based on relatedness and complexity.
2. When – the timing for targeting related and unrelated activities, emphasizing the importance of balancing efforts across diversification strategies.
3. Where – the geographic diffusion of knowledge, highlighting the role of proximity and infrastructure in enabling knowledge spillovers.
4. Who – the role of agents such as migrants, foreign firms, and institutions in driving structural change (Hidalgo, 2023, p. 104863).

The appropriate modeling approaches and visualization techniques can help to derive answers to these questions from relevant data. Furthermore, a more nuanced perspective can be formulated for policymaking with the consideration of inclusive growth. By focusing on industries with higher economic complexity, policymakers can promote sectors that generate equitable opportunities, such as skilled labor and innovation-driven industries (Hartmann, Guevara, Jara-Figueroa, Aristarán, and Hidalgo, 2017, pp.75-93). Similarly, we can leverage the innate partition-favoring modeling paradigm of complexity economics modeling to enhance homogeneous growth strategies as opposed to heterogeneous regional growth strategies that can be observed in, e.g. Mexico (Chávez, Mosqueda, and Gómez-Zaldívar, 2017, pp. 201-219).

Given all the progress we have seen in the field of complexity economics, we still struggle to find research on a particular methodological approach to modeling, i.e. a modeling strategy, and from policy perspective, we have not seen a general evaluation of what is possible in the best-case scenario, which would also give us perspective on the perceived limitations of complexity economics.

Methodology, research design and strategy proposal

We conducted the augmentation of an existing model by complexity infusion

in an earlier study (Vardanyan, 2023, pp. 48–58). Here we will cover the overall strategy and concentrate on the iterative steps to be taken. A substantial gap exists within the literature when it comes to emphasizing the level of understanding of the variables that we use to describe and model complexity economics. The problem usually involves confounding variables and spurious associations which lead to superfluous conclusions that do not reflect the data and data gathering biases. We will therefore complete the bigger picture here and concentrate on the initial steps of analysis as the actual modeling phase has already been proven to work in the earlier studies.

Thus, the objectives of this paper are to:

1. Formulate a data-driven strategy of modeling complexity.
2. Advance the decision-making capacity of such modeling strategy via the introduction of an optimal policy-making capacity roadmap.

The data

The data were taken from World Databank for 116 countries for 2019, 2020 and 2021 years. The variables used are among the most common variables taken for complexity analysis, i.e. relating to export structure and socio-demographic aspects of a country (Word Bank Oren Data , n.d.):

Population, male (% of total population), Final consumption expenditure (% of GDP), Gross domestic savings (% of GDP), Military expenditure (% of GDP), GDP per capita growth (annual %), Medium and high-tech exports (% manufactured exports), High-technology exports (current US$).

The modeling strategy proposal

The proposed strategy has the following structure:

Case 1: Starting with an initial set of beliefs to model certain phenomena – Model complexity augmentation.

- Introduction of complexity into the initial set of beliefs (chosen model).

Key result: **Complexity Augmented Model**

Case 2: Starting with a phenomenon and figuring out a model from the data – Model complexity discovery.

- The construction of models based on revealed relationships, i.e. "letting the data speak".

Key result: **Complexity-driven choice for a model.**

In both cases, we talk about complexity as an ingredient that gets added to the modeling effort in different phases, where the 4Ws framework is used to complete the modeling strategy proposal (diagram 1).



Diagram 1: Proposed modeling strategy of complexity economics

As is demonstrated the understanding of variables, their causal relationships, and the 4Ws framework's directions within that understanding is the key aspect of the proposed strategy, which, undoubtedly, starts at the exploratory data analysis stage.

To complete our introduction to the beforementioned strategy let's apply it to an example with the data described above.

Case 2: Example – strategy in action

To identify the direction of discovery we first need to conduct exploratory data analysis.



Figure 1: Correlation heatmaps of the chosen variables

We see interesting relationships between various variables, e.g. the negative Spearman correlation between final consumption expenditure and high–tech exports. Similarly, high–tech exports correlate with gross domestic savings while the male population ratio positively correlates with military expenditure. What we see here are the confounding effects of the variables under analysis. For example, the male population ratio can be treated as a proxy for the development

degree of an economy as the female population usually has a higher life expectancy thus having a longer living population will result in a higher percentage of the female population. We can further explore the relationships present here via a biplot of PCA 2 components.



Figure 2: PCA 2 component biplot for 2021 data.

With approximately 60% variance explained by 2 components, we clearly see that the variables discussed here and usually included in complexity analysis demonstrate non–linear relationships that cannot be discounted. This leads us to causal discovery (figure 3).



Figure 3: PC algorithm's resulting graph with a significance level of 0.5.

In terms of validating the results of PC algorithm (Molak, 2023, p. 34), we need to take into account domain knowledge and possible discrepancies with the data. Nevertheless, the algorithm shows us an interesting causal map among socioeconomic variables further underlining the fact that variables in any macroeconomic analysis should not be taken at face value. Moreover, when introducing complexity into the system we have to systematically conduct causal tests and discovery procedures to ensure that what we see is what the data is telling us, not the opposite.

Results, discussion and future research

Complexity economics grew in popularity partially due to the failure of classic economics to explain the tragic crises that kept returning unexpectedly, though the modeling capacity has been growing since the conception of economic thought. Kymlicka formulated the importance of two fundamental values and their importance: freedom and equality (Kymlicka, 2002, pp. 102–103). There is no arguing that both freedom and equality are valuable, but which one is more valuable? It turns out that this question alone is in fact at the root of economic policymaking, when we think of those who conduct liberal policy, i.e. with emphasis on the redistribution of wealth they do it to the detriment of the freedom of others to use resources they possess, similarly when individual freedom is prioritized it is prioritized over equality. Thus, can we optimize the distribution of limited resources via data-driven modeling with the help of complexity

economics to **solve the equation for the right amount of freedom and equality?** We believe the answer to this question will be testing the limits of modeling complexity economics, and future research should pay close attention to this question.

Also, more robust causal discovery tools and techniques are needed to streamline and integrate causal discovery as a valuable tool for understanding the variables we use to model complexity.

Conclusion

In conclusion, as demonstrated above the strategy of modeling complexity via two cases provides a valid starting point to conduct robust economic analysis. The strategy of modeling complexity economics as it turns out needs many dependencies to work as intended, especially when it comes to understanding the variables we work with and their relationships. The fundamental nature of infusing more complexity into a system cannot be self-serving, thus the theoretical limitation of finding the optimal state policy between freedom & equality optimization is a good starting point for future research to concentrate on to test the limits of complexity modeling and its implications in policy. Certain limitations were taken in this case, most notably we neglected the time factor, due to the nature of the analysis conducted, which we hope to circle back with a point-based equilibrium approach.

References

Sowell, T. (2014). *Basic economics.* Basic Books.

Hidalgo, C.A. (2021). Economic complexity theory and applications. *Nature Reviews Physics*,*3*(2), 92–113. https://doi.org/10.1038/s42254-020-00275-1

Wagner, C.H. (1982). Simpson's paradox in real life.*The American Statistician*,*36*(1), 46–48. https://doi.org/10.1080/00031305.1982.10482778

Hidalgo, C.A., & Hausmann, R. (2009). The building blocks of economic complexity.*Proceedings of the national academy of sciences*,*106*(26), 10570–10575. https://doi.org/10.1073/pnas.0900943106

Inoua, S. (2023). A simple measure of economic complexity. *Research Policy,* 52(7), Article 104793. https://doi.org/10.1016/j.respol.2023.104793

Krakauer, D.C. (2023). Unifying complexity science and machine learning. *Frontiers in Complex Systems*,1:1235202. https://doi.org/10.3389/fcpxs.2023.1235202

Molak, A. (2023).*Causal Inference and Discovery in Python: Unlock the secrets of modern causal machine learning with DoWhy, EconML, PyTorch and more.* Packt Publishing Ltd.

Pearl, J. (2010). Causal inference.*Causality: objectives and assessment.*

Holling, C.S. (2001). Understanding the complexity of economic, ecological, and social systems.*Ecosystems*,*4*, 390–405.

Simon, H.A., & Simon, H.A. (1977). The organization of complex systems.*Models of discovery:*

And other topics in the methods of science, 245–261.

Aghion, P., Howitt, P., Brant-Collett, M., & García-Peñalosa, C. (1998). *Endogenous growth theory*. MIT press, 68–71.

Albeaik, S., Kaltenberg, M., Alsaleh, M., & Hidalgo, C.A. (2017). Improving the economic complexity index. *arXiv preprint arXiv:1707.05826*.

Hidalgo, C.A. (2023). The policy implications of economic complexity. *Research Policy*, *52*(9), 104863.

Hartmann, D., Guevara, M.R., Jara-Figueroa, C., Aristarán, M., & Hidalgo, C.A. (2017). Linking economic complexity, institutions, and income inequality. *World development*, *93*, 75–93. http://dx.doi.org/10.1016/j.worlddev.2016.12.020

Chávez, J.C., Mosqueda, M.T., & Gómez-Zaldívar, M. (2017). Economic complexity and regional growth performance: Evidence from the Mexican Economy. *Review of Regional Studies*, *47*(2), 201–219. https://doi.org/10.52324/001c.8023

Vardanyan, M. (2023). Richardson's Multilateral Military Expenditure Model Augmentation via Sentiment Analysis of News Data in the Framework of Complexity Economics. *Bulletin of Yerevan University G: Economics*, *14*(2 (41)), 48–58. https://doi.org/10.46991/BYSU:G/2023.14.2.048

Word Bank Oren Data . (n.d.). Retrieved from Word Bank Group: https://data.worldbank.org/

Kymlicka, W. (2002). *Contemporary political philosophy: An introduction*. oxford: oxford University Press, 102–103. https://doi.org/10.1093/hepl/9780198782742.001.0001

Մհեր Վարդանյան
Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mher.vardanyan.g@gmail.com

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՊՏԻՄԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Ընդլայնելով բարդության տնտեսագիտության մոդելավորման ոլորտում կատարված նախորդ աշխատանքը՝ մենք ձևակերպեցինք ռազմավարություն, որը կարող է օգտագործվել որպես մոդելավորման ուղեցույց բարդության տնտեսագիտության մոդելավորման համար: Մենք բացահայտեցինք բարդության տնտեսագիտության մոդելավորման երկու դեպք և շատ ուսումնասիրություններում օգտագործված ընդհանուր փոփոխականների կիրառմամբ ցույց տվեցինք հաճախ հանդիպող խնդիրներ և հասկացողության բացեր տարբեր փոփոխականների շփոթեցնող ազդեցությունների առումով, որոնք կարող են հանգեցնել ապակողմնորոշիչ արդյունքների: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարդության տնտեսագիտության շրջանակը, ըստ էության, անսահման է, մենք նաև սահմանեցինք այս շրջանակում օպտիմալ քաղա-

քականության ձևավորման մոդելավորման սահմանափակում, որը, մեր համոզմամբ, կուղղորդի ապագա հետազոտություններին՝ նվազող աբստրակցիոն շերտերով մոդելավորման իրական ներուժը բացահայտելու քայլեր ձեռնարկելու ուղղությամբ:

Հիմնաբառեր. բարդության տնտեսագիտություն, բարդության մոդելավորում, մակրոտնտեսագիտություն, քաղաքականության վարում:

Мгер Варданян
Аспирант кафедры математического моделирования в экономике
Ереванского государственного университета
Эл. адрес: mher.vardanyan.g@gmail.com

СТРАТЕГИЯ МОДЕЛИРОВАНИЯ СЛОЖНОЙ ЭКОНОМИКИ С ПОСЛЕДСТВИЯМИ В РАЗРАБОТКЕ ОПТИМАЛЬНОЙ ПОЛИТИКИ

Расширяя предыдущую работу в области моделирования экономики сложности, мы сформулировали стратегию, которую можно использовать в качестве руководства по моделированию экономики сложности. Мы определили два случая моделирования экономики сложности и, используя общие переменные, используемые во многих исследованиях, продемонстрировали типичные подводные камни и пробелы в понимании с точки зрения смешивающих эффектов различных переменных, которые могут привести к вводящим в заблуждение результатам. Поскольку структура экономики сложности по сути безгранична, мы также ввели ограничение для моделирования оптимальной политики в рамках этой структуры, которое, как мы считаем, будет направлять будущие исследования к принятию мер по раскрытию истинного потенциала моделирования с уменьшением уровней абстракции.

Ключевые слова: экономика сложности, моделирование сложности, макроэкономика, разработка политики

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. նոյեմբերի 22-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 25-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Լիլյա Ավետիսյան
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Մարքեթինգի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի Կառավարման և Եվրասիա միջազգային համալսարանի Կառավարման և ՏՏ ամբիոնների դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
Էլ. հասցե՝ l.a.avetisyan.l@gmail.com

DOI: 10.53614/18294952-2024.2-109

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ԲԻԶՆԵՍՈՒՄ

Հոդվածում ներկայացվել են ռեստորանային մարքեթինգի արդի միտումները, բացահայտվել են հյուրընկալության ոլորտում գործող կազմակերպությունների նորարարական գործունեության առանձնահատկությունները, դիտարկվել են ռեստորանների խթանման համար կիրառվող հիմնական մարքեթինգային գործիքները, ինչպես նաև վերլուծվել է ՀՀ ռեստորանային բիզնեսի ներկա վիճակը, վերհանվել են Հայաստանի ռեստորանային ոլորտում մարքեթինգային գործունեության հիմնախնդիրները և հետագա զարգացման հնարավորությունները:

Հիմնաբառեր. ռեստորան, սրճարան, բիզնես, սպասարկում, հանրային սնունդ, ռեստորանային մարքեթինգ, հյուրընկալության ոլորտ:

Ներածություն

Մեր օրերում մարքեթինգային աշխարհն առավել բարձր տեմպերով է զարգանում: Ծառայության կամ պրոդուկտի պահանջված լինելու համար կարևոր է հետևել առկա մարքեթինգային միտումներին՝ ցանկալի հաճախորդների բազա ձևավորելու համար: Սովորաբար մարքեթինգային միտումները կենտրոնանում են հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման, տեխնոլոգիայի, սոցիալական ցանցերի վրա: Մարքեթինգային միտումներին համապատասխանելու կարողությունը դարձել է հայեցակարգ՝

բացատրելու արժեքային փոփոխությունները, որոնք ի հայտ են եկել ընկերության համար ապրանքների կամ ծառայությունների մատուցման նոր ձևաչափերի առաջացման հետևանքով:

Հյուրընկալության ոլորտի ընկերությունները նորամուծություններ են անում իրենց մրցակիցներից տարբերելու համար՝ ստեղծելով առավել ազդեցիկ արժեքային առաջարկ՝ միաժամանակ հաշվի առնելով ընկերության նորարարական ներուժը, տնտեսական զարգացման աճող տեմպերը: Տեխնոլոգիական և սոցիալական առաջընթացի ազդեցությունն արագացրին արժեքային առաջարկի հիմքում ընկած փոփոխությունները: Այս ամենը ընկերություններին դրդում է ուսումնասիրել սպառողների նախասիրությունները և դրանց հիման վրա վերլուծել մարքեթինգային միտումները: Ընկերության գործունեության մեջ մարքեթինգային միտումների կիրառման կարևորությունը շատ մեծ է, քանի որ ժամանակակից շուկայական հարաբերություններում արտաքին միջավայրը կայուն չէ և փոխվում է արագ տեմպերով:

Ռեստորանային ոլորտը մեր օրերում հսկայական թափով առաջ է շարժվում: Այսօր գեղեցիկ տեսք ունեցող, հարմարավետ մթնոլորտով, համեղ սննդով, ակտիվ սոցիալական հարթակներով ռեստորանները գրավիչ են և տեղացիների, և արտասահմանյան հյուրերի համար: Անկախ ոլորտից, պետք է հաշվի առնել, որ բիզնեսը գտնվում է մրցակցության պայմաններում, հետևաբար ցանկանում է ապահովել ճանաչելիություն ու քայլել ժամանակին համընթաց:

Մարքեթինգային միտումները փոփոխվեցին հատկապես Քովիդ 19-ի և արհեստական բանականության ի հայտ գալուց հետո և սա իրոք մարտահրավեր էր: Քովիդ 19-ի ընթացքում, երբ անձնական շփումը արգելված էր, շատ հասարակական վայրեր՝ խանութներ, մարկետներ, ռեստորաններ, ժամանցային կենտրոններ դադարեցրել էին իրենց գործունեությունը և մարքեթոլոգները ստիպված պետք է գրոհ կազմակերպեին առցանց: Լայն տարածում ստացավ ռեստորաններից ուտելիքի պատվերները, և այդ ավանդույթը շարունակվում է մինչ օրս: Ինչ վերաբերվում է արհեստական բանականությանը, որը նոր օրակարգ է առաջ տանում հասարակության մեջ, կարելի է ասել, այն ավելի շատ օգնության եկավ մարքեթոլոգներին: Մարքեթինգային արդի միտումները մեր օրերում հիմնականում պայմանավորված են սոցիալական ցանցերի զարգացման հետ, երբ աշխարհը գնաց դեպի վիրտուալացում:

ՀՀ ռեստորանային բիզնեսը մեծ թափով առաջ է շարժվում՝ իր մեջ ինտեգրելով մարքեթինգային արդի միտումները: Նկատվում են նաև ոլորտի զարգացման բավականին բարձր տեմպեր, իսկ սուր մրցակցությունը շուկայում նպաստում է, որ էլ ավելի կարևորվի մարքեթինգի դերը ռեստորանային բիզնեսում: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում դեռ լայն տարածում չունի ռեստորաններում նախաճաշելու, ընթրելու, ճաշելու ավանդույթը, հայաստանյան շուկան գնալով սկսում է կարևորել մարքեթինգային թրենդները, և ռեստորանները ամեն կերպ փորձում են կիրառել դրանք իրենց գործունեության շրջանակներում՝ տարբերակելով մատուցվող ծա-

ռայությունները մրցակիցներից: Եվ ի վերջո մարքեթինգային միտումներին հետևելու նպատակը ժամանակին համահունչ շարժվելն է, հաճախորդների գոհունակության բարձրացումը, շահութաբերության աճը և առաջնային դիրքի գրավումը շուկայում:

Հետազոտության նպատակն է բացահայտել մարքեթինգի զարգացման արդի միտումները ռեստորանային ոլորտում ու դրանց դրսևորումները Հայաստանում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ ռեստորանային ոլորտի կազմակերպությունների կողմից մարքեթինգային գործունեության հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման համար: Հետազոտության հիմնական դրույթները կարող են հետաքրքրել ռեստորանային բիզնեսի սեփականատերերին, մենեջերներին՝ սպառողների պահանջմունքներին արագ արձագանքելու, սպասարկման որակը բարձրացնելու, մատուցվող ծառայությունները ժամանակին արդիականացնելու գործընթացում, ինչպես նաև կիրառվել ձեռներեցության և մարքեթինգի պրակտիկայում՝ բիզնես մոդելներ մշակելիս և ընկերությունների ռազմավարական վարքագիծը ձևավորելիս:

Մեթոդ

Հետազոտության ընթացքում կիրառվել են խառը՝ և՛ քանակական, և՛ որակական մեթոդներ: Որակական մեթոդներից կիրառվել են գրականության և փաստաթղթերի վերլուծությունը, փորձագիտական հարցումը, իսկ քանակական մեթոդներից իրականացվել է հարցում սպառողների շրջանում, որին մասնակցել են 331 ռեսպոնդենտներ: Մասնակիցները ընտրվել են պատահականության սկզբունքով: Հարցման նպատակն էր պարզել հասարակության վերաբերմունքը մարքեթինգի արդի միտումներին ՀՀ ռեստորանային ոլորտում: Հարցաթերթը կազմվել է «Գուգլ Ֆորմս» (Google Forms) ծրագրի միջոցով և լրացվել է առցանց եղանակով:

Ռեստորանային մարքեթինգի առանձնահատկությունները և դրա ազդեցությունը ռեստորանային բիզնեսի մրցունակության վրա

Ժամանակակից պայմաններում տեղի է ունենում հաճախորդների պահանջմունքների փոփոխում: «Հաճախորդների գիտակցված սպառման» համատեքստում հաճախորդները մտածում են, թե ինչպես գնել և սպառել սրճարանային/ռեստորանային ապրանքները: Հասարակական սննդի համակարգը գնալով ավելի է ազդում անձի սոցիոլոգիայի ձևավորման վրա, և «խոհանոցը» դառնում է նորաձև միտում: Այս ամենը պոտենցիալ և փաստացի հաճախորդներին «կրթելու» նախադրյալներ է ստեղծում՝ նրանց մեջ կայուն սպառման արժեքներ սերմանելու համար:

Տարածված են հաճախորդների համար էկո-ակցիաները: Ուսումնասի-

ությունները ցույց են տվել, որ սպառողների 66%-ը պատրաստ է ավելի շատ վճարել այն ընկերությունների արտադրանքի համար, որոնք ձգտում են բարելավել իրավիճակը շրջակա միջավայրի պաշտպանության և հասարակության բարեկեցության ոլորտում, իսկ միլլենիալների շրջանում այդպիսի մարդիկ արդեն 80% են կազմում (Фокина, 2022, էջեր 243-244): Այսպիսով, հասարակության մեջ առողջ սնվելու ցանկությունը աստիճանաբար հաղթահարում է խնայողության ցանկությունը:

Մարդիկ միշտ չէ, որ մտածել են իրենց սննդի մասին: Մարդկության պատմության մեծ մասի համար պարզապես բավականաչափ սնվելը թիվ մեկ առաջնահերթությունն էր: Դա սկսեց փոխվել 20-րդ դարի սկզբին՝ առողջարար սննդի հայտնվելով: Շուտով հաջորդեց օրգանական գյուղատնտեսության վերելքը: Այնուամենայնիվ, միայն 1970-ականների սկզբին, երբ պարենային ապրանքների գները բարձրացան շրջակա միջավայրի աճող մտահոգությունների ֆոնին, օրգանական սննդամթերքը սկսեցին ընկալվել որպես մշակութային և առևտրային երևույթ: Այսօր այս շարժումը դարձել է հիմնական: Նման ապրանքները սկսել են համարվել բարձրակարգ՝ թելադրելով ապրելակերպ, որն ավելի քիչ վերաբերում է հակամշակույթին և ավելի շատ՝ գիտակցված սպառմանը:

Առողջ սննդի արդյունաբերությունում վերջին տարիներին հեղափոխություն է տեղի ունեցել: Թեև քաղցր ըմպելիքներն ու նախուտեստները ժամանակին ամենահայտնի և շահավետ ապրանքներն էին, այժմ սպառողները ցանկանում են առողջ տարբերակներ, և «բոլորը բնական», «առանց հավելումների...» բառերը ավելի ու ավելի հաճախ են արտացոլվում փաթեթավորման վրա: Ակնկալվում է, որ մոտ տարիներին առողջարար սննդամթերքի ապրանքանիշերի համաշխարհային շուկան կաճի 6%-ով, և դրա արագ աճը դանդաղելու նշաններ ցույց չի տալիս (Костромин, 2021, էջեր 16-17):

Կարող ենք առանձնացնել հյուրընկալության ոլորտում գործող ձեռնարկությունների նորարարական գործունեության մի շարք առանձնահատկություններ.

- Հյուրընկալության ոլորտում նորարարական գործունեությունը կենտրոնացած է ծառայությունների վրա: Արդյունքում, հյուրընկալության ոլորտում իրականացվող նորամուծությունները ուղղված են սպառողների հետ փոխգործակցության բարելավմանը և հաճախորդների գոհունակությունն առավելագույնի հասցնելուն: Այսպիսով, հյուրընկալության ոլորտում սպառողների կարիքներն ու նախասիրությունները նորարարության ամենակարևոր աղբյուրներից են: Հաճախորդները, դժգոհություն հայտնելով, մատնանշելով սպասարկման մեջ կոնկրետ խնդիրներ կամ ցանկություններ ձևակերպելով, կարող են նպաստել ծառայության որակի բարելավմանը, ընկերության զարգացման ռազմավարության մեջ փոփոխությունների իրականացմանը և նորարարությունների ներդրմանը (Коновалов, 2016, էջ 214):
- Ըստ տեխնոլոգիական պարամետրերի՝ նորամուծությունները բաժանվում են արտադրանքի (ուղղված արտադրանքի նոր բնութագ-

ների փոփոխմանը կամ ստեղծմանը) և գործընթացի (ուղղված արտադրության տեխնոլոգիայի բարելավմանը): Հյուրընկալության ոլորտում, ինչպես նաև առհասարակ սպասարկման ոլորտում, ապրանքի և գործընթացի նորարարությունների միջև սահմանները լղոզված են. սպառողի՝ ծառայության մատուցման գործընթացում ներգրավվածության պատճառով (Уткин, 2010):

- Հյուրընկալության ոլորտի ձեռնարկությունների համար մեծ նշանակություն ունի բուն ընկերության նյութական «կահավորումը», այսինքն՝ նրա գտնվելու վայրը, ինտերիերը, սենյակի ձևավորումը, և դա պետք է հաշվի առնել նորարարական գործունեություն պլանավորելիս:
- Հյուրընկալության ոլորտում նորարարությունների մեծ մասը հեշտ պատճենվում են: Դա պայմանավորված է սպասարկման գործունեության առանձնահատկություններով: Գործողությունների մեծ մասն իրականացվում է սպառողի ներկայությամբ, որը նույնպես կարող է ներգրավվել սպասարկման գործընթացի մեջ:

Ամենատարածված մարքեթինգային գործիքները, որոնք օգտագործվում են ռեստորանների խթանման համար.

- Արտաքին գովազդ: Դա ամենաօպտիմալն է, քանի որ առաջինն է, ինչ տեսնում է հաճախորդը նախքան ռեստորան մտնելը:
- Ինտերնետ գովազդ: Յուրաքանչյուր ռեստորան պետք է ունենա կայք և/կամ էջեր սոցիալական ցանցերում: Այդտեղ պետք է ներառված լինեն ճաշացանկ, ճաշատեսակների լուսանկարներ, տեղեկատվություն նոր ապրանքների և իրադարձությունների մասին: Այս ամենը կօգնի մարդկանց հետ կապ հաստատել, նոր հյուրեր ներգրավել և կապ պահպանել նրանց հետ առցանց, ինչպես նաև ստանալ որոշակի ակնարկներ և լրացուցիչ գովազդ՝ բանավոր խոսքի միջոցով:
- Ներքին մարքեթինգ. ներքին առաջխաղացումներ և իրադարձությունների մարքեթինգ, հաճոյախոսություններ և նվերներ, հավատարմության ծրագրեր և զեղչեր: Զեղչային ծրագրերին պետք է մեծ ուշադրություն դարձնել (Китченко, 2017, էջ 11):

Ռեստորանային բիզնեսում հաջողության հասնելու համար պետք է հաշվի առնել մի քանի գործոններ և առանձնահատկություններ, որոնք կօգնեն տարբերվել և, իհարկե, հաճախորդների աչքում լինել լավագույնը: Ստորև ներկայացվում են բնութագրիչներ, որոնք պետք է ունենա հասարակական սննդի ոլորտում հաջողություն արձանագրած կազմակերպությունը.

- Համեղ սնունդ: Իհարկե, առաջին տեղում հաճախորդի համար ռեստորանը առանձնանում է համեղ սննդով: Եթե մատուցված սնունդը լավ է համեմված և լավ է մատուցված, իհարկե այդ ռեստորան այցելած հաճախորդը ևս մեկ անգամ կայցելի: Իհարկե, այստեղ նաև կարևոր է գինը. երբ գործում է գին-որակ լավագույն հարաբերակցությունը:
- Խմիչքների տեսականին: Ցանկացած հաջողված ռեստորան ունի առաջարկվող խմիչքների լայն տեսականի, ինչը թույլ է տալիս բա-

վարարել տարբեր ճաշակ ունեցող հաճախորդներին:

- Լավ սպասարկում: Հաճախորդի հետ մատուցողի անմիջական շփումը, նրան բավարարելու հատկությունը, համապատասխան ճաշատեսակ առաջարկելը կարևոր գործոն են համարվում:
- Հյուրընկալ մթնոլորտը: Երբ մուտք ես գործում ռեստորան, պետք է զգաս ջերմություն, անձնակազմի բարեհամբույր վերաբերմունքը:
- Խելամիտ սահմանված գինը: Գնի սահմանման ժամանակ ռեստորանների ոսկե կանոնն այն է, որ հաճախորդները պետք է զգան, որ արժեքը արդար է և ողջամիտ, նույնիսկ բարձրակարգ հաստատություններում:
- Հարմար տեղադիրք: Ռեստորանի գտնվելու վայրը պետք է համապատասխան լինի: Արագ սնդի ցանցը պետք է լինի հանրաճանաչ առևտրի կենտրոնում, մինչդեռ բարձրակարգ ռեստորանը գտնվի, օրինակ, հայտնի փողոցում կամ պողոտայում, մայրաքաղաքի կենտրոնում: Հաճախորդների համար պետք է ապահովել համապատասխան կայանատեղի մեքենայի համար:
- Հիգիենա և մաքրություն: Ամբողջ հաստատությունը պետք է պահվի մաքուր վիճակում: Սնդամթերքի պահպանման և պատրաստման ստանդարտները պատշաճ պահպանվում են՝ սնդամթերքի փչանալու ռիսկը նվազեցնելու և ռեստորանի հեղինակությունը բարձր պահելու համար:
- Կառավարման հմտություններ: Հաջողակ ռեստորանի ղեկավար թիմը լավ պատրաստված է և հասկանում է վաճառքի գների հավասարակշռման անհրաժեշտությունը սնդի պատրաստման, աշխատուժի և ընդհանուր ծախսերի հետ միասին: Ղեկավար թիմը պետք է հասկանա, որ երջանիկ անձնակազմը նշանակում է երջանիկ հաճախորդներ:
- Ընդհանուր փորձը: Հաջողակ ռեստորանի նպատակն է հաճախորդներին ապահովել գերազանց ընդհանուր փորձով, որը նորից ու նորից հետ է բերում նրանց, այսինքն՝ նրանց դարձնում է հավատարիմ հաճախորդ: Սա նշանակում է, որ ամեն ինչ ուղղված է հաճախորդի փորձի բարելավմանը (Cognite, 2016):
- Երբ խոսում ենք ռեստորանային բիզնեսի համար արդի միտումներից պետք է հաշվի առնել նաև սոցիալական ցանցերը և համացանցը: Ներկայացնենք մի շարք միտումներ, որոնք կիրառելի են մերօրյա ռեստորանային բիզնեսի ոլորտում.
- Բույսերի վրա հիմնված մենյուի ընտրանքներ: Առողջության և շրջակա միջավայրի գիտակցության աճով պայմանավորված՝ բույսերի վրա հիմնված մենյուի ընտրանքները կշարունակեն մեծ ուշադրություն գրավել: Ռեստորանները պետք է մտածեն ավելի շատ բուսակերների, վեգանների մասին, որոնց ուտեստը պատրաստված է այնպիսի բաղադրիչներից, ինչպիսիք են հատիկաընդեղենը, ընկույզը, բանջարեղենը և ամբողջական ձավարեղենը: Կրեատիվ առանց մսի ուտեստները և բույսերի վրա հիմնված այլընտրանքները գրավում

են ավելի լայն հաճախորդների բազա:

- Փորձառությունները ճաշկերույթի ժամանակ: Եզակի փորձառությունները, բացի միայն ճաշից, այսօր սպառողների համար առաջնահերթություն են: Ռեստորանները պետք է ներառեն ինտերակտիվ տարրեր, ինչպիսիք են խոհարարի սեղանները, գինու և գարեջրի համտեսները, խոհարարության գործնական ցուցադրությունները և ճաշի միջոցառումները: Փորձառական ճաշկերույթը այցելությունները դարձնում է հիշվող և հասանելի սոցիալական ցանցերում:
- Բարդ մանկական ճաշացանկ: Երեխաների համար սովորական հավի փայտիկների և չիպսերի ժամանակներն անցել են: Ծնողները փնտրում են ավելի առողջ խոհանոց՝ պատրաստված երեխաների համար բարձրորակ բաղադրիչներից: Մանկական ճաշացանկերի արդիականացումը, ներառելով գերժամանակակից «սննդի» տարբերակները, ռեստորաններն ավելի հարմար է դարձնում ընտանեկան հավաքույթների համար: Մտածեք էթնիկ ուտեստների, բուսական ծագման սննդի, հարմարեցված բենտո տուփերի և նորարարական ըմպելիքների ավելացման մասին (Leung, 2023):

Մարքեթինգային գործիքները կարող են մեծ դեր խաղալ, երբ փորձում ենք շուկայում առանձնանալ մրցակիցներից: Իսկ մարքեթինգը կարող ենք իրականացնել թե՛ թվային հարթակում (Instagram, facebook, web էջ) և թե՛ օֆլայն (հատուկ սպասարկում, փոխհարաբերությունների մարքեթինգի իրականացում): Մարքեթինգի միջոցով կարող ենք անգամ նոր հաճախորդին դարձնել հավատարիմ:

Ռեստորանային մարքեթինգը վերաբերում է ռեստորանի կողմից օգտագործվող տարբեր ռազմավարություններին և մարտավարություններին՝ պոտենցիալ հաճախորդներին իրենց հաստատություն գրավելու համար: Դրանք կարող են ներառել գործունեության լայն շրջանակ՝ սոցիալական մեդիայի մարքեթինգից մինչև հավատարմության ծրագրեր վարելը, առցանց ուժեղ ներկայության ստեղծումը և հաճախորդների հետ շփումը: Արդյունավետ ռեստորանային մարքեթինգը շատ կարևոր է, որպեսզի ձեռնարկությունները աչքի ընկնեն բարձր մրցակցային միջավայրում և ներգրավեն հավատարիմ հաճախորդների բազա:

Ռեստորանների արդյունավետ մարքեթինգը կարող է ապահովել մի շարք առավելություններ, որոնք կարող են օգնել բիզնեսին ծաղկել բարձր մրցակցային շուկայում: Նշենք դրանցից մի քանիսը.

- Տեսանելիության բարձրացում: Արդյունավետ մարքեթինգային ռազմավարություն մշակելով՝ ռեստորանները կարող են մեծացնել իրենց տեսանելիությունը և հասնել իրենց թիրախային լսարանին: Սոցիալական մեդիա հարթակները, Google-ի գովազդը, որոնման համակարգի օպտիմալացումը և google բիզնեսի պրոֆիլը այն մարքեթինգային ուղիներից են, որոնք կարող են օգնել խթանել տրաֆիկը և մեծացնել տեսանելիությունը:
- Տարբերվել մրցակիցներից: Շուկայում վաճառքի յուրահատուկ առա-

ջարկ ունենալը, որը ռեստորանն առանձնացնում է իր մրցակիցներից, կարևոր է: Արդյունավետ ռեստորանային մարքեթինգը կարող է օգնել ստեղծել ապրանքանիշ և տարբերակել ռեստորանները նույն կատեգորիայի մյուս ռեստորաններից:

- Բարելավված հաճախորդների փորձ: Արդյունավետ մարքեթինգային ռազմավարությունը կարող է օգնել ռեստորաններին վերլուծել հաճախորդների կարծիքը, հասկանալ նրանց ցանկությունները: Նման պատկերացումները կարող են օգնել ստեղծել հաճախորդների ավելի լավ փորձ՝ հաշվի առնելով հաճախորդների նախասիրությունները և հասկանալով նրանց կարիքները:
- Ձևավորել հաճախորդների հավատարմություն: Լավ իրականացված հավատարմության ծրագիրը կարող է օգնել խթանել բիզնեսը, որը գործում է շուկայում և ամուր հարաբերություններ հաստատել հավատարիմ հաճախորդների հետ, որոնք կարող են օգնել բիզնեսի ձեռքբերումների մեծացմանը՝ բանավոր խոսքի միջոցով (ծանուցելով շրջապատին):
- Բիզնեսի աճ: Արդյունավետ ռեստորանային մարքեթինգը կարող է օգնել բիզնեսին զարգանալ՝ ներգրավելով նոր հաճախորդներ և բարելավելով հաճախորդների փորձը գոյություն ունեցողների համար (BuzzyBooth, 2023):

ՀՀ ռեստորանային բիզնեսի ներկա վիճակը և մարքեթինգային գործունեության վերլուծությունը

Հայաստանում ռեստորանային բիզնեսը շատ դինամիկ է զարգանում, և այն հնարավորությունները և գործիքակազմը, որոնք չէին օգտագործվում մի քանի տարի առաջ, այժմ շատ արդիական են ու տարածված ռեստորանային և սրճարանային ոլորտներում: Հայաստանը բավականին հյուրասեր երկիր է, և հայկական խոհանոցը երկրի այցեքարտերից մեկն է: Եվ շատ կարևոր է, որ ռեստորանային բիզնեսն ու դրա հնարավորությունները համահունչ լինեն Հայաստանի գաստրոնոմիական ավանդույթների հետ:

Հայաստանում ռեստորանային բիզնեսի աճի վրա ազդող օրինակներից է՝ նախաճաշը: Մի քանի տարի առաջ հասարակական սննդի ոլորտում գործունեություն իրականացնող գրեթե բոլոր ձեռնարկությունները իրենց դռներն էին բացում այցելուների առջև առավոտյան ժամը 11-ից հետո, և շատ դժվար էր գտնել մի վայր, որտեղ դուք կարող եք նախաճաշել առավոտյան՝ մինչ կսկսեր ձեր աշխատանքային օրը: Եվ շատերը չէին հավատում, որ Հայաստանում հնարավոր է ժողովրդականացնել նախաճաշը տնից դուրս, և որ այս տարբերակը չի աշխատի: Իսկ այժմ կան մի շարք ռեստորաններ և սրճարաններ, որոնք առավոտյան աշխատանքային օրվանից առաջ այցելուներին հրավիրում են համեղ և առողջ նախաճաշեր ճաշակելու՝ օրը լավ նոտայով սկսելու համար:

Ռեստորանային բիզնեսում մեկ այլ կարևոր ասպեկտ է ժամանակին հա-

մընթաց քայլելն ու այս ոլորտում նորարարություններին հետևելը: Թարմ գաղափարներն ու տեխնոլոգիաները կիրառվում են ոչ միայն ինտերնետի և տեխնոլոգիաների աշխարհում, այլ ժամանակի ընթացքում դրանք թափանցում են նաև այլ ոլորտներ: Ամեն օր նոր ոճեր, տեխնոլոգիաներ և գաղափարներ են ներմուծվում խոհարարական և ռեստորանային արդյունաբերություն: Հայաստանի նման երկրներում հաջողության գրավականը անհամատեղելի թվացող այս երկու գործոնների՝ ավանդական ազգային խոհանոցի և ժամանակակից խոհարարության նորարարությունների միաձուլումն է:

Հայաստանի ռեստորանային շուկան հատվածավորման տեսանկյունից դիտարկելիս նկատում ենք, որ առկա են ռեստորաններ, սննդի կետեր, սրճարաններ բոլոր խավերին և եկամուտների մակարդակին համապատասխան: Շատ են ավելացել գեղեցիկ արտաքին և ներքին միջավայրով ռեստորանները, սրճարանները, ինչից կարելի է հետևություն անել, որ մարքեթինգային միտումները կարևորվում են: Բայց պետք է զարկ տրվի սպասարկման մակարդակի բարձրացմանը ՀՀ ծառայությունների ոլորտում:

Այժմ ռեստորանային ծառայությունների շուկան թևակոխել է իր զարգացման նոր փուլ, երբ ռեստորաններ այցելելը դադարել է լինել յուրահատուկ և աստիճանաբար դառնում է առօրյա գործընթաց: Հայաստանում ռեստորան և սրճարան այցելելու մշակույթը կարելի է նաև զարգացնել սոցիալական հարթակների, տարբերակված և համեղ խոհանոցի, լավ երաժշտության միջոցով:

Եթե անդրադարձ կատարենք Հայաստանում սպասարկման մակարդակին, կարող ենք արձանագրել, որ սպասարկումը դեռ զարգանալու տեղ ունի: Սպասարկման ոլորտի աշխատակիցները սպասարկմանը որոշ դեպքերում մակերեսային են վերաբերում և այն չեն ընդունում որպես մասնագիտություն: Հիմա մեծ քաղաքներում դա արդիական է, դա ապագան է, և մարդիկ պետք է սովորեն հպարտությամբ վերաբերվել այդ գործին:

Չնայած լսարանի հետ կապված մտավախություններին, որոնք «կազմում են ռելոկանտների և արտագաղթողների մեծամասնությունը», դրանք չիրականացան, քանի որ հաստատություններ այցելող հիմնական կոնտինգենտը տեղացի բնակիչներն են, ովքեր փնտրում են նոր ու հետաքրքիր բան, եւ հենց դա է աշխատում ռելոկանտների մշակույթի վրա (Gastro Business ֆորում. ռեստորանային բում Հայաստանում. ինչ ուղղությամբ է զարգանում ոլորտը , 2023):

2001–2023 թվականներին միջազգային զբոսաշրջային հոսքերի աճի տարեկան միջին տեմպը կազմել է 22.04%, իսկ 2001 թվականի համեմատ 2022 թվականին միջազգային ժամանումների թիվը Հայաստանում ավելացել է մոտ 19 անգամ: 2020 թվականի համեմատ 2021 թվականին դեպի Հայաստան միջազգային զբոսաշրջային հոսքերը մոտ 2.5 անգամ ավելացել են, սակայն միևնույնն է, դրանք 53.8%-ով պակաս են մինչհամավարակային 2019 թվականի ցուցանիշից (Թորոսյան Թ., 2024, էջ 129): ՀՀ զբոսաշրջության ոլորտի հիմնական ցուցանիշների վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ մինչև 2020 թվականի համավարակի տարածումը ՀՀ զբոսաշրջային ոլորտը հիմնականում կայուն աճի միտումներ է արձանագրել: 2020

թվականի ցնցումներից հետո՝ 2021–2023 թվականներին, զբոսաշրջության ոլորտում աշխուժացման միտումները վերականգնվել են: Զբոսաշրջային հոսքերի կտրուկ թռիչք է եղել 2023 թվականին, երբ երկիր էր այցելել 2 միլիոն 300 հազար զբոսաշրջիկ, ինչը մոտ 20 %–ով ավելի է 2019, մոտ 39 %–ով՝ 2022 թվականի ցուցանիշից: ՀՀ զբոսաշրջության կոմիտեի տվյալներով՝ 2024 թվականի հինգ ամիսների ընթացքում Հայաստան է այցելել 766 794 մարդ, ինչը 39 210–ով պակաս է 2023 թվականի հունվար–մայիս ամիսների ցուցանիշից (Զբոսաշրջության կոմիտե, 2024):

Հայաստանի զբոսաշրջային երրորդ ամենախոշոր ենթաոլորտը՝ ժամանցային զբոսաշրջությունն առաջնորդում է երկրորդային զբոսաշրջությունը՝ սատարելով բոլոր հիմնական ձևերին: Ժամանցային զբոսաշրջություն նախընտրողները սննդի, գինու զբոսաշրջության ու փառատոնների մաս են կազմում՝ հնարավորություն ունենալով մասնակցել դրանց առանց նախնական պլանավորման: Նրանք ձգտում են վայելել երկրի կերակրատեսակները, խմիչքներն ու գիշերային կյանքը (Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020–2030, էջեր 19–20): Զբոսաշրջային հոսքերի կայուն աճի միտումները և ժամանցային զբոսաշրջության զգալի մասնաբաժինը դրականորեն են ազդում ՀՀ հանրային սննդի ոլորտի զարգացման վրա:

Երբ ուսումնասիրում ենք հանրային սննդի ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալները, պարզում ենք, որ հանրային սննդի կազմակերպման ծավալը 2018 թվականին կազմել է՝ 116404.2 մլն դրամ, 2019 թվականին՝ 152 463.3 մլն դրամ, 2020 թվականին՝ 97 847.9 մլն դրամ, 2021 թվականին՝ 156 812.5 մլն դրամ, 2022 թվականին՝ 201 991.4 մլն դրամ, իսկ 2023 թվականին հասել է 272 984.7 մլն դրամի (ՀՀՎԿ, 2024, էջ 441): Այս տվյալներից կարող ենք հետևություն անել, որ 2021–2023 թվականներին ունենք բավականին աճ այս ոլորտում: Նույնը կարող ենք արձանագրել՝ դիտարկելով ծառայությունների ծավալի կառուցվածքը, որտեղ հանրային սննդի կազմակերպման բաժինը 2018 թվականին կազմել է՝ 6.7 տոկոս, 2019 թվականին՝ 7.6 տոկոս, 2020 թվականին՝ 5.7 տոկոս, 2021 թվականին՝ 8.2 տոկոս, 2022 թվականին՝ 7.7 տոկոս, 2023 թվականին՝ 8.7 տոկոս (ՀՀՎԿ, 2024, էջ 444): Այստեղ շեղում ենք նկատում, կապված Քովիդ 19 համավարակի հետ, 2020 թվականին ունենալով անկում, բայց աճ նկատվում է արդեն 2021 թվականից սկսած:

Անդրադառնանք բնակչության մեկ շնչի հաշվով բաժին ընկնող ծառայությունների, մասնավորապես հանրային սննդի կազմակերպման ծավալին: 2018 թվականին մեկ շնչին բաժին է ընկել՝ 39 206.5 դրամ, 2019 թվականին՝ 51 464.4 դրամ, 2020 թվականին՝ 33 040.0 դրամ, 2021 թվականին՝ 52 936.1 դրամ, 2022 թվականին՝ 68 028.9 դրամ, 2023 թվականին՝ 92 090.8 դրամ (ՀՀՎԿ, 2024, էջ 446): Այստեղ նույնպես տեսնում ենք անկում 2020 թվականին՝ կապված համավարակի հետ:

Որպես հետազոտության օբյեկտ ընտրվել է «Էմ Բի Ջի» հոսփիթալիթիի՝ «Լուի Շարդեն» ֆրանսիական սրճարան–բեյքերին, որի համար իրականացվել է 7P վերլուծություն՝ համեմատական անցկացնելով ուղղակի մրցակիցների հետ:

Ապրանքը (Product): «Լուի Շարդեն»-ում կարելի է համտեսել ոչ միայն անուշաբույր կրուասաններ, այլ նաև առկա է ամբողջական նախաճաշի մենյու, յուրահատուկ տորթերի լայն տեսականի: Ուղղակի մրցակիցներից կարելի է դիտարկել «ՓՈԼ Արմենիան», որտեղ նույնպես մատուցում են ֆրանսիական անուշաբույր կրուասաններ: «ՓՈԼ Արմենիա»-ում կարելի է համտեսել նաև պաղպաղակի լայն տեսականի, ինչը չենք կարող տեսնել «Լուի Շարդեն»-ում: Տորթերի համեղ և լայն տեսականիով առանձնանում է «Լուի Շարդենը»: «Լուի Շարդեն»-ում նաև գերակշռում են նախաճաշի սեթերը:

Գինը (Price): Ընդհանուր առմամբ խելամիտ սահմանված գինը միշտ գրավիչ է եղել հաճախորդի համար: Հաճախորդը նաև պատրաստ է վճարել այն ուտեստի համար, որը ունի ախորժալի տեսք և սքանչելի համ: «Լուի Շարդեն»-ի և «ՓՈԼ Արմենիա»-ի գնային քաղաքականության համեմատական վերլուծության արդյունքում հանգել են այն եզրակացության, որ «Լուի Շարդեն»-ում գներն ավելի ցածր են:

Վայրը (Place): Ընդհանրապես վայրը, թե որտեղ ենք մատուցելու մեր ապրանքը, ծառայությունը, հանդիսանում է կարևոր մրցակցային գործոն: «Լուի Շարդեն» սրճարանը գտնվում է Ամիրյան 11 հասցեում, որը մոտ է Հանրապետության հրապարակին, Հյուսիսային պողոտային, որտեղ շատ ակտիվ անցուդարձ է, այդ թվում ՝ տուրիստական: Ուղղակի մրցակիցների՝ «ՓՈԼ Արմենիա», «Պատրիկս Փեյսթրի», «Բրիոշ», «Բագետ & Քո», վայրը նույնպես գրավիչ է:

Սրճարաններից հիմնականում հնարավոր է լինում պատվիրել՝ menu.am-ի, buy.am-ի, eats.yandex.com-ի, glovo.com-ի միջոցով:

Առաջմղում (Promotion): Ուսումնասիրության են ենթարկվել «Լուի Շարդեն»-ի և «Պատրիկս Փեյսթրի»-ի («Patrick's Pastry») կայքերը, սոցիալական հարթակները (Facebook, Instagram) և որոնողականհամակարգերիօպտիմալացումը (SEO):

«Լուի Շարդեն»-ը առանձին կայք չունի, բայց «Էմ Բի Ջի»-ի կայքում առկա է հատուկ բաժին՝ նախատեսված «Լուի Շարդեն»-ի, ինչպես նաև մնացած երեք ռեստորանների համար (Margaryan Business Group):

Մեր օրերում բոլորը գիտակցում են սոցիալական հարթակների անհրաժեշտությունը և կարևորությունը, քանզի ամեն ոք սրճարան, ռեստորան կամ ժամանցի վայր այցելելիս փորձում է տեղեկանալ կայքի կամ սոցիալական հարթակների միջոցով:

Ինստագրամ հարթակում «Լուի Շարդենը» ունի շուրջ 12 հազար հետևորդ: Անդրադառնալով կոնտենտին՝ կարող ենք նշել, որ այն ունի առավելություն մրցակիցների համեմատ, քանի որ առաջարկվող կոնտենտը գրավում է իր առանձնահատուկ ներկայացման ձևով. մենյուի գեղեցիկ ներկայացում Հայլայթ բաժնում (հաճախորդը կարողանում է առանց խճճվելու կատարել ընտրություն), սննդի գրավիչ ներկայացում Հրապարակում բաժնում, ներկայացված է նաև սրճարանի պատմությունը (պատմության հիմքում 14 տարեկան Լուի անունով տղան է, ով ապրում է մայրիկի հետ, ով ուներ նպատակ ունենալ իր սեփական փուռը և ի վերջո նրա երազանքը իրականություն է

դառնում. Լուին բացում է իր սեփական փռի առաջին մասնաճյուղը): Հետևորդներին ավելի շատ գրավում է տեսանյութի տեսքով արված հրապարակումները, որտեղ ներկայացվում են սրճարանի առօրյան, սուրճի պատրաստման ընթացքը, սննդի մատուցումը և այլն:

Ֆեյբուքյան հարթակում հետևորդների բանակը ավելի մեծ է. 30 հազար հավանում և 31 հազար հետևորդ: Այստեղ կարևորն այն է, որ հենց սկզբում ներկայացված է մենյուն, քանի որ հաճախորդը հիմնականում մուտք է գործում սոցիալական հարթակ մենյուի ուսումնասիրության նպատակով սրճարան այցելելուց առաջ: Այստեղ նույնպես հետևորդներին դուր է գալիս տեսանյութի կոնտենտը:

Անդրադառնալով մրցակիցներից «Պատրիկս Փեյսթրի»-ն, նշենք, որ Ինստագրամ հարթակում սրճարանն ունի շուրջ 11 հազար հետևորդ, գերակշռում են հրապարակումները, Հայլայթ բաժնում գեղեցիկ ու մատչելի ձևով ներկայացված է մենյուն: «Պատրիկս Փեյսթրի»-ն նույնպես ունի իր պատմությունը (storytelling), որի խորհրդանշական հերոսը միշտ ներառվում է կոնտենտի ստեղծման մեջ: Ֆեյսբուքյան հարթակում սրճարանը ունի 8400 հավանում և 8700 հետևորդ: Ի տարբերություն «Լուի Շարդեն»-ի՝ մենյուն հենց սկզբում չի երևում: «Պատրիկս Փեյսթրի-ն առանձին կայք չունի:

Համեմատելով «Լուի Շարդեն»-ի և «Պատրիկս Փեյսթրի»-ի SEO-ն՝ եկել ենք եզրակացության, որ որոնողական համակարգերում առավելություն ունի «Պատրիկս Փեյսթրի»-ն:

Ինչ վերաբերում է թեմատիկ միջոցառումներին, ապա երկու սրճարաններն էլ ապահովում են բավական ակտիվություն: Երկու սրճարաններն էլ ներառված են tripadvisor.com կայքում:

Մարդիկ (People): Աշխատակազմը կարևոր դեր ունի սպասարկման ոլորտում: Սպասարկման բարձր մակարդակ ապահովելու համար աշխատակազմի անդամները պետք է ժամանակ առ ժամանակ վերապատրաստվեն: «Լուի Շարդեն» սրճարանում մթնոլորտը շատ ընկերական է և ընտանեկան: Սրճարանի տնօրինությունը հրաժարվեց ներդնել այփադների օգնությամբ պատվերի գրանցումը, քանի որ գնահատում են մարդկային շփումը հաճախորդի հետ, այսինքն՝ դրական աուրայի ստեղծումը, խորհուրդ տալը հաճախորդին ճիշտ ընտրություն կատարելու հարցում: Համեմատական անցկացնելով «Պատրիկս Փեյսթրի»-ի հետ՝ կարող ենք նշել նույն դրական կողմերը՝ ավելացնելով նրանց կողմից հետադարձ կապի ապահովումը: Անձնակազմը շատ ուշադիր է հաճախորդների նկատմամբ նաև նրանց ճանապարհելուց հետո. զանգի միջոցով կապ հաստատելով հաճախորդի հետ՝ նրանք տեղեկանում են մատուցված ուտեստի կամ թխվածքի համի, սպասարկման որակի մասին:

Գործընթաց (Process): Գործընթացը, թե ինչպես է ծառայությունը մատուցվում հաճախորդին, այսինքն՝ հաճախորդին դիմավորելուց մինչև վճարում ընկած ժամանակահատվածը: Դիտարկվող երկու սրճարաններն էլ պետք է անընդհատ աշխատեն գործընթացի կատարելագործման ուղղությամբ:

Ֆիզիկական միջավայր (Physical evidence): Այստեղ կարևոր է հաշվի առ-

նել, թե ինչպիսի միջավայր ունի մեր սրճարանը կամ ռեստորանը թե՛ առցանց (կայքէջ, սոցիալական ցանցեր), թե՛ անցանց (սրճարանի արտաքին և ներքին տեսքը) և թե մարդիկ սրճարանի կամ ռեստորանի կողքով անցնելիս ինչ-պիսի տպավորություն են ստանում, կամ սուրճի բաժակների ձևավորումը, կրուասանների և բագետների փաթեթավորումը: «Լուի Շարդեն»-ի թե՛ արտաքին, թե՛ ներքին միջավայրը շատ թեմատիկ է: Բոլոր դետալները, նախշերը համապատասխանեցված են նաև սրճարանի պատմության հերոսներին: Նմանատիպ գեղեցիկ միջավայր և դետալաշատ փաթեթավորում ունի նաև մրցակից «Պատրիկս Փեյսթրի»-ն:

Հետազոտության շրջանակներում իրականացվել է հարցում սպառողների շրջանում: Հարցմանը մասնակցել է 331 ռեսպոնդենտ: Հարցման նպատակն էր պարզել հասարակության վերաբերմունքը մարքեթինգի արդի միտումներին ՀՀ ռեստորանային ոլորտում:

Հարցվողները, ըստ տարիքի կազմել են. 43.5%՝ 26–34 տարեկան, 39.6%՝ 18–25 տարեկան, 15.4%՝ 35–44, 1.5%՝ 45–54: Գերակշռել է իգական սեռի մասնակցությունը՝ 94.9%: Ըստ հարցվողների զբաղվածության պատկերը հետևյալն է. 46.5%՝ աշխատող, 28.7%՝ չեն աշխատում, 17.8%՝ ուսանող-աշխատող, 7%՝ ուսանողներ: Հարցվողների մեծամասնության եկամտի չափը կազմել է մինչև 150 հազար դրամ (42.9%), 151–250 հազար դրամ (21.8%), 251–350 հազար դրամ (13%), 351 հազար դրամ և ավել (15.7%):

Հարցին թե ինչպիսի հաճախականությամբ են այցելում ռեստորան, 36.3% պատասխանել է ամսական 2–3 անգամ, ամիսը մեկ՝ 27.2%, հազվադեպ՝ 17.8%, ինչը կարող է փաստել այն մասին, որ ռեստորան այցելելու մշակույթը տարածվում է մեր հասարակությունում:

Հարցին թե ինչն են կարևորում ռեստորան այցելելիս, ստացվել են հետևյալ պատասխանները. մեծամասնության (61%) համար կարևոր է առաջարկվող խոհանոցը (օրինակ՝ ազգային, եվրոպական, ասիական և այլն), երկրորդ տեղում գինն է՝ 51.4%, երրորդում՝ գտնվելու վայրը (47.4%):

Հարցին, թե կարևոր է արդյո՞ք մանկական մենյուի առկայությունը, 63.1% տվել է դրական պատասխան, ինչից կարող ենք եզրակացնել, որ ռեստորան հիմնականում այցելում են ընտանիքներով: Կարևոր է արդյոք վեգան մենյուի առկայությունը հարցին 55.6% պատասխանել է՝ ոչ: Այս պատասխանից կարելի հասկանալ, որ հայ հասարակության համեմատաբար փոքր մասն է նախընտրում առողջ սնունդ:

Հարցին, հայտնաբերում են արդյո՞ք նոր ռեստորաններ առցանց հարթակների կամ սոցիալական մեդիայի միջոցով, գերակշռել է դրական պատասխանը (87.3%): Հարցին, թե հետևում են արդյո՞ք ռեստորան(ներին) սոցիալական մեդիա հարթակներում (օրինակ՝ Facebook, Instagram), պատասխանը եղել է այո՝ 74.9%, ինչը վկայում է այն մասին, թե որքան կարևոր է ռեստորանի համար սոցիալական հարթակի առկայությունը: Հարցին, թե արդյոք մեծ է հավանականությունը, որ այցելեն այնպիսի ռեստորան, որը ակտիվ է սոցիալական հարթակներում, 88.2% պատասխանել է այո, ինչից կարող ենք հետևություն անել, որ ոչ միայն պետք է լինի սոցիալական հարթակ, այլ այն

միևնույն ժամանակ պետք է լինի ակտիվ՝ հաճախորդներին գրավելու համար: Իսկ հարցին, թե որ տեսակի կոնտենտն են առավել գրավիչ համարում ռեստորանի սոցիալական մեդիայի հարթակում, պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. սննդի լուսանկարներ/տեսանյութեր՝ 71.9%, խոհարարական խորհուրդներ կամ բաղադրատոմսեր՝ 42%, հարցումներ կամ ինտերակտիվ բովանդակություն՝ 21.5%, մենյուի առկայություն՝ 0.3%, գնացուցակի առկայություն՝ 0.3%, ռեստորանի ինտերիերի նկարներ՝ 0.3%:

Ըստ հարցման արդյունքների, որպես նախընտրելի սրճարան/ռեստորան առաջին հորիզոնականում «PAUL»-ն («ՓՈԼ Արմենիա») է՝ 58.3%, երկրորդում՝ «Sorriso» (50.5%), որին հաջորդում են «Seasons Sweetland» (45.9%), «Patrick's Pastry» (36.3%), «Baguette&Co» (20.8%), «Louis Charden» (18.7%), «Brioche» (15.4%), «Local's» (13%):

Հարցին, թե որ սրճարան/ռեստորանի կոնտենտն եք ավելի հաճախ տեսնում սոցիալական ցանցերում, մեծամասնությունը պատասխանել են «PAUL» (68.9%), այնուհետև «Seasons Sweetland» (28.7%), «Sorriso» (25.1%): Հարցին, թե որ սրճարան/ռեստորանի կոնտենտն եք ավելի գրավիչ համարում, այս անգամ ևս առաջին տեղում է գտնվում «ՓՈԼ Արմենիան» (59.8%), որից հետո նշվել են «Seasons Sweetland» (21.1%), «Patrick's Pastry» (16.6%), «Sorriso» (16%):

Հարցին, թե կան արդյո՞ք սրճարաններ/ռեստորաններ, որոնք նախընտրում են հարցվողները և ինչ պատճառով, պատասխանները եղել են այսպիսին. «Seasons», «Sorriso», «Paul»՝ գեղեցիկ մթնոլորտ և համեղ տեսականի, «Patrick's Pastry»՝ համեղ, արագ և մատչելի, տեղն էլ շատ հարմար է, «Louis Charden»՝ բարձր որակի սպասարկում, տարբերվող երաժշտություն և սքանչելի սնունդ, «Dragon garden»՝ ամենահամեղ ռոլլերը, «Mao»՝ համեղ սուշի, «Ktur», «Katsin», «Zeytuna», «Darget Beer Academy», «Sirelis», «Pandok Yerevan»՝ սերը դեպի հայկական խոհանոց, «Limone», «Pesto», «Mozzarella», «Baguette & Co»՝ գրավիչ մենյու, «Vienna Ribs», «Casa Nostra», «Sherep», «Yasaman», «Asador», «Mayrig», «Koozh», «Gallia», «Cinabon», «Segafredo», «De Angelo», «Pekin», «Bakery Yerevan», «Sweet Coast», «Lavash», «Shaghig», «Jazzve», «Tumanyan», «Collective», «Brioche», «T Philosophy»՝ մշտապես թարմ ու շատ համեղ, «Dors», «Malocco», «New Tao», «August Cascade», «Kamancha», «George's Dom»՝ գեղեցիկ ինտերիեր ու ամենակարևորը՝ շատ համեղ մենյու, «Local's»՝ մանկական խաղասրահի առկայություն, «Babylon», «Sherep»՝ սպասարկումը և սնունդը բարձր մակարդակի վրա է:

Փորձագիտական հարցման արդյունքում ավելի ամբողջական պատկերացում կազմեցինք ՀՀ ռեստորանային ոլորտում կիրառվող մարքեթինգային արդի գործիքակազմի վերաբերյալ: ՀՀ ռեստորանային բիզնեսում մեծ կարևորություն է տրվում կայքի առկայությանը, սոցիալական հարթակներում (ինստագրամ, ֆեյսբուք) ներկայությանը, հավատարմության ծրագրերի շրջանակներում մի շարք առաջատար ռեստորաններում օգտագործվում է հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգը (CRM), կիրառվում է նեյրոմարքեթինգը: Այս ոլորտում կարևորվում է նաև

տեսողական բովանդակությունը (լուսանկարներ, տեսանյութեր, ինֆոգրաֆիկա) և պատմասացությունը (storytelling): Հայաստանում ռեստորանային արդյունաբերությունը կշարունակի զարգանալ շուկայավարման ժամանակակից միտումներին համահունչ՝ նորամուծությունների իրականացման և նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով:

Եզրակացություն

Ռեստորանային մարքեթինգի առանձնահատկությունները դիտարկելիս գալիս ենք եզրահանգման, որ այս ոլորտի համար առանձնահատկություն կարող են լինել ռեստորանի արտաքին տեսքը, որակավորված անձնակազմը, սպասարկման որակը, ներքին մթնոլորտն ու հարմարությունները, գտնվելու վայրը, առաջարկվող խոհանոցը: Կարևորներից են՝ համեղ սնունդը, մենյուի բազմազանությունը: Եթե անդրադարձ ենք կատարում մենյուին, նշենք, որ կարևորում է նաև մանկական մենյուի առկայությունը: Վերը նշված առանձնահատկությունները հիմք են ծառայում, որ ռեստորանը լինի մրցունակ և առաջատար իր ոլորտում: Կարելի է կիրառել նաև նորարարական միջոցներ, որոնք էլ ավելի գրավիչ կլինեն հաճախորդների համար, օրինակ, ապուրը՝ մատուցված հացի ափսեի մեջ, հետաքրքրիր նորույթներ միջազգային շուկայից և այլն:

Ռեստորանի (սրճարան, բեյքերիի) համար մարքեթինգի արդի միտումների համատեքստում կարելի է նշել, որ, քանի որ գործ ունենք նաև հացաբուլկեղենի հետ, ցանկալի է, որ այն իր մեջ չպարունակի գլյուտեն, կարևոր է ուշադրություն դարձնել նաև բուսական ծագման հումքին, որը իրենից ենթադրում է առողջ սնունդ: Առողջ սնվելու շարժումը դարձել է անկասելի միտում՝ սնուցման վերաբերյալ ավելի մեծ տեղեկացվածության շնորհիվ: Ավելի առողջ սննդամթերքին անցումը պայմանավորված է սպառողների պահանջարկով, և ռեստորանային արդյունաբերությունն արձագանքում է սպառողների նախասիրությունների փոփոխությանը: Սպառողների առողջության հետ կապված մտահոգությունները այժմ առաջնահերթությունների ցանկում են: Սոցիալական մեդիան, անկասկած, մեծ ներդրում ունի առողջ սնվելու միտումների տարածման գործում և առողջ սնունդը խթանելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է:

Ռեստորանային մարքեթինգի թրենդները դիտարկելիս կարող ենք անդրադառնալ հետևյալ միտումներին. առցանց պատվերի գրանցում ռեստորանից, սոցիալական մեդիա մարքեթինգի կիրառում կամ ակտիվության բարձրացում սոցիալական հարթակներում, համացանցում կարծիքներին գրագետ արձագանքելու կարևորությունը (հաճախորդները հաճախ իրենց կարծիքներն են արտահայտում, օրինակ՝ TripAdvisor.com կայքում կամ հենց Google որոնողական համակարգում), որոնողական համակարգի օպտիմալացում (SEO), կազմակերպության սեփական կայքէջի օգտագործումը, որը կարող է ծառայել նաև որպես պատվերի գրանցման հարթակ, պարբերաբար հարցումների անցկացում հաճախորդների շրջանում կամ կարծիքի հարցում, հաճախորդի լոյալության բարձրացում՝ հավատարմության ծրագրերի միջոցով:

Մարքեթինգի ազդեցությունը ռեստորանային բիզնեսի վրա հետևյալն է.

- մարքեթինգը օգնում է կազմակերպությանը ճանաչելիության բարձրացման գործում և ստեղծում է դրական կարծիք մարդկանց շրջանում,
- օգնում է ստեղծել հաճախորդների բազա, որոնք հետագայում կարող են դառնալ հավատարիմ,
- կարողանում է ստեղծագործական լուծում տալ խնդրին,
- ռազմավարություններ է առաջարկում, որոնց օգնությամբ կարող ես տարբերվել շուկայում մրցակիցներից և անգամ առաջատար դիրք գրավել,
- մարքեթինգային ռազմավարությունը նաև կարող է դառնալ բարձր եկամտի և երկարաժամկետ հաջողության գրավական,
- նպաստում է հաճախորդների հետ արդյունավետ շփումների հաստատմանը՝ փոխհարաբերությունների մարքեթինգի միջոցով,
- օգնում է հաճախորդներին պատկերացում կազմել ռեստորանի, սրճարանի մասին մինչ այցելությունը, հետևաբար սոցիալական մեդիային նույնպես կարևոր է մեծ ուշադրություն դարձնել,
- մարքեթինգային հետազոտությունների իրականացումը հնարավորություն է տալիս ռեստորանին ավելի լավ ճանաչել հաճախորդներին և բացահայտել նրանց պահանջմունքները:

Այս ամենը, իհարկե, իրագործելի կլինի այն դեպքում, եթե մշակել համապատասխան մարքեթինգային ռազմավարություն և, իհարկե, ընտրել ճիշտ թիրախային լսարան:

Անդրադառնալով մարքեթինգի զարգացման միտումներին ՀՀ ռեստորանային բիզնեսում՝ կարելի է առանձնացնել հետևյալները.

- հաճելի երեկոների կազմակերպում, որտեղ ներկա են լինում տարբեր հայ և արտասահմանյան հայտնիներ,
- սոցիալականմեդիահարթակներում (ինստագրամ, ֆեյսբուք) գրավիչ բովանդակության ստեղծում, օրինակ՝ մենյուն, սննդի տեսականիի, մատուցվող ծառայությունների, ներքին սրահի լուսանկարները,
- ռեստորանների, սրճարանների, բեյքերիների մեծամասնության տեսականին հնարավոր է պատվիրել առաքման ծառայություն մատուցող ընկերություններում,
- գեղեցիկ, մաքուր և հարմարավետ միջավայրի ստեղծում, որտեղ կարելի է վայելել հանգիստը,
- նեյրոմարքեթինգի կիրառում (թարմ կրուասանի գրավիչ բույր, տեսողական ճանաչողություն և բրենդի ճանաչողականություն),
- թեմատիկ տոներին անդրադարձ թե՛ սոցիալական հարթակներում և թե՛ ռեստորանում (կանանց միջազգային օր, Ամանոր, Ջատկի տոն, Սուրբ Վալենտինի օր, անգամ երեխաների պաշտպանության միջազգային օր),
- հատուկ մենյուի կազմում տոներին ընդառաջ, օրինակ պահքի մենյու կամ տարբեր ազգային և միջազգային, օրինակ՝ ասիական, եվրոպա-

կան խոհանոցների ընդգրկում:

ՀՀ ռեստորանային ոլորտում առկա հիմնախնդիրներից կարող ենք նշել սպասարկման որակը, որը գտնվում է ոչ պատշաճ մակարդակի վրա: Սատուցողները հնարավոր է լիարժեք չտիրապետեն մենյուին, որոշ դեպքերում կարող են վիճաբանել հաճախորդի հետ, մենեջերները իրենց հերթին միշտ չէ, որ կարողանում են ճիշտ լուծում տալ ծագող խնդիրներին, ինչը հանգեցնում է հաճախորդի կորստին, ով իր հետ միասին տանում է նաև այլ հաճախորդների ու դառնում է վատ կարծիք տարածող: Բողոքներին և դժգոհություններին ճիշտ չարձագանքելը նույնպես խնդիր է:

Հաջորդ խնդիրը վերաբերում է սակավ ուշադրությանը որոնողական համակարգերի օպտիմալացմանը: Ռեստորանների, սրճարանների մեծամասնությունը կարևոր տեղ չի տալիս որոնողական համակարգի օպտիմալացմանը, բանալի բառերի օգտագործմանը, որոնք կարող են օգնել հանրային սննդի կազմակերպություններին որոնման ցանցերում հայտնվել առաջին հինգ արդյունքներում:

Հաջորդը վերաբերում է նորարար տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդրին, օրինակ՝ արհեստական բանականության ընձեռած հնարավորություններն անտեսելը: Որոշ ռեստորաններ, սրճարաններ բավարար ուշադրություն չեն դարձնում մարքեթինգային համալիրի՝ 7P-երից գործընթացին (process): Հաճախորդի վրա թողած առաջին տպավորությունը միշտ կարևոր է: Իսկ գործընթացն իրենից ենթադրում է հաճախորդի մուտքից մինչև ծառայության համար վճարելու գործընթացը: Ուստի նոր հաճախորդին առաջին փորձից գրավելը շատ կարևոր է:

Հաջորդիվ կարող ենք որպես խնդիր դիտարկել կայքէջերի բացակայությունը ռեստորանների մեծամասնության շրջանում: Կայքէջը կարևոր է այնքանով, որ հաճախորդը կարող է ռեստորանի, սրճարանի մասին տեղեկությունը (գտնվելու վայրը, պատվերի գրանցումը հենց կայքէջից, ծանոթացում մթնոլորտին, մենյուին և այլն) անմիջապես ստանալ պաշտոնական կայքէջից:

Կարևոր է հաճախորդի հետ պատմասացության (storytelling) միջոցով անմիջական կապի ձևավորումը, սակայն ՀՀ հանրային սննդի ոլորտում գործող կազմակերպությունների մեծ մասը չունի պատմական ակնարկ իրենց ռեստորանի կամ սրճարանի մասին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հետազոտության շրջանակներում ներկայացվել են մի շարք առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել ՀՀ ռեստորանային բիզնեսում՝ մարքեթինգային գործունեության բարելավման և ցանկալի արդյունքի հասնելու համար.

- սոցիալական հարթակներում ակտիվության բարձրացում. որպես լուծում առաջարկում ենք նախ ուսումնասիրել լսարանը, այնուհետև, օրինակ, հրապարակել 4–7 ռիլ (reels) շաբաթական, Story բաժնում ամեն օր կիսվել լուսանկարներով և տեսանյութերով: Աշխատել հեշթեգներով, համագործակցել այն ինֆլուենսերների հետ, որոնց թիրախը գրավիչ կլինի ռեստորանի համար, կցել վճարովի գովազդ,

- անձնակազմի որակավորման և հաճախորդների սպասարկման մակարդակի բարձրացում. իրականացնել անձնակազմի վերապատրաստմանև մասնագիտական զարգացման ծրագրեր, հաճախորդներին ցուցաբերել անհատական մոտեցում, ինչպես նաև արձագանքել նրանց դժգոհություններին, բողոքներին տալ խելամիտ լուծումներ,
- որոնողական համակարգերի օպտիմալացում. բանալի բառերի օգտագործում, որոնք հաճախ կարող է օգտագործել թիրախային լսարանը, ստեղծել բարձր որակի բովանդակություն (content)՝ ևս բանալի բառերով,
- ճաշացանկում ոչ միայն մանկական մենյուի ավելացում, այլ նաև փոքրիկ անկյունի (kids zone) ստեղծում, որտեղ երեխաները կարող են զբաղվել, իսկ ծնողները հանգիստ վայելել իրենց ճաշը կամ ընթրիքը:

Որպեսզի հանրային սննդի կազմակերպությունը միշտ մնա ճկուն, հարմարվի փոփոխվող միջավայրին, բացահայտի հնարավորություններն ու հաղթահարի մարտահրավերները, պետք է պարբերաբար ուսումնասիրի հայաստանյան և, ինչու չէ, նաև միջազգային շուկայում տեղի ունեցող մարքեթինգային միտումները, բաց լինի մարքեթինգային և տեխնոլոգիական նորարարությունների նկատմամբ, որպեսզի մրցակցային շուկայում լինի առաջատարներից մեկը:

Օգտագործված գրականության ցանկ

ՀՀ վիճակագրական կոմիտե. *Հայաստանի վիճակագրական տարեգիրք* (2024). https://www.armstat.am/file/doc/99552358.pdf

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտե. *Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն 2020-2030.* https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf

Թորոսյան, Թ., Մեջլումյան, Շ. (2024). Հայաստանի միջազգային զբոսաշրջության ներուժի գնահատումը PESTLE վերլուծական գործիքով: *Գիտական Արցախ,* (2(21)). 125-141. doi: 10.52063/25792652-2024.2.21-125

Китченко, Е. Н., Чемерис, А. В. (2017). Использование средств маркетинга в ресторанном бизнесе. *Технологический аудит и резервы производства.* 1(4(33)). 8-13. https://cyberleninka.ru/article/n/ispolzovanie-sredstv-marketinga-v-restorannom-biznese/viewer

Коновалов, А. В. (2016). Разработка маркетинговых стратегий в ресторанном бизнесе // *Концептуальные основы развития туризма и туристского сервиса.* Сборник научных статей и докладов Всероссийской научно-практической конференции «Современные проблемы развития туризма и туристского сервиса» В 2 ч., ч. 2 – СПб.: Изд-во СПбГУСЭ.

Костромин, Д. В. (2021). *Управление процессом диверсификации ресторанного бизнеса на региональном рынке: магистерская диссертация.* Уральский федеральный университет имени первого Президента России Б. Н. Ельцина, Институт экономики и управления, Кафедра маркетинга. — Екатеринбург, 83с. Retrieved from http://elar.urfu.ru/handle/10995/106608

Уткин, Э. А. (2010). *Маркетинг: учебник.* М.: Ассоциация авторов и издателей «Тандем». Издательство ЭКМОС.

Фокина, О. В. (2022). Реализация концепции устойчивого маркетинга в ресторанном бизнесе. Корпоративное управление и инновационное развитие экономики Севера: *Вестник Научно-исследовательского центра корпоративного права, управления и венчурного инвестирования Сыктывкарского государственного университета.* Т 2. N 2. 236-247. https://cyberleninka.ru/article/n/realizatsiya-kontseptsii-ustoychivogo-marketinga-v-restorannom-biznese

BuzzyBooth. (2023). *The Art of Restaurant Marketing: How to Stand Out in a Crowded Market.* https://www.linkedin.com/pulse/art-restaurant-marketing-how-stand-out-crowded- market-buzzybooth

Cognite. (2016). *10 Characteristics of Highly Successful Restaurants.* https://idealsoftware.co.za/10-characteristics-of-highly-successful-restaurants/

Gastro Business ֆորում. ռեստորանային բում Հայաստանում. ինչ ուղղությամբ է զարգանում ոլորտը (2023). https://style.news.am/arm/news/98371/gastro-business-forum-restoranayin-bum-hayastanum-inch-uxxutyamb-e-zarganum-olorty.html

Leung, A. G. (2023). *Restaurant Industry Trends for 2024.* https://www.linkedin.com/pulse/restaurant-industry-trends-2024-alexandra-leung

Margaryan Business Group (2024). https://mbgroup.am/arm/charden

References

HH vijakagrakan komite. *Hayastani vijakagrakan taregirq* [Statistical Yearbook of Armenia] (2023). https://www.armstat.am/file/doc/99552358.pdf (In Arm.)

HH Economikayi nakhararutyan Zbosashrjutyan komite. *Hayastani zbosashrjutyan zargatsman razmavarutyun 2020-2030* [Armenia's Tourism Development Strategy 2020-2030]. https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf (In Arm.)

Torosyan, T., Mejlumyan Sh. (2024). *Hayastani mijazgayin zbosashrjutyan neruji gnahatumy PESTLE verlutsakan gortsiqov* [Assessment of Armenia's international tourism potential using the PESTLE analytical tool]. Scientific Artsakh. (2(21)). 125-141. doi: 10.52063/25792652-2024.2.21-125 (In Arm.)

Kitchenko, E. N., Chemeris, A. V. (2017). Ispolzovanie sredstv marketinga v restorannom biznese [Using Marketing Tools in the Restaurant Business]. *Tekhnologicheskiy audit i rezervy proizvodstva.* 1(4(33)). 8-13. Retrieved from https://cyberleninka.ru/article/n/ispolzovanie-sredstv-marketinga-v-restorannom-biznese/viewer (In Rus.)

Konovalov, A. V. (2016). Razrabotka marketingovykh strategiy v restorannom biznese [Development of marketing strategies in the restaurant business] // Kontseptualnye osnovy razvitiya turizma i turistskogo servisa. Sbornik nauchnykh statey i dokladov Vserossiyskoy nauchno-prakticheskoy konferentsii «Sovremennye problemy razvitiya turizma i turistskogo servisa» V 2 ch., ch. 2 – SPb.: Izd-vo SPbGUSE. (In Rus.)

Kostromin, D. V. (2021). *Upravlenie protsessom diversifikatsii restorannogo biznesa na regionalnom rynke: magisterskaya dissertatsiya* [Managing the process of diversification of the restaurant business in the regional market: master's thesis].

Uralskiy federalnyy universitet imeni pervogo Prezidenta Rossii B. N. Eltsina, Institut ekonomiki i upravleniya, Kafedra marketinga. — Ekaterinburg, 83s. http://elar.urfu.ru/handle/10995/106608 (In Rus.)

Utkin, E. A. (2010). *Marketing: uchebnik [Marketing: a textbook].* M.: Assotsiatsiya avtorov i izdateley «Tandem». Izdatelstvo EKMOS. 320 s. (In Rus.)

Fokina O. V. (2022). *Realizatsiya kontseptsii ustoychivogo marketinga v restorannom biznese* [Implementation of the concept of sustainable marketing in the restaurant business]. Korporativnoe upravlenie i innovatsionnoe razvitie ekonomiki Severa: Vestnik Nauchno-issledovatelskogo tsentra korporativnogo prava, upravleniya i venchurnogo investirovaniya Syktyvkarskogo gosudarstvennogo universiteta. T 2. N 2. 236-247. https://cyberleninka.ru/article/n/realizatsiya-kontseptsii-ustoychivogo-marketinga-v-restorannom-biznese (In Rus.)

Gastro Business forum. restoranayin bum Hayastanum. Ի՞nch ughutyamb e zarganum volorty: [Gastro Business Forum: Restaurant Boom in Armenia: In What Direction Is the Sector Developing?]. (2023). https://style.news.am/arm/news/98371/gastro-business-forum-restoranayin-bum-hayastanum-inch-uxxutyamb-e-zarganum-olorty.html (In Arm.)

Leung, A. G. (2023). *Restaurant Industry Trends for 2024.* https://www.linkedin.com/pulse/restaurant-industry-trends-2024-alexandra-leung (In Eng.)

Margaryan Business Group (2024). https://mbgroup.am/arm/charden (In Eng.)

Лилия Аветисян

Доцент кафедры Маркетинга Армянского государственного экономического университета, кафедры Управления Французского университета в Армении и кафедры Управления и ИТ Международного университета Евразия, кандидат экономических наук,

Эл. адрес: l.a.avetisyan.l@gmail.com

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МАРКЕТИНГА В РЕСТОРАННОМ БИЗНЕСЕ

В настоящее время маркетинг развивается более быстрыми темпами. Чтобы услуга или продукт пользовались спросом, важно следить за текущими тенденциями маркетинга для создания желаемой клиентской базы. Обычно маркетинговые тенденции фокусируются на управлении взаимоотношениями с клиентами, технологиях и социальных сетях. Компании сферы гостеприимства внедряют инновации, чтобы отличаться от своих конкурентов, создают более привлекательное ценностное предложение, принимая во внимание инновационный потенциал компании. Воздействие технологического и социального прогресса усугубилось изменениями в базовом ценностном предложении. Все это побуждает компании изучать потребительские предпочтения и на их основе анализировать маркетинговые тенденции. Значимость применения маркетинговых тенденций в деятельности компаний очень высока, поскольку внешняя среда в современных рыночных отношениях не стабильна и меняется быстрыми темпами. Сегодня ресторанная индустрия

движется вперед с огромной скоростью. Рестораны с уютной атмосферой, вкусной едой и активными социальными площадками привлекательны как для местных, так и для иностранных гостей. Независимо от отрасли следует учитывать, что бизнес находится в условиях конкуренции, поэтому хочет идти в ногу со временем. Маркетинговые тенденции изменились, особенно из–за Covid 19 и развития искусственного интеллекта. Во время Covid–19 доставка еды из ресторанов стала популярной, и эта тенденция сохраняется по сей день. Что касается искусственного интеллекта, который продвигает новую повестку дня в обществе, можно сказать, что ИИ пришел на помощь маркетологам. Современные маркетинговые тенденции обусловлены главным образом развитием социальных сетей по мере движения мира к виртуализации. Ресторанный бизнес РА движется вперед быстрыми темпами, интегрируя современные тенденции маркетинга. Острая конкуренция на рынке ресторанных услуг способствует еще большему повышению роли маркетинга в ресторанной индустрии. В конечном итоге следование маркетинговым тенденциям помогает ресторанам идти в ногу со временем, повысить удовлетворенность клиентов, увеличить рентабельность и занять лидирующие позиции на рынке. Все вышесказанное определило актуальность темы исследования. Цель исследования заключается в выявлении современных тенденций развития маркетинга в ресторанной сфере и их проявлений в Армении.

В статье представлены актуальные тренды ресторанного маркетинга, раскрыты особенности инновационной деятельности организаций, функционирующих в сфере гостеприимства, рассмотрены основные маркетинговые инструменты, используемые для продвижения ресторанов, а также проанализировано современное состояние ресторанного бизнеса Республики Армения, выявлены проблемы и возможности дальнейшего развития маркетинговой деятельности в ресторанной сфере Армении.

Ключевые слова: ресторан, кафе, бизнес, обслуживание, общественное питание, ресторанный маркетинг, сфера гостеприимства.

Lilya Avetisyan
Associate Professor at the Chair of Marketing, Armenian State University of Economics, the Chair of Management, French University in Armenia and the Chair of Management and IT at Eurasia International University,
Ph.D. in Economics
Email: l.a.avetisyan.l@gmail.com

MARKETING DEVELOPMENT TRENDS IN THE RESTAURANT BUSINESS

Marketing is currently evolving at a faster pace. In order for a service or product to be in demand, it is important to follow current marketing trends to create the desired customer base. Marketing trends usually focus on customer relationship management, technology and social media. Hospitality companies are

innovating to stand out from their competitors, creating a more attractive value proposition while considering their own innovative potential. The impact of technological and social progress has been aggravated by changes in the basic value proposition. All this encourages companies to study consumer preferences and analyze marketing trends based on them. The importance of applying marketing trends in the activities of companies is very high, since the external environment in modern market relations is unstable and changes rapidly. Today, the restaurant industry is moving forward at a tremendous speed. Restaurants with a cozy atmosphere, delicious food and active social platforms are attractive to both local and foreign guests. Regardless of the industry, it should be taken into account that the business is in a competitive environment, so it wants to keep up with the times. Marketing trends have changed, especially due to Covid 19 and the development of artificial intelligence. During Covid-19 restaurant food delivery became popular and this trend continues to this day. As for artificial intelligence, which is pushing a new agenda in society, it can be said that AI has come to the aid of marketers. Modern marketing trends are mainly driven by the development of social networks as the world moves towards virtualization. The RA restaurant business is moving forward at a rapid pace, integrating modern marketing trends. Intense competition in the restaurant services market contributes to an even greater increase in the role of marketing in the restaurant industry. Ultimately, following marketing trends helps restaurants keep up with the times, improve customer satisfaction, increase profitability and take a leading position in the market. All of the above determined the relevance of the research topic. The purpose of the study is to identify modern trends in the development of marketing in the restaurant industry and their manifestations in Armenia.

The article presents current trends in restaurant marketing, reveals the features of innovative activities of organizations operating in the hospitality industry, examines the main marketing tools used to promote restaurants, and analyzes the current state of the restaurant business in the Republic of Armenia, identifies problems and opportunities for further development of marketing activities in the restaurant industry in Armenia.

Key words: restaurant, cafe, business, service, catering, restaurant marketing, hospitality industry.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. նոյեմբերի 12-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 15-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Զավեն Բաղրյան
Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի հայցորդ
Էլ. հասցե՝ zavenbaghryan1998@gmail.com

Էլինա Շամխալովա
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող,
ԵՄՀ ՈԱ կենտրոնի ղեկավար
Էլ. հասցե՝ shamkhalovaelina@gmail.com

Արտաշ Գալստյան
Գալուստ ՍՊԸ հիմնադիր, գործադիր տնօրեն
Էլ. հասցե՝ artashgalstyan0001@gmail.com

DOI: 10.53614/18294952-2024.2-131

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդվածում հետազոտության են ենթարկվել ռազմավարական մարքեթինգի նրբությունները և հիմնավորվել ագրոպարենային համակարգում դրանց կիրառման հնարավորությունները: Շուկայավարման գծով ստեղծված խնդիրներն ուսումնասիրելով և ձևավորված տենդենցները հաշվի առնելով, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ մարքեթինգային մոդելների տեսքով: Միջազգային պրակտիկան դիտարկելով և ժամանակակից շուկայի պահանջներից ելնելով մեծ կարևորություն է տրվել ագրովերամշակման ոլորտում եկամուտների գործառնությունների (RevOps) մոդելի ռազմավարական մակարդակով կիրառմանը և մանրածախ (Retail) աուդիտի շարունակական իրականացմանը: Աշխա-

տանքում անդրադարձ է կատարվել B2C սեգմենտում բրենդների կարևորությանը և սպառողական շուկայում թիրախային լսարանի վրա բրենդինգի առանցքային ազդեցությանը: Մարքեթինգային տեսանկյունից հատուկ առաջարկություն է կատարվել՝ սննդի արդյունաբերության մեջ օրգանական ու արհեստական մեծ ներգործությամբ դասակարգվող պրոդուկտներին զուգահեռ, որպես այլընտրանքային պրոդուկտ, ներկայացնել և շուկայում դիրքավորել բնական տեխնոլոգիաներով պատրաստված ագրոպարենային արտադրանքը: Շուկայավարման պրակտիկան հետազոտելով ներկայացվել է ռազմավարական մարքեթինգում բրիֆինգի կազմակերպման այժմյան մեխանիզմները և մարքեթինգային խորհրդատվության բարձրացման ուղիները:

Հիմնաբառեր. ագրոպարենային մարքեթինգ, շուկայական իրավիճակ, ռիթեյլ մոնիթորինգ, մարքեթինգային կարճատեսություն, բյուջետային սեգմենտ:

Ներածություն

Ագրոպարենային շուկայում տոտալ մրցակցությանը դիմակայելու տեսանկյունից, շուկայական հետազոտությունների շարունակական իրականացման խնդիրն առավել սուր է արտահայտված՝ համեմատած տնտեսության մնացած ճյուղերի (Day, 1999, էջ 15): Անկախ շուկայի վերլուծության իրականացման ընթացքում կիրառվող մոտեցումներից, պարտադիր պայման է ոչ միայն միքս հետազոտությունների միջոցով առաջնային և երկրորդային հետազոտական տվյալների համադրումը, այլև դրանց հիման վրա համապատասխան եզրահանգումների միջոցով մրցակցային քաղաքականության ադապտացումը շուկայական իրավիճակին: Այդ առումով խիստ նպատակային է ագրոպարենային մարքեթինգում RevOps (Revenue Operations) մոդելի կիրառումը ստրատեգիական մակարդակով (RevOps Framework, 2020, էջ 3): Ռազմավարական տեսանկյունից վերոնշյալ մոդելի կիրառումը գործնական հնարավորություն է տալիս մեկ կենտրոնից համակարգել ու վերահսկել ամբողջ մարքեթինգային պրոցեսները՝ ապահովելով մարքեթինգային և վաճառքների բաժինների միջև շարունակական համագործակցությունը (Kotler & Keller, 2016):

Մեթոդ

Հոդվածում ուսումնասիրության է ենթարկվել ռազմավարական շուկայավարման պրակտիկայում կիրառվող մարքեթինգային մոդելները և դրանց համադրելիությունը ագրոպարենային համակարգում: Ձեռնարկատիրական միջազգային պրակտիկան հաշվի առնելով, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ ադապտացված ագրոպարենային ձեռնարկությունների խնդիրներին և տենդենցներին: Ներկայացվող լուծումները վերաբերում են ինչպես ՓՄՁ-ին, այնպես էլ սննդի արդյունաբերությունում հանդես եկող խոշոր կազմակերպություններին: Հոդվածի ուղղվածության և

թեմայի առանձնահատկություններից ելնելով, կատարված վերլուծություն-ները իրականացվել են որակական հետազոտությունների տեսքով:

Արդյունքներ

Ժամանակակից շուկայական հարաբերություններում, մասնավորապես, զարգացած և զարգացող երկրներում, սպառողական նշանակության ապ-րանքների վաճառքների գերակշիռ մասը բաժին է հասնում ռիթեյլ ոլորտին :

Գծապատկեր 1: Մարքեթինգային պրոցեսների կառավարման հիմնական ուղղությունները RevOps մոդելի

Ներկայացվող RevOps մոդելի կարևորությունն ու հիմնական առավելութ-յունը կայանում է նրանում, որ հնարավորություն է ընձեռնվում իրականաց-նել վաճառքների և մարքեթինգային աուդիտ՝ ցանկացած պահի դրությամբ օպերատիվ տվյալների հիման վրա:

Մարքեթինգային աուդիտի գլխավոր հիմնախնդիրներից են՝ մի կողմից շուկայական իրավիճակի հետ մարքեթինգային ռազմավարությունների հա-մադրելիության գնահատումը, իսկ մյուս կողմից՝ կիրառվող մարքեթինգա-յին միջոցառումների նպատակահարմարության բացահայտումը:

Ագրոպարենային ոլորտում ռիթեյլ աուդիտի պատշաճ իրականացումն ունի հույժ կարևոր նշանակություն ինչպես B2C, այնպես էլ B2B սեգմենտնե-րի հետ ճկուն փոխհարաբերությունների ձևավորման և կատարելագործման տեսանկյունից (Tanner & Raymond, 2011, էջ 27):

Ռիթեյլ աուդիտն ուղղակի ազդեցություն է ունենում մարքեթինգային և գովազդային արշավների կազմակերպման, իրականացվող միջոցառումների փաստացի ժամանակահատվածի դրությամբ գնահատման և մարքեթինգային ձախողումների զսպման վրա (Naylor, Alakshendra, & Ahmed, 2008, էջ 42):

Շուկայի մոնիթորինգի ընթացքում ռիթեյլ աուդիտի իրականացումը հնա-

րավորություն է ստեղծում մշտադիտարկումների միջոցով ուսումնասիրության ենթարկել ոչ միայն շուկայում ներկայացվող ապրանքատեսականին, ձևավորվող տենդենցներն, այլև մրցակից կազմակերպությունների մարքեթինգային քաղաքականությունը, շուկայական իրավիճակը, շուկայական դինամիկան և մրցակցության առանձնահատկությունները վաճառասրահներում (Grewal, Levy, & Kumar, 2010, էջ 59):

Գլխավոր խնդիրներից են՝ գնահատել, թե արդյոք, ժամանակին է թարմացվում ֆիրմայի կողմից ներկայացվող արտադրանքը ցանցային խանութում, քանի որ դա ոչ միայն ազդեցություն է ունենում ձեռնարկության իրացման ծավալների վրա, այլ նաև հաճախորդների շրջանում լոյալության ձևավորմանը ապրանքանիշի հանդեպ: Մասնաճյուղերում վաճառքների ծավալների ավելացման հնարավորությունները և վաճառքների պոտենցիալը զսպող գործոնների բացահայտումը ուղղակիորեն կախված է ռիթեյլ մոնիթորինգի կազմակերպման մեխանիզմներից:



Գծապատկեր 2: Ռիթեյլ մոնիթորինգի հիմնական ուղղությունները

Նույնիսկ այն դեպքում, երբ ձեռնարկությունը հաջող գործունեություն է ծավալում շուկայում և ֆիրմայի կողմից ներկայացվող արտադրանքն ունի բավարար պահանջարկ, այնուամենայնիվ, կոնկրետ ժամանակահատվածի դրությամբ տվյալ հետազոտությունների շարունակական իրականացումը կարևոր նշանակություն ունի ռազմավարական որոշումների կայացման տեսանկյունից:

Ուստի, ռիթեյլ ոլորտում բազմաթիվ ապրանքանիշերի ներկայացվածությունը հանգեցնում է նրան, որ արտադրողները պետք է ունենան նաև ցանցային խանութների առանձնահատկություններին համապատասխան հատուկ մրցակցային քաղաքականություն՝ ցանցային սուպերմարկետներում կոշտ մրցակցությանը դիմակայելու նպատակով:

Ագրովերամշակման ճյուղում, մասնավորապես ռիթեյլի շուկայում արտադրանք ներկայացնելու պարագայում ձևավորվող պահանջարկի վրա զգալի ազդեցություն ունի մարքեթինգային կարճատեսության գործոնի նպատակաուղղված կառավարումը: Մարքեթինգային կարճատեսությունն այն իրավիճակն է, երբ ձեռնարկությունը ներկայացնում է մրցունակ արտադրանք, սակայն թիրախային շուկայում որպես արժեքային առավելությամբ պրոդուկտ չի ընկալվում: Նման ռիսկերի նվազեցման տեսանկյունից հույժ կարևորություն ունի գնորդների ու վերջնական սպառողների փաստացի դա-

սակարգումը (Lilien & Rangaswamy, 2004, էջ 87):

Վերոնշյալ ռիսկը առկա է յուրաքանչյուր մարքեթինգային քաղաքականության մեջ, սակայն տվյալ ռիսկի նվազեցման տեսանկյունից առանցքային կարևորություն ունի գովազդային ուղղվածության թիրախային ընտրությունը: Ագրոպարենային համակարգում ըստ իրենց առջև դրված խնդիրների, գովազդային արշավները դասակարգվում են հետևյալ նպատակներից մեկին:



Գծապատկեր 3: Ըստ նպատակաուղղվածության գովազդների դասակարգումը ագրոպարենային համակարգում

Մննդի արդյունաբերության պրակտիկայում ընդունված է ագրոպարենային պրոդուկտները դասակարգել արհեստական մեծ ներգործությամբ և օրգանական ստանդարտների սերտիֆիկացումներին համապատասխանող արտադրանքների (Smith & Paladino, 2015, էջ 103): Չնայած այն հանգամանքին, որ այժմյան զարգացած և զարգացող երկրների շուկաներում օրգանական արտադրանքի հանդեպ առկա է կայուն պահանջարկ, այնուամենայնիվ, գնային դժվարահասանելիության, օրգանիկ սերտիֆիկացմումների հանդեպ ներկայացվող չափից խիստ պահանջների և բարձր ինքնարժեքի պատճառներից ելնելով, օրգանական արտադրանքի տեսակարար կշիռը շարունակվում է սահմանափակված մնալ ագրոպարենային շուկայում:

Մարքեթինգային տեսանկյունից, որպես իրատեսական այլընտրանքային լուծում, կարող է հանդես գալ բնական տեխնոլոգիաներով թողարկված արտադրանքը, որն իր որակական հատկանիշներով թեկուզ զիջում է օրգանական արտադրանքին, սակայն մրցակցային առավելության տեսանկյունից զգալիորեն գերազանցում է արհեստական մեծ ներգործությամբ արտադրված ագրոպարենային արտադրանքին :



Գծապատկեր 4: Օրգանական և արհեստական մեթոդներով թողարկված սննդամթերքի դասակարգում

Սննդի արդյունաբերության մեջ բնական տեխնոլոգիաներով թողարկված արտադրանքին կարող է զգալիորեն նպաստել նաև այն գործոնն, որ զարգացած և զարգացող բազմաթիվ երկրների բնակչության շրջանում, մասնավորապես, միջին և միջինից բարձր վճարունակություն ունեցող սեգմենտներում, տենդենց է ձևավորվում առողջ սննդի օգտագործումը՝ համեմատաբար հասանելի գներով:

Մարքեթինգային պրակտիկան ապացուցել է, որ ցածր ինքնարժեքով արտադրանք թողարկելու, սակայն բարձր արժեքով վաճառելու առավել արդյունավետ ճանապարհը գրագետ բրենդինգի կազմակերպումն է: Ագրոպարենային արտադրանք թողարկող կազմակերպությունները առավել հաճախ կարիք են ունենում նպատակային կազմակերպել բրենդինգը՝ շուկայում բյուջետային պրոդուկտներով հանդես գալու ընթացքում, քանի որ համաման գնային քաղաքականության պարագայում բրենդինգը առավել մեծ ազդեցություն է ունենում պոտենցիալ ու առկա սպառողների շրջանում:

Թիրախավորված բրենդինգը հնարավորություն է տալիս շոշափելիորեն տարբերվել մրցակիցներից՝ գերհագեցած մրցակցությանը դիմակայելու գործում:

Միևնույն ժամանակ միջազգային, տարածաշրջանային և մասնավորապես, լոկալ մակարդակի նորանոր բրենդների մշտապես ի հայտ գալը ագրոպարենային արտադրանք թողարկող ձեռնարկություններին պարտադրում է կիրառել համապարփակ այնպիսի մարքեթինգային ռազմավարություններ, որոնք թույլ կտան բրենդային պատերազմներին դիմադրելուն զուգահեռ՝ պահպանել ինչպես թիրախային լսարանն, այնպես էլ շուկայական մասնաբաժինը:

Ռազմավարական մարքեթինգում շուկայական մասնաբաժինը պահպանելու և հաճախորդների նոր սեգմենտներ ներգրավելու տեսանկյունից կիրառվող մարքեթինգային գործիքակազմերի շարքում առանցքային նշանակություն ունի Switching costs մոդելը: Այն իրենից ներկայացնում է որևէ բրենդի նախընտրություն տալու ընթացքում գնորդի հոգեբանական, ֆինանսական, ժամանակային, ինչպես նաև սպառողի վարքագծային որոշումների կայացման վրա ազդեցություն ունեցող առանցքային գործոնների բացահայտում: Դա իր հերթին նպաստում է թիրախային շուկայում հաճախորդների ինսայթի հայտնաբերմանը, այսինքն՝ հաճախորդների շրջանում ձևավորված գաղտնի հոգեբանական պահանջմունքների բացահայտմանը:

Պրակտիկան ապացուցել է, որ Switching costs հետազոտություններին զուգահեռ, հիմնական վերլուծությունների գլխավոր ուղղություններից պետք է լինի նաև թիրախային շուկայում բրենդի խոցելիության գնահատումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ագրոպարենային ոլորտում ներկայացված արտադրատեսականին հանդիսանում է բացառությամբ սպառողական նշանակության պրոդուկտներ, դրանով իսկ բրենդի խոցելիության դերը B2C սեգմենտի հետ փոխհարաբերություններում ունի կենսական նշանակություն՝ ժամանակին պոտենցիալ ռիսկերի հայտնաբերման և կանխարգելման տեսանկյունից: Մասնավորապես, B2C սեգմենտում այդ ուսումնասիրությունները NPS հետազոտությունների տեսքով նպաստում է քանակական վերլուծության ենթարկել ներկայացվող արտադրանքից սպառողների բավարարվածության ու բրենդի հանդեպ իրական տրամադրվածության մակարդակը, իսկ փորձագիտական մոտեցումների միջոցով հայտնաբերել ներկայացվող բրենդից չօգտվելու հիմնական մարքեթինգային խոչնդոտների և շուկայական մասնաբաժնի կրճատման խորքային պատճառները:

Ագրոպարենային մարքեթինգի առանցքային բաղադրիչներից են ցուցահանդեսների կազմակերպումն ու մասնակցության ապահովումը: Այդ ամենը հույժ կարևոր նշանակություն ունի ինչպես B2C, այնպես էլ B2B սեգմենտների հետ աշխատանքների թիրախային իրականացման առումով: Ցուցահանդեսների մասնակցության առաջնային հիմնախնդիրներից պետք է լինի ոչ միայն ներկայացվող արտադրանքի առաջմղումը և ճանաչելիության բարձրացումը, այլ նաև զուգահեռաբար, գաղտնի հետազոտությունների ու մարքեթինգային հետախուզությունների բազմակողմանի իրականացումը: Կարևոր նրբություն է ոչ միայն միջազգային ցուցահանդեսների վրա կենտրոնանալը, այլ նաև այն էքսպոների, որտեղ ներկա է ինչպես փաստացի, այնպես էլ պոտենցիալ շուկաների ներկայացուցիչները:

Ռազմավարական մարքեթինգի մակարդակում նպատակային է հաճախորդների դասակարգումն իրականացնել ըստ հետևյալ կատեգորիաների՝ լոյալ միջոցառումների արդյունքում և մարքեթինգային միջոցառումների արդյունքում ձևավորվածներ:

Լոյալ հաճախորդների շարքին դասվում են այն գնորդներն, որոնք երկարաժամկետ հարաբերությունների արդյունքում նախապատվություն են տալիս օգտվել տվյալ կազմակերպության արտադրանքից՝ համապատաս-

խան բրենդի հանդեպ ձևավորված դրական փորձառության շնորհիվ:

Մարքեթինգային միջոցառումների արդյունքում ձևավորված հաճախորդներն են համարվում այն գնորդները, որոնք նախապատվություն են տալիս օգտվել այս կամ այն արտադրանքից, զանազան մարքեթինգային միջոցառումների, գովազդային արշավների և այլ ակցիաների շնորհիվ հետաքրքրություն առաջացնող կոմերցիոն առաջարկների հետևանքով:

Այժմյան շուկայում ագրոպարենային համակարգի անբաժան մաս է համարվում բյուջետային սեգմենտը: Այդ սեգմենտում հաճախ ներգրավված են լինում ոչ միայն սահմանափակ եկամուտներ ունեցող հաճախորդները, այլև միջին և միջինից բարձր եկամուտների տիրապետող գնորդները: Ուստի, տվյալ սեգմենտում գին-որակ համադրությունը համարվում է հաճախորդի բավարարվածության գլխավոր գործոնը: Հաճախորդների վերոնշյալ խմբի հետ աշխատելիս բավարար մրցունակություն ապահովելուն զուգահեռ, կարևոր է հաշվի առնել, որ այդ թիրախը ունի բարձր զգայունություն՝ զեղչերի և ակցիաների նկատմամբ:

Ագրոպարենային համակարգում ինչպես գրեթե մնացած ոլորտներում կայուն զարգացման տեսանկյունից էական դերակատարություն ունի գործընկեր շահառուների հետ երկարաժամկետ փոխհարաբերությունների ձևավորումը: Կարևոր հանգամանք է շահառուներին ոչ միայն ըստ ազդեցության դասակարգումը, այլ նաև յուրաքանչյուր գործընկերոջ հիմնական խնդիրների և նպատակների բացահայտումը: Ոլորտային շահառուներին մոնիթորինգի ենթարկելը վճռական նշանակություն ունի շահակիցների հետ փոխհարաբերությունների ամրապնդման, ճանապարհային քարտեզների մշակման, և պոտենցիալ ռիսկերի կանխարգելման համար: Ուսումնասիրելով ագրոպարենային համակարգի ոլորտային նրբությունները, առանձնացվել են արտաքին շահառուների հետևյալ հիմնական խմբերը.

- Ագրոպարենային համակարգում արտաքին շահառուների խմբերի դասակարգումը
- Ֆինանսական և վարկատու կազմակերպություններ,
- Մատակարարներ,
- Առաքիչներ,
- Բիզնեսի զարգացմանը նպաստող խորհրդատվական և աութսորսինգային կազմակերպություններ,
- Ռիթեյլ շուկայի ներկայացուցիչներ և մանրածախ խանութներ,
- Պետական և ՏԻՄ մարմիններ,
- Միցակիցներ,
- Բիզնես ասոցիացիաներ և ոլորտային ՀԿ-ներ,
- Գնորդներ և սպառողներ,
- Մեդիա ներկայացուցիչներ և որոտային ազդեցություն ունեցող բլոգերներ ու ինֆլուանսներ,
- HoReca սեգմենտ,
- Այլ հիմնական գործընկեր շահառուներ:

Եզրակացություն

Ագրոպարենային ոլորտում ռազմավարական մարքեթինգն ունի առանցքային դերակատարություն ձեռնարկությունների մրցունակության բարձրացման և շուկայում գրագետ դիրքավորման գործում: Մարքեթինգային աուդիտը այս համատեքստում հանդիսանում է ստրատեգիական պլանավորման անբաժան մաս, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտել մարքեթինգային քաղաքականության խոցելի կողմերը և բարձրացնել կիրառվող գործիքակազմի արդյունավետության մակարդակը: Ձեռնարկատիրական պրակտիկայում կազմակերպությունների զարգացման, ռազմավարությունների ճանապարհային քարտեզների մշակմանը զուգահեռ, կարևոր նշանակություն ունի նաև պաշտպանվողական սցենարների առկայությունը: Ագրովերամշակման ոլորտում պաշտպանվողական քաղաքականությունների դեպքում գլխավոր խնդիրների շարքին են դասվում ոչ միայն շուկայում ներկայացված արտադրանքի առաջմղումը և վաճառքների ծավալների ավելացումը, այլև շուկայական մասնաբաժնի ու թիրախային լսարանի պահպանման ապահովումը: Սպառողների շրջանում մշտապես փոփոխվող պահանջմունքների, և մշտական աճող տարատեսակ մարտահրավերների համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի բրենդինգի թիրախային կազմակերպումն ու շուկայական հետազոտությունների շարունակական իրականացումը:

Ագրոպարենային համակարգում անկախ առկա սեգմենտներից և կիրառվող շուկայավարման մոդելներից խիստ կարևոր է մնում շուկայական իրավիճակին մարքեթինգային քաղաքականության ադապտացումը և ռիթեյլ մոնիթորինգի միջոցով լոյալության մեխանիզմների խթանումը:

Այսպիսով՝ վերոնշյալ խնդիրների համակարգային լուծումը անմիջականորեն կախված է նախապես մարքեթինգային բրիֆինգի արդյունավետ կազմակերպումից և շուկայական փոփոխություններին ճկուն արձագանքումից:

Գրականության ցանկ

Day, G. S. (1999). *Market Driven Strategy: Processes for Creating Value*. New York: Free Press.

Grewal, D., Levy, M., & Kumar, V. (2010). Customer experience management in retailing: An organizing framework. *Journal of Retailing*, 85(1), 1–14.

Lilien, G. L., & Rangaswamy, A. (2004). *Marketing Engineering: Computer-Assisted Marketing Analysis and Planning*. Upper Saddle River, NJ: Pearson Prentice Hall.

Naylor, T. H., Alakshendra, A., & Ahmed, S. (2008). Strategic market research: A guide to conducting research that drives businesses. *Journal of Strategic Marketing*, 16(2), 35–52.

RevOps Framework. (2020). *Revenue Operations Handbook: Strategies for Scaling*. Boston: Revenue Operations Institute.

Smith, S., & Paladino, A. (2015). Eating clean and green? Investigating consumer motivations towards organic food. *International Journal of Consumer Studies*, 39(2), 111–123.

Sullivan, D., & Kros, J. (2013). Retail operations: Strategies for growth and profitability. *Retailing Today*, 42(3), 20–35.

Tanner, J. F., & Raymond, M. A. (2011). *Principles of Marketing*. Washington, DC: Flat World Education.

Завен Багрян
Соискатель Армянского государственного экономического университета
Эл. адрес: zavenbaghryan1998@gmail.com

Элина Шамхалова
Научный сотрудник Института экономики имени М. Котаняна НАН РА,
Руководитель Центра контроля качества Международного университета Евразия
Эл. адрес: shamkhalovaelina@gmail.com

Арташ Галстян
Основатель, Исполнительный директор ООО Галуст
Эл. адрес: artashgalstyan0001@gmail.com

ОСОБЕННОСТИ СТРАТЕГИЧЕСКОГО МАРКЕТИНГА В АГРОПРОДОВОЛЬСТВЕННОЙ СИСТЕМЕ.

В статье исследуются тонкости стратегического маркетинга и обоснованы возможности его применения в агропродовольственной системе. Исследовав проблемы в области маркетинга и учитывая сформировавшиеся тенденции, представлены соответствующие предложения в виде маркетинговых моделей. Учитывая международную практику и требования современного рынка, большое внимание уделено стратегическому применению модели RevOps в агропереработке и постоянному проведению розничного аудита. В работе также рассматривается важность брендов в сегменте B2C и ключевое влияние брендинга на целевую аудиторию потребительского рынка. С маркетинговой точки зрения предложено специальное предложение: наряду с продуктами, классифицируемыми как органические и искусственные с высоким воздействием, представить и позиционировать в рынке агропродовольственные продукты, произведенные с использованием натуральных технологий, как альтернативный продукт. Изучив маркетинговую практику, представлены современные механизмы организации брифинга в стратегическом маркетинге и пути повышения маркетинговых.

Ключевые слова: агропродовольственный маркетинг, рыночная ситуация, розничный мониторинг, маркетинговая близорукость, бюджетный сегмент.

Zaven Baghryan
Ph.D. student at Armenian State University of Economics
Email: zavenbaghryan1998@gmail.com

Elina Shamkhalova
Associate researcher at the M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences, PA, Head of Quality Assurance Centre at Eurasia International University
Email: shamkhalovaelina@gmail.com

Artash Galstyan
Galust LLC Founder, Executive Director
Email: artashgalstyan0001@gmail.com

THE FEATURES OF STRATEGIC MARKETING IN THE AGRI-FOOD SYSTEM

The article examines the nuances of strategic marketing and justifies the possibilities of its application in the agri-food system. By studying the issues created in marketing and considering the developed trends, corresponding recommendations are presented in the form of marketing models. Taking international practice into account and based on the demands of the modern market, great importance is given to the strategic application of the RevOps model in agri-processing and the continuous implementation of retail audits. The work also addresses the importance of brands in the B2C segment and the key influence of branding on the target audience in the consumer market. From a marketing perspective, a special proposal is made to position and present agri-food products made with natural technologies in the market as an alternative product alongside those classified as organic or artificially enhanced. By studying marketing practices, the current mechanisms of briefing organization in strategic marketing and ways to enhance marketing consulting are presented.

Key words: agri-food marketing, market situation, retail monitoring, marketing myopia, budget segment.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. հոկտեմբերի 30-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 7-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Լուսինե Ղազարյան
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս,
ՀՊՏՀ Բանկային գործ և ապահովագրություն ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ ghazaryanlusine957@gmail.com

DOI: 10.53614/18294952-2024.2-142

ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ՈՒՄ

Դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետ քաղաքականությունը որոշիչ ազդեցություն ունի ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության վրա: Սակայն շատ հաճախ ապահովագրական ընկերությունների ղեկավարները բավական ուշադրություն չեն դարձնում այդ փաստին: Հոդվածում քննարկվում է դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետության գնահատման կարևորությունը ապահովագրական ընկերություններում: Հոդվածի նպատակն է ապահովագրական ընկերության օրինակով գնահատել դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետությունը և խթանել ապահովագրական ընկերությունների կողմից դեբիտորական պարտքերի կառավարման ժամանակակից և արդյունավետ մեթոդների կիրառումը: Նպատակի իրագործման համար հեղինակի կողմից վերլուծության է ենթարկվել Հայաստանում գործող առաջատար ապահովագրական ընկերություններից մեկի՝ ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի տվյալները, որոնց հիման վրա հաշվարկվել են ընկերության դեբիտորական պարտքերի ինտենսիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշները: Այնուհետև կիրառելով՝ համեմատական, կոռելյացիոն և քայլային ռեգրեսիոն վերլուծությունների մեթոդները՝ հեղինակը գնահատել է դեբիտորական պարտքերի կառավարման համակարգի ազդեցությունն ընկերության ակտիվների շահութաբերության (ROA) վրա:

Ուսումնասիրության արդյունքում ընկերությունում վերհանվել են դեբիտորական պարտքերի կառավարման գործընթացում առկա թերությունները և բացահայտվել՝ այն գործոնները, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետության վրա, ինչպես նաև կատարվել են առաջարկներ կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հեղինակի կողմից վերլուծության արդյունքում մշակված մոտեցումները կարող են ծառայել որպես ուղեցույց՝ դեբիտորական պարտքերի կառավարման առավել արդյունավետ մեթոդներ կիրառելու և ապահովագրական ընկերությունների գործունեությունը բարելավելու տեսանկյունից:

Հիմնաբառեր. դեբիտորական պարտք, դեբիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշներ, շրջանառելիության գործակից ըստ օրերի, շրջանառելիության գործակից ըստ պտույտների, անհուսալի դեբիտորական պարտքեր, ակտիվների շահութաբերություն (ROA).

Ներածություն

Ապահովագրությունը ֆինանսական շուկայի կարևոր լոկոմոտիվ լինելուց բացի հադիսանում է ամենահաջող և տարածված բիզնեսներից մեկը: Իսկ հաջող վարել բիզնեսը և երբեք ոչ մեկին «պարտք չտալ» գործնականորեն հնարավոր չէ, առավելապես երբ խոսքը վերաբերում է ապահովագրական ընկերությանը, քանի որ ապահովագրական շուկայում կողմերի միջև ցանկացած իրավահարաբերություն պարունակում է պարտքային պարտավորությունների չփոխհատուցման ռիսկ, իսկ դեբիտորները ոչ միշտ են ճիշտ ժամանակին և պարտաճանաչ կերպով կատարում իրենց պարտքային պարտավորությունները: Դեբիտորական պարտքերը հանդիսանում են ցանկացած կազմակերպության տնտեսական գործունեության անբաժանելի մասը, որոնք արտացոլում են ֆինանսական փոխհարաբերությունները ընկերության և նրա հաճախորդների, գործակալների կամ այլ կողմերի միջև: Ապահովագրական ընկերությունների դեպքում դեբիտորական պարտքերը ավելի մեծ նշանակություն են ստանում, քանի որ դրանց կառավարման արդյունավետությունը ուղղակիորեն ազդում է ընկերության վճարունակության, ֆինանսական կայունության և շահութաբերության վրա:

Ապահովագրական ընկերություններում ձևավորվում են դեբիտորական պարտքերի 15-ից ավելի տեսակներ որոնցից առավել տարածված են՝ դեբիտորական պարտքեր ապահովադիրներից ստացվելիք գումարների գծով, դեբիտորական պարտքեր սուբրոգացիայի գծով[1], դեբիտորական պարտքեր գործակալներից ստացվելիք գումարների գծով և այլն: Հաշվի առնելով և

1 Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի՝ «Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով», https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658 :

կարևորելով ապահովագրական շուկայում պարտքային պարտավորությունների չփոխհատուցման ռիսկը ապահովագրական ընկերությունների ղեկավարներն ընկերությունում առաջացած դեբիտորական պարտքերի կառավարման հարցում պետք է լինեն խիստ հետևողական և արդյունավետ քաղաքականության շնորհիվ կարողանան ապահովել դրանց օպտիմալ մակարդակը: Ընդունված է այն փաստը, որ դեբիտորական պարտքերի օպտիմալ մակարդակը հանգեցնում է ապահովագրական ընկերությունների ապահովագրական գործունեության բարելավմանը, շահութաբերության ցուցանիշների բարձրացմանը, որոնք իրենց հերթին աղբյուր են հանդիսանում ընկերությունների վճարունակության բարձրացման համար: Վճարունակությունն էլ իր հերթին նպաստում է ապահովագրական ընկերությունների գործառնությունների կատարումից բխող բոլոր պարտավորությունների լրիվ և ժամանակին մարման գործընթացի ապահովմանը, որն էլ բերում է ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության պահպանմանը:

Խոսելով ՀՀ ապահովագրական շուկայի մասին, ապա այն գտնվում է զարգացման փուլում, որտեղ օրեցօր ընդլայնվում է հաճախորդների ծավալը, որն էլ իր հերթին նոր մարտահրավեր է հանդիսանում պարտքերի կառավարման տեսանկյունից: Սակայն ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերություններում դեռևս մշակված չեն տնտեսության առանձնահատկությունները հաշվի առնող ճկուն մեթոդներ, թերի են դեբիտորական պարտքերի օպտիմալացման գործընթացի կարգավորման օրենսդրական հիմքերը, իսկ գործնականում դեբիտորական պարտքերը գրեթե տեղ չունեն ապահովագրական ընկերությունների ֆինանսական դրությունը գնահատող ցուցանիշների համակարգում և այս ամենը ոչ հեռու ապագայում կարող է լուրջ խնդիրներ ստեղծել ՀՀ ապահովագրական շուկայի կայունության համար: Հոդվածի շրջանակում հեղինակի կողմից հստակ նպատակ է դրվել՝ հիմնվելով վերլուծական մեթոդների և համապարփակ ուսումնասիրության վրա, գնահատել դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետությունը ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ում: Նպատակն ուղղված է ապահովագրական ընկերությունների կողմից դեբիտորական պարտքերի կառավարման ժամանակակից և արդյունավետ մեթոդների կիրառման խթանմանը: Նպատակին հասնելու համար հեղինակի կողմից սահմանվել են հետևյալ խնդիրները.

Բացահայտել ընկերությունում դեբիտորական պարտքերի կառավարման համակարգերում առկա թերություններն ու խնդիրները:

Վերհանել այն գործոնները, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն դեբիտորական պարտքերի արդյունավետության վրա:

Առաջարկել գործնական փոփոխություններ և մեթոդներ, որոնք թույլ կտան բարելավել դեբիտորական պարտքերի կառավարման գործընթացը, բարձրացնել ընկերության շահութաբերության մակարդակը և ամրապնդել ֆինանսական կայունությունը:

Գրականության ակնարկ

Դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետության գնահատման մոդելների վերաբերյալ տարբեր հետազոտություններ են իրականացրել միջազգային և տեղական մի շարք հետազոտողներ, ուսումնասիրենք դրանցից մի քանիսը:

Ֆլորիդայի համալսարանի հետազոտող Ե. Բրիգամը հիմնավորել է, որ դեբիտորական պարտքերի կառավարումն ուղղակիորեն ազդում է կազմակերպության շահութաբերության վրա: Պարտքերի կառավարման օպտիմալ գործընթացում հեղինակը առանձնացրել է մի քանի քայլեր, մասնավորապես՝ հավաքագրումների արագացման և անհուսալի պարտքերի նվազեցման համար զեղչային քաղաքականության կիրառումը, մասնավորապես՝ 2/10 զեղչային համակարգ (Brigham, Daves, 2004, էջ 715):

Կիրառական տնտեսագիտության ֆակուլտետի հետազոտող Մ. Դելուֆը ուսումնասիրել է դեբիտորական պարտքերի օպտիմալ կառավարման ազդեցությունը ընկերության շահութաբերության վրա, մշակել է դեբիտորական պարտքերի կառավարման օպտիմալ մոդել, որը կբերի շահույթի առավելագույն մակարդակի: Բացի այդ հետազոտողը ուսումնասիրել է դեբիտորական պարտքերի հավաքագրման միջին ժամկետի ազդեցությունը ընկերության շահութաբերության վրա՝ օգտագործելով 1009 խոշոր բելգիական ֆինանսական ընկերությունների ֆինանսական ցուցանիշները: Նրա կողմից կիրառված ռեգրեսիոն մոդելները բացահայտել են ձեռնարկությունների պարտքերի հավաքագրման միջին ժամկետի զգալի բացասական ազդեցությունը համախառն շահույթի վրա: Հեղինակի կողմից հստակեցվել և ապացուցվել է այն փաստը, որ ղեկավարները կարող են մեծացնել ընկերության շահութաբերության մակարդակը՝ նվազեցնելով դեբիտորական պարտքերի հավաքագրման միջին ժամկետը (M. Deloof, 2003, էջ 573–588):

Ինչպես Դելուֆը միջազգային մի շարք այլ հետազոտողներ ևս, որոնք հետազոտություններ են կատարել մի շարք երկրներում, մասնավորապես՝ Բելգիայում, Հունաստանում, ԱՄՆ-ում, Իսպանիայում, Թուրքիայում, Սինգապուրում իրենց հետազոտություններում նշում են, որ դեբիտորական պարտքերի և ընկերության շահութաբերության միջև կա զգալի բացասական կապ: Հակասական ապացույցներ են գտել Շարման և Կումարը, ովքեր դրական կապ են գտնում ակտիվների շահութաբերության (ROA) և դեբիտորական պարտքերի միջև (Ksenija, 2013, էջ 113–128):

Վերջին տարիներին կատարված ուսումնասիրություններում, մասնավորապես Լվովյան պոլիտեխնիկական համալսարանի հետազոտողները իրենց հետազոտական աշխատանքում ուսումնասիրել են կազմակերպությունների դեբիտորական պարտքերի կառավարման բարելավման մեթոդներն ու միջոցառումները: Ըստ հեղինակների այս բարդ շուկայական պայմաններում դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումն ուղղակիորեն ազդում է կազմակերպության կայուն և արդյունավետ գործունեության վրա (Havran, 2020, էջ 151–158):

Չինաստանի Գիտության և տեխնոլոգիայի համալսարանի հետազոտող-

ները ևս հիմնավորել են այն կարծիքը, որ որպես կազմակերպության ակտիվների հիմնական բաղադրիչ, դեբիտորական պարտքերը կարևոր դեր են խաղում կազմակերպության ֆինանսական կառավարման մեջ և որոշում են կազմակերպությունների երկարաժամկետ զարգացումը և ֆինանսական կայունությունը երկարաժամկետում: Ընկերությունների տարաժամկետ պայմանով վաճառքից առաջացած ֆինանսական ռիսկը նվազագույնի հասցնելու համար հետազոտողները մշակել են դեբիտորական պարտքերի կառավարման օպտիմալացման հատուկ ալգորիթմ (Peng, 2024, էջ 9):

Տեղական հետազոտողներից Ա. Սարգսյանը և Կ. Առաքելյանը կատարել են ուսումնասիրություններ դեբիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշների հաշվարկների վերաբերյալ (Սարգսյան, 2005, էջ 441):

Տեղական հետազոտողների կողմից Ապահովագրական ընկերություններում դեբիտորական պարտքերի կառավարման վերաբերյալ որևէ տեսակի ուսումնասիրություն չի կատարվել:

Մեթոդ

ՀՀ ապահովագրական շուկայում դեբիտորական պարտքերի վիճակը գնահատելու համար հեղինակը հոդվածի շրջանակներում ուսումնասիրության է ենթարկել ոլորտի լավագույն ընկերություններից մեկը ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ն: Ընկերությունում վերլուծության են ենթարկվել դեբիտորական պարտքերի ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշները, կատարվել է համեմատական և կոռելյացիոն վերլուծություն, ինչպես նաև քայլային ռեգրեսիոն վերլուծություն, որոնք հնարավորություն են տվել բացահայտել դեբիտորական պարտքերի կառավարման համակարգի արդյունավետության ազդեցությունը ընկերության ակտիվների շահութաբերության վրա: Ընկերության ակտիվների շահութաբերության (ROA) ցուցանիշի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ակտիվների շահութաբերությունը (ROA) ընդգրկում է ընկերության բոլոր ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատումը, մասնավորապես՝ շրջանառու ակտիվների, ինչպիսին են դեբիտորական պարտքերը, մինչդեռ կապիտալի շահութաբերությունը (ROE) հիմնականում կենտրոնացած է բաժնետերերի կապիտալի վրա, ինչը կարող է սահմանափակել դեբիտորական պարտքերի ինտենսիվության ազդեցության գնահատման ճշգրտությունը: Հեղինակն ընտրելով ROA-ն՝ որպես վերլուծության նպատակային ցուցանիշ, ուսումնասիրությունն ուղղում է գործառնական արդյունավետության և ակտիվների օգտագործման վրա, ինչը դարձնում է արդյունքները ավելի կիրառելի և, ընդհանուր առմամբ, առավել օգտակար:

Ցուցանիշների հաշվարկների և վերլուծության արդյունքում հեղինակի կողմից դուրս են բերվել դեբիտորական պարտքերի կառավարման համակարգերում առկա առավելությունները և թերությունները, ինչպես նաև, հաշվի առնելով միջազգային փորձը և ստացված վերլուծության արդյունքներն առաջարկվել են պարտքերի կառավարման մեխանիզմներում կատարել որոշակի փոփոխություններ պարտքերի հավաքագրման արդյունավետությունը

և ընկերության ակտիվների շահութաբերության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Արդյունքներ և քննարկում

Դեբիտորական պարտքերի վերլուծական գործընթացը սկսենք ուսումնասիրելով ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ի դեբիտորական պարտքերի ցուցանիշը 2019-2023թթ դրությամբ:



Գծապատկեր 1. ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ում դեբիտորական պարտքերի և հավաքագրած ապահովագրավճարների մակարդակը 2019-2023թթ դրությամբ (հազ.դրամ)[2]

Ինչպես արտացոլված է գծապատկերում 1-ում 5 տարիների ընթացքում ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ում փոփոխություններ է կրել դեբիտորական պարտքերի ցուցանիշը, որը պայմանավորված է եղել մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ ընկերությունում վաճառքի ծավալների փոփոխությամբ, օրենսդրական դաշտի փոփոխություններով և այլն: Այժմ տեսնենք թե վաճառքի ծավալների փոփոխություններն ինչ կերպով կարող են ազդել դեբիտորական պարտքերի ցուցանիշի վրա: Համադրելով գծապատկեր 1-ի արդյունքները ակնհայտ է դառնում, ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ում բացառությամբ 2021թ-ի վաճառքի ծավալների աճին զուգընթաց աճել է դեբիտորական պարտքերի մակարդակը: Այժմ անցնենք դեբիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշների վերլուծությանը և ընտրելով ընկերության շահութաբերության և դեբիտորական պարտքերի միջև հարաբերությունների հայեցակարգային շրջանակ, որոշենք դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետության ազդեցությունը ընկերության շահութաբերության մակարդակի վրա: Տարբեր միջազգային հեղինակների և հետազոտողների կողմից առաջարկվող մեթոդները և տեսությունները համադրելով առաջարկում

2 Գծապատկերը կազմել է հեղինակը օգտվելով ընկերությունների 2019-2023թթ հրապարակային հաշվետվություններից:

ենք վերլուծության համար ընկերությունում հաշվարկել և դիտարկել հետևյալ ցուցանիշները.



Գծապատկեր 2. ԴՊ[3] ինտենսիվության ցուցանիշներ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս թե քանի անգամ են պարտքերը գոյանում և վերադարձվում տվյալ կազմակերպություն: Դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը ըստ օրերի ցույց է տալիս դպ վերադարձման միջին օրերի թիվը:

Աղյուսակ 1.
Դպ ինտենսիվության ցուցանիշները և ROA-ն ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՖԲԸ-ում 2019-2023թթ.

Ցուցանիշ	**2019**	**2020**	**2021**	**2022**	**2023**
Շրջանառելիություն ըստ օրերի (X2)	97.396203	109.15327	94.753067	82.10375	78.35578
Շրջանառելիություն ըստ պտույտների (X3)	3.6962427	3.2981147	3.7993493	4.3846962	4.594428
Անհուսալի դպ տեսակարար կշիռ ընդհանուր դպ-ում (X4)	29%	31%	34%	35%	31%
Դպ տեսակարար կշիռը ընթացիկ ակտիվների կազմում (X5)	32%	34%	29%	33%	32%
ROA (Y)	1.63%	2%	7.59%	4.50%	6.54%

Ընդունված է այն տեսակետը, որ ընկերությունում շրջանառելիություն ըստ պտույտների գործակցի աճը և շրջանառելիության ըստ օրերի գործակցի նվազումը փաստում են ընկերությունում դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետության մասին: Դիտարկելով հաշվարկի արդյուն-

3 Դեբիտորական պարտքեր

քում ստացված ցուցանիշները պարզ է դառնում, որ 2023թ-ի դրությամբ ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ-ում շրջանառելիությունը ըստ պտույտների աճել է, իսկ օրերինը՝ նվազել (հակառակ պատկերն այնքան էլ ցանկալի երևույթ չէ, քանի որ կազմակերպության ֆինանսական դրության վրա կարող է բացասաբար ազդել):

Դեբիտորական պարտքերի ինտենսիվության մասին են վկայում դեբիտորական պարտքերի ընդհանուր մեծության մեջ անհուսալի պարտքերի տեսակարար կշռի փոփոխությունը: Այն կարելի է որոշել անհուսալի պարտքերի գումարի և դեբիտորական պարտքերի միջին մեծության հարաբերակցությամբ: Ցուցանիշը ընկերությունում 2019-2022թ-ին աճել է, սակայն 2023թ-ից ունի նվազման միտում:

Հաջորդ ցուցանիշը ընթացիկ ակտիվների մեջ դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն է, որը որոշվում է դեբիտորական պարտքերի գումարը հարաբերելով ընթացիկ ակտիվներին: Ընդունված է, որ այս ցուցանիշի առավելագույն սահմանաչափը ընկերություններում պետք է լինի մինչև 35 %-ն, քանի որ ցուցանիշի փոփոխությունը ազդում է ակտիվների իրացվելիության մակարդակի վրա: Ինչպես երևում է ընկերությունում ցուցանիշը 2023թ-ին նորմայի սահմաններում է սակայն նախորդ տարի բավականին բարձր է եղել, մասնավորապես պայմանավորված է այնպիսի պայմանագրերի կնքմամբ, որոնց ապահովագրավճարների վճարումը կատարվելու է տարաժամկետ պայմանով:

Դիտարկենք նաև ընկերությունում ակտիվների շահութաբերության մակարդակը: ROA-ն հաշվարկվում է տվյալ ժամանակահատվածում ստացված զուտ շահույթը միջին ընդհանուր ակտիվների վրա բաժանելով: Ավելի բարձր ROA-ի ցուցանիշը մատնանշում է ակտիվների ավելի բարձր արդյունավետությունը: Ընկերությունում ցուցանիշը 2023թ-ի դրությամբ ունի աճման միտում: Ունենալով բոլոր անհրաժեշտ տվյալներն այժմ անհրաժեշտություն է առաջանում իրականացնել ռեգրեսիոն վերլուծություն, որը հնարավորություն կտա իրականացնել օրինաչափությամբ կապ չունեցող մեծությունների միջև կախվածության նկարագրություն, ինչպես նաև մոդելի մշակում: Ռեգրեսիոն վերլուծության արդյունավետ արդյունք ստանալու համար մուտքային բոլոր փոփոխականները ընտրվել են ամսական կտրվածքով:

Ռեգրեսիոն մոդելի կառուցման համար ընտրել ենք քայլային ռեգրեսիայի մեթոդը, Մեթոդի էությունը կայանում է նրանում, որ գործոնները հաջորդաբար ընդգրկվում են ռեգրեսիայի հավասարման մեջ և ստուգվում է դրանց նշանակալիությունը: Քանի որ բոլոր փոփոխականների համար վերլուծության փաթեթով ստուգվել է և x5 փոփոխականի ստուգման p արժեքի գործակիցը ստացվել է 0,05-ից փոքր տվյալ փոփոխականը բացառվել է մոդելի կազմից: Մյուս փոփոխականները համարվել են նշանակալի և ընդգրկվել են մոդելի կազմում: Հետևաբար՝ հաշվարկում ենք համապատասխան փոփոխականների գործակիցները հետևյալ քայլերի հաջորդականությամբ:

Կառուցենք նշված փոփոխականների համար կոռելյացիոն մատրից, որի տարրերը ցույց են տալիս նշված փոփոխականների միջև փոխկապվածության ուժը և փոփոխման ուղղությունները:

Աղյուսակ 2. Կոռելյացիոն մատրից

	Y	*X1*	*X2*	*X3*	*X4*
Y	**1**	0.462246	–0.84893	0.865587	–0.68276
X1	0.462246	**1**	–0.27446	0.185164	–0.58025
X2	–0.84893	–0.27446	**1**	–0.86533	0.497446
X3	0.865587	0.185164	–0.86533	**1**	–0.50825
X4	–0.68276	–0.58025	0.497446	–0.50825	**1**

Կոռելյացիոն մատրիցը կազմելուց հետո ստացված մատրիցը հակադարձենք (կոռելյացիոն մատրիցը հակադարձում ենք Execel–ի MINVERSE ֆունկցիայի միջոցով) ռեգրեսիոն վերլուծություն իրականացնելու համար:

Աղյուսակ 3. Կոռելյացիոն մատրիցի հակադարձ մատրից

	Y	*X1*	*X2*	*X3*	*X4*
Y	8.15095	–1.53792	2.18859	–4.11813	1.49028
X1	–1.53792	1.89573	0.09120	1.43118	0.73197
X2	2.18859	0.09120	4.81439	2.46151	0.40179
X3	–4.11813	1.43118	2.46151	6.47342	0.08362
X4	1.49028	0.73197	0.40179	0.08362	2.28472

Այնուհետև հաշվարկենք Y, x1, x2, x3, x4 փոփոխականների միջինները և միջին քառակուսային շեղումները և արտացոլենք աղյուսակում 4–ում: Այնուհետև աղյուսակ 3–ի և աղյուսակ 4–ի տվյալները համադրելով հաշվարկենք մոդելի գործակիցները:

Աղյուսակ 4.
Փոփոխականների միջին և միջին քառակուսային շեղումների արժեքները[4]

	Y	**X1**	**X2**	**X3**	**X4**
Միջին արժեք	4.36	3989079.86	92.15	3.96	31.72
Միջին քառակուսային շեղում (δ)	1.866260998	269665.8668	29.86566422	0.827245418	2.715453868

Ռեգրեսիոն մոդելի պարամետրերի վիճակագրական գնահատականները կամ գործակիցների արժեքները որոշելու համար կիրառենք հետևյալ բանաձևերը (Բալասանյան, 2011, էջ 224).

$$bj = -\frac{q_{0j}}{q_{00}}\frac{\delta_0}{\delta_j} \quad (1)$$

Որտեղ q_{0j} և q_{00} ստացված հակադարձ մատրիցի տարրերն են, δ_0–ն Y–ի և δj–ն x–ի միջին քառակուսային շեղումներն են (որոնց հաշվարկի համար կիրառել ենք Excel–ի STDEV.P ֆունկցիան):

4 Աղյուսակը կազմել է հեղինակը:

$$b1 = -\frac{q_{01}}{q_{00}}\frac{\delta_0}{\delta_1} = -\frac{-1.53905}{8.125200849} * \frac{1.866261}{269665.867} = 1.31088E - 06$$

$$b2 = -\frac{q_{02}}{q_{00}}\frac{\delta_0}{\delta_2} = -\frac{2.18859}{8.125200849} * \frac{1.866261}{29.86566} = -0.016778628$$

$$b3 = -\frac{q_{03}}{q_{00}}\frac{\delta_0}{\delta_3} = -\frac{-4.56728}{8.125200849} * \frac{1.866261}{0.827245418} = 1.147231$$

$$b4 = -\frac{q_{04}}{q_{00}}\frac{\delta_0}{\delta_4} = -\frac{1.484151}{8.125200849} * \frac{1.866261}{2.715454} = -0.12553765$$

Մոդելի b1–b4 գործակիցները հաշվարկելուց հետո հաշվարկենք նաև b0 գործակիցը:

$$\boldsymbol{b_0 = \bar{y} - b_1\bar{x}_1 - b_2\bar{x}_2 - b_3\bar{x}_3 - b_4\bar{x}_4} \quad \textbf{(2)}$$

$\mathbf{b_0}$= 4.36 – (3989080*1.31088E–06) – ((92.15*(—0.016778628)) – (3.96*1.147231) – (31.72* –0.12553765)= 0.16060413

Կառուցենք ստացված մոդելը:

$$\hat{Y} = \mathbf{b_0 + b_1x_1 + b_2x_2 + b_3x_3 + b_4x_4} \quad \textbf{(3)}$$

$$\hat{Y} = \mathbf{-0.160604 + 1.31088E-06x_1 - 0.01678x_2 + 1.147x_3 - 0.1255x_4}$$

Մոդելը կառուցելուց հետո հաշվարկենք դետերմինացիայի գործակիցը: Դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս արդյունքային փոփոխականի վարիացիայում հետազոտվող գործոնների ազդեցությամբ պայմանավորված վարիացիայի մասնաբաժինը, այսինքն՝ բնութագրում է, թե Y–ի վարիացիայի որ մասն է հաշվի առնված մոդելում և պայմանավորված մոդելում ներառված գործոնների՝ իր վրա ազդեցությամբ: Որքան R^2–ն մոտ է 1–ին, այնքան բարձր է մոդելի որակը:

$$\boldsymbol{R^2 = 1 - \frac{1}{q_{00}}} \quad \textbf{(4)}$$

R^2=1–1/8.15095= 0.877314931

Ռեգրեսիայի մոդելի նշանակալիության ստուգման համար օգտագործենք նաև Ֆիշերի F–հայտանիշը:

$$\boldsymbol{F = \frac{R^2(n - m - 1)}{(1 - R^2)m}} \quad \textbf{(4)}$$

F=(0.877314931*43)/((1–0.877314931)*4) = 76.87272441

Մեր դեպքում F=76.87272441, իսկ Ֆիշերի համապատասխանության աղյուսակով ստուգելու դեպքում ստացվում է մեծ աղյուսակային արժեքից՝ Ft=2.45: Եթե Ֆիշերի հաշվարկային արժեքը մեծ է նշանակալիության տրված մակարդակի դեպքում Ֆիշերի աղյուսակային արժեքից, ապա մոդելը համարվում է նշանակալի: Մեր դեպքում 76.87272441 ≥ 2,45, որը փաստում է, որ մեր կողմից ստացված մոդելն ունի բարձր որակ:

Այնուհետև Excel-ի միջավայրում ևս դուրս բերենք ռեգրեսիոն վիճակագրությունը քայլային ռեգրեսիոն վերլուծության ճշգրտությունը ստուգելու և հիմնավորելու նպատակով:

Աղյուսակ 5. Excel-ի միջավայրում դուրս բերված ռեգրեսիոն վիճակագրություն

Regression Statistics	
Multiple R	0.936651
R Square	0.877315
Adjusted R Square	0.865902
Standard Error	0.690645
Observations	48

ANOVA

	df	*SS*	*MS*	*F*	*Significance F*
Regression	4	146.6701	36.66752	76.87272	5.09E-19
Residual	43	20.51057	0.47699		
Total	47	167.1806			

	Coefficients	*Standard Error*	*t Stat*	*P-value*	*Lower 95%*	*Upper 95%*	*Lower 95.0%*	*Upper 95.0%*
Intercept	0.160604	3.804047	0.042219	0.966519	-7.51099	7.832195	-7.5109871	7.832195375
X1	1.31E-06	4.68E-07	2.787732	0.007872	3.61E-07	2.25E-06	3.612E-07	2.25041E-06
X2	-0.01678	0.006862	-2.44507	0.018654	-0.03062	-0.00294	-0.0306176	-0.002939643
X3	1.139802	0.252564	4.512931	4.9E-05	0.630459	1.649145	0.6304591	1.649145446
X4	-0.12566	0.052075	-2.413	0.020157	-0.23068	-0.02064	-0.2306778	-0.020637878

Դիտարկելով ռեգրեսիոն վերլուծությունների արդյունքները ակնհայտ է դառնում, որ երկու դեպքում էլ ստացվել են միևնույն արդյունքները: Աղյուսակ 5-ի արդյունքները ևս մեկ անգամ փաստում են, որ բոլոր գործակիցները նշանակալի են և կարող են ընդգրկվել մոդելում: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ մոդելն ունի ուժեղ ընդհանուր բացատրական հզորություն՝ ճշգրտված R-քառակուսի արժեքով 0,890242, ինչը ենթադրում է, որ մոդելում ներառված կախյալ փոփոխականի (Y) շեղման մոտավորապես 89,02%-ը բացատրվում է անկախ փոփոխականներով (X1, X2, X3, X4):

Քննելով գործակիցները՝ նկատում ենք հետևյալը. X1, X2, X3 և X4 գործակիցները բոլորն էլ վիճակագրորեն նշանակալի են՝ շատ ցածր p-արժեքներով, ինչը ցույց է տալիս, որ այս փոփոխականները նշանակալի ազդե-

ցություն ունեն կախված փոփոխականի (Y) վրա: Գործակիցների նշանները հուշում են յուրաքանչյուր անկախ փոփոխականի և կախյալ փոփոխականի միջև փոխհարաբերությունների ուղղությունը: Օրինակ, X1 և X3 համար դրական գործակիցը ենթադրում է դրական հարաբերություն ROA–ի հետ, մինչդեռ բացասական գործակիցները X2 և X4 համար ենթադրում են բացասական հարաբերություն ROA–ի հետ: Ընդհանուր առմամբ, ռեգրեսիոն վերլուծությունը արժեքավոր պատկերացումներ է տալիս ROA–ի վրա ազդող գործոնների վերաբերյալ և օգնում է հասկանալ, թե ինչպես են անկախ փոփոխականների փոփոխությունները ազդում կախյալ փոփոխականի վրա:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ընկերությունում դեբիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշները և ելնելով ռեգրեսիոն վերլուծության արդյունքներից եզրակացրել ենք, որ ապահովագրական ընկերության ղեկավարները՝ ընկերության դեբիտորական պարտքերի քաղաքականությունը կազմելիս և դեբիտորական պարտքերը կառավարելիս պետք է հաշվի առնեն հետևյալ քայլերը.

Կանոնավոր կերպով պետք է վերլուծել դպ ինտենսիվության ցուցանիշները, որը հնարավորության կտա բացահայտելու դպ տատանումների միտումները, անոմալիաները և բարելավման ոլորտները:

Օպտիմալացնել դեբիտորական պարտքերի շրջանառությունը ըստ պտույտների. Դեբիտորական պարտքերի շրջանառության հարաբերակցության դրական գործակիցը ցույց է տալիս, որ ավելի մեծ շրջանառությունը կապված է ակտիվների ավելի բարձր եկամտաբերության (ROA) հետ: Հետևաբար, ընկերության ղեկավարները պետք է նպատակ ունենան ավելի արդյունավետ կերպով հավաքագրել դեբիտորական պարտքերը: Ընկերությունում անհրաժեշտ է հստակ սահմանել պարտքերի հավաքագրման քաղաքականություն, կանոնավոր կերպով վերահսկել չմարված դեբիտորական պարտքերը, կիրառել ժամանակին վճարումները խրախուսելու ռազմավարություններ, ինչպիսիք են վաղաժամկետ վճարումների համար զեղչեր առաջարկելը կամ վճարումների ուշացման դեպքում տույժեր սահմանել:

Նվազեցնել շրջանառելիություն ըստ օրերի ցուցանիշը. Քանի որ հավաքագրման միջին ավելի երկար ժամկետը բացասաբար է ազդում ROA–ի վրա կառավարիչները պետք է կենտրոնանան չմարված դեբիտորական պարտքերի հավաքագրման ժամանակի կրճատման վրա: Դրան կարելի է հասնել վճարումների և հավաքագրման գործընթացների պարզեցման, վճարումների պայմանների վերաբերյալ հաճախորդների հետ հաղորդակցության ընդլայնման միջոցով:

Նվազագույնի հասցնել անհուսալի պարտքերի ծավալը. Անհուսալի պարտքերի ավելի բարձր մակարդակը բացասական կերպով է ազդում ROA–ի վրա: Այդ պատճառով կառավարիչները պետք է մշակեն համապատասխան քաղաքականություններ (մասնավորապես դրական ազդեցություն կունենա ապահովագրական սքոր գնահատականի հաշվարկի մեխանիզմի

մշակումը և կիրառումը) ոչ պարտաճանաչ հաճախորդների բացահայտման և անհուսալի պարտքերի հավաքագրման համար:

Դեբիտորական պարտքերի մակարդակը. Թեև դեբիտորական պարտքերի ցուցանիշը ինքնին դրական է, ինչը ցույց է տալիս դրական հարաբերություններ ROA-ի հետ, սակայն ընկերության ղեկավարները պետք է զգուշություն ցուցաբերեն դեբիտորական պարտքերի մակարդակները կառավարելիս: Չնայած նրան, որ դեբիտորական պարտքերի որոշակի մակարդակի պահպանումն անհրաժեշտ է բիզնես գործունեության համար, սակայն չափից ավելի բարձր մակարդակը կարող է բացասաբար ազդել ընկերության գործունեության վրա: Հետևաբար, կառավարիչները պետք է հավասարակշռություն պահպանեն համապատասխան իրացվելիության պահպանման և չափից ավելի դեբիտորական պարտքեր ունենալու դեպքում հնարավոր ծախսերը նվազագույնի հասցնելու միջև:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ դեբիտորական պարտքերի կառավարումը ակտիվների կառավարման քաղաքականության էական բաղադրիչ մասն է հանդիսանում, քանի որ այն ուղղակիորեն ազդում է ընկերության իրացվելիության, շահութաբերության և ֆինանսական կայունության վրա: Ըստ այդմ, դեբիտորական պարտքերի շրջանառությունը օպտիմալացնելու, շրջանառելիություն ըստ օրերի ցուցանիշը նվազեցնելու, անհուսալի պարտքերի ծավալը նվազագույնի հասցնելու և դեբիտորական պարտքերի հավասարակշռված մակարդակի պահպանման արդյունավետ ռազմավարություններ իրականացնելով, ապահովագրական ընկերության ղեկավարները կարող են բարձրացնել ընկերության շահութաբերությունը և ընդհանուր ֆինանսական կայունությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Բալասանյան, Ս. Շ. (2011). *Համակարգերի մոդելավորում: Ուսումնական ձեռնարկ:* Երևան, Ճարտարագետ:

ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲԸ ապահովագրական ընկերության պաշտոնական կայք՝ https://ingoarmenia.am

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239 ընդունված՝ 1998 թվականի մայիսի՝ 5-ին, փոփոխված՝ 2024 թվականի, հոկտեմբերի՝ 24-ին, ՀՀՊՏ1998.08.10/17(50), arlis.am/DocumentView.aspx?docID=74658

Սարգսյան, Ա., Առաքելյան, Կ. (2005). *Տնտեսական գործունեության վերլուծություն ուսումնական ձեռնարկ:* Երևան: https://library.asue.am/open/43.pdf

Brigham, E. F., Daves, P. R. (2004). *Intermediate Financial Management.* 8th edition. Thomson South Western, Ohio.

Ksenija Denčić-Mihajlov (2013). *Impact of Accounts Receivable Management on the Profitability During the Financial Crisis: Evidence From Serbia.* May 2013 Conference: 9th International Conference of ASECU "Systemic Economic Crises. https://www.researchgate.net/publication/283716261_IMPACT_OF_ACCOUNTS_RECEIVABLE_MANAGEMENT_ON_THE_PROFITABILITY_DURING_THE_FINANCIAL_CRISIS_EVIDENCE_FROM_SERBIA

Marc Deloof Does Working Capital Management Affect Profitability of Belgian Firms?, The Journal of Business Finance & Accounting, 25 April 2003 https://doi.org/10.1111/1468-5957.00008

Volodymyr Havran, Maryana Havran (2020) Improving Receivables Management of the Enterprise in the Context of New Challenging Market Conditions. https://www.researchgate.net/publication/342167854_IMPROVING_RECEIVABLES_MANAGEMENT_OF_THE_ENTERPRISE_IN_THE_CONTEXT_OF_NEW_CHALLENGING_MARKET_CONDITIONS

Yunxiang Peng, Guixian Tian, Intelligent Optimization Model of Enterprise Financial Account Receivable Management, *Journal of Applied Mathematics,* vol. 2024, Article ID 4961081, 9 pages, 2024 https://doi.org/10.1155/2024/4961081

References

Balasanyan, S. SH. (2011). *Hamakargeri modelavorum: Usumnakan dzerrnark* [Systems Modeling: Educational Manual]: Yerevan, Chartaraget: (In Arm.)

INGO ARMENIA AP'BY apahovagrakan ynkerutyan pashtonakan kayk [INGO ARMENIA ICJSC Insurance Company official website] https://ingoarmenia.am (In Arm.)

Hayastani Hanrapetutyan Kaghakatsiakan orensgirk [Civil Code of the Republic of Armenia], HO-239 yndunvats, 1998 tvakani mayisi, 5-in, pvopvokhvats, 2024 tvakani, hoktemberi, 24-in, HHPT1998.08.10/17(50), arlis.am/DocumentView.aspx?docID=74658 (In Arm.)

Sargsyan, A., Arakelyan, K. (2005). *Tntesakan gortsuneut'yan verlutsut'yun usumnakan dzerrnark* [Economic Activity Analysis Textbook]: Yerevan: https://library.asue.am/open/43.pdf (In Arm.)

Brigham, E. F., Daves, P. R. (2004). *Intermediate Financial Management.* 8th edition. Thomson South Western, Ohio. (In Eng.)

Ksenija Denčić-Mihajlov (2013). *Impact of Accounts Receivable Management on the Profitability During the Financial Crisis: Evidence From Serbia.* May 2013 Conference: 9th International Conference of ASECU "Systemic Economic Crises. https://www.researchgate.net/publication/283716261_IMPACT_OF_ACCOUNTS_RECEIVABLE_MANAGEMENT_ON_THE_PROFITABILITY_DURING_THE_FINANCIAL_CRISIS_EVIDENCE_FROM_SERBIA (In Eng.)

Marc Deloof Does Working Capital Management Affect Profitability of Belgian Firms?, The Journal of Business Finance & Accounting, 25 April 2003 https://doi.org/10.1111/1468-5957.00008 (In Eng.)

Volodymyr Havran, Maryana Havran (2020) Improving Receivables Management of the Enterprise in the Context of New Challenging Market Conditions. https://www.researchgate.net/publication/342167854_IMPROVING_RECEIVABLES_MANAGEMENT_OF_THE_ENTERPRISE_IN_THE_CONTEXT_OF_NEW_CHALLENGING_MARKET_CONDITIONS (In Eng.)

Yunxiang Peng, Guixian Tian, Intelligent Optimization Model of Enterprise Financial Account Receivable Management, *Journal of Applied Mathematics,* vol. 2024, Article ID 4961081, 9 pages, 2024 https://doi.org/10.1155/2024/4961081 (In Eng.)

Лусине Казарян
Преподаватель Армянского государственного экономического университета,
аспирант кафедры банковского дела и страхования
Армянского государственного экономического университета
Эл.адрес: ghazaryanlusine957@gmail.com

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ УПРАВЛЕНИЯ ДЕБИТОРСКОЙ ЗАДОЛЖЕННОСТЬЮ В ИНГО АРМЕНИЯ СТРАХОВАЯ КОМПАНИЯ

Правильная политика управления дебиторской задолженностью оказывает решающее влияние на финансовую стабильность страховых компаний. Однако очень часто руководители страховых компаний не обращают должного внимания на этот факт. В статье рассматривается важность оценки эффективности управления дебиторской задолженностью в страховых компаниях. Цель статьи – оценить эффективность управления дебиторской задолженностью на примере страховой компании и способствовать применению современных и эффективных методов управления дебиторской задолженностью в страховых компаниях.

Для достижения этой цели автор проанализировал данные одной из ведущих страховых компаний, работающих в Армении —СТРАХОВАЯ КОМПАНИЯ ИНГО АРМЕНИЯ. На основе этих данных были рассчитаны основные показатели интенсивности дебиторской задолженности компании. Затем с использованием методов сравнительного, корреляционного и пошагового регрессионного анализа была оценена связь системы управления дебиторской задолженностью с доходностью активов компании (ROA).

Исследование выявило недостатки в процессе управления дебиторской задолженностью и определило факторы, которые наиболее сильно влияют на эффективность управления задолженностью. Также были предложены меры по повышению эффективности управления.

Подходы, разработанные автором на основе анализа, могут служить в качестве руководства для применения более эффективных методов управления дебиторской задолженностью и улучшения деятельности страховых компаний.

Ключевые слова: дебиторская задолженность, показатели интенсивности дебиторской задолженности, коэффициент оборота по дням, коэффициент оборота по циклам, безнадежные долги, доходность активов (ROA).

Lusine Ghazaryan
Lecturer at Armenian State University of Economics,
PhD Student at the Chair of Banking and Insurance,
Armenian State University of Economics
Email: ghazaryanlusine957@gmail.com

EVALUATION OF THE EFFECTIVENESS OF ACCOUNTS RECEIVABLE MANAGEMENT IN INGO ARMENIA INSURANCE CJSC

The correct policy of managing accounts receivable has a decisive impact on the financial stability of insurance companies. However, very often, the managers of insurance companies do not pay sufficient attention to this fact. This article discusses the importance of evaluating the effectiveness of accounts receivable management in insurance companies. The aim of the article is to assess the effectiveness of accounts receivable management using the example of an insurance company and to promote the application of modern and effective methods of managing accounts receivable in insurance companies.

To achieve this goal, the author analyzed the data of one of the leading insurance companies operating in Armenia: INGO ARMENIA INSURANCE CJSC. Based on this data, the main indicators characterizing the intensity of the company's accounts receivable were calculated. Then, using comparative, correlation, and stepwise regression analysis methods, the impact of the accounts receivable management system on the company's return on assets (ROA) was assessed.

The study revealed the shortcomings in the accounts receivable management process and identified the factors that have the greatest influence on the effectiveness of receivables management. Additionally, suggestions were made to improve the management effectiveness.

The approaches developed by the author based on the analysis can serve as a guide for applying more effective methods of accounts receivable management and improving the performance of insurance companies.

Key words: accounts receivable, accounts receivable intensity indicators, turnover ratio by days, turnover ratio by cycles, bad debts, return on assets (ROA).

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. սեպտեմբերի 20-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. հոկտեմբերի 3-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Աննա Մարգարյան
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ margaryan.anna@mail.ru

DOI: 10.53614/18294952-2024.2-158

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՄՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (ՊՄԳ) ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Հոդվածի նպատակն է պարզել կրթության ոլորտում ՊՄԳ կառուցակարգի ազդեցությունը կրթության հասանելիության և արդիականացման վրա, բացահայտել կրթության զարգացման առկա խնդիրներն ու ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում:

Հոդվածի առարկան կրթության ոլորտում ՊՄԳ կիրառման հնարավորությունների ուսումնասիրությունն է:

Հետազոտության խնդիրն է հիմնավորել ՊՄԳ նախագծերի իրականացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում:

Հետազոտության նորույթը Հայաստանի Հանրապետության կրթության արդիականացման համատեքստում ՊՄԳ համակարգի բարելավման տեսական դրույթների, մեթոդաբանական ասպեկտների և գործնական առաջարկությունների մշակումն է:

Ժամանակակից նորարար տնտեսության պահանջներին բավարարելու համար՝ անհրաժեշտ է կրթության ոլորտում ներդնել նոր համակարգեր և կիրառել նոր լուծումներ: Աշխարհի տարբեր երկրներում ՊՄԳ-ն օգտագործվում է կրթության ոլորտում՝ որպես ֆինանսավորման և մասնավոր գործընկերոջ կարողություններն ու իրավասությունները կրթական համակարգ ներգրավելու և աշխատաշուկային պահանջներին համապատասխան և մրցունակ կադրեր պատրաստելու միջոց:

Հիմնաբառեր. ՊՄԳ, կրթություն, հիմնարկ, դպրոց, ԲՈՒՀ, հանրակրթություն, աշխատաշուկա, սուբսիդիա, հավաստագիր (վաուչեր):

Ներածություն

Կրթության ոլորտում ՊՄԳ-ների ամենակարևոր առավելություններից մեկը կրթության հասանելիությունը բարձր ծախսարդյունավետ ձևով ընդլայնելու ներուժն է: Տարբեր հետազոտություններ անդրադարձել են կրթության ոլորտում ՊՄԳ կիրառմանը: Գրեթե բոլոր երկրները փորձում են իրենց կողմից ֆինանսավորվող կրթությունը հարմարեցնել աշխատաշուկայի պայմաններին՝ տնտեսական աճը խթանելու և «փողի համար արժեք» ապահովելու հույսով (Ալեքսանդրա Դրաքսլեր, 2015):

Հեղինակներից մեկը ՊՄԳ-ն համարում է ենթակառուցվածքներում մասնավոր ներդրումների ներգրավման առավել ճկուն և հեռանկարային գործիք, որն ապահովում է գիտակրթական կենտրոնների անհրաժեշտ համագործակցությունը տնտեսության իրական հատվածի ընկերությունների հետ՝ նպաստելով ազգային նպատակների իրագործմանը և ռազմավարական զարգացմանը (Килинкаров, 2019):

Շատ երկրներում, որտեղ կրթությունը մշտապես թերֆինանսավորվում է, կառավարությունները խիստ սահմանափակված են հանրային դպրոցներն ընդլայնելու գյուղական վայրերում, որտեղ դպրոցահասակ բնակչության մեծ տոկոսը դպրոց չի հաճախում:

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալների (2019)՝ Հայաստանում մինչև 5 տարեկան ավելի քան 171,000 երեխա մանկապարտեզ չի հաճախում: Այն երկրները, որտեղ երեխաները նախադպրոցական կրթություն չեն ստանում, խորանում է անհավասարությունը բնակչության շրջանում: ՊՄԳ-ները կառավարություններին թույլ են տալիս արագորեն ընդլայնել կրթական հասանելիությունը՝ ավելացնելով սոցիալական տարբեր շերտերի կրթության հնարավորությունները:

Մեթոդը

Հետազոտության մեթոդական մոտեցումը ներառում է ընդհանուր գիտատնտեսական հետազոտության մեթոդների, համեմատական և համակարգային մոտեցումների, տնտեսական վերլուծության և ցուցանիշների խմբավորման մեթոդների օգտագործումը կրթական ծառայությունների ոլորտում՝ ՊՄԳ արդյունավետությունը գնահատելու համար:

Կրթության զարգացման և արդիականացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում

Կրթության ոլորտում ՊՄԳ պայմանագրերի առավել տարածված ձևեր են.

- Կոնցեսիոն պայմանագրեր,
- Վաուչերային ծրագրեր,

- Ծառայության պայմանագրերը:

2021թ.-ին միջազգային աուդիտորական և խորհրդատվական Ernst & Young ընկերությունը առանձնացրել է 4 հիմնական ՊՄԳ կառուցակարգեր մասնագիտական կրթության ոլորտում.

- գործառնական ծառայությունների համար մասնավոր գործընկերոջ հետ կարճաժամկետ կամ միջնաժամկետ պայմանագիր,
- կրթական ենթակառուցվածքի օբյեկտի երկարաժամկետ վարձակալություն մասնավոր ընկերության կողմից, որը ստանձնում է օբյեկտի ստեղծման, շահագործման և պահպանման պարտավորություններ,
- երկարաժամկետ կոնցեսիա մասնավոր գործընկերոջ հետ՝ նախագիծը կառուցելու, շահագործելու, պահպանելու և ֆինանսավորելու համար՝ տարեկան վճարումների դիմաց,
- երկարաժամկետ կոնցեսիա մասնավոր գործընկերոջ հետ՝ ծրագրի կառուցման, շահագործման, պահպանման և ֆինանսավորման համար՝ նախագծի հետ կապված եկամուտ ստանալու իրավունքի դիմաց:

Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ նախագծերը դեռ բավականաչափ ներկայացված չեն սոցիալական ոլորտում: Սակայն վերջին տարիներին կրթության ոլորտում կարևորվում է ՊՄԳ կառուցակարգի կիրառումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսվում է մինչև 2026թ-ը կառուցել և նորոգել ավելի քան 300 դպրոց, զարգացնել էլեկտրոնային ուսուցման գործիքները՝ կրթությունը հասանելի դարձնելով սահմանամերձ գոտիներում: Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները միտված են լինելու ԲՈՒՀ-երի և մասնավոր հատվածի միջև արդյունավետ համագործակցության ստեղծմանը (Կառավարության ծրագիր, 2021-2026):

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թ.-ի զարգացման պետական ծրագիրը Հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2023թ.-ի N 351 որոշմամբ նախատեսվում է մասնավորի հետ համագործակցությամբ նախադպրոցական կրթության ծառայությունների զարգացած ցանցի ներդրում: Քաղաքային բնակավայրերում նախադպրոցական ծառայությունների համամասնության մեջ մասնավոր հաստատությունների շարունակական աճը 2023թ.-ին հասցված է 10%, 2024թ.-ին հասցվելու է 40%, 2026թ.-ին՝ 50%: Հանրակրթության ոլորտում նախատեսվում է մասնավոր ոլորտի մասնագետներին գործնական դասավանդման գործընթացում ներգրավելու ձկուն մեխանիզմների ներդրում: Նախատեսվում է նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների՝ երկրի և տարածաշրջանի տնտեսական կարիքներին համապատասխանության ապահովում՝ մասնավոր ոլորտի հետ համագործակցությամբ և աշխատանքի վրա հիմնված ուսումնական ծրագրերի օրենսդրական և ինստիտուցիոնալ ներդրում: Առավել պահանջարկ վայելող աշխատատեղերի համալրման խնդրի համաչափ կարգավորման նպատակով կնախատեսվեն խթանող քայլեր՝ նպատակային ընդունելություն, կրթաթոշակներ, օտարերկրյա պետությունների ԲՈՒՀ-եր նպատակային գործուղում:

Հայաստանի Հանրապետության «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքն ընդունվել է 2019թ.-ին: ՊՄԳ ընթացակարգը, ոլորտները և այլ դրույթներ սահմանվել են՝ 2022թ.-ին, Կառավարության N1183-Ն որոշմամբ: Որոշման մեջ ՊՄԳ ոլորտների թվում նշվում է առողջապահությունը, կրթությունը, էներգետիկան, ջրային տնտեսությունը, տրանսպորտային ենթակառուցվածքները, կոշտ թափոնների մշակումը, փոստային ծառայությունները, էլեկտրոնային նույնականացման համակարգը: «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում սահմանված են հիմնական հասկացությունները: Օրինակ՝ հանրային գործընկերը իրավասու մարմինն է, որը պայմանագիր է կնքում մասնավոր գործընկերոջ հետ: Իրավասու մարմինը պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին է: Այսինքն՝ հանրային գործընկեր կարող է հանդես գալ միայն պետական կամ տեղական կառավարման ոլորտի մարմինը, հետևաբար, մասնավոր գործատուների և տարբեր ԲՈՒՀ-երի միջև համագործակցությունը չի համարվում օրենքով նախատեսված ՊՄԳ, այլ ուղղակի պարունակում է նման տարրեր: 2022թ.-ի Կառավարության N1183-Ն որոշմամբ սահմանվել է, որ ՊՄԳ ծրագրի վերհանումն իրականացվում է երկու եղանակով.

- իրավասու մարմնի կողմից իր նախաձեռնությամբ,
- իրավասու մարմնի կողմից մասնավոր նախաձեռնողի նախաձեռնությամբ:

Մասնավոր նախաձեռնությամբ ՊՄԳ ծրագրի առաջարկը ենթակա է իրավասու մարմնի կողմից գնահատման այն դեպքում, երբ մասնավոր նախաձեռնողն իրականացրել է առնվազն երկու ծրագիր, որոնցից յուրաքանչյուրի կապիտալ ծախսերի ընդհանուր արժեքը գերազանցել է ՊՄԳ ծրագրի կապիտալ ծախսերի 70 տոկոսը, մասնավոր նախաձեռնողի ընդհանուր շուկայական արժեքը կազմում է առաջարկվող հնարավոր ՊՄԳ ծրագրի կապիտալ ծախսերի առնվազն 150 տոկոսը: Սակայն որոշմամբ սահմանված է, որ մասնավոր նախաձեռնությամբ ՊՄԳ ծրագրեր կարող են իրականացվել միայն առողջապահության, ջրային տնտեսության և կոշտ թափոնների հավաքման և մշակման ոլորտներում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տարբեր գործատուներ սկսել են համագործակցել կրթական հիմնարկների հետ՝ իրենց համար կադրեր պատրաստելու համար: Օրինակ՝

«Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն» (ISTC) հիմնադրամը՝ ԵՊՀ-ի հետ համատեղ իրականացնում է տվյալների գիտության բնագավառում մագիստրոսական ծրագրեր (istc.am):

Եվրասիա միջազգային համալսարանը համագործակցում է գործատուների հետ գործնական ուսուցման ոլորտում: Կրթական ծրագրերի հիմքում ընկած են անհատական պրակտիկան, վարպետության դասերը և ձեռնարկություններում ուսուցումը (eiu.am):

«Սինոփսիս Արմենիա» ընկերությունն արդեն 20 տարի համագործակցում է տարբեր ԲՈՒՀ-երի հետ՝ աշխատաշուկայի պահանջներին համապատաս-

խան մասնագետներ պատրաստելու համար: Ընկերությունը կադրերի պատրաստման նպատակով համագործակցության 3 մոդել է գործարկել Հայաստանի 5 համալսարանների հետ (armenpress.am):

Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ է դրվել նաև դուալ կրթություն հասկացությունը: Մասնագիտական կրթությունը և ուսուցումը (ՄԿՈՒ) զբաղվածության հարցում դրական կարող է ազդել երկրի տնտեսական զարգացման վրա: Դուալ ՄԿՈՒ-ն ենթադրում է համատեղ պատասխանատվություն և պարտականությունների ստանձնում ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային հատվածների կողմից (escs.am): Դուալ կրթության առավելություններից է այն, որ ուսուցման գործընթացը տեղի է ունենալու միանգամից երկու վայրում՝ ուսումնական հաստատությունում և ձեռնարկությունում: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀԶ ՄԿՈՒ) ծրագրի համագործակցության շրջանակում 2017 թվականի սեպտեմբերից ՄԿՈՒ չորս պիլոտային քոլեջներում 41 մասնավոր ընկերությունների հետ համատեղ 170 ուսանողների համար կազմակերպվել է դուալ ՄԿՈՒ հինգ երկարաժամկետ դասընթաց (escs.am):

Չնայած վերը նշված համագործակցություններին՝ ըստ տարբեր հետազոտությունների՝ ԲՈՒՀ-երի շրջանավարտների 30-40 տոկոսը մասնագիտությամբ չի աշխատում՝ այդպիսով կորցնելով ձեռքբերած գիտելիքները: Բարձրագույն կրթությունը իր մեջ ներառում է ոչ միայն ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը, այլև՝ մշակութային, մտավոր, սոցիալական զարգացումը, ինչը դրական է հասարակության զարգացման համար: Այնուամենայնիվ, մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորումը տվյալ դեպքում հանդիսանում են դրամական ռեսուրսների կորուստ: Շրջանավարտների՝ ոչ մասնագիտությամբ աշխատելու հանգամանքը կարող է պայմանավորված լինել կրթական ծրագրերի և մասնավոր ընկերությունների կողմից աշխատուժին ներկայացվող մասնագիտական պահանջների անհամապատասխանությամբ: Համագործակցությունը մասնավոր ընկերությունների և ԲՈՒՀ-երի միջև թույլ կտա նվազեցնել այդ անհամապատասխանությունը:

2024թ.«Times Higher Education»-ի կողմից հրապարակած աշխարհի լավագույն բուհերի վարկանիշավորման ցանկում առաջին անգամ ընդգրկվել է ԵՊԸ-ը (World university ranking, 2024): Այնուամենայնիվ մեր երկրի լավագույն բուհերի մեծ մասը չեն կարող հավակնել համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականներին: Այս իրավիճակի պատճառները շատ են: Սակայն դրանց թվում կարելի է առանձնացնել հայկական կրթության պահպանողականությունը, ինչը խանգարում է կրթության հետագա զարգացմանը: Միևնույն ժամանակ, ժամանակակից տնտեսությունն այժմ ունի բարձր որակավորում ունեցող կադրերի խիստ կարիք, որոնք պետք է ունենան ոչ միայն կրթական պատրաստվածություն, այլև՝ նորարարական, ստեղծագործական ձգտումներ: Այս ամենը ենթադրում է զգալի

ֆինանսական ծախսեր:

Ստորև ներկայացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կրթության ոլորտին ուղղված ծախսերը և դրանց կառուցվածքը.

Աղյուսակ 1

Պետական բյուջեի կրթության գծով ծախսեր, մլրդ դրամ[1]

Տարի	**2018**	**2019**	**2020**	**2021**	**2022**
Գումար	121.63	129.34	143.8	149.25	165.6

Աղյուսակ 2

2022թ.-ի կրթության վրա կատարած ծախսերի կառուցվածքը, մլրդ դրամ[2]

Հանրակրթություն	93.2
Ուսանողական նպաստներ	17
Դպրոցների բարեկարգում	8.1
Դպրոցների կառուցման աշխատանքների նախագծահաշվային փաստաթղթերի մշակում	4.6
Մասնագիտացված հանրակրթական ուսուցում	3.6
Այլ ծախսեր	39.1
Ընդամենը	**165.6**

Կրթության ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում հանրակրթությանը: Աղյուսակ 3-ում ներկայացված են հանրակրթության մի շարք ցուցանիշներ.

Աղյուսակ 3

Հայաստանի Հանրապետության հանրակրթության ցուցանիշներ[3]

Հանրակրթական դպրոցների տեսակ	**Հանրակրթական դպրոցների քանակ (միավոր)**	**Նախագծային հզորություններ (միավոր)**	**Նախագծային հզորություններ Երևան քաղաքում (միավոր)**	**Մեկ դասարանի բաժին ընկնող աշակերտների թվաքանակ (մարդ)**	**Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակ,(մարդ)**	**Ավագ դասարանների թվաքանակ (միավոր)**

1 Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, տվյալների աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարողական, 2022

2 Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, տվյալների աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարողական, 2022

3 Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, տվյալների աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, 2022

Պետական	1,355	645,038	165,071	16	394,128	5,710
Մասնավոր	45	16,164	14,444	11	12,163	297
Ընդամենը	**1,400**	**661,202**	**179,515**	**27**	**406,291**	**6,007**

Հայաստանի Հանրապետությունում կա 1,400 հանրակրթական դպրոց, որից 3%-ը մասնավոր են: Աշակերտների 3%-ն է հաճախում մասնավոր դպրոցներ: Երևանի հանրակրթական դպրոցների նախագծային հզորությունները կազմում են 179,575 միավոր (armstat.am), որից 8%-ն է բաժին ընկնում մասնավոր դպրոցներին: Պետական դպրոցներում մեկ դասարանին բաժին է ընկնում միջինում 16 աշակերտ, իսկ մասնավոր դպրոցներում՝ 11 աշակերտ: Ավագ դասարանների թվաքանակի 95%-ը պետական դպրոցներում է, 5%-ը՝ ոչ պետական:[4] Չնայած՝ ընդունված է կարծել, որ ոչ պետական դպրոցները ուսուցումը կազմակերպում են ավելի նորարար մոտեցմամբ, այնուամենայնիվ ցուցանիշները՝ ըստ տեսակարար կշիռների, էականորեն չեն տարբերվում: Սրանից կարող է հետևել, որ կրթության անհավասարությունը կայանում է ոչ թե պետական և մասնավոր դպրոցներ հաճախողների միջև միևնույն երկրում, այլ՝ տարբեր երկրների դպրոցներում կրթություն ստացողների միջև: Հետևաբար, միայն պետական և միայն մասնավոր կրթությունը չի կարողանում Հայաստանի Հանրապետությունը դուրս բերել միջազգային վարկանիշ ունեցող դպրոցների մակարդակի:

Հայաստանի Հանրապետությունում գործում են 23 պետական և 31 ոչ պետական բուհեր: Ստորև ներկայացված են բարձրագույն կրթության մի շարք ցուցանիշներ.

Աղյուսակ 4

	ԲՈՒՀ-երի քանակ	**Ուսանողների թվաքանակ (մարդ)**	**Երևանի ԲՈՒՀ-երի քանակ (միավոր)**	**Երևանի ԲՈՒՀ-երի ուսանողների թվաքանակ (միավոր)**
Պետական	23	58,969	19	51,186
Մասնավոր	31	12,563	24	11,617
	54	**71,532**	**43**	**62,803**

Աղյուսակ 5

Ուսանողների թվաքանակը ըստ մասնագիտությունների (մարդ)

1	Գործարարություն և վարչարարություն	12,611
2	Սոցիալական և վարքաբանական գիտություններ	8,123
3	Կրթություն	7,977
4	Առողջապահություն	7,780
5	Իրավունք	5,827
6	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ	5,782

4 Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ելնելով ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներից

7	Բանասիրական գիտություններ	5,441
8	Այլ մասնագիտություններ	18,191
	Ընդամենը	**71,732**

Ուսանողների 88%-ը կենտրոնացած է Երևան քաղաքում, ուսանողների 18%-ը սովորում է մասնավոր ԲՈՒՀ-երում, նրանցից 92%-ը Երևանի քաղաքի մասնավոր ԲՈՒՀ-երում են:

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թ.-ի զարգացման պետական ծրագիրը Հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2023թ.-ի N 351 որոշմամբ բարձրագույն կրթության մեջ պետական պատվերի մեխանիզմ ձևավորելիս հաշվի կառնվեն ինչպես աշխատաշուկայի կարիքները, այնպես էլ պետության ռազմավարական առաջնահերթությունները, տարածաշրջանների և ոլորտների զարգացման ուղղությունները:

2021/2022 տվյալներով Հայաստանի մարզային դպրոցներից 70 դպրոցում բացակայում է ջրամատակարարումը, 9-ում՝ ջեռուցումը: Հիմնանորոգման կարիք ունեն դպրոցներից 460-ը:[5]

2022թ.-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտության ֆինանսավորմանն է ուղղվել 25 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ գիտության ոլորտի ֆինանսավորումը ավելացել է 54%-ով: Այնուամենայնիվ ասպիրանտուրա ունեցող գիտակրթական հիմնարկներում սովորողների թվաքանակը 2020-2022թթ. կրճատվել է 19%-ով:[6] ՊՄԳ ոլորտներում բացակայում է գիտությունը, չնայած գիտության ոլորտում մասնավոր ոլորտի հետ համագործակցությունը կարող է մեծացնել արդյունաբերական ընկերությունների տեխնոլոգիական ներուժը, նրանց կողմից արմատական նորարարությունների ներդրման հավանականությունը նվազեցնել բյուջեի մասնաբաժինը հետազոտությունների և զարգացման ֆինանսավորման մեջ:

Հայաստանի Հանրապետության մարզերում մանկապարտեզները վճարովի են և տարբերվում են՝ ըստ համայնքների: Ըստ տարբեր աղբյուրների՝ ամսական վճարները կազմում են միջինում 5200 դրամ Արարատում, 3300 դրամ՝ Գեղարքունիքում, 4000 դրամ՝ Լոռում, 5,000-8,000 դրամ՝ Գյումրիում: Այնուամենայնիվ, այս վճարները դեռևս կարող են զգալի գումար ներկայացնել աղքատ տնային տնտեսությունների համար (UNICEF, 2022): Նախադպրոցական կրթության կարևորությունը անձի հետագա զարգացման հարցում անվիճելի է, քանի որ գիտելիքը միշտ կարելի է ձեռք բերել, բայց ստեղծագործական ունակությունները զարգանում են մարդու զարգացման վաղ փուլերում: Կարծում ենք սա ամենակարևոր ասպեկտներից մեկն է, ինչին պետք է ուշադրություն դարձնի պետությունը:

5 Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ելնելով ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներից

6 Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ելնելով ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներից

Եզրակացություն

Կրթության ոլորտում ՊՄԳ ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ հանրային հատվածներում ֆինանսական, տեխնիկական կարողությունները սահմանափակ են: ՊՄԳ-ը կարող է զգալի ազդեցություն ունենալ պետական բյուջեի ֆինանսական բեռը կրթության ոլորտի վրա նվազեցնելու հարցում, քանի որ ժամանակակից սարքավորումները մատչելի չեն, նոր կրթական միջավայրում աշխատելու ունակ ուսուցիչներ պատրաստելը նույնպես ծախսեր է պահանջում:

ԲՈՒՀ-երի և մասնավոր ընկերությունների համագործակցությունը հնարավորություն է տալիս մեծացնել կրթության համապատասխանության աստիճանը աշխատաշուկային: Գործատուների մասնակցությունը ուսումնական ծրագրերի մշակմանը թույլ կտա ԲՈՒՀ-երին քայլել ժամանակին համընթաց: ԲՈՒՀ-երում ամբիոնների ստեղծումը, որտեղ կդասավանդեն գործընկեր ընկերությունների մասնագետները, կբարձրացնի կրթության գործնական ուղղվածությունը: Գործնական դասերի կազմակերպումը կօգնի մասնագետներին ներգրավվել ապագա մասնագիտության մթնոլորտում և ավելի կբարձրացնի նրանց հետաքրքրությունը: Գործատուների համար՝ բացի տաղանդավոր մասնագետների ընտրության հնարավորությունից, նման սոցիալական քաղաքականության որդեգրումը հնարավորություն կտա բարձրացնել իրենց հեղինակությունը: ՊՄԳ սկզբունքներով ստեղծված համագործակցությունները կարող են լուծել խնդիրներ, որոնց չի կարող դիմակայել հանրային կրթական հիմնարկը, քանի որ վերջինս իրականացնում է սոցիալականացման, կրթության բազմաթիվ տարբեր խնդիրներ և ապահովում է որակավորումների միջին մակարդակ:

Հայաստանի Հանրապետության ՊՄԳ օրենսդրությունը սահմանում է ՊՄԳ պայմանագրի կնքում միայն պետական կամ տեղական կառավարման մարմնի և մասնավոր գործընկերոջ միջև: Որպես նախաձեռնող կարող է հանդես գալ նաև մասնավոր կողմը, բայց միայն առողջապահության, ջրային տնտեսության և թափոնների մշակման ոլորտում, առաջարկում ենք՝ որպես հանրային գործընկերոջ ներկայացուցիչ՝ հնարավոր լինի հանդես գալ ԲՈՒՀ-երին, որոնք կարող են համագործակցել երկրի առաջատար ձեռնարկությունների հետ և ֆինանսավորում ստանալ նրանցից՝ բարձրորակ կադրեր ստեղծելու համար: ՊՄԳ ոլորտների մեջ առաջարկում ենք ներառել գիտության ոլորտը: Գիտության ընդհանուր կառավարման պատասխանատվության ողջ բեռը գիտական ճակատի տարբեր հատվածների ընթացքի վրա հավասարապես ազդելու մեջ է: Նման պատասխանատվությունը կարող է վստահվել երկրի լավագույն ուժերին, որոնք կհամատեղեն գիտական տարբեր ոլորտների հնարավորություններն իրատեսորեն հաշվի առնելու կարողությունը և կյանքի տեմպի հստակ գիտակցումը և դրա պահանջների ըմբռնումը:

Առաջարկում ենք ոլորտների շարքում ավելացնել նաև կրթական ենթակառուցվածքների կառուցումն և վերանորոգումը՝ ներքին կրթական համակարգի ենթակառուցվածքների բարեկարգման համար, քանի որ հանրապետության շատ դպրոցներ հիմնանորոգման կարիք ունեն:

Օգտագործված գրականության ցանկ

Հայաստանի կրթության ոլորտի վերլուծություն, ամփոփագիր, 2022, UNICEF:
Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարողական, 2022:
Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023թ. հուն-վար-մարտին: *5.16. Բարձրագույն կրթությունը 2022/2023 ուսումնական տարում* https://armstat.am/file/article/sv_03_23a_5160.pdf
ՀՀ ազգային վիճակագրական կոմիտե: *Վիճակագրական տարեգիրք 2020:*
ՀՀ ազգային վիճակագրական կոմիտե: *Վիճակագրական տարեգիրք 2023:*
ՀՀ Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի *«Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը հաստատելու, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանումը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»* թիվ N1183-Ն որոշում, Միասնական կայք 2022.07.25-2022.08.07 Պաշտոնական հրապարակման օրը 02.08.2022
ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր:
Պետություն-մասնավոր գործընկերության մասին ՀՀ օրենքը, ընդունված է 2019 թվականի հունիսի 28-ին, ՀՀՊՏ 2019.07.24/47(1500) Հոդ.621
Килинкаров, В.В. (2019). *Государственно-частное партнерство в сфере высшего образования инауки вРоссии.*
Обрсоюз: https://obr.so/globus-obrazovaniya/kak-uchatsya-chilijskie-shkolniki/
Draxler, Alexandra (2015). *Public-private partnerships and international education policies.* Routledge Handbook of International Education and Development.
Guide to Public-Private Partnerships in Basic Education, USAID, 2023.
How Can Public-Private Partnerships in Education Work for Disadvantaged Students? Education Finance Network, USAID, 2023.
Jandhyala, B. G. Tilak (2016). *Public Private Partnership in Education.* THF Discussion Paper, Series No. 3/2016.
Md. Mahmudul Alam, Md. Abu Rashed (2010). *Delivering Countywide Cost-Effective and Better Education Services: The Models of Public Private Partnership (PPP).*
Public and private secondary education in developing countries: a comparative study (English), World Bank, https://documents.worldbank.org
Public Private Partnerships in Higher Education [Electronic resource]: Report by Ernst & Young / ed.: K. Lundy, H. Ladd, R. Gibbs. – Ernst & Young LLP, 2017. – 16 p. https://cdn.ey.com/echannel/parthenon/pdf/perspectives/EY-Parthenon-P3s-business-ofHighered.pdf.
Public-Private Partnerships (PPP) in Education https://medium.com/@

kalpanaseshadri1/public-private-partnerships-ppp-in-education-2be4aeb9ed6d

UNICEF's first-ever global report dedicated to early childhood education highlights a lack of investment in pre-primary education by the majority of governments worldwide, 2019:

Vinod Thomas, Yan Wang, and Xibo Fan (2000). *Measuring Education Inequality: Gini Coefficients of Education.*

World University ranking, 2024, https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2024/world-ranking#!/length/-1/locations/RUS/sort_by/rank/sort_order/asc/cols/stats

References

Hayastani krtutyan volorti verlucutyun [Analysis of the Armenian Education Sector], ampopagir, 2022, UNICEF (In Arm.)

Hayastani Hanrapetutyan petakan byujei kataroxakan [State Budget Execution of the Republic of Armenia], 2022. (In Arm.)

Hayastani Hanrapetutyan sotsial-tntesakan vichaky 2023t. hunvar-martin»: *5.16. Bardzraguyn krtutyuny 2022/2023 usumnakan tarum* https://armstat.am/file/article/sv_03_23a_5160.pdf

HH azgayin vichakagrakan komite. *Vichakagrakan taregirq* [Statistical yearbook]. 2020. (In Arm.)

HH azgayin vichakagrakan komite. *Vichakagrakan taregirq* [Statistical yearbook]. 2023. (In Arm.)

HH Karravarutyan 2022 tvakani hulisi 28-i *«Petutyun-masnavor gortsynkerutyan yntatsakargy, petutyun-masnavor gortsynkerutyan tsragreri veraberyal tvyalneri bazayi steghtsman yev karravarman kargy hastatelu, petutyun-masnavor gortsynkerut'yan tsragreri shrjanakum matutsvogh hanrayin tsarrayutyunneri volortnery, petutyun-masnavor gortsynkerutyan storabazhanumy, petutyun-masnavor gortsynkerutyan tsragri irakanatsman veraberyal hashvetvutyan dzevy yev nerkayatsman zhamkety sahmanelu yev Hayastani Hanrapetutyan karravarutyan 2012 tvakani septemberi 20-i N 1241-n voroshumn uzhy korts'rats chanachelu masin»* [On establishing the procedure for public-private partnership, the procedure for creating and managing a database on public-private partnership programs, the areas of public services provided within the framework of public-private partnership programs, the subdivision of public-private partnership, the form and deadline for submitting reports on the implementation of public-private partnership programs, and repealing the Decision of the Government of the Republic of Armenia No. 1241 of September 20, 2012] tiv N1183-N voroshum, Miasnakan kayk 2022.07.25-2022.08.07 Pashtonakan hraparakman ory 02.08.2022

HH Karravarutyan 2021-2026 tt. tsragir [RA Government Program for 2021-2026] (In Arm.)

Petutyun-masnavor gortsynkerut'yan masin HH orenky [Law of the Republic of Armenia on Public-Private Partnership], yndunvats e 2019 t'vakani hunisi 28-in, HHPT 2019.07.24/47(1500) Hod.621.621 (In Arm.)

Kilinkarov, V.V. (2019). *Gosudarstvenno-chastnoye partnerstvo v sfere vysshego obrazovaniya i nauki v Rossii* [Public-private partnership in higher education and science in Russia]. (In Arm.)

Obrsoyuz: https://obr.so/globus-obrazovaniya/kak-uchatsya-chilijskie-shkolniki/ (In Rus.)

Draxler, Alexandra (2015). *Public-private partnerships and international education policies.* Routledge Handbook of International Education and Development. (In Eng.)

Guide to Public-Private Partnerships in Basic Education, USAID, 2023. (In Eng.)

How Can Public-Private Partnerships in Education Work for Disadvantaged Students? Education Finance Network, USAID, 2023. (In Eng.)

Jandhyala, B. G. Tilak (2016). *Public Private Partnership in Education.* THF Discussion Paper, Series No. 3/2016. (In Eng.)

Md. Mahmudul Alam, Md. Abu Rashed (2010). *Delivering Countywide Cost-Effective and Better Education Services: The Models of Public Private Partnership (PPP).* (In Eng.)

Public and private secondary education in developing countries: a comparative study (English), World Bank, https://documents.worldbank.org (In Eng.)

Public Private Partnerships in Higher Education [Electronic resource]: Report by Ernst & Young / ed.: K. Lundy, H. Ladd, R. Gibbs. – Ernst & Young LLP, 2017. – 16 p. https://cdn.ey.com/echannel/parthenon/pdf/perspectives/EY-Parthenon-P3s-business-ofHighered.pdf (In Eng.)

Public-Private Partnerships (PPP) in Education https://medium.com/@kalpanaseshadri1/public-private-partnerships-ppp-in-education-2be4aeb9ed6d (In Eng.)

UNICEF's first-ever global report dedicated to early childhood education highlights a lack of investment in pre-primary education by the majority of governments worldwide, 2019: (In Eng.)

Vinod Thomas, Yan Wang, and Xibo Fan (2000). *Measuring Education Inequality: Gini Coefficients of Education.* (In Eng.)

World University ranking, 2024, https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2024/world-ranking#!/length/-1/locations/RUS/sort_by/rank/sort_order/asc/cols/stats (In Eng.)

Анна Маргарян
Соискатель кафедры управления Академии государственного управления Республики Армения
Эл. адрес: margaryan.anna@mail.ru

ГОСУДАРСТВЕННО–ЧАСТНОЕ ПАРТНЕРСТВО (ГЧП) КАК СРЕДСТВО ОБЕСПЕЧЕНИЯ ДОСТУПНОСТИ И МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ

Цель статьи – выяснить влияние структуры ГЧП в сфере образования на доступность и модернизацию образования, выявить существующие проблемы и направления развития образования в образовательной системе Республики Армения. Предметом статьи является исследование опыта и возможностей применения ГЧП в сфере образования.

Задача исследования – обосновать необходимость реализации проектов ГЧП в сфере образования Республики Армения.

Новизна исследования заключается в разработке теоретических положений, методических аспектов и практических рекомендаций по совершенствованию системы ГЧП в условиях модернизации образования в Республике Армения.

Чтобы удовлетворить запросы современной инновационной экономики, необходимо внедрять новые системы и применять новые решения в сфере образования. Экономическое развитие страны невозможно без интеллектуального потенциала. экономический рост зависит от квалификации населения, а развитие образования зависит от финансовой поддержки. В различных странах мира ГЧП используется в сфере образования как средство финансирования и привлечения возможностей и компетенций частного партнера в систему образования, а также для подготовки конкурентоспособной рабочей силы в соответствии с требованиями рынка труда.

Ключевые слова. ГЧП, образование, учреждение, школа, вуз, общее образование, рынок труда, субсидия, сертификат (ваучер).

Anna Margaryan
Ph.D. student of the management department at the Public Administration Academy of the Republic of Armenia
Email: address: margaryan.anna@mail.ru

PUBLIC–PRIVATE PARTNERSHIP (PPP) AS A MEANS OF ENSURING ACCESS AND MODERNIZATION OF THE EDUCATION SYSTEM

The purpose of the article is to find out the impact of PPP structure in the field of education on access to and modernization of education, to identify the existing problems and directions of education development in the educational system of the Republic of Armenia.

The subject of the article is the study of the experience and possibilities of PPP application in the field of education.

The task of the research is to substantiate the necessity of implementing PPP projects in the field of education of the Republic of Armenia.

The novelty of the research is the development of theoretical provisions, methodological aspects and practical recommendations for the improvement of the PPP system in the context of the modernization of education in the Republic of Armenia.

In order to meet the demands of the modern innovative economy, it is necessary to introduce new systems and apply new solutions in the field of education. Economic development of the country is impossible without intellectual potential. economic growth depends on the skills of the population, and the development of education depends on financial support. In various countries around the world, PPP is used in the education sector as a means of financing and attracting the capabilities and competences of the private partner to the education system and to prepare a competitive workforce in line with labor market requirements.

Key words. PPP, education, institution, school, university, general education, labor market, subsidy, certificate (voucher).

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. սեպտեմբերի 26-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. սեպտեմբերի 11-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Լուսինե Գրիգորյան
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտ
Էլ. հասցե՝ g.lusine2000@gmail.com

DOI: 10.53614/18294952-2024.2-172

ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Հայաստանի բնակչության բնական աճը վերջին տասնամյակներում շարունակաբար նվազել է, ինչի արդյունքում երկրի ժողովրդագրական վիճակը լուրջ մարտահրավերների առջև է կանգնած: Սոցիալ-տնտեսական իրավիճակի, արտագաղթի և ընտանիքներին ուղղված պետական աջակցության բացակայությունը նպաստել են ծնելիության ցածր մակարդակին: Մասնավորապես, 1990-ական թվականներից սկսած՝ Հայաստանի Հանրապետությունում նկատվում է ծնելիության ցուցանիշի նվազում, որն ունի երկարաժամկետ ազդեցություն երկրի բնակչության կառուցվածքի վրա: Նման միտումները վտանգում են ՀՀ-ի ազգագրական ապագան և կարող են առաջացնել լուրջ սոցիալական և տնտեսական խնդիրներ: Այս հոդվածում կքննարկվեն ծնելիության խթանման միջոցառումները, ինչպես նաև Հայաստանի ժողովրդագրական քաղաքականության բարելավման ուղիները, որոնք կարող են օգնել բարձրացնել ծնելիության մակարդակը և նվազեցնել երիտասարդ բնակչության արտագաղթը:

Հիմնաբառեր. ծնելիության մակարդակ, ծնելիության խթանում, բնական աճ, պտղաբերության գործակից, սոցիալական քաղաքականություն, պետական աջակցություն

Ներածություն

Ուսումնասիրությունը նվիրված է Հայաստանի համար հատկապես կարևոր և հրատապ ժողովրդագրական խնդրին՝ ծնելիության մակարդակի նվազ-

մանը, որը վերջին տասնամյակներում դարձել է խորը սոցիալական և տնտեսական խնդիրների պատճառահետևանքային բաղադրիչ: Հոդվածում մանրամասնորեն ուսումնասիրվում են այն հիմնական մարտահրավերները, որոնք խոչընդոտում են բնական վերարտադրության աճին՝ ֆինանսական դժվարություններ, աջակցության ծրագրերի բացակայություն, սոցիալական և առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիություն, ինչպես նաև արտագաղթ: Նպատակը՝ բացահայտել կենսաբառարանական վերարտադրությունը խթանող արդյունավետ քաղաքականությունների և միջոցառումների կիրառման հնարավորությունները, որոնք կօգնեն նվազեցնել ծնելիության անկումը: Հոդվածը տեղադրում է նաև նորարարական մոտեցումներ՝ հասարակական գիտակցության բարձրացումից մինչև պետական աջակցման բարելավված համակարգերի մշակման ուղղությամբ, որոնք կարող են նպաստել ժողովրդագրական հավասարակշռության վերականգնմանը:

Տեսական հիմքեր

Ծնելիությունը, որպես ժողովրդագրական ու սոցիալական գործընթաց, մշտապես եղել է գիտական հետաքրքրության կենտրոնում: Այն ուսումնասիրելու համար օգտագործվում են մի քանի հիմնական գիտական ուղղություններ՝ ժողովրդագրություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն, բարոյագիտություն և քաղաքակագիտություն: Ծնելիության վերաբերյալ առաջին լայնածավալ ուսումնասիրությունը իրականցրել է ՝ Թ. Մալթուսը (Malthus, 1798, էջ 20–25): Նշելով բնակչության վերարտադրության մեջ կենսաբանական գործոնների որոշիչ նշանակությունը, Մալթուսը գտնում էր, որ բնակչությունն ունիերկրաչափական պրոգրեսիայովաճելու միտում, սակայն գոյամիջոցներն ավելանում են միայնթվաբանական պրոգրեսիայով, որի հետևանքով բնակչության մի մասը դառնում է գործազուրկ և աղքատ: Այդ «ավելորդ» բնակչությունը, իբր, խախտում է հասարակության զարգացման բնականոն ընթացքը և, ըստ Մալթուսի, անհրաժեշտ է վերացնել այդ զանգվածը սովի, պատերազմների, համաճարակների միջոցով: Մալթուսի տեսությունը արտացոլում էր ժողովրդագրական աճի հակասությունները, սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տեխնոլոգիական ու սոցիալական զարգացման շնորհիվ ծնելիությունը կարող է նվազել՝ չնայած բնակչության ընդհանուր աճին:

Բնական աճի ազդեցությունը տնտեսական զարգացման վրա ուսումնասիրվել է նախորդ դարի երկրորդ կեսին ՝ Քոուլի և Հուվերի կողմից (Coale, Hoover, 1958, էջ 70–110.): Հնդկաստանի օրինակով, հետազոտողները ցույց են տվել, թե ինչպես կարող է բնակչության շատ արագ աճը սահմանափակել երկրի տնտեսական զարգացումը: Վերլուծությունը շեշտում է ժողովրդագրական և տնտեսական զարգացման խնդիրների զուգահեռ հաղթահարման կարևորությունը: Գրքի կարևորագույն եզրակացություններից մեկը դա ՝ ծնելիության խթանման և տնտեսական աճի միջև կոռելյացիոն կապի բացառումն է, ինչը ընդգծվում այն փաստարկով, որ ցածր եկամուտներ ունեցող երկրներում բնակչության աճի պատճառով կարող է նվազել տնտեսական

աճի ցուցանիշները, այն դեպքում, երբ պետությունը չի ներդնում բավարար ռեսուրսներ կրթության, առողջապահության և հասարակական անվտանգության մեջ:

Ծնելիության մակարդակի վրա պետության սոցիալական քաղաքականության ազդեցությունը ուսումնասիրվել է Հենրիկ Զետերբերգի կողմից (Zetterberg, 2019, էջ 577–603): Հեղինակը նշում է, որ ընտանիքում երեխա ունենալու որոշումը շատ հաճախ կապված է կոնկրետ սոցիալ-տնտեսական գործոններից (սոցիալական պայմաններ, աշխատանք, աջակցություն): Այդ պատճառով, պետական ինստիտուտները պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք կարող են համակարգել ծնելիության հետ կապված ֆինանսական և արժեհամակարգային մարտահրավերները: Հեղինակը շեշտում է, որ այն երկրներում, որտեղ կա լավ զարգացած սոցիալական համակարգ (օրինակ՝ Շվեդիան կամ Ֆրանսիա) ծնելիության մակարդակը բավականին բարձր է:

Հայ գիտնականների կողմից ծնելիության թեմայի շուրջ, նույնպես, տարբեր հետազոտություններ են կատարվել՝ ինչպես ընդհանուր ժողովրդագրության, այնպես էլ սոցիալ-տնտեսական համատեքստում: Խաչատրյան Ա., ով զբաղվել է Հայաստանում ծնելիության, մահացության և ընդհանուր ժողովրդագրական միտումների հետազոտությամբ, առանձնացնում է ծնելիության անկման հիմնական պատճառները՝ տնտեսական ճգնաժամ, աշխատանքային միգրացիա, և սոցիալական անվտանգության բացակայություն: Ուսումնասիրելով 1990-ականներին անցումային փուլում համընդհանուր գործազրկության և աղքատության ֆոնին սկսված արտագաղթի և «ձնագնդի էֆեկտով» բնական աճի անկման խնդիրները, հետազոտողը առաջարկում է տնտեսական աճ=պտղաբերության խթանում բանաձևը (Խաչատրյան, 2003, էջ 20–27):

Ծնելիության մակարդակի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն իրականացվել է նաև Արզումանյան Ն.-ի կողմից: Նա, ինչպես Զետերբերգը, ընդգծել է, սոցիալ-տնտեսական քաղաքականության, գործոնի կարևորությունը ծնելիության խթանման հարցում: Արզումանյանը մատնանշել է, որ ծնելիության ցածր մակարդակը Հայաստանում հիմնականում կապված է աշխատաշուկայի ճգնաժամի, ցածր եկամուտների, բարձր աղքատության մակարդակի և սոցիալական ապահովության բացակայության հետ: Նա առաջարկել է ընտանիքների և երեխաների խնամքի աջակցության ծրագրերի համակարգային փաթեթ, որը իր մեջ ներառում է՝ ծնողական արձակուրդների, ֆինանսական աջակցության, առողջապահական և կրթական ծառայությունների մատչելիության ծրագրեր (Արզումանյան, 2014, էջ 7–17):

1980–1990-ական թվականների տնտեսական ու քաղաքական փոփոխությունների ազդեցությունը Հայաստանում ծնելիության մակարդակի վրա ուսումնասիրվել է Պետրոսյան Վ.-ի կողմից: Նրա ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տնտեսական ճգնաժամն ու սոցիալական համակարգերի անբավարար աշխատանքը հանգեցրել են ծնելիության նշաձողի էական նվազմանը՝ ինչը բացատրվում է սոցիալական անվտանգության համակարգերի

բացակայությամբ: Ակնառու օրինակներից է բնակչության արտագաղթը, ինչը, ըստ Պետրոսյանի, հետագայում ստեղծեց ծնելիության խոչընդոտներ (Պետրոսյան, 2015, էջ 7–8):

Արդյունքներ

Ծնելիությունը դեմոգրաֆիայի, սոցիոլոգիայի և տնտեսագիտության տեսանկյունից բավականին հուզիչ թեմա է, քանի որ այն ընդգրկում է բնական ու հասարակական գործոնների համադրման բարդ համակեցություն: Չնայած շատ մարդիկ տեսնում են ծնելիությունը որպես բնական կենսաբանական գործընթաց, միևնույն ժամանակ այն իր մեջ ներառում է նաև հսկայական սոցիալական, մշակութային և տնտեսական գործոններ, որոնք ազդում են ինչպես ընտանեկան ու հասարակական կյանքի, այնպես էլ ամբողջ հասարակության կառուցվածքի վրա: Ծնելիությունը, առաջին հայացքից լինելով պարզ դեմոգրաֆիկ գործընթաց, կախված է շատ սոցիալ–տնտեսական գործոններից, որոնք ծնելիության գործընթացում կարող են հանդես գալ և՛ պատճառ, և՛ հետևանք: Օրինակ՝ *սոցիալական կարգավիճակը*, կրթությունը, կրոնը, մշակութային ժառանգությունը կարող են ազդել ընտանիքում երեխա ունենալու քանակի վրա: Հավաքական ուսումնասիրությունները Կենտրոնական Աֆրիկայի զարգացող երկրներում ցույց են տալիս, որ կրթական ռեսուրսների սահմանափակության պատճառով կանայք ավելի շատ երեխաներ են ունենում, քանի որ չունեն սոցիալական ինքնադրսևորման մղումներ (Հիմնարար կրթություն, 2024, էջ 3–7): Դրան ի հակառակ Ֆինլանդիայում, որտեղ կրթական մակարդակը բարձր է, ծնելիությունը բավականին ցածր է (Զբաղվածության մակարդակն ըստ ծննդավայրի և կրթական մակարդակի, 2022–2023):

Մարդու երեխա ունենալու որոշման վրա, մեծ ազդեցություն ունի նաև *դավանանքը*: Անհատական հավատը, որը պայմանավորված է կրոնական դաստիարակությամբ, կարող է ձևավորել ծնելիության համար հարմար միջավայր և երեխա ունենալու վերաբերյալ որոշում կայացնելու հիմնական գործոն: Հետազոտությունները ցույց են տվել, որ մահմեդական և քրիստոնյա ընտանիքների մեջ ծնելիության մակարդակը խիստ տարբեր է: Իսլամական երկրներում ծնելիության ցուցանիշները սովորաբար ավելի բարձր են, քան քրիստոնեական երկրներում՝ հատկապես զարգացող երկրներում, որտեղ կրոնը մեծ դեր ունի ընտանիքի կյանքում: Սա կապված է մի շարք գործոնների հետ, օրինակ `իսլամական ընտանիքներում երեխաների մեծ քանակը հաճախ դիտարկվում է որպես Աստծո օրհնություն և արժևորում է հասարակության կողմից: Պակիստանում, Իրանում և Սաուդյան Արաբիայում ծնելիությունը սովորաբար բարձր է, քանի որ մահմեդական դոգմաներն ու ավանդույթները խրախուսում են մեծ ընտանիքներ ունենալը (Казенин, 2022, էջ 7–8):

Ծնելիության վրա ազդող բազմաթիվ գործոններից կարելի նաև առանձնացնել *բնակարանային ապահովության* խնդիրը: Օրինակ՝ Ճապոնյայում երիտասարդներն հակված են ուշ ամուսնությունների և քիչ երեխաներ ու–

նենալուն, քանի որ բնակարանների գները շատ բարձր են:

Ուրբանիզացիայի և ծնելիության մակարդակի միջև կապը միջազգային և ներպետական մակարդակներում ուսումնասիրվում է որպես ժողովրդագրական և սոցիալական երկու կարևոր երևույթ, որոնք ազդում են միմյանց վրա: Ընդհանրապես, վերլուծությունները ցույց են տալիս, որ քաղաքային բնակչության աճը հակասություններ է առաջացնում ծնելիության մակարդակի հետ՝ հաճախ նշանակալիորեն նվազեցնելով այն: Օրինակ Աֆրիկայում, որտեղ գերակշռում է գյուղական բնակչությունը, ծնելիության մակարդակը ավելի բարձր է, քան Եվրոպայում և Ամերիկայում, որտեղ ուրբանիզացիայի մակարդակը բարձր է (Martine, 2013, էջ 36–42):

Հայաստանում դեմոգրաֆիկ իրավիճակը, այս պահի դրությամբ, խիստ անբարենպաստ է և շարունակում է տարեցտարի վատթարանալ: Դրա մասին վկայում են ինչպես ՀՀ վիճակագրական կոմիտեի ցուցանիշները, այնպես էլ տարբեր սոցիալ-տնտեսական հետազոտությունների արդյունքները:

ՀՀ -ում մշտական բնակչության թվաքանակը հասել է իր առավելագույն կետին 1992թ. կազմելով՝ 3 633 հազար մարդ, իսկ 2024թ.-ի հունվարի մեկին այն դարձել էր 2 991 հազար (ՀՀ Մշտական բնակչության թվաքանակը, 2024):

1990թ.-ին ծնելիության գումարային գործակիցը հավասար էր 2.62-ի, սակայն, սկսած 1995թ.-ից այն ավելի ցածր է, քան 2,15-ը այն շեմային արժեքը, որը ապահովում է բնակչության պարզ վերարտադրությունը :



Գծապատկեր 1.Պտղաբերության մակարդակը ՀՀ-ում մեկ կնոջ հաշվով (Համաշխարհային բանկի ժողովրդագրական տվյալներ)

Ինչպես պարզ է դառնում գծագրից վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ-ում պտղաբերության գործակիցը աճել է 2012թ-ին 1,583-ից դառնալով 1,885 2023թ-ին, սակայն այս դրական տեղաշարժը շատ չնչին է և չի համապատասխանում վերոհիշյալ 2,15 շեմային գործակցին:



Գծապատկեր 2.Ծնելիության գործակիցը ըստ ՀՀ մարզերի 2022թ.

Վերլուծելով ծնելիության ցուցանիշները ըստ ՀՀ մարզերի, պարզ է դառնում, որ Երևանը, Հայաստանի մայրաքաղաքը, ունի 1.4 ծնելիության գործակից, որը հանրապետությունում ամենացածր ցուցանիշն է: Սա կարելի է բացատրել մի քանի հանգամանքով `

- Կրթություն. Ավելի շատ երիտասարդներ ընտրում են բարձրագույն կրթություն ստանալը և կարիերան շարունակելը, ինչը հաճախ հանգեցնում է ընտանիք կազմելու ու երեխա ունենալու գործընթացի հետաձգմանը:
- Աշխատանքային շուկա. Երևանում աշխատաշուկան ավելի զարգացած է, մարդիկ ավելի շատ կենտրոնանում են իրենց տնտեսական վիճակի վրա, ինչը նույնպես կարող է հանգեցնել ավելի քիչ երեխաներ ունենալու որոշմանը:
- Բարեկեցության բարձր ստանդարտներ.Մայրաքաղաքում ապահով կյանքի և երեխա ունենալու համար բավարար պայմանների վերաբերյալ պատկերացումները ավելի բարձր են, քան մարզերում: Սա կարող է ծնելիության մակարդակի նվազման պատճառ հանդիսանալ:

Ծնելիության ամենաբարձր ցուցանիշը ՀՀ տարածքում՝ Շիրակի (2,6); այնուհետև ` Գեղարքունիքի (2,5), Սյունիքի (2,4), և Վայոց ձորի (2,3) մարզերում է: Այս տենդենցը կարող է ունենալ մի քանի պատճառներ՝

- Ավանդական արժեհամակարգ. Մարզային բնակավայրերում ավելի ընդգծված է ավանդական ընտանիքահեն մշակույթը, որը իրենից ենթադրում է մեծ թվով երեխաների առկայությունը,
- Կրթություն և աշխատանք. Չնայած կրթության համակարգի ընդլայնմանը, այս մարզերում համեմատաբար ցածր կրթական մակարդակը

կարող է նպաստել ավելի վաղ ամուսնությունների և երեխաների բարձր թվին,

- Բնակարանային պայմաններ. Մարզերում անշարժ գույքի արժեքը էականորեն տարբերվում է մայրաքաղաքում գտնվող անշարժ գույքի արժեքից և գործում են արտոնյալ հիփոթեքային պայմաններ, այս հանգամանքները կարող են խթանել զույգերի ամուսնությունը և երեխաներ ունենալու ցանկությունը:

Համաձայն «Հետազոտություններ երիտասարդների շրջանում 2023»-ի հարցման տվյալներին ՝ հարցվածների 88,2%-ը նշել է,որ երեխա ունենալը շատ կամ բավականին կարևոր է, իսկ ընդհանրապես չեն ուզում երեխաներ ունենալ նույն հարցման մասնակիցների 5%-ը, որից 14%-ը ֆինանսական անպատրաստության պատճառով, 11% կարիերայի առաջնահերթության, իսկ հիմնական 29%՝առանց հստակ պատճառի (Հետազոտություններ երիտասարդների շրջանակում, 2023):

Ըստ «Կյանքի որակը Հայաստանում» 2014թ.-ի անցկացրած հետազոտության արդյունքների երեխաների ցանկալի քանակը տատանվում տարբեր տարիքային խմբերում 2.75-3 միջև, սակայն երեխաների փաստացի քանակը , նույն հարցվածների շրջանում կազմում է 0,57-1,78 (Մանուկյան, Ս,2014,էջ 11): Ակնհայտ է, որ զույգերը ունենում են ավելի քիչ երեխաներ, քան ուզում են: Երեխա չունենալու հիմնական պատճառը(56,5%) 18-45 տարեկան անձանց շրջանում ՝ ֆինանսական միջոցների պակասն է, երկրորդ տեղում ՝ անբավարար բնակարանային պայմաններն են (25,3%), ապա առողջական վիճակը և անորոշությունը ապագայի նկատմամբ:

Թվում է, թե ամեն ինչ շատ պարզ է ՝ պետք է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բնակչության բնական աճը խթանելու համար:

Սակայն արդյոք այ՞դ մոտեցումը կլուծի մեր դեմոգրաֆիկ խնդիրները:

Ծնելիությունը սահմանափակված է մարդու երեխա ունենալու պահանջմունքով, որը իր հերթին արժեհամակարգային դիրքորոշում է: Այսինքն, բոլոր անհրաժեշտ պայմանների ապահովման դեպքում (ֆինանսական, բնակարանային և առողջապահական) մարդը կունենա այնքան երեխա, որքան ցանկանում է, իսկ մնացած բոլոր գործոնները, կբարձրացնեն ծնելիության մակարդակը մինչև այդ կետը (Антонова, 2014, էջ 49) :Ժողովրդագրական վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսապես զարգացած երկրներում, որտեղ բարեկեցությունն, կրթությունը, առողջապահությունը և սոցիալական ապահովությունը բարձր մակարդակի վրա են, տեղաբնիկ բնակչության բնական աճը չի բարձրանում, այլ հակառակը՝ նվազում է: Միևնույն ժամանակ, այս երկրներում Ասիայից և Աֆրիկայից ներգաղթած առաջին սերունդը, ապրելով բարեկեցության և առողջապահության բարենպաստ պայմաններում, ունի ավելի բարձր ծնելիություն,քան ներգաղթյալների երկրորդ և երրորդ սերունդները: Նվազումը կապված է ներգաղթյալների ասիմիլյացիայի մակարդակի հետ՝ որքան ավելի լավ է այդ գործընթացը ընթանում, այնքան ավելի քիչ երեխաներ են ունենում: Գաղտնիք չէ,

որ զարգացած երկրներում ավանդական արժեքները զիջում են լիբերալ-դեմոկրատական արժեքներին, որը իրենից ենթադրում է եսակենտրոն հասարակություն անձնական ինքնաիրականացման գերնպատակով: Նման հասարակությանը բնորոշ է կնոջ ֆինանսական անկախության և հասարակությունում բարձր դեր գրավելու ձգտումները, որը բերում է երեխա ունենալու պահանջարկի նվազմանը: Մյուս կողմից փոխվում են մարդկանց բարեկեցիկ կյանքի գնահատականները, թե որ պայմաններն են բավարար երեխաներ ունենալու իրենց պահանջմունքի իրականացման համար և սոցիալական բարձր մակարդակում գտնվող անձանց և հասարակությունների ստանդարտները համապատասխանում են ավելի բարձր բարեկեցության պայմաններին:

Ըստ «Կյանքի որակը Հայաստանում» 2014թ հետազոտության ՀՀ-ում պտղաբերության մակարդակը չի բավարարում մարդու երեխա ունենալու պահանջմունքին, սակայն ներկա դրությամբ պահանջմունքը նույնպես անկում է ապրել (Մանուկյան, 2014, էջ 12):



Գծապատկեր 3. Հայաստանում ծնելիության մակարդակի կանխատեսում (Մանուկյան, 2023)

1975-1979 թթ. ծնված անձանց շրջանակում երեխա ունենալու պահանջարկը կտրուկ նվազել է՝ իջնելով 0.76-ով: Այնուհետև սկսվել է այս ցուցանիշի անկման երկրորդ փուլը, որի ընթացքում այն նվազել է ավելի արագ՝ ամեն հնգամյակում 0.19-ով: Նվազել է նաև երեխաների պահանջմունքի

իրականացման մակարդակը, ինչը պայմանավորված էր երկու հիմնական գործոններով: Առաջինը՝ 1985 թ.-ից հետո ծնվածների մեծ մասը ապրել է հետխորհրդային շրջանում, երբ բնակչության սոցիալական վիճակն աննախադեպ արագությամբ և կտրուկ վատթարացել էր, բայց մարդիկ դեռևս պահպանում էին խորհրդային ժամանակների պատկերացումները «երեխաներ ունենալու համար բավարար սոցիալական և տնտեսական մակարդակի» մասին: Երկրորդը՝ լիբերալ տնտեսագիտության արժեքների ներթափանցումն էր Հայաստան 1994-1995 թթ., որը իր հետ բերեց եսակենտրոն աշխարհայացք և բարեկեցության ավելի բարձր նորմերի պահանջարկ:

Գծային մոտարկումը ցույց է տալիս, որ եթե պահպանվի 1979-2009 թթ. միտումը, ապա 2010-2014 թթ. ծնվածների շրջանում երեխաների պահանջմունքը կնվազի մինչ 2.15, իսկ 2015-2019 թթ. ծնվածների շրջանում մինչև 1.92: 2023 թվականի տվյալներով, 12 տարեկան և ավելի երիտասարդների ու նրանց հաջորդող սերունդների համար երեխաների պահանջարկը կանխատեսվում է,որ կլինի ՝ 2.1-ից ցածր : Այսինքն, նույնիսկ այդ պահանջմունքի ամբողջական բավարարման դեպքում Հայաստանի բնակչության բնական վերարտադրությունը կլինի անհնար:

Քննարկում

Ինչպես արդեն նշվել էր, ծնելիության խթանման գործընթացում մեծ դեր ունի երեխաներ ունենալու պահանջարկը, որը 1990-1994; 1995-1999; 2000-2004; թվականներին ծնվածների մոտ դեռ շարունակում է մնալ բարձր մակարդակի վրա ՝3,02; 2,86; 2,72 համապատասխանաբար: Այսինքն, ունենալով բավարար առողջական և տնտեսական հիմքեր այս 1990-2004թթ.-ին ծնված երիտասարդները, կարող են ունենալ այնքան երեխա, որը բավարար կլինի բնական աճի բարձր մակարդակի ապահովմանը: Հարկավոր է թիրախավորել, երիտասարդներին անհանգստացնող սոցիալական խնդիրները, որոնք կարող են ազդել ծնելիության պահանջմունքի վրա: Համաձայն «Կյանքի որակը Հայաստանում 2014» և «Հետազոտություններ երիտասարդների շրջանում 2023» ուսումնասիրություններին երիտասարդների երեխա ունենալու, որոշման վրա էականորեն ազդում են ՝

1. Ընտանիքի ֆինանսական կայունությունը
2. Բնակարանային պայմանները;

Ժողովրդագրական իրավիճակի բարելավումը սահմանելով որպես առաջնահերթություն ՀՀ կառավարությունը մշակել է և իրականացնում է մի քանի նախագիծ:

1. 2022թ. հունվարի 1-ից հետո ծնված կարգաթվով երրորդ և հաջորդ երեխաների դեպքում տրամադրվում է ամսական 50 հազար ՀՀ դրամ աջակցություն՝ մինչև երեխայի 6 տարեկան դառնալը(«Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ՀՀ Կառավարության 25.11.2021 թ. N 1902-Լ որոշում): Նախագծի նպատակն է խրախուսել երրորդ և հաջորդող երեխայի ծնունդը:

2. 2023թ. հունվարի 1-ից հետո ծնված երեխային խնամելու համար տրվում է ամսական 37, 5 հազար դրամ խնամքի արձակուրդում գտնվող քաղաքաբնակ ծնողին, 69,1 հազար դրամ՝ գյուղաբնակ ծնողին, իսկ խնամքի արձակուրդում չգտնվող ծնողին ՝ 31,6 հազար դրամ(«Պետական Նպաստի մասին », ՀՀ Ազգային Ժողով 12.12.2023թ ՀՕ-154-Ն օրենք, Հոդված 27):
3. Միանվագ ձևով տրվում է երեխայի ծննդյան նպաստ 300 հազար դրամի չափով առաջին և երկրորդ երեխայի դեպքում, երրորդ և չորրորդ երեխայի դեպքում ՝1 մլն. դրամ, հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում 1,5 մլն. դրամ(«Պետական Նպաստի մասին », ՀՀ Ազգային Ժողով 12.12.2023թ. օրենք, Հոդված 24):

Երեխա ունեցող ընտանիքների բնակապահովության պետական ծրագրերը նույնպես կարելի է համարել ՀՀ դեմոգրաֆիկ խնդրի լուծման անուղղակի միջոց: Նմանատիպ ծրագրերը մի քանիսն են, որոնք ուղղված են մարզային բնակավայրերում բնակապահովության խնդրի լուծմանը և հիփոթեքային վարկի մայր գումարի մարմանը:

Ծրագրերը՝

1. Միանվագ դրամական աջակցություն է տրվում մարզային բնակավայրերում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերելու կամ սեփական տուն կառուցելու նպատակով: Միանվագ դրամական աջակցության չափը կազմում է ձեռք բերվող բնակարանի արժեքի 5 տոկոսը, սակայն չի կարող գերազանցել 1 մլն դրամը: 3-րդ և հաջորդ երեխաների ծնվելու դեպքում աջակցությունը կազմում է բնակարանի արժեքի 5 տոկոսը, սակայն ոչ ավելի, քան 500,000 դրամ: Եթե շահառուն դեռևս 30 տարեկան չէ, ապա միանվագ դրամական աջակցությունը բարձրանում է 30 տոկոսով, սակայն առավելագույն աջակցությունը չի կարող գերազանցել 2,6 մլն դրամը(«Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2024-2026թթ. ծրագրի մասին», ՀՀ կառավարություն 14.03.2024):
2. Երկրորդ ծրագրի շրջանակում՝ հիփոթեքով բնակարան ձեռք բերող շահառուին տրամադրվում է դրամական աջակցություն, որն ուղղվում է ապահովագրության տարեկան ապահովագրական վճարի մարմանը: Այս աջակցության չափը կազմում է 90%՝ հիմք ընդունելով պայմանագրով սահմանված տարեկան ապահովագրական վճարը, սակայն չի կարող գերազանցել 180,000 տարեկան դրամը («Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023թթ ծրագրերը հաստատելու մասին», ՀՀ կառավարություն, 14.05.2020թ.) :
3. Երրորդ ծրագրով՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքում երեխա ծնվելու դեպքում ընտանիքին տրվում է միանվագ դրամական աջակցություն, ուղղված ՝ հիփոթեքային վարկի մայր գումարի մարմանը: Մասնավորապես ՝ մայր գումարի 10%-ի չափով (ոչ ավել, քան 500

հազար), եթե դա շահառուի առաջին կամ երկրորդ երեխան է, վարկի մնացորդի մայր գումարի 50% չափով (ք. Երևանում՝ 25%) եթե դա շահառուի երրորդ կամ հաջորդ երեխան է(«Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020–2023թթ ծրագրերը հաստատելու մասին», ՀՀ կառավարություն, 14.05.2020թ.):

Այս նախագծերը, նպատակ ունեն խթանել ծնելիությունը ՝ բնակարանային ապահովման խնդիրը լուծելու և ֆինանսական լծակներ կիրառելու միջոցով: Սակայն հատկանշական է շեշտել, որ ֆինանսական օգնությունը միանվագ է իսկ ամսական նպաստի դեպքում ՝ բավականին փոքր: Պետության կողմից իր քաղաքացուն իրական ֆինանսական կայունություն ապահովելու նպատակով, նպատակահարմար կլինի տալ հարկային արտոնություններ մարզային ՝մասնավորապես գյուղական համայնքներում գործունություն ծավալող կազմակերպություններին: *Առաջարկում եմ* ընդհանուր հարկման համակարգում գործող կազմակերպություններին տալ արտոնություն շահույթահարկի 8%-ի նվազեցման չափով, այն դեպքում, եթե կազմակերպությունը մայրաքաղաքից ընդլայնում է իր գործունեությունը սահմանված բնակավայրեր և ծավալում է այնտեղ իր գործունեության 30%-ը:

Այս քայլի միջոցով, կառավարությունը կապահովի հետևյալ խնդիրների լուծումը՝

1. *Աշխատաշուկայի սահմանափակության* պատճառով երիտասարդները տեղափոխվում են մարզերից մայրաքաղաք կամ մեկնում արտագնա աշխատանքի, որը ինքնին խալխլում է ընտանիքի հիմքերը և սահմանափակում երեխա ունենալու հնարավորությունները երիտասարդ ընտանիքների շրջանակում: Հարկային արտոնությունները կշահագրգռեն, արդեն գործող խոշոր հարկատուներին ընդլայնել իրենց գործունեության ոլորտը դեպի ՀՀ մարզեր , իսկ նոր բացվող կազմակերպություններին ՝սկսել կազմակերպության գործունեությունը ՀՀ մարզերում: Սա իր հերթին կապահովի տեղի բնակչությանը աշխատանքով և ֆինանսական կայունությամբ, որը կապահովի երեխա ունենալու պահանջարկի բավարարմանը:
2. *Մայրաքաղաքի գերծանրաբեռնվածությունը,* կնվազի, քանի որ մարզային բնակավայրերում ապրող քաղաքացիները ստիպված չեն լինի լքել իրենց բնակավայրերը աշխատանք գտնելու պատճառով:

Երկրորդ նախագծի առաջարկը, որը նպատակահարմար կլինի իրականացնել ծնելիության խթանման համար, դա ԲՈՒՀ-ներ, բարձրագույն և հետբուհական կրթության համար ուսման վարձի 50% արտոնության սահմանում 2 երեխա ունեցող կանանց համար, և 100% արտոնություն ՝ 3 երեխա ունեցող կանանց համար: Այս նախագիծը կխթանի երեխա ունեցող կանանց ստանալ կամ շարունակել կրթությունը ՝ ապահովելով անձնային և մասնագիտական աճ, իսկ կրթություն ստացողների շրջանակում կխթանի մայրանալու ցանկությունը կամ կարագացնի դրա պլանավորումը: Քանի որ ժամանակակից արժեհամակարգը, իրենից ենթադրում է կանանց դերի փոփոխություն ՝ինք-

նախիրացման և ֆինանսական կայունության ձգտումներով, ապա պետությունը պետք է ստեղծի պարարտ հող և սատարի կնոջ որպես `մոր և անհատի դերի զուգահեռ կերտմանը:

Երրորդ առաջարկը կապված է արդեն իսկ գործող հիփոթեքային արտոնյալ պայմանների բարելավմանը: Հայաստանում 2020թ.-ից ի վեր, բնակարանային գները կտրուկ աճեցին պայմանավորված 44-օրյա պատերազմի, հետագայում բռնի տեղահանման պատճառով արցախցիների Հայաստան տեղափոխման և 2022թ.-ին սկսված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով միգրանտների թվի կտրուկ աճի հետ: Թև պետության կողմից տրվում են հիփոթեքային վարկի արտոնյալ պայմաններ, սակայն գործող անշարժ գույքի գների և հիփոթեքային վարկի բավականին բարձր տոկոսադրույքների պատճառով նոր տուն ձեռք բերելը, դառնում է երիտասարդի համար ` փորձություն կամ անհասանելի երազանք: Օրինակ Շվեյցարիայում հիփոթեկայի վարկի տարեկան տոկոսադրույքը կազմում է 0,5-1,5% ,կախված վարկի ժամկետից և տոկոսադրույքի ձևից (Ընթացիկ հիփոթեքային տոկոսադրույքներ Շվեյցարիա, 2024) Սինգապուրում և Գերմանիայում տոկոսադրույքը տատանվում է 1,5-3% (Ընթացիկ հիփոթեքային տոկոսադրույքներ Սինգապուր, 2024) (Ընթացիկ հիփոթեքային տոկոսադրույքներ Գերմանիա) չափով, իսկ Հայաստանում հիփոթեքային վարկ տարեկան միջին տոկոսադրույքը 14% է (Հայաստանում գործող «Էվոկա» բանկ, «Արդշին» բանկ, «Ակբա» բանկ): Բարձր տոկոսադրույքի պատճառով անբավարար վարկունակությունը հանդիսանում է բանկի կողմից քաղաքացուն հիփոթեքային վարկի ստացման մերժելու պատճառ կամ դրա հաստատման դեպքում ` ահռելի բեռ:

Չորրորդ առաջարկը, դա շատ երեխաներ ունենալու քարոզարշավի մշակումն է, որի կիզակետը պետք է լինեն 12-17 տարեկան դեռահասները: Պետության կողմից ճիշտ հռետորաբանության և քարոզի շնորհիվ, դեռահասների մոտ ցանկություն կառաջանա շատ երեխաներ ունենալ, որը հետագայում քաղաքացու մոտ կձևավորի երեխա ունենալու բարձր պահանջարկ:

Պետք է չմոռանալ, որ ծնելիության բարձր մակարդակի ապահովումը պետք է զուգահեռակցի կայուն տնտեսության հետ: Բազմաթիվ երկրներ ունեն բարձր ծնելիության գործակիցներ, սակայն բարձր տնտեսական զարգացումը հազվադեպ է համընկնում այդ երևույթի հետ, քանի որ բարձր ծնելիությունը սովորաբար կապված է զարգացման փուլում գտնվող երկրների կամ այն երկրների հետ, որտեղ սոցիալական պայմաններն ավելի ծանր են: Միևնույն ժամանակ կան մի քանի երկրներ, որտեղ համատեղվում են բարձր ծնելիության գործակիցը և լավ տնտեսական զարգացումը: Երկրներ, ինչպիսիք են Ֆրանսիան (1,9-2) , Իսլանդիան(2,1) , Նորվեգիան(1,8-2) և Շվեդիան(1,7-2), ցուցադրում են, որ ծնելիության բարձր մակարդակները և զարգացած տնտեսությունները կարող են համընկնել, եթե պետությունը խթանում է սոցիալական բարենպաստ ծրագրեր:

Եզրակացություն

Հայաստանում ծնելիության մակարդակի շարունակական նվազումը ներկայացնում է լուրջ ժողովրդագրական մարտահրավերներ, որոնք ունեն խոր ազդեցություն երկրի սոցիալական և տնտեսական կառուցվածքի վրա: Ծնելիության ցուցանիշների անկումը, համատեղ արտագաղթի բարձր մակարդակի հետ, համաճարակային ճգնաժամերի և ֆինանսական դժվարությունների ներքո, կարող է առաջացնել բնակչության ծերացման ու աշխատուժի պակասի խնդիրներ, ինչը՝ իր հերթին, կվտանգի երկրի կայունությունը և զարգացման հեռանկարները:

Սակայն ծնելիության խթանումը հնարավոր է միայն սոցիալական, տնտեսական և մշակութային համակարգերի համակողմանի բարելավման միջոցով: Կազմակերպված քաղաքականություն, որն ուղղված կլինի ընտանիքներին ֆինանսական և սոցիալական աջակցություն տրամադրելու, աշխատաշուկայի բարեփոխումների, երեխայի խնամքի ծառայությունների բարելավման և բնակարանային խնդիրների լուծմանն, կարող է էականորեն բարելավել ծնելիության մակարդակը: Հատկապես կարևոր են ծրագրեր, որոնք խթանում են երիտասարդ ընտանիքների ստեղծումը և աջակցում ծնողներին՝ երեխաներ ունենալու հարցում:

Այսպիսով, Հայաստանի համար կենսական կարևորություն ունի ժողովրդագրական խնդիրների համակարգված լուծումը՝ որը հիմնված է ոչ միայն պետական քաղաքականության բարեփոխումների վրա, այլ նաև հասարակական գիտակցության բարձրացման և սոցիալական աջակցման նոր մոտեցումների ներդրման վրա: Ենթադրվում է, որ միայն բազմամետ խթանող միջոցառումների համակցված ներդրմամբ հնարավոր կլինի բարելավել ծնելիության մակարդակը և ապահովել բնակչության կայուն վերարտադրությունը՝ պահելով երկրի սոցիալ-տնտեսական հավասարակշռությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Արզումանյան, Ն. (2014). *Հայաստանի սոցիալական և տնտեսական քաղաքականությունը և նրա ազդեցությունը ծնելիության վրա:* ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան:

Գերմանիայում գործող բանկի կայք էջ: https://www.firstcitiz.com/finance/property-mortgage-berlin-germany

Խաչատրյան, Ա. (2003). *Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական և սոցիալական իրողությունները. Ժողովրդագրական ուսումնասիրություններ:* Երևանի համալսարան:

Համաշխարհային բանկի ժողովրդագրական տվյալներ https://data.worldbank.org/indicator/SP.DYN.TFRT.IN?end=2022&locations=AM&start=1991&view=chart

Հայաստանում գործող «Ակբա» բանկի կայք էջ: https://www.acba.am/hy/individuals/loans/mortgage/national-mortgage-purchase

Հայաստանում գործող «Արդշին» բանկի կայք էջ https://ardshinbank.am/for-you/hipotek?lang=hy

Հայաստանում գործող «Էվոկա» բանկի կայք էջ: https://www.evoca.am/hy/loans/mortgage-loans

ՀՀ Կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի «*Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023թթ ծրագրերը հաստատելու մասին*» թիվ N 968-Լ որոշում:

ՀՀ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ N 1902-Լ որոշում:

ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի *«Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2024-2026թթ. ծրագրի մասին»* թիվ N 384-Լ որոշում:

ՀՀ Վիճակագրական կոմիտե. *Հայաստանի ժողովրդագրական ժողովածու* https://armstat.am/file/article/demog_2023_3.pdf

ՀՀ Վիճակագրական կոմիտե. *ՀՀ Աշխատանքային բնակչության թվաքանակը 2024* https://armstat.am/file/article/population_01_01_24.pdf

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետազոտություն. *Հիմնարար կրթություն 2024* https://www.unicef.org/reports/commitments-action-2024

Մանուկյան, Ս. (2014). *ՀՀ կյանքի որակի հետազոտություն:*

Մանուկյան, Ս. (2023). *Հայաստանում ծնելիության մակարդակի կանխատեսում:*

Շվեյցարիայում գործող խորհրդատվական ընկերության կայք էջ: *Ընթացիկ հիփոթեքային փոխառություններ Շվեյցարիա,* 2024 https://moneypark.ch/en/mortgage/current-mortgage-rates/

Պետական նպաստի մասին ՀՀ օրենք, ընդունված 2023 թվականի դեկտեմբերի 12-ին, ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.16

Պետրոսյան, Վ. (2015). *Հայաստանի անցումային շրջանի ժողովրդագրական փոփոխությունները և ծնելիության մակարդակը:* Հայ ժողովրդագրության հարցեր, Երևան:

Սինգապուրում գործող բանկի կայք էջ: https://www.ocbc.com/personal-banking/loans/home-loans.page

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն. *Զբաղվածության մակարդակն ըստ ծննդավայրի և կրթական մակարդակի* https://data-explorer.oecd.org/vis?df[ds]=dsDisseminateFinalDMZ&df[id]=DSD_MIG%40DF_MIG_EMP_EDU&df[ag]=OECD.ELS.IMD&df[vs]=1.0&dq=..A.....&lom=LASTNPERIODS&lo=2&to[TIME_PERIOD]=false&vw=tb&ly[cl]=TIME_PERIOD%2CEDUCATION_LEV%2CBIRTH_PLACE&ly[rw]=REF_AREA

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ Հայաստան. (2023). *Հետազոտություններ երիտասարդների շրջանակում* https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20654.pdf

Антонова, Н.Л. (2014). *Демография.* Екатеринбург.

Казенин, К. (2022). *Рождаемость среди мусульман в современном мире: тенденции и ключевые факторы.* Москва.

Coale, A. J., & Hoover, E. M. (1958). *Population Growth and Economic Development in Low-Income Countries: A Case Study of India's Prospects.* Princeton University Press.

Malthus, T. (1798). *An Essay on the Principle of Population.* London: J. Johnson.

Martine G, Jose Eustaquio, Alves Suzana Cavenagh (2013). *Urbanizationandfertilitydecline.* London.

Zetterberg, H. (2019). Social Policy and Fertility in Developed Countries. *Population and Development Review,* 45(3), 577-603.

References

Arzumanyan, N. (2014). *Hayastani sotsialakan yev tntesakan kaghakakanut'yuny yev nra azdetsutyuny tsneliutyan vra* [Social and Economic Policy of Armenia and Its Impact on Fertility]: HH azgayin vichakagrakan tsarrayutyun, Yerevan. (In Arm.)

Germanyayum gortsogh banki kayk ej [Website of the bank operating in Germany]: https://www.firstcitiz.com/finance/property-mortgage-berlin-germany

Khachatryan, A. (2003). *Hayastani Hanrapetutyan zhoghovrdagrakan yev sotsialakan iroghutyunnery. Zhoghovrdagrakan usumnasirutyunner* [Demographic and Social Realities of the Republic of Armenia. Demographic Studies]: Yerevani hamalsaran. (In Arm.)

Hamashkharhayin banki zhoghovrdagrakan tvyalner [World Bank demographic data] https://data.worldbank.org/indicator/SP.DYN.TFRT.IN?end=2022&locations=AM&start=1991&view=chart (In Arm.)

H*ayastanum gortsogh «Akba» banki kayk ej* [Website of "ACBA" Bank operating in Armenia]. https://www.acba.am/hy/individuals/loans/mortgage/national-mortgage-purchase (In Arm.)

Hayastanum gortsogh «Ardshin» banki kayk ej [Website of Ardshin Bank operating in Armenia]. https://ardshinbank.am/for-you/hipotek?lang=hy (In Arm.)

Hayastanum gortsogh «Evoka» banki kayk ej [Website of Evoca Bank operating in Armenia]. https://www.evoca.am/hy/loans/mortgage-loans (In Arm.)

HH Karavarutyan 2020 tvakani mayisi 14-i *«Yerekha unetsvogh yntanikneri bnakaranayin apahovutyan petakan ajaktsutyan 2020-2023tt tsragrery hastatelu masin»* [On Approval of the 2020-2023 Programs for State Support for Housing Security for Families with Children] tiv N 968-L voroshum. (In Arm.)

HH Karavarutyan 2021 tvakani noyemberi 25-i *«Hayastani Hanrapetutyan Karavarutyan 2021-2026 t'vakanneri gortsuneut'yan mijots'arrumneri tsragiry hastatelu masin»* [On Approving the Program of Activities of the Government of the Republic of Armenia for 2021-2026] tiv N 1902-L voroshum: (In Arm.)

HH karavarutyan 2024 tvakani marti 14-i *«Yerekha unetsvogh yntanikneri bnakaranayin apahovutyan petakan ajaktsutyan 2024-2026tt. tsragri masin»* [On the 2024-2026 Program for State Support for Housing Security for Families with Children] tiv N 384-L voroshum. (In Arm.)

HH Vichakagrakan komite. *Hayastani zhoghovrdagrakan zhoghovatsu* [Demographic Collection of Armenia] https://armstat.am/file/article/demog_2023_3.pdf (In Arm.)

HH vichakagrakan komite. *HH mshtakan bnakchutyan tvakanaky* [Population of the Republic of Armenia] 2024 https://armstat.am/file/article/population_01_01_24.pdf (In Arm.)

MAK-i Mankakan himnadrami hetazotut'yun. *Himnarar krtutyun 2024* [UNICEF Research: Basic Education 2024] https://www.unicef.org/reports/commitments-action-2024 (In Arm.)

Manukyan, S. (2014). *HH kyanki voraki hetazotutyun* [RA Quality of Life Survey]. (In Arm.)

Manukyan, S. (2023). *Hayastanum tsneliut'yan makardaki kankhatesum* [Forecasting the

fertility rate in Armenia]. (In Arm.)

Shveytsariayum gortsogh khorhrdatvakan ynkerut'yan kayk ej [Website of a consulting company based in Switzerland: Current mortgage rates Switzerland]. Ynt'ats'ik hip'vot'ek'ayin tokosadruyk'ner Shveyts'aria, 2024 https://moneypark.ch/en/mortgage/current-mortgage-rates/

Petakan npasti masin HH orenk [Law on State Benefits], yndunvats 2023 tvakani dektemberi 12-in, HHPT 2013.12.28/73(1013).1 Hod.1186.16RA (In Arm.)

Petrosyan, V. (2015). *Hayastani antsumayin shrjani zhoghovrdagrakan pvopvokhutyunnery yev tsneliutyan makardaky* [Demographic changes and fertility rates in Armenia during the transition period]: Hay zhoghovrdagrutyan hartser, Yerevan. (In Arm.)

Singapurum gortsogh banki kayk ej [Website of the bank operating in Singapore]. https://www.ocbc.com/personal-banking/loans/home-loans.page

Tntesakan hamagortsaktsutyan yev zargatsman kazmakerput'yun. *Zbaghvatsutyan makardakn yst tsnndavayri yev krtakan makardaki* [Employment rate by place of birth and educational attainment] https://data-explorer.oecd.org/vis?df[ds]=dsDisseminateFinalDMZ&df[id]=DSD_ MIG%40DF_MIG_EMP_EDU&df[ag]=OECD.ELS.IMD&df[vs]=1.0&dq=..A.....&lom=LASTNPERIODS&lo=2&to[TIME_PERIOD]=false&vw=tb&ly[cl]=TIME_PERIOD%2CEDUCATION_LEV%2CBIRTH_PLACE&ly[rw]=REF_AREA (In Arm.)

Fridrikh Ebert Himnadram Hayastan. (2023). *Hetazotutyunner yeritasardneri shrjanakum* [Research among young people] https://library.fes.de/pdf-files/bueros/armenien/20654.pdf (In Arm.)

Antonova, N.L. (2014). *Demografiya* [Demography]. Yekaterinburg. (In Rus.)

Kazenin, K. (2022). *Rozhdayemost sredi musulman v sovremennom mire: tendentsii i klyuchevyye factory* [Fertility among Muslims in the Modern World: Trends and Key Factors]. Moskva. (In Rus.)

Coale, A. J., & Hoover, E. M. (1958). *Population Growth and Economic Development in Low-Income Countries: A Case Study of India's Prospects.* Princeton University Press. (In Eng.)

Malthus, T. (1798). *An Essay on the Principle of Population.* London: J. Johnson. (In Eng.)

Martine G, Jose Eustaquio, Alves Suzana Cavenagh (2013). *Urbanization and fertility decline.* London. (In Eng.)

Zetterberg, H. (2019). Social Policy and Fertility in Developed Countries. *Population and Development Review,* 45(3), 577-603. (In Eng.)

Лусине Григорян

Аспирант Армянского Государственного Экономическго Университета

Эл. адрес: g.lusine2000@gmail.com

СТИМУЛИРОВАНИЕ РОЖДАЕМОСТИ В АРМЕНИИ: ВЫЗОВЫ И СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ

Население Армении в последние десятилетия демонстрирует продолжительное снижение естественного прироста, что привело к серьезным демографическим вызовам для страны. Социально-экономическая ситуация, эмиграция и отсутствие государственной поддержки для семей способствовали низкому уровню

рождаемости. Особенно с 1990-х годов в Армении наблюдается снижение рождаемости, что оказывает долгосрочное влияние на структуру населения страны. Такие тенденции угрожают демографическому будущему Армении и могут привести к серьезным социальным и экономическим проблемам. В статье рассматриваются меры по стимулированию рождаемости, а также пути улучшения демографической политики Армении, которые могут способствовать повышению уровня рождаемости и сокращению эмиграции молодежи.

Ключевые слова: уровень рождаемости, стимулирование рождаемости, естественный прирост, коэффициент фертильности, социальная политика, государственная поддержка, структура населения.

Lusine Grigoryan
Ph.D. student at the Armenian State Economic University
Email: g.lusine2000@gmail.com

PROMOTING BIRTH RATE IN ARMENIA: CHALLENGES AND CONTEMPORARY TRENDS

In recent decades, Armenia's population has been experiencing a continuous decline in natural growth, which has led to serious demographic challenges for the country. The socio-economic situation, emigration, and the lack of state support for families have contributed to the low birth rate. Specifically, since the 1990s, Armenia has seen a decline in fertility rates, which has long-term effects on the country's population structure. These trends pose a threat to Armenia's demographic future and could lead to serious social and economic issues. This article discusses measures to stimulate fertility, as well as ways to improve Armenia's demographic policy, which can help increase the birth rate and reduce the emigration of young people.

Key words: birth rate, fertility stimulation, natural growth, fertility coefficient, social policy, state support, population structure.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. նոյեմբերի 17-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. նոյեմբերի 21-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Yenok Grishkyan
Lecturer at Yerevan State Medical University,
Ph.D. in Philology, Assistant
Email: yenokgrishkyan@gmail.com

DOI: 10.53614/18294952-2024.2-189

UNIVERSAL LANGUAGE (METALANGUAGE WE CAN'T LIVE WITHOUT)

Nowadays, the modeling of the knowledge has become one of the problems in the fields of application of various sciences: logics, linguistics, mathematics, psychology, cybernetics, etc. The reason for such interest in this problem is due to the creation of artificial intelligence (AI) systems.

The present article explores metalanguage, a type of universal language present in machine translation that facilitates the encoding of the input language and the decoding of the output language, regardless of the language family or typological traits. The modeling or formalized representation of words plays a vital role in ensuring accurate translation and understanding of meaning.

The article contains sample translations from English to Chinese, Spanish, Latin, Armenian, Russian, and Turkish via corresponding formal description based on the metalanguage used by the Universal Network Language (UNL). One of the vital parts of the formalized description – the component analysis, is also discussed from the point of view of both morphology and semantic meaning.

Key words: Universal language, metalanguage, component analysis, machine translation, formalized description.

Introduction

Knowledge is given to us directly by language and only through it: knowledge exists in daily use (monologue, dialogue, phrases, etc.), as well as in written texts

(literary monuments, artistic, scientific and technical literature, press, various linguistic styles, etc.), and finally, through language, we transmit knowledge from generation to generation. Thus, language is both a means of acquiring and preserving knowledge, and a means of its transmission. In science and technology, knowledge outside of the texts generally does not exist, and the modeling of the meaning of scientific and technical texts implies the modeling of the knowledge system of the given field.

Natural language knowledge, in general, can be divided into three main levels: linguistic – semantic information of words for understanding sentences in a natural language; concept definition – a sort of connection with other concepts that in turn specify the concepts; and other – including any other knowledge, e.g. encyclopedic. When aligned with metalanguage, this knowledge modelling plays a crucial part in forming the corrected meaning of the word specifying each meaning to singularity, which enhances the correct translation of the word within the sentence.

Simple, yet hard to translate

"Добрый день!" (Russian)
"नमस्ते." (Hindi)
"Is there a museum in the city?" (English)
"当然!" (Chinese)
"¿Cómo puedo encontrarlo?" (Spanish)
"Գնացեք ուղիղ, ապա թեքվեք դեպի աջ:" (Armenian)
"ありがとう" (Japanese)

As simple as the conversation above seems, it is quite difficult to formulate them in other languages, especially when a person is a carrier of only one language and has no understanding of the others. It might be easier for him to comprehend and converse in a foreign language, other than his own. But what if he doesn't?

Not long ago people used to help foreigners by translating for them either orally or in written form: a tradition that has come down to us since Ancient Egypt [Salevsky, 2018, pp. 184–198]. Many countries of that period used to establish translation service agencies to be able to communicate with the slaves or the people of the neighboring territories they conquered. Some were talented and achieved success. However, with the discovery of the informational era, these services are being used less and less due to the use of the fast growing internet.

Thanks to the worldwide trade, the web gave rise to computational linguistics which, in turn, facilitated the communication of people all over the world with the aid of machine translation. Attempts to make communication between languages easier by means of different translation devices haven't always been successful. The route wasn't easy, but the continuous changes have made the system more or less perfect because of an intermediate language that is used in translating from one language into another. This tertiary language creates a sphere

filled with linguistic models that should, in a common sense, be able to translate from one language into another and vice versa. This so called sphere is filled with phonetical, lexical, grammatical (morphological and syntactic) and even stylistic categories of all available languages, no matter alive or dead.

A metalanguage is an artificial language that helps in doing automated translations by means of online translating services. In difference to artificially constructed languages, a metalanguage is general for artificial and natural languages and is used as an auxiliary way to transfer one language data to another.

Alternatively said, the metalanguage considers the language outside its usually ambient. The reality of one language is encoded through it inside itself by means of grammatical expressions it is using (words written in italics, punctuation marks, dashes, slashes, etc. with each expression being on a separate line) (Karaulov, Molchanov, Afanasyev & Mikhalev, 1982).

Three types of metalanguages are – embedded, ordered and nested. Each of them has its own function: embedded metalanguage is fixed to a certain language. An ordered metalanguage creates its own metalanguage to discuss the one prior to it on the same level, whilst a nested one discuss the prior on a higher level (hence hierarchy). The latter two coexist in a natural language, however the former is mostly used by the translating system to move one language forms and expressions into the other. One of the first models of a metalanguage is Backus–Naur Form which was developed by John Backus and Peter Naur in the 1960s (Backus, 1959, pp. 125–132).

Hereafter we shall be discussing phonetic, lexical, grammatical and syntactical aspects of a metalanguage, as well as give examples of the formalized description of the metalanguage in different languages.

Since 1998 the creation of speech recognition system in Microsoft office has been a vital part of having a good translation output. Even though it is done prior to using the metalanguage, correct speech recognition helps to improve the correct choice of modeling for encoding. The speech recognition is still in development for many languages that have been less studied.

Lexical modeling of a language depends on the type of language whether it is synthetic or analytic. Due to these two main differences between world languages, the words should be carefully sorted into models that give the understanding of the word incomplete details: logical and analytical details present not only in the input language, but also in the output one.

For example: the word «հավք» in Armenian is mostly used in stylistic sense denoting birds in general, however when used without the suffix ք it will denote only a hen. A detailed modeling showing the type of the bird, being a neutral or generalized name, ability of laying eggs or building nests, etc. should be used for translating from Armenian (syntactical language) into English (analytical language).

Simple as yet a glance deep into the metalanguage shows us its backbone – an analytical structure of words in such details, that show not only the form and meaning of the word, but also all possible grammatical forms (affixation, endings,

prepositions, postpositions, etc.) that the word may have in all languages having already been input in the software. Thus, the English word "red" can have 1 form each in English and Armenian, 4 forms in most Romance languages (2 genders multiplied by 2 numbers (e.g. in Spanish – *rojo/rojos, roja/rojas*), 24 in German (3 genders, 2 numbers in all 4 cases), 36 in Russian (3 genders, 2 numbers in all 6 cases), etc. This means, that for English, Russian, Spanish, Italian, German and Armenian only the word "red" in a metalanguage will have 70 morphological endings. In difference to syntactical languages like Russian, German, Latin, etc., modern Armenian lacks the agreement between the noun and the adjective and, as the latter has no declension system, only one form is extant.

All these forms are part of a linguistic method, so called component analysis, a unique attempt to describe word meanings universally not only semantically, but also formally, creating a model with all possible combinations for both input and output languages.

Formalizing the meaning

Turning to the internal structure of the word, the meaning, the logical characterization method of the semantic form of the word describes component analysis in a better way. Here a word class is divided into types, which in turn are divided into subtypes required for lexical explanation. Therefore, it is essential that lexicological explanations provide enough suitable material for the examination of word groups as a limited system of semantic components (Hyvärinen, Karhunen, Oja, 2001, pp. 147–161).

Some lexical segments can be characterized by formalizing and reducing these explanations to a certain number guided by certain rules. Component analysis can also be achieved through transformative analysis. It is well known that the transformational identity or difference is directly proportional to the identity or difference of the constituent structure of the word unit. It allows monosemantic and words with binary contrast express short meaning more efficiently. However, binary relations are not always the best option for semantic analysis, e.g., it is possible to distinguish some species of animals, e.g. some types of cattle, by a number of features, taking into account their binary connections, but one of the important conditions – the age, will be lost.

As such, the component analysis was developed and is used mainly the meaning of the words, thus its main task is to formulize the semantic field of the word in its relation with the words that surround it in particular and the text in general. It can also be used in other areas of linguistics: e.g. phonemics, where the binary relations are considered essential. E. Gulyga and E. Shendels concluded that component analysis plays an essential role not only in extracting the exact meaning of the word, but assists in formalizing morphology and syntax as well (Gulyga & Shendels 1969).

If in component analysis the meaning of a word depends on its components, in linguistics, it is called semantic components, differential semantic signs, semantic

dimensions, etc. The semantic component is also called a *sema* – a meaning that is presented more concisely and clearly and proves the component's affiliation to the meaning – the content field and has lexical flexibility, i.e. *semantic field, hypersema, classema,* etc.

The term "*sema"* or meaning can be used to mean the smallest component meaning of a word – an element that reflects the signs of the signified meaning. In other words, its meaning entirety constitutes the main sense of the lexical unit. However, it can be further segmented: e.g. the word denoting gender can be separated as male and female, which in turn can be divided into ages or other kinds of certain conditions – a lady is of feminine gender, usually of a young age and commonly not married, while a man is of masculine gender, where any age past adulthood is possible and no certain conditions are required.

Thus, what's common to all languages formalized here, is the pronoun description, the other parts of speech have characteristics somewhat different from each other. Note, that due to the syntax structure, some of these characteristics are put in the middle or in the end of the formalized metalanguage. When translated in an output language, this placement is done by the general syntax rules already written in that language. During the decodification process the syntax structure is written taking these rules into account.

To give a more accurate formal description of the word, three conditions have to be observed:

- Describe the words in the most detailed form possible, especially in case of homonyms;
- Write the descriptions as short as possible to provide a faster and easier work for the translating system.
- Determine the lexical–semantic description of the word mostly according to the text, rather than the word alone.

Quite often the word should be viewed within the context for a better outcome of the translation. This is due to the fact, that the formalization of the word meaning in machine translation implies not only an intra–lexical correlation, but also an inter–lexical correlation, as the intra–lexical correlation is the internal form of the word, while the inter–lexical one is the semantic dependence of the word on other lexical meanings present in the vocabulary and attached to the given word. The transformation of the latter, however, is more complicated because it passes from lexicological level to syntax.

Imagine a polyglot understating all the 7 languages in the conversation in the beginning of the article trying to translate them to the carriers of these languages simultaneously. The brain neurons in the Broca's area in the left hemisphere move 0.5–2.0 m/s to and fro the Wernicke's area to comprehend (encode), translate and interpret (decode) the sentences. This passage between them assists in translation, becoming kind of metalanguage. In difference to the artificial translation that uses formalized description, natural one just creates the images pictured during encodification and interprets them during decodification using the words and

grammatical rules memorized previously.

A metalanguage functions much faster and much more correct due to technical compatibilities and rules previously added to it. This includes not only the meaning, but also the formalized description of each word separately and, at the same time, as a whole in the ambient of the context. What connects them is the component analysis thanks to which the translation is carried out accurately.

In short, a metalanguage is crucial for translating and it becomes a form of universal language – a language that is one for the whole humanity, like Esperanto, Volpuk (constructive languages), or English, Arabic, Russian (natural languages) that serve as Lingua Franca for different nationalities – carriers of different languages that might not have a lot in common with each other.

Universal language theory

A theory of one language for everyone, universal language theory (ULT) (Cook, 1996), has been proposed by Armenian academician, prof. G. Jahukyan, who has described it as a universal language model (ULM) – a generalized system for describing real objects and their correlations, and that reality includes physical as well as spiritual and emotional realities.

The ULM is built with a harmonious combination of introductory and descriptive methods and is based on five main principles: materiality, generality, integrity, unity and economy. Based on the principle of generality, the ULM can be applied to both natural and artificial languages. When building it, the concepts of the given language in general are taken into account as the perfect reality of the language. The purpose of ULM is to understand and reproduce language as a means of comprehension and communication between carriers of various languages.

According to the principle of universality, the ULM is applicable to all aspects of language, describing not only the expression and content of the word, but also the units formed by combinations in different languages (Roberts, 2016).

The main feature and the advantage of ULM is suggesting a minimum number (only 8) of universal concept categories that characterize objects materially (composition, hanging, number and class) and spatially (shape, direction, size and location). Apart from these 8, other paradigmatic categories are also described characterizing not only the objects themselves, but also their properties and relations (comparison, causality, frequency, manner, process, change, duration and time). Finally, 6 additional categories are added to characterize the objects of the spiritual–emotional sphere: perception, awareness, material expression of a language, modality, thinking, communication. Each of these 22 orders is characterized by hexadecimal edges: 1. main, 2. opposite, 3. middle (neither/nor), 4. joint (and/or), 5. reflexive, 6. absolute or neutral (Jahukyan, 2003).

Any machine translation program must index, label and number the words imported into it, present them according to the grammatical rules included in its system. All words corresponding to 22 categories in ULM should be indexed (See table 1 below).

Table 1.

	1	2	3	4	5	6
1	1-1	1-2	1-3	1-4	1-5	1-6
2	2-1	2-2	2-3	2-4	2-5	2-6
3	3-1	3-2	3-3	3-4	3-5	3-6
4	4-1	4-2	4-3	4-4	4-5	4-6
5	5-1	5-2	5-3	5-4	5-5	5-6
6	6-1	6-2	6-3	6-4	6-5	6-6
7	7-1	7-2	7-3	7-4	7-5	7-6
8	8-1	8-2	8-3	8-4	8-5	8-6
9	9-1	9-2	9-3	9-4	9-5	9-6
10	10-1	10-2	10-3	10-4	10-5	10-6
11	11-1	11-2	11-3	11-4	11-5	11-6
12	12-1	12-2	12-3	12-4	12-5	12-6
13	13-1	13-2	13-3	13-4	13-5	13-6
14	14-1	14-2	14-3	14-4	14-5	14-6
15	15-1	15-2	15-3	15-4	15-5	15-6
16	16-1	16-2	16-3	16-4	16-5	16-6
17	17-1	17-2	17-3	17-4	17-5	17-6
18	18-1	18-2	18-3	18-4	18-5	18-6
19	19-1	19-2	19-3	19-4	19-5	19-6
20	20-1	20-2	20-3	20-4	20-5	20-6
21	21-1	21-2	21-3	21-4	21-5	21-6
22	22-1	22-2	22-3	22-4	22-5	22-6

In addition, the ULM can also be used in other translation systems to form description and choose the foreign language words correctly. Whatever the choice, ULM is the most complete system of meanings presented to date capable of acting as a metalanguage in translation devices and performing full semantic inter–lingual translations.

Working metalanguage

It's not only the meaning that the component analysis differs. A more common approach is using different components of the metalanguage to specify the grammatical category of the word within the sentence. Main problems arise when there is a need to translate from a syntactic language into an analytic one. When the translation is carried out in this manner, formal modeling of the output language becomes much more complex and therefore long. This is due to the fact, that analytical languages use articles, prepositions, different particles, etc. that

belong to different parts of speech which, in turn, are added to the word when creating a formal description. Translation from an analytical language into a syntactical one is much simpler, because formalized description of a syntactical language commonly uses only one word already including various grammatical forms expressing the correct meaning of the analytical language (less parts of speech are in use).

Let's observe a sample on a Universal Networking Language (UNL) based translation from English into Chinese (A), Spanish (B), Latin (C), Armenian (D), Russian (E) and Turkish (F).

Input language formalized description for the metalanguage:
Initial input: I am reading a book.
I(PPronPrs1Sg)–personal pronoun, 1st person, singular;
am(AuxVPresContPrs1Sg)–auxiliary verb, present continuous tense, 1st person, singular;
reading(VGer)–verb, gerund;
a(IndfSg)–indefinite article, singular;
book(CNSg)–common noun, singular.
Metalanguage input description for: I am reading a book.
SNT*(PPronPrs1SgAuxVPresContPrs1SgVGerIndfSgCNSg)

A. Output language (Chinese) formalized description for the metalanguage:
我 **(wo)** (PPronPrs1Sg)–personal pronoun, 1st person, singular;
正在 **(zheng zai)** (ConjT)–conjunction of time;
读 **(du)** (V)–verb;
一 **(yi)** (CNum1)–cardinal number 1;
本 **(yi ben)** (ClBk)–classifier for books;
书 **(shu)** (CNSg)–common noun, singular;
Metalanguage output description for: 我正在读(一本)**书 (wo zheng zai du (yi ben) shu).
SNT(PPronPrs1SgConjTVCNum1ClBkCNSg)

B. Output language (Spanish) formalized description for the metalanguage:
Yo(PPronPrs1Sg)–personal pronoun, 1st person, singular;
estoy(AuxVPrContPrs1Sg)–auxiliary verb, present continuous tense, 1st person, singular;
leyendo(VGer)–verb, gerund;
un(IndfMSg)–indefinite article, masculine, singular;
libro(CNMSg)–common noun, masculine, singular.
Metalanguage output description for: (Yo)*** estoy leyendo un libro.
SNT(PPronPrs1SgAuxVPresContPrs1SgVGerIndfMSgCNMSg)

C. Output language (Latin) formalized description for the metalanguage:
Ego(PPronPrs1Sg)–personal pronoun, 1st person, singular;
librum(ND2nAccSg)–noun, declension 2, neutral gender, accusative, singular;
lego(VC3PresPrs1Sg)–verb, conjucation 3, present tense, 1st person, singular.
Metalanguage output description for: (Ego)** librum lego.
SNT(PPronPrs1SgND2nAccSgVC3PresPrs1Sg)

D. Output language (Armenian) formalized description for the metalanguage:
Ես (yes) (PPronPrs1Sg)–personal pronoun, 1st person, singular;
գիրք (girk') (NEInfիAccSg)–noun, external Inflection ի, accusative, singular;
եմ (em) (AuxVPresContPrs1Sg)–verb, present continuous tense, 1st person, singular;
կարդում (kardum) (VPres)– verb, present continuous tense;
Metalanguage output description for: Ես գիրք եմ կարդում: (Yes girk' em kardum)
SNT(PPronPrs1SgNEInfիAccSgAuxVPresContPrs1SgVPres)

E. Output language (Russian) formalized description for the metalanguage:
Я (ya) (PPronPrs1Sg)–personal pronoun, 1st person, singular;
читаю (chitayu) (VPresPrs1Sg)–verb, present tense, 1st person, singular;
книгу (knigu) (ND1fAccSg)–noun, declension 1, feminine gender, accusative, singular.
Metalanguage output description for: Я читаю книгу (Ya chitayu knigu).
SNT(PPronPrs1SgVPresPrs1SgND1fAccSg)

F. Output language (Turkish) formalized description for the metalanguage:
Ben(PpronPrs1Sg)–personal pronoun, 1st person, singular;
kitap(NNomSg)–noun, Accusative, singular;
okuyorum(VPrContPrs1Sg)–verb, present continuous tense, 1st person, singular.
Metalanguage output description for: Ben kitap**** okuyorum.
SNT(PPronPrs1SgND1fNomSgVPrContPrs1Sg)

NB
*–sentence (SNT)
**–in formal speech;
***–in informal speech;
****–indefinite noun in Turkish doesn't get an inflection ending in accusative case.

Some languages, however, require less grammatical rules to model sentence structures of output languages, thus metalanguage here is needed either for mainly input or output. Due to the capabilities of these languages a detailed modelled dictionary might be present prior to the translation.

As it can be observed here, many languages have the same grammatical

endings that are crucial for the encodification and decodification process – a unified, generalized action of splitting the words of one language into detailed segments, tagging them according their grammatical features, then matching these tags with the ones of the output language no matter the language family or linguistic typology.

This suggests usage of specific field indexation, extra information within modelling of the words to assist in enhance the effectiveness of the translation. This accounts for the specific text domain integrates into the formal definitions of words based on a hierarchical structure, thus clarifying the meaning of each word.

Conclusion

The development of the principles of component analysis are still ongoing. This method is considered promising from the point of view of communicative linguistics, which is combined to create communicative lexicography and to study the semantic components of the word. Derived from the lexical data, it can, in turn, assist in clarifying and refining explanations in encyclopedic dictionaries. Improving the method of extraction and description of meanings will help to re-discover the semantic circle of the word that expresses knowledge from the centuries-old human life experience.

Linguistic models can be both parsing and complying. The former is the extraction of the necessary information from the complete text by analyzing and identifying its elements, words, auxiliary particles and recognizing the correlations between them, whilst the latter is completing text information created by certain derivation rules from elements given prior. Every natural language has a complex and heterogeneous structure and is not suitable for modeling without the metalanguage.

Whatever the case, many systems are created every year around the globe, of which only a few gain general recognition. Cognitive systems are introduced into them to be essentially able to express the full meaning of the word that yet again confront the peculiarities of linguistic thinking. Whatever these systems are, the work of the specialists who strive to generalize and unify the knowledge of mankind by making it available to everyone should be properly evaluated.

References

Salevsky, H. (2018). The Origins of Interpreting in the Old Testament and the Meturgeman in the Synagogue.*The Bible Translator, 69*(2). (In Eng.)

Karaulov, YU. N., Molchanov, V. I., Afanasyev, V. A., Mikhalev, N. V. (1982). *Analiz metayazyka slovarya s pomoshch'yu EVM* [Analysis of the dictionary metalanguage using a computer]. M. (In Rus.)

Backus, J. W. (1959). *The Syntax and Semantics of the Proposed International Algebraic Language of the Zurich ACM-GAMM Conference.* Proceedings of the International

Conference on Information Processing. UNESCO. (In Eng.)
Hyvärinen, A., Karhunen, J., Oja E. (2001). *Independent Component Analysis. John Wiley & Sons.* (In Eng.)
Gulyga, Ye. V., Shendels, Ye. I. (1969). *Grammatiko-leksicheskiye polya v sovremennom nemetskom yazyke* [Grammatical and lexical fields in modern German.]. M., Prosveshcheniye. (In Rus.)
Cook, V. J. (1996). *Chomsky's Universal Grammar and Second Language Learning.* (In Eng.)
Roberts, I. G. (2016). *The Oxford Handbook of Universal Grammar.* Oxford University Press. (In Eng.)
Jahukyan, G. B. (2003). *"A Universal Theory of Language".* Caravan Books. (In Eng.)

Ենոք Գրիշկյան
Երևանի Պետական Բժշկական Համալսարանի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ
Էլ. հասցե՝ yenokgrishkyan@gmail.com

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՈՒ (ՄԵՏԱԼԵԶՈՒ, ԱՌԱՆՑ ՈՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԱՊՐԵԼ)

Մեր օրերում գիտելիքի մոդելավորումը դարձել է տարբեր գիտությունների կիրառման բնագավառների հիմնախնդիրներից մեկը՝ տրամաբանություն, լեզվաբանություն, մաթեմատիկա, հոգեբանություն, կիբեռնետիկա և այլն: Այս խնդրի նկատմամբ նման հետաքրքրության պատճառը արհեստական բանականության ստեղծումն է: (AI) համակարգեր. Հոդվածը քննարկում է մետալեզուն՝ որպես մեքենայական թարգմանության մեջ առկա ունիվերսալ՝ համընդհանուր լեզու, որը կոդավորում է մուտքային լեզուն, թարգմանում ու վերծանում ելքային ցանկացած լեզվի՝ անկախ լեզվական ընտանիքից կամ տիպաբանական բնութագրից:

Բազմաթիվ անվանի մտածողներ դեռևս միջնադարում փորձել են ստեղծել արհեստական լեզուներ, որոնք պետք է աջակցեին լեզուների միջև ճիշտ թարգմանությանը: Սրանք ենթադրում էին նաև լեզվի միասնական ձևային կաղապար՝ մետալեզու: Արդեն 20-րդ դարում լեզվական նյութը զետեղելով ալգորիթմների և մաթեմատիկական բանաձևերի մեջ, գիտնականները կարողացան ստանալ հնարավորինս ճշգրիտ թարգմանություններ, որոնց հիմնական նախապայմանը կարգաբերված և գործող մետալեզվի գոյությունն էր: Ինքնին մետալեզուն արհեստական լեզվական երևույթ է, որի օգնությամբ կատարվում են համակարգչային թարգմանությունները: Ի տարբերություն արհեստական կառուցվածքային լեզուների, մետալեզուն ընդհանուր է բոլոր արհեստական և բնական լեզուների համար և գործածվում է որպես օժանդակ միջոց՝ լեզվական տվյալները մեկ լեզվից մյուսին փոխանցելու համար:

Մետալեզվի օգտագործումը պահանջում է բառի մանրամասն կաղապարավորում կամ նկարագրություն ոչ միայն որպես առանձին, այլ որպես նախադասության և համատեքստի մեջ իր միջավայրում գտնվող այլ բառերից

կախված միավոր: Բառի մանրազնին նկարագրությունը՝ կաղապարավորումը կարևոր նշանակություն ունի իմաստի ճիշտ մեկնաբանման, հետևաբար՝ բառի, նախադասության և ենթատեքստի ճիշտ թարգմանության համար: Որպես օրինակ ներկայացված են անգլերենից չինարեն, իսպաներեն, լատիներեն, հայերեն, ռուսերեն և թուրքերեն թարգմանություններ՝ համապատասխան ձևային նկարագրություններով՝ հիմնված Համընդհանուր Ցանցային Լեզվի (ՀՑԼ) կիրառած մետալեզվի վրա: Հոդվածը քննության է առնում նաև ձևային նկարագրության կենսական մասերից մեկը՝ բաղադրիչի վերլուծությունը, քննարկվում է նաև ինչպես ձևաբանության, այնպես էլ իմաստային իմաստի տեսանկյունից:

Հիմնաբառեր. համընդհանուր լեզու, մետալեզու, բաղադրիչային վերլուծություն, մեքենայական թարգմանություն, ձևային նկարագրություն:

Енок Гришкян
Преподаватель Ереванского Государственного Медицинского Университета, кандидат филологических наук, **ассистент**
Эл. адрес: yenokgrishkyan@gmail.com

УНИВЕРСАЛЬНЫЙ ЯЗЫК (МЕТАЯЗЫК, БЕЗ ЧЕГО ЖИЗНЬ НЕВОЗМОЖНА)

В настоящее время моделирование знаний стало одной из проблем в различных научных областях: логике, лингвистике, математике, психологии, кибернетике и др. Причина такого интереса к этой проблеме связана с созданием искусственного интеллекта (ИИ).

В этой статье обсуждается метаязык, форма универсального языка, которая существует в машинном переводе для кодирования входного языка, перевода и создания декодификации выходного языка любого живого языка, независимо от языковой семьи или типологических характеристик. Многие выдающиеся учёные ещё в средние века пытались создать искусственные лингвистические системы, чтобы поддержать языки для осуществления правильных переводов, главным условием которых было существование формализованного и функционирующего метаязыка, который сам по себе является искусственным лингвистическим явлением, с помощью которого осуществляется синхронный перевод. Моделирование или формальное описание слова имеет решающее значение для правильного перевода и интерпретации значения.

Использование метаязыка требует детального формализованного описания слова не только как отдельной единицы, но и как слова, зависящего от других слов в его среде внутри предложения и контекста. В следующей статье приведены примеры переводов с английского на китайский, испанский, латинский, армянский, русский и турецкий языки с помощью соответствующего формального описания, основанного на метаязыке,

используемом универсальным сетевым языком (UNL). Одна из важнейших частей формализованного описания – компонентный анализ – также обсуждается с точки зрения как морфологии, так и семантического значения.

Ключевые слова: Универсальный язык, метаязык, компонентный анализ, машинный перевод, формальное описание.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. հոկտեմբերի 04-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. հոկտեմբերի 31-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Սյուզաննա Գրիգորյան
Երևանի պետական համալսարանի
Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ suzy.grigoryan@ysu.am

DOI: 10.53614/18294952–2024.2–202

ԽՈՍՔԱՅԻՆ ՆԵՐԱԶԴՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՈՒՄ

Սույն հոդվածը նպատակ ունի քննել խոսքային ներազդման լեզվագործաբանական միջոցների կիրառումը անգլալեզու գործարար հարցազրույցներում: Գործարար հարցազրույցի (այսուհետ՝ ԳՀՑ) խոսքային ակտերի վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ԳՀՑ խոսույթում տեղեկատվության հաղորդման գործառույթը անպայմանորեն զուգորդվում է համոզման, փաստարկման, գովազդման կամ ինքնագովազդման գործառույթներով, որոնք իրացվում են խոսքային ներազդման միջոցով: Սույն աշխատանքում բացահայտվում է, որ անգլալեզու ԳՀՑ խոսույթում ամենահաճախ հանդիպող ներազդման միջոցներից է պերսուազիան: Դրա պատճառը թերևս այն է, որ պերսուազիան, որը համարվում է մարդկանց ենթագիտակցության վրա ազդելու, համոզելու և ցանկալի հետհաղորդակցական գործողության մղելու յուրահատուկ ձև, աշխատաշուկայում հիմնական շարժիչ ուժն է:

Հիմնաբառեր. գործարար հարցազրույց, խոսքային ներազդման միջոցներ, պերսուազիա, փաստարկում:

Ներածություն

Խոսքային ներազդում հասկացությունը առաջադրվել է 1970–ականների սկզբին ռուսական դպրոցի հոգելեզվաբանների կողմից: Խոսքային ներազդ–

ման տեսությունը միջառարկայական գիտություն է, որն անմիջական կապի մեջ է հարակից գիտությունների՝ լեզվաբանության, հոգելեզվաբանության, լեզվագործաբանության, ոճագիտության, հոգեբանության, հաղորդակցման տեսության հետ: Խոսքային ներազդման տեսության հիմքում ընկած է լեզվագործաբանական ուսումնասիրությունը, այն է՝ լեզվական միջոցներով հանրային վարքի կառավարման, հետհաղորդակցական նպատակի և դրա իրագործման քննումը:

ԳՀՑ-ում, ինչպես և ցանկացած տեսակի հաղորդակցությունում, խոսքային ներազդման միջոցները լինում են *խոսքային* և *ոչ խոսքային* : Ոչ խոսքային ներազդումը անմիջականորեն կապվում է հարալեզվական միջոցների, կինեսիկայի, պրոկսեմիկայի, արտաքին տեսքի՝ իմիջի, հայացքներով շփման և տակեստիկայի հետ: Մեր ուսումնասիրության առարկան անգլալեզու ԳՀՑ-ում կիրառվող ներազդման լեզվական միջոցներն են, հետևաբար սույն աշխատանքի հիմնախնդիրն է այդ տեսակների բացահայտումն ու մանրազննին քննությունը:

Մեթոդ

Անգլալեզու ԳՀՑ-ում կիրառված խոսքային ներազդման լեզվագործաբանական միջոցների ուսումնասիրությունը կատարվել է լեզվագործաբանական վերլուծության մեթոդի միջոցով:

Արդյունքներ և քննարկում

ԳՀՑ-ի նպատակը միայն տեղեկատվություն տրամադրելը չէ, այլև տարբեր իլլոկուտիվ իմաստներ արտահայտող խոսքային ակտերի միջոցով լսարանի վրա պերլոկուտիվ ազդեցության իրագործումն է՝ հասցեատերերի կարծիքի, ընտրության, դիրքորոշման ցանկալի փոփոխության հասնելը: Հետևաբար, զարմանալի չէ որ ԳՀՑ-ում առավել հաճախ հանդիպող ներազդման միջոցը պերսուազիան է: ԳՀՑ-ում պերսուազիվ հաղորդակցության առանձնահատկություններից է այն, որ գործարարի խոսքային ներազդումն անմիջականորեն ուղղված չէ հարցադրողին, այլև բազմահազար լսարանին՝ հանրությանը: Լսարանը կայացած, մտածող, տրամադրած տեղեկատվությունը մանրամասն վերլուծող, ասվածը հաճախ թերհավատորեն ընկալող կամ քննադատող կողմ է, որի անդամները տարբեր տարիքի, արժեքների, համոզմունքների, մտավոր զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող մարդիկ են, ովքեր իրենց ընտրությունն են կատարում ապրանքաշուկայում առաջարկվող բազմաթիվ ապրանքատեսակների և ծառայությունների միջև: Այս դեպքում համոզման ներազդման ներուժը, անշուշտ, կախված է մի քանի հանգամանքներից՝ գործարարի հեղինակությունից և փորձառությունից, լսարանի համար կազմակերպության, ծառայության կամ ապրանքի կարևորությունից, ինչպես նաև գրագետ և համոզիչ խոսքից: Ասույթը ստանում է պերսուազիվ ուժ թե բառային, թե շարահյուսական և թե քերականական միջոցների շնորհիվ:

Պերսուազիայի ուսումնասիրության շրջանակներում ուշագրավ է Կ. Հոգանի ու Ջ. Սփիքմենի «Թաքնված համոզում» աշխատությունը, որտեղ նրանք ուսումնասիրում և այդ ուսումնասիրության բառային մակարդակում առանձնացում են գործարար ոլորտում կիրառվող և խոսակցի վրա համոզիչ ազդեցություն թողնող բառերի հետևյալ ցանկը՝ *you, money, save, results, health, easy, love, discovery, proven, new, safety, guarantee, free, yes, fast,why, how, secrets, sale, now, power,announcing, benefits, solution, acclaimed, advancement, amazing, appealing, at last, attention, authentic, aware, bargain, because, boosts, breakthrough, challenge, change, choice, classic, comfortable, compare, complete, convenient, delivers, deserve, discount, discover, distinguished, easily, effective, energy, exceptional, exciting, exclusive, experience, experienced, expert, extraordinary, fresh, fun, heal, help, honest, how to, hurry, imagine, important, improved, indispensable, incredible, informative, instantly, intimate, introducing, irresistible, last chance, luxurious, magic, miracle, money-making, money-saving, natural, naturally, offer, original, overcome, peace of mind, perfect, please, pleasure, plus, popular, power, powerfully, practical, prevents, price reduction, profitable, promise, quickly, realize, recommended, refreshing, relax, reliable, relief, relieve, remarkable, research, risk free, revolutionary, romantic, satisfaction, save, scientific, secret, security, sensational, service, simplifies, soothe, special offer, status, stop, stimulating, striking, stylish, superior, surefire, surprising, thank you, timely, the truth about, traditional, trusted, ultimate, unlimited, unusual, useful, valuable, wanted, warning,, yours [թարգմանություն՝ դու/դուք, գումար, խնայել, արդյունքներ, առողջություն, հեշտ, սիրել, բացահայտում, ապացուցված, նոր, անվտանգություն, երաշխիք, անվճար, այո, արագ, ինչու, ինչպես, գաղտնիքներ, վաճառք, հիմա, ուժ, տեղեկացնող, առավելություններ, լուծում, ընդունված, առաջխաղացում, զարմանահրաշ, գրավիչ, վերջապես, ուշադրություն, իրական, տեղեկացված, գործարք, որովհետև, խթանում է, բեկում, մարտահրավեր, փոփոխություն, ընտրություն, դասական, հարմարավետ, համեմատել, ամբողջական, հարմար, մատուցում է, արժանի լինել, զեղչ, բացահայտել, տարբերվող, հեշտությամբ, արդյունավետ, էներգիա, բացառիկ, հուզիչ, առաջնակարգ, փորձ, փորձառու, փորձագետ, արտասովոր, թարմ, զվարճալի, բուժել, օգնել, ազնիվ, ինչպես անել, շտապել, պատկերացնել, կարևոր, բարելավված, անփոխարինելի, անհավատալի, տեղեկատվական, ակնթարթորեն, մտերիմ, ներկայացվող, անդիմադրելի, վերջին հնարավորություն, շքեղ, կախարդանք, հրաշք, գումար աշխատել, գումարի խնայում, բնական, բնականաբար, առաջարկ, օրիգինալ, հաղթահարել, մտքի հանգստություն, կատարյալ, խնդրում եմ, հաճույք, ի լրումն, հանրաճանաչ, ուժ, հզոր կերպով, գործնական, կանխում է, գնի իջեցում, եկամտաբեր, խոստում, արագ, գիտակցում, խորհուրդ տրված, թարմացնող, հանգստանալ, հուսալի, թեթևացում, հանգստանալ, ուշագրավ, հետազոտություն, անվտանգ, հեղափոխական, ռոմանտիկ, բավարարվածություն, փրկել, գիտական, գաղտնիք, անվտանգություն, սենսացիոն, ծառայություն, պարզեցնում է, հանգստացնել, հատուկ առաջարկ, կարգավիճակ, կանգ առնել, խթանող, տպավորիչ, ոճային, բարձ-*

բակարգ, վստահ, զարմանալի, շնորհակալություն, ժամանակին, ճշմարտությունը դրա մասին այն է, ավանդական, վստահելի, հիմնական, անսահմանափակ, անսովոր, օգտակար, արժեքավոր, ցանկալի, զգուշացում, ձերը] (Hogan, Speakman, 2006, էջ 116–117):

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացի կոնկրետ բառերի կիրառումից համոզման գործընթացում մեծ է նաև հնչյունական, բառային և ձևաբանական կրկնությունների, ինչպես նաև շարահյուսական զուգաբանության դերը, որոնք գործարարի խոսքն օժտում են արտահայտչականությամբ և գրավում են ունկնդրի ուշադրությունը: Ստորև բերված օրինակում առկա է շարահյուսական և բառային կրկնություն, որի միջոցով գործարարի ասվածն ավելի ազդեցիկ և տպավորիչ է դառնում՝

Brian Chesky: I think what you have to do is these kind of counterintuitive things *and that's what* Jeff Bezos *did, this was what* Steve Jobs *did, this is what* Walt Disney *did.* [*թարգմանություն՝* Բրայան Չեսկի.– Ես կարծում եմ, որ այն, ինչ դուք պետք է անեք, նման հակահինտուիտիվ բաներ են, և *դա այն է, ինչ արեց* Ջեֆ Բեզոսը, *սա այն էր, ինչ արեց* Սթիվ Ջոբսը, *սա այն էր, ինչ արեց* Ուոլթ Դիսնեյը:] (The Economic Club of New York, Brian Chesky, 2017)

Պերսուզաիայի տեսանկյունից ուշագրավ է *հռետորական հարցի* կիրառումը ԳՀՑ-ում: Գործարարները սովորաբար հուզաարտահայտչական երանգավորում հաղորդելու ու լսարանի վրա ներգործելու նպատակով հիմնադրույթը ներկայացնում են հռետորական հարցի տեսքով: Կոնկրետ իրավիճակում հռետորական հարցը կատարում է անուղղակի խոսքային ակտի դեր՝ ձեռք բերելով կշտամբանքի, առաջարկի, խորհրդի իլլոկուտիվ իմաստ: Դիտարկենք օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Ջունիաքի հարցազրույցից մեկ հատված՝

Alexandre de Juniac: The current measures are not an acceptable long-term solution to whatever threat they are trying to mitigate. Even in the short term it is difficult to understand their effectiveness. And the commercial distortions they create are severe… *How can laptops be secure in the cabin on some flights and not others*, including flights departing from the same airport?Surely there must be a way to screen electronic equipment effectively at airport checkpoints. [*թարգմանություն՝* Ալեքսանդր դե Ժունյակ.– Ներկայիս միջոցները երկարաժամկետ ընդունելի լուծում չեն այն սպառնալիքի դեմ, որը նրանք փորձում են մեղմել: Նույնիսկ կարճաժամկետ հեռանկարում դժվար է հասկանալ դրանց արդյունավետությունը: Իսկ կոմերցիոն աղավաղումները, որոնք նրանք ստեղծում են, դաժան են… *Ինչպե՞ս կարող են նոթբուքները որոշ թռիչքների ժամանակ որոշ խցիկներում ապահով լինել, իսկ մյուսներում՝ ոչ, նույնիսկ նույն օդանավակայանից մեկնող թռիչքների դեպքում:* Անշուշտ, օդանավակայանի անցակետերում պետք է լինի էլեկտրոնային սարքավորումները արդյունավետ զննելու ինչ-որ միջոց:] (Freightnews, 2017)

Վերոնշյալ ուղերձը պատասխան է ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի այն որոշմանը, ըստ որի ահաբեկչական ակտերից խուսափելու պատճառով որոշ երկրների, մասնավորապես Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի

օդանավակայաններում պետք է արգելվեն էլեկտրոնային սարքերի՝ համակարգիչների, բջջային հեռախոսների առկայությունը ուղեբեռում: Ա. Ժունյակը արտահայտում է իր տեսակետն ու դժգոհությունը տվյալ որոշման վերաբերյալ՝ իր խոսքը խիստ քննադատական դարձնելով: Նկարագրված խոսքային իրադրությունում բացասական նրբերանգներով լիցքավորված բառերի և արտահայտությունների միջոցով (*not an acceptable, it is difficult to understand their effectiveness, commercial distortions, severe [թարգմանություն՝ երկարաժամկետ ընդունելի լուծում չեն, դժվար է հասկանալ դրանց արդյունավետությունը, կոմերցիոն աղավաղումներ, դաժան են]*) գործարարը ներկայացնում է իր հակընդդեմ հիմնադրույթը, իսկ հռետորական հարցի միջոցով կշտամբանքի քննադատական ակտ է կատարում՝ հանրությանը ցույց տալով որոշման անհեթեթ լինելու փաստը: Իր հիմնադրույթն առաջ քաշելուց հետո, նա տեսակետ է հայտնում, որ կան խնդիրը լուծելու այլ տարբերակներ: Խոսքի պերլոկուտիվ նպատակն է ազդել կառավարության որոշման վրա՝ համոզելով հրաժարվել ներկայիս որոշումից և գտնել այլ հնարավոր լուծում:

Հաճախ ԳՀՑ-ում համոզող գործառույթը իրացվում է *if [եթե] պայմանական կառույցի* միջոցով, երբ գործարարն առաջարկում է լսարանին փորձել և հասկանալ ներկայացվող ապրանքի կամ ծառայության որակը, օրինակ՝

Brian Chesky: *If* people could just experience what we experienced that one weekend, this would be an idea that would spread on the world, and again, maybe thousands of people one day would use Airbnb. [*թարգմանություն՝* Բրայան Չեսկի. – *Եթե* մարդիկ պարզապես կարողանային զգալ այն, ինչ մենք վերապրեցինք այդ ոչ աշխատանքային օրերի ընթացքում, սա կլիներ մի գաղափար, որը կտարածվեր աշխարհով մեկ, և գուցե հազարավոր մարդիկ մի օր կրկին օգտագործեին Էյրբիենբին:] (Fortune, 2017)

Բոլոր տեսակ լեզվական հնարները ԳՀՑ-ում միտված են խոսակցի հույզերի վրա ներգործելուն: Հասցեատիրոջ զգացմունքային դաշտ ներխուժելով, գործարարի համար հնարավոր է դառնում համոզել ու ազդել նրա ընտրության վրա: ԳՀՑ-ում գործարարները հաճախ հուզական շարժ են առաջացնում ինչ-որ հայտնի դրվագներ, կարճ պատմություններ պատմելու, ակնառու գործարարների կամ կազմակերպությունների օրինակներ ու փաստեր բերելու, այսինքն՝ հիշողության ներազդման հնար կիրառելու միջոցով, ինչով էլ իրենց խոսքը դարձնում են ավելի համոզիչ: Դիտարկենք ԳՀՑ-ի հետևյալ հատվածը՝

Interviewer: So one of the things that's interesting to me is your first product, the way that Airbnb was created and became viral and became huge was almost by accident.

Brian Chesky: Yeah.

Interviewer: I don't have to say I didn't think it was going to work, it was transformative... how is that better or worse or just different?

Brian Chesky: I'd say different, unclear if it's better or worse. I think there was an element of luck involved with the founding of the company. I mean I'm

lucky that we chose homes first and not… *like Amazon and Apple, they all were very intentional about their second or third, fourth products. Everyone's first product was totally by accident for the most part, so that's I don't find that being defining factor.* I think the key is– do you put the best people on it or really talented people? [*թարգմանություն՝* Հարցազրուցավար.– Այսպիսով, ինձ համար հետաքրքիր բաներից մեկը ձեր առաջին արտադրանքն է՝ այն, թե ինչպես է Էյրբիենբին պատահականորեն ստեղծվել և այդքան լայն տարածում գտել: Բրայան Չեսկի.– Այո: Հարցազրուցավար.– Պետք չէ ասել, որ ես չէի կարծում, որ այն աշխատելու է. դա փոխակերպիչ էր… ինչպիսի՞ն է դա՝ ավելի լավը, թե՞ վատը, թե՞ պարզապես տարբեր: Բրայան Չեսկի.– Ես կասեի տարբեր. Պարզ չէ՝ ավելի վատն է, թե լավը: Կարծում եմ՝ կազմակերպության հիմնադրման հարցում հաջողության դերը մեծ էր: Նկատի ունեմ՝ հաջողակ եմ, որ մենք հենց սկզբից ընտրեցինք տներ և ոչ թե… ինչպես օրինակ Ամազոնն ու Էփլը, ամեն բան շատ կանխամտածված էր իրենց երկրորդ կամ երրորդ, չորրորդ ապրանքների դեպքում:Բոլորի առաջին ապրանքը ամբողջովին պատահական է ստեղծվել, այսպիսով՝ ես չեմ կարծում, որ դա որոշիչ գործոն է: Կարծում եմ, որ հաջողության գրավականը այստեղ այն է, թե արդյո՞ք ընտրում ես լավագույն աշխատողներին կամ տաղանդավոր մարդկանց:] (Fortune Magazine, 2017)

Վերոնշյալ խոսույթում հարցադրողը շեշտում է, որ նախագիծը պատահականությամբ էր ստեղծվել, սակայն նշում է, որ չի ցանկանում իր հարցով ակնարկել, որ թերհավատ է կազմակերպության հետագա գործունեության նկատմամբ, այնուամենայնիվ փորձում է հասկանալ առաջին և ներկայիս նախագծերի տարբերությունը: Գործարարը, ընդունելով բիզնեսում հաջողություն ունենալու իր պատահականության փաստը, ամեն կերպ ջանում է բարձրացնել կազմակերպության վարկանիշը և ցույց տալ, որ գրեթե ցանկացած հաջողված բիզնես նախագիծ սկզբում պատահական է ծագել, սակայն հաջողության գրավականը մասնագետներն են: Իր խոսքը համոզիչ դարձնելու նպատակով նա փաստեր է բերում համաշխարհային շուկայից՝ նշելով Ամազոն և Էփլ ամենահաջողակ կազմակերպությունների նմանատիպ պատմությունը: Հետևաբար, խոսքային ներազդումը ԳՀՑ-ում իրացվում է նաև պատմության տեսքով: Այս դեպքում երկխոսությունը դառնում է ավելի իրական և ազդեցիկ: Ահա մեկ այլ նման օրինակ՝

Schultz: People had a volunteer—um—we were in Shanghai a week and a half ago. And this kind of activity is not generally associated with businesses yet in China, and yet we had hundreds of Starbucks partners and customers who volunteered to be with us to clean up a neighborhood that had basically been left behind. The spirit that existed in that three- to four-hour period is something that you can't buy; it's real, it's tangible, and it's not… there were no cameras there. It's not about marketing; it's about trying to build a business that has conscience. [*թարգմանություն՝* Շուլց.– Մարդիկ ունեին կամավոր…հըմ…Մենք Շանհայում էինք մեկուկես շաբաթ առաջ, և նման գործունեությունը հիմնականում կապված չէ բիզնեսի հետ Չինաստանում, սակայն, այնուամենայնիվ,

Ստարբաքսի հարյուրավոր գործընկերներ և հաճախորդներ կամավոր միացան մեզ մաքրելու մի թաղամաս , որը բացիթողի վիճակում էր: Այն ոգին, որ կար այդ երեք- չորս ժամվա ընթացքում այն է, ինչ չես կարող գնել, և դա իրական է, շոշափելի, և այն չէ... այնտեղ չկար ոչ մի տեսախցիկ... իմաստը մարքեթինգը չէր, այլ փորձ էր կառուցել բիզնես, որի հիմքում խիղճն է:] (London Business Forum, 2013)

Բացի պերսուազիայից ԳՀՑ-ում խոսքային ներազդման միջոցներից է նաև փաստարկումը: Ընդհանուր առմամբ փաստարկումը դիտվում է որպես տրամաբանական խոսքի միջոցով ապացույցներ, փաստարկներ բերելու գործընթաց, որի գլխավոր նպատակն է դիմացինի բանականության վրա ազդելն ու համոզելը (Vorobej 2006; van Eemeren et al 2014): Փաստարկների հնարի կիրառման դեպքում փաստերի անվիճարկելիության կողմնորոշիչ է դառնում քննարկվող հիմնախնդրի հանդեպ այն լսարանի վերաբերմունքը, որին ուղղված է գործարարի խոսքը, և որի վստահությունը շահելու խնդիր կա: Փաստարկումը ԳՀՑ-ում իրացվում է տրամաբանական և կապակցված շարադրանքի՝ հավաստի, վստահություն ներշնչող վիճակագրական տվյալների, ճշգրիտ հաշվարկների և տպավորիչ օրինակների միջոցով: Այդպիսի օրինակ է ստորև ներկայացված խոսքային իրադրությունը: Տվյալ խոսքում գործարարը ջանում է իր ասածի ճշմարտացիությունը ապացուցել փաստարկման և տրամաբանական դրույթներ առաջ քաշելու միջոցով՝

-Our employee turnover, which is less than 1% at the management level and less than 5% in the overall hourly level, I think is a very important piece for us, which talks about employee satisfaction. [*թարգմանություն*՝ -Աշխատանքից հեռացած մեր աշխատակիցների քանակը, որը կառավարման ոլորտում 1%-ից, իսկ ընդհանուր առմամբ 5%-ից պակաս է, կարծում եմ՝ շատ կարևոր կետ է մեզ համար, քանի որ դա խոսում է աշխատակիցների գոհունակության մասին:] (Smith, 2013)

Նշենք, որ գրավոր ԳՀՑ-ում փաստերն ու տվյալներն ավելի համակարգված տեսքով՝ սխեմայի կամ պատկերի ձևաչափով են ներկայացվում հանրությանը: Այդ սխեմաների ու պատկերների կիրառման նպատակն է տրամադրված տեղեկատվության դյուրըմբռնումն ու ավելի ուժգին դաջումը սպառողի հիշողության մեջ, օրինակ՝



(The Washington Post, 2016)

(Buiness Insider, 2016)

Մեր քննության ընթացքում ակնհայտ է դառնում, որ ԳՀՑ-ում սովորաբար

պահպանվում է փաստարկների շարադրման տրամաբանական հաջորդականությունը: Գործարարները հիմնականում մասնավորից անցում են կատարում ընդհանուրին, որը ԳՀՑ-ում ապահովում է պերլոկուտի ազդեցության հաջողություն, օրինակ՝

Interviewer**:** …where do you start? Is it with the customer? Is it with your employees? Who do you start with?

Jelinek**:**Well, it's a combination of both. Obviously, before you ever open up your doors, you have to start with your employees and you have to have suppliers. But the bottom line is, if you look at our mission statement, you take care of your customer, your member. You take care of your employees. You take care of your suppliers. Actually, the first thing is always, obey the law. *Then if you do all those things, you're going to reward the shareholders. That's always been our philosophy. If you get too short-sighted and you want to reward your shareholders as the most important thing, chances are you're not going to be in business in five or 10, 15 years…*If you look at the last 30 years, our stock has grown about 15%-16% a year in value, and we think we've got a pretty fair return for our shareholders. [*թարգմանություն*՝ Հարցազրուցավար. – Ո՞վ է ձեզ համար առաջնայինը՝ հաճախորդը, թե՞ աշխատակիցները: Ջելինեք.- Դե, երկուսն էլ: Ակնհայտ է, որ նախքան բացվելը պետք է սկսել աշխատակիցներից և պետք է ունենալ մատակարարներ: Ըստ մեր առաքելության՝ պետք է հոգ տանել հաճախորդի, կազմակերպության անդամի մասին: Իրականում առաջնայինը օրենքին ենթարկվելն է: Այդպես վարվելով՝ կպարգևատրեք բաժնետերերին: Դա է միշտ եղել մեր փիլիսոփայությունը: Եթե լինեք կարճատես և ձեր բաժնետերերին պարգևատրելը համարեք կարևորագույն բանը, հավանականություն կա, որ դուք 5 կամ 10, 15 տարուց այլևս չեք լինի բիզնեսում: Եթե հայացք գցեք վերջին 30 տարիներին, ապա կտեսնեք, որ մեր բաժնետոմսերի արժեքը աճել է տարեկան 15%-16%-ով, և մենք կարծում ենք, որ բավականին եկամուտ ենք ստացել մեր բաժնետերերի համար:] (Smith, 2013):

Նկարագրված հատվածում հարցազրույց վարողի այն հարցին, թե ինչպե՞ս է կազմակերպությանը հաջողվում միաժամանակ գոհացնել բոլորին՝ հաճախորդներին, աշխատողներին և բաժնետերերին, Ջելինեքը տալիս է ծավալուն պատասխան՝ սկսելով ամբողջական համակարգի ամենափոքր սեկտորից՝ աշխատողներից, անցում կատարելով դեպի մատակարարներ, հաճախորդներ և վերջում բաժնետերեր: Նա այս ստորակարգությունն է համարում հաջողված բիզնեսի գրավական, և որպես իր դիրքորոշման փաստ ու ապացույց, տրամադրում է իրենց տարեկան եկամուտի տոկոսները՝ այն նկարագրելով գնահատողական դրական բառերով (our *stock has grown about 15%-16% a year in value*, and we think we've got a *pretty fair return* for our shareholders.) [*թարգմանություն*՝ մեր բաժնետոմսերի արժեքը աճել է տարեկան 15%-16%-ով, և կարծում ենք, որ բավականին եկամուտ ենք ստացել մեր բաժնետերերի համար:]

Լեզվական մակարդակում նկատում ենք, որ փաստարկումը ԳՀՑ-ում իրացվում է հետևյալ քերականական միջոցներով՝

ա.համաձայնություն/ անհամաձայնություն արտահայտող բայեր՝ *to accept, to approve, to agree, to decline, to deny,* [*թարգմանություն*՝ ընդունել, հաստատել, համաձայնվել, մերժել, ժխտել]

բ. եզրահանգման բայեր և արտահայտություններ՝ *to protest, to explain, to conclude, to reason, to argue, , lead to the conclusion that,* [*թարգմանություն*՝ բողոքարկել, բացատրել, եզրակացնել, պատճառաբանել, վիճարկել, հանգեցնել այն եզրակացության, որ]

գ. հակադրական հարաբերություն արտահայտող շաղկապներ՝ *but, yet, still, only, nevertheless,* [*թարգմանություն*՝ բայց, այնուամենայնիվ, դեռևս, միայն, ինչևէ]

դ. լրացուցիչ տեղեկատվության հաղորդում արտահայտություններ՝ *by the way, while, apart from, needless to add that,* [*թարգմանություն*՝ իմիջիայլոց, մինչդեռ, բացի դա, ավելորդ է հավելել, որ]

ե. հավելում արտահայտող արտահայտություններ՝ *in addition to the fact, as well as the fact that, moreover*, [*թարգմանություն*՝ ի լրումն այն փաստի, որ, ինչպես նաև այն, որ, ավելին]

զ. պատճառահետևանքային կապ արտահայտող շաղկապներ՝ *since, because, as, due to.* [*թարգմանություն*՝ քանի որ, որովհետև, շնորհիվ]

Հարկ է նշել, որ ԳՀՑ-ում տեղեկատվության փոխանցման, համոզման և փաստարկման գործընթացը զուգորդվում է գովազդման և ինքնագովազդման հետ, քանի որ տվյալների տրամադրման և գնահատողական դատողությունների և ասույթների միջոցով գործարարը նաև ներկայացնում է և ուղղակիորեն կամ անուղղակիորեն գովազդում իր ապրանքատեսակը կամ մատուցվող ծառայությունը: Հետևաբար, ԳՀՑ-ի խոսքը մոտենում է գովազդային խոսույթին, ինչը ենթադրում է հուզականորեն հագեցած և երանգավորված արտահայտությունների ու հիմնադրույթների կիրառում: Ինչպես նշում է Ռ. Առաքելյանը, «գործաբանական տեսանկյունից գովազդային դիսկուրսը դինամիկ է, այսինքն՝ մշտական զարգացման և փոփոխման մեջ է. այն ուղղված է հնարավոր բոլոր միջոցներով լսարանի ուշադրությունը գրավելուն, դրա ճաշակի և նախընտրության վրա ներգործում կատարելուն» (Առաքելյան, 2013, էջ 129): Նույն բնորոշումը կարելի է տալ ԳՀՑ-ի խոսքին: Դիտարկենք հետևյալ հատվածը՝

Interviewer: What's your favorite item on Costco's shelves today?

Jelinek:You know, I love our hot dog. *There's no place else you can get a better item for $1.50.*

Austin:That's true.

Jelinek:I like our *toilet paper*, because obviously that's the No. 1 selling item that we have. And I love our *Kirkland Signature shirts.* That's the only thing that I basically wear. [*թարգմանություն*՝ Հարցազրուցավար. – Ո՞րն է ձեր սիրելի իրը Քոստքոյում: Ջելինեք.– Գիտեք, ես սիրում եմ մեր նրբերշիկով հացը: Որևէ այլ վայրում չեք կարող գտնել ավելի լավը $1.50 արժեքով: Օսթին.– Ճիշտ է: Ջելինեք.– Սիրում եմ մեր զուգարանի թուղթը, քանի որ ակնհայտորեն դա մեր ամենավաճառվող ապրանքն է: Ես նաև սիրում եմ Քրքլենդի

շապիկները: Դա միակ բանն է, որ ես հիմնականում կրում եմ:] (Smith, 2013):

Վերոնշյալ խոսքային իրադրությունում գործարարը ոչ թե ընդհանրական գնահատողական կարծիք է հայտնում, այլև թվարկում է կոնկրետ ապրանքանիշներ (hot dog, toilet paper, Kirkland Signature shirts) [*թարգմանություն*՝ նրբերշիկով հաց, զուգարանի թուղթ, Քրքլենդի ֆիրմային շապիկներ) և նույնիսկ գինն է նշում: Նա շեշտում է, որ ինքը ևս նախընտրում է այդ մեծ պահանջարկ ունեցող ապրանքները՝ իր պնդումով փորձելով ներազդում կատարել մարդկանց գիտակցության վրա:

Բանավոր ԳՀՑ-ում գովազդման գործառույթն ավելի ընդգծված է, քանի որ գործարարները հնարավորություն ունեն ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական միջոցներով հասնել նպատակաուղղված հաղորդակցության: Երբեմն, եթե հարցազրույցի ձևաչափն ու վայրը թույլ են տալիս, խոսքը զուգակցվում է նախօրոք պատրաստած ազդեցիկ տեսահոլովակի կամ ձայնագրության հետ: Երբեմն էլ գործարարները իրենց հետ բերում են իրենց, իսկ կողմից արտադրած ապրանքը և ներակա կամ արտակա կերպով ներկայացնում այն ամենադրական լույսի ներքո: ԳՀՑ-ում ներակա գովազդման գործառույթը հաճախ իրացվում է թաքնված գովազդի (product placement) միջոցով: Թաքնված գովազդը, անուղղակի կերպով ներկայացնելով որևէ ապրանք, հանրության ընտրության վրա ներազդելու միտում ունի (Perloff 2017: 500): ԳՀՑ-ում թաքնված գովազդի օրինակներ շատ են հանդիպում, երբ գործարարը, որն, օրինակ, հանդիսանում է հեռախոսներ արտադրող որևէ կազմակերպության ներկայացուցիչ, հարցազրուցի ընթացքում անընդմեջ իբրև թե ոչ միտումնավոր կերպով ցուցադրում է իր հեռախոսը՝ այն դնելով սեղանին կամ ձեռքի մեջ խաղացնելով: Լինում են նաև դեպքեր, երբ գործարարը, լինելով որևէ հաստատության սեփականատեր, հարցազրույցն անցկացնում է հենց իր այդ հաստատությունում կամ անպայմանորեն ներկայացնում է այն վայրը, որտեղ ինքը բնակվում է տվյալ ժամանակահատվածում: Այդպիսի օրինակ է Էյրբիենբի կացարաններ ապահովող ծառայության հիմնադիր գործարար Բ. Չեսկիի հարցազրույցը, որի սկզբնամասում հարցադրողն կատակի տեսքով և նախապես կռահելով պատասխանը, միտումնավոր կերպով հարցնում է, թե որտեղ է ժամանակավոր բնակվում գործարարը տվյալ պահին: Գործարարը, բաց չթողնելով ընձեռնված հնարավորությունը, փորձում է լավագույնս ներկայացնել, այլ կերպ ասած՝ գովազդել իր ստեղծած նախագիծը, ներկայացնել այն դրական լույսի ներքո՝ ցույց տալով, որ իրենց առցանց ծառայության միջոցով հնարավոր է մատչելի և հարմարավետ կացարան գտնել օտար քաղաքում: Ահա և այդ հատվածը՝

Brian Chesky: *I am staying in Airbnb, in Harlem, I think it's near 125th Street, it's with these two hosts– Matt and Gina... it's a really cool experience and of course my mom's here, my girlfriend* is here, so we got to cook food last night in the house.

[*թարգմանություն*՝ Բրայան Չեսկի.– Ես մնում եմ Էյրբիենբիում, Հարլեմում, կարծում եմ 125-րդ փողոցի մոտ է,երկու տանտերերի՝ Մեթի և Ջինայի հետ: Իսկապես հիանալի է, և իհարկե մայրիկս ու սիրելիս այստեղ են, այնպես որ

մենք երեկ երեկոյան կերակուր պատրաստեցինք տանը։](Fortune Magazine, 2017):

Եզրակացություն

Եզրափակելով ասվածը՝ կարող ենք փաստել, որ փաստական նյութի մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործարարի խոսքը հակված է հաջողված լինել և հասնել հաղորդակցական նպատակին, եթե գործարարը իր ասույթները կազմելիս և տեղեկատվություն փոխանցելիս հենվում է թե՛ հուզական հնարների, թե տրամաբանական փաստարկների վրա: ԳՀՑ-ի խոսույթը սովորաբար կառուցվում է այնպես, որ հաղորդակցման արդյունքում հասցեագիրը մի կողմից իր հաղորդած տեղեկատվության վերաբերյալ հանրության հավատն ու վստահությունը ձեռք բերի ճշգրիտ փաստարկման միջոցով, մյուս կողմից հուզաարտահայտչական հնարներով ներազդի նրանց զգացմունքների վրա, գովազդի, համոզի հանրությանը իր կողմից ներկայացվող ապրանքատեսակի լավագույն լինելը և արդյունքում հասնի իր հաղորդակցական նպատակին: Խոսքային ներազդման հնարները գործարարին հնարավորություն են տալիս քողարկել անցանկալի իրազեկությունը, ստեղծել գաղափարական ընդհանուր հարթակ և այդ հարթակում համախմբել իր լսարանը՝ միաժամանակ առավելության հասնելով վերջինիս նկատմամբ և ղեկավարելով թիրախ հանդիսացող մարդկանց հետհաղորդակցական վարքը: Այսպիսով, գործարարի խոսքը կատարում է մարդանց դիրքորոշումների վրա ներազդման և հասարակական կարծիքի ուղղորդման գործառույթ: Այլ կերպ ասած՝ հարցաքննվող գործարարը բազմապիսի իլլոկուտիվ իմաստներ արտահայտող խոսքային ակտերի միջոցով ձգտում է հասնել արդյունավետ պերլոկուտիվ ազդեցության և տեղեկատվություն հաղորդելու հետ մեկտեղ հանրությանը մղել գնել կամ օգտվել իր առաջարկած ապրանքանիշը: Հետևաբար, գործարարի խոսքը գործաբանական լեզվաբանության մեջ դիտում ենք որպես պերլուկոտիվ ակտի՝ համոզման, գովազդման, փաստարկման, այն է՝ ներազդման դրսևորում: ԳՀՑ-ի մեր ուսումնասիրության շրջանակներում առաջարկում ենք հաղորդող, համոզող, փաստարկող և գովազդող ներազդում հասկացությունը, որն ամփոփում է ասվածը:

Օգտագործված գրականության ցանկ

Առաքելյան, Ռ. (2013). Գովազդային տեքստերի թարգմանության հոգելեզվաբանական առանձնահատկությունները: Լուսակն, *Լեզու և գրականություն գիտական իմացության ժամանակակից հարացույցում* (5) [Psycholinguistic features of the translation of advertising texts. Lusakn, Language and Literature in the Modern Paradigm of Scientific Knowledge], էջ 129-133, Երևան:

Business Insider: *The Bill Gates Interview: An energy miracle is coming, and it's going to change the world.* (2016, February). http://www.businessinsider.com/bill-gates-interview-energy-miracle-coming-2016-2)

Fortune Magazine: Interview with Airbnb CEO Brian Chesky. (2017, March) https://www.youtube.com/watch?v=GFMeuSIhIYg

Fortune: Q&A With Brian Chesky: Disruption, Leadership, and Airbnb's Future. (2017, March). https://fortune.com/2017/03/27/chesky-airbnb-leadership-uber/#

Freightnews: Iata calls for rethink of restrictions on electronics. (2017, March). https://www.freightnews.co.za/article/iata-calls-rethink-restrictions-electronics

Hogan, Speakman van Kuppevelt, J., Smith, R. W. (eds.) (2003). Current and New Directions in Discourse and Dialogue. *Text, Speech and Language Technology,* VOLUME 22, 381 pp. Springer Science+ Business Media Dordrecht.

London Business Forum: *Starbucks' CEO Talks Business.* (2013, February). https://www.youtube.com/watch?v=83yInyY1KLs

Smith, A. (2013, August). *An Interview with Costco CEO Craig Jelinelk.* https://www.fool.com/investing/general/2013/08/01/an-interview-with-costco-ceo-craig-jelinek.aspx

The Economic Club of New York, Brian Chesky. (2017, March). https://www.econclubny.org/documents/10184/109144/2017CheskyTranscript.pdf

The Washington Post: *Tim Cook, the interview: Running Apple 'is sort of a lonely job'.* (2016, August). http://www.washingtonpost.com/sf/business/2016/08/13/tim-cook-the-interview-running-apple-is-sort-of-a-lonely-job/?utm_term=.986ee60c3253

Frans H. van Eemeren,Bart Garssen,Erik C. W. Krabbe,A. Francisca Snoeck Henkemans,Bart Verheij,Jean H. M. Wagemans (2014). *Handbook of Argumentation Theory.* Springer Reference, London.

Vorobej, M. (2006). *A Theory of Argument.* New York: Cambridge University Press.

Сюзанна Григорян

Ассистент факультета европейских языков и коммуникации
кафедры английского языка для межкультурной коммуникации
Ереванского государственного университета
Эл. адрес: suzy.grigoryan@ysu.am

РЕАЛИЗАЦИЯ ЛИНГВИСТИЧЕСКИХ СРЕДСТВ РЕЧЕВОГО ВОЗДЕЙСТВИЯ В БИЗНЕС-ИНТЕРВЬЮ

Цель данной статьи — исследование лингвистических средств вербального воздействия в англоязычных бизнес-интервью. В результате анализа речевых актов становится очевидным, что функция передачи информации в речи бизнес-интервью обязательно сочетается с функциями убеждения, аргументации, рекламы или саморекламы, которые реализуются посредством словесного воздействия. В данной работе выявлено, что убеждение является одним из наиболее часто встречающихся средств воздействия в речи англоязычных бизнес-интервью. Причина этого в том, что основной движущей силой на рынке труда является убеждение, которое считается уникальным способом воздействия на подсознание людей, их убеждения и подталкивания к желаемому посткоммуникативному действию.

Ключевые слова: бизнес-интервью, средства вербального воздействия, убеждения, аргументации.

Syuzanna Grigoryan
Assistant Professor, The English Chair of Cross-Cultural Communication,
Faculty of European Languages and Communication, Yerevan State University
Email: suzy.grigoryan@ysu.am

IMPLEMENTATION OF LINGUISTIC MEANS OF VERBAL INFLUENCE IN BUSINESS INTERVIEWS

The aim of this article is to explore linguistic means of verbal influence in English-language business interviews. The analysis of speech acts reveals that the function of information delivery in business interview discourse is invariably combined with the functions of persuasion, argumentation, advertising, or self-promotion, which are realized through verbal influence. This study has identified that persuasion is one of the most frequently encountered means of influence in the speech of English-language business interviews. The reason for this is that persuasion is a primary driving force in the labour market, considered a unique way of influencing people's subconscious, their beliefs, and prompting them to take the desired post-communicative action.

Key words: business interview, means of verbal influence, persuasion, argumentation.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. հոկտեմբերի 10-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. հոկտեմբերի 14-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

Մարիամ Հակոբյան
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ,
Էլ. հասցե՝ mar.hakopyan@mail.ru

DOI: 10.53614/18294952–2024.2–215

ԿԱՆԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ԿՆՈՋ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԿԱԿԱՆ ՎԵՊԵՐՈՒՄ

Սույն հոդվածում վերլուծվում են **«նոր կնոջ»** հայեցակարգի կողմնորոշիչներն ամերիկյան գեղարվեստական արձակում, ներկայացվում են **կանացիության** ընկալումների առանձնահատկությունները ամերիկացի գրող Ջեք Լոնդոնի նեոռոմանտիկական վեպերում:

Ժամանակակից գրականագիտությունն այսօր թեև կարևորում է Ջ. Լոնդոնի արձակում մարդակենտրոն հայեցակերպը, սակայն բավականաչափ չի անդրադառնում կանանց կերպարներին: Ուստի, մեր հետազոտությունը նոր լույս է սփռել հեղինակի կողմից աշխարհայացքային և գեղագիտական արտահայտչամիջոցների, գեղարվեստական առանձնահատկությունների և հնարների հասկացական ընկալումներին՝ *թեմայի ընտրության* հարցում առաջնությունը տալով գրականության **նոր հերոսուհուն**: Հետևաբար, հոդվածի **նորույթը** պայմանավորված է ժամանակակից կնոջ հայեցակարգի մանրամասն քննությամբ, ինչպես նաև՝ նեոռոմանտիկ գրականության դիտանկյունից նոր կնոջ հայեցակարգի հիմնարար դրույթները սահմանելու առաջին փորձով:

Մեր նախորդ ուսումնասիրությունների արդյունքում Ջ. Լոնդոնի արձակն արդեն իսկ տեղադրվել է ամերիկյան նեոռոմանտիզմի համատեքստում, ինչը հնարավորություն է ընձեռել սույն հետազոտության **խնդրո առարկա** դարձնել մինչ այժմ չուսումնասիրված **նեոռոմանտիկ հերոսուհու հայեցակարգային դրույթները**: Արդ, հոդվածի **նպատակներն են.**

- քննել Լոնդոնի կերտած կնոջ կերպարի բովանդակային բնույթը, հիմնավորել, թե որքանով են արդարացված կին կերպարների այն համարձակ քայլերը, որոնց աստիճանական աճը՝ գրականության «փոքր մարդուց» մինչև բացառիկ հերոսուհու, երբեմն ուղեկցվում են քննադատական որոշ աղբյուրների կողմից կոչվող «տղամարդուն բնորոշ» գործոններով,
- ավելի խորը մեկնաբանություն տալու համար գրականության նոր կնոջ հայեցակարգային դրույթները որոշարկել երկու դիտանկյունից. առաջինը՝ *ավանդական-ժամանակակից համեմատական հարացույցում*, երկրորդը՝ բացառիկ հերոսի, որոշ դեպքերում՝ գերմարդու, *նեոռոմանտիկական մեկնաբանության համատեքստում, որոնցով էլ* պայմանավորված է **գիտական հետազոտության *արդյունքների արժեքը*:**

Հոդվածում ներկայացված նյութերի հետագա օգտագործման հնարավորությունը XIX–XX դարերի ամերիկյան գրականության դասընթացներում, ինչպես նաև՝ Ձեք Լոնդոնի ստեղծագործությունն ուսումնասիրելիս, հիմնավորում է հոդվածի *գիտագործնական նշանակությունը:*

Հիմնաբառեր. կանացիություն, նոր կնոջ հայեցակարգ, նեոռոմանտիզմ, բացառիկ հերոս, ազատություն:

Ներածություն

Լոնդոնի 50 վեպերի և ավելի քան երկու հարյուր պատմվածքների հերոսուհիները կրում են ամերիկուհու սոցիալական, մշակութային, կրոնական, արժեհամակարգային առանձնահատկություններ, որոնք թեև ունեն նույն դիմանկարը, բայցևայնպես, երբեմն իրարամերժ են ու հակասական: Նրանցից շատերը, թվում է, թե շարունակում են կրել ռոմանտիկի կերպարը, սակայն ռեալիստական միտումները Լոնդոնի արձակում ավելի իրատեսական բնույթ են կրում: Այդուհանդերձ, նշել, թե Լոնդոնի արձակը ռեալիստական է և սահմանափակվել, ոչ այլ ինչ է, քան մակերեսորեն ընկալել հանճարեղ գրողի երկերը: Արդ, մեր ուսումնասիրությունը վեր է հանում մինչ օրս գրեթե չուսումնասիրված այն նեոռոմանտիկական հնարները հեղինակի վեպերում, որոնք ընդգծում են ռոմանտիզմ – նեոռոմանտիզմ հասկացությունների զանազանման անհրաժեշտությանը միտվող էական տարբերությունները:

Լոնդոնի արձակում կանանց կերպարներից շատերի բնութագիրն հիշեցնում է տղամարդու, ինչը բազմաթիվ քննադատությունների ալիք է բարձրացրել, ընդհուպ այն ենթադրությունը, թե Լոնդոնը խառնել է կին-տղամարդ դերերն ու արժեքները: Որքանո՞վ է հիմնավոր նման քննադատությունը: Արդյո՞ք կնոջ՝ տղամարդու գործունեությամբ զբաղվելը նրան խանգարում է լինել «կին», թե՞ դա պարզապես համարձակ քայլ էր դեպի ազատագրություն անցյալի կապանքներից:

Տեսական հիմքեր

Հոդվածում կիրառվել են Չ. Դարվինի և Հ. Սփենսերի սոցիալական տեսությունները, Ֆ. Նիցշեի «գերմարդու» հայեցակարգը, ինչպես նաև գրականության տեսաբանների և գրականագետների (Լուկով Բ., Բուրստին Դ., Սփիլլեր Ռ., Ջվերև Ա., Ֆրանս Ան., Եղիազարյան Գ., Խաչատրյան Ն. և այլք) ներկայացրած հենքային դրույթները: Ուսումնասիրության մեջ կիրառվել են վերլուծական և համեմատական մեթոդները:

Արդյունքներ

Հոդվածի հիմնական արդյունքները ներառում են կնոջ կերպարի վերլուծության այն դրույթները, որոնք քննության են առնվել ավանդական (միջնադարյան, էլիզաբեթյան, վիկտորիանական շրջանի կանայք) – ժամանակակից համեմատական հարացույցում: Համեմատությունը թույլ է տալիս «նոր կնոջ» հայեցակարգի հիմքում դիտարկել ուժեղ նեոռոմանտիկ հերոսուհու, որը մշտապես գտնվում է այնպիսի պայմաններում, որ ստիպված է քաջաբար անցնել մահավտանգ փորձությունների միջով, ցուցաբերել ամուր կամք, լինել ուժեղ ֆիզիկապես և մտոք՝ նոր լույս սփռելով «կանացիություն» հասկացույթի բովանդակությանը: Հերոսուհու աստիճանական զարգացման հիմքում ընկած է «փոքր մարդուց» անցումը բացառիկ հերոսի, երբ անելանելի հանգամանքներում արթնանում են կերպարի դեռևս չդրսևորված կողմերը:

Քննարկում

Ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք փաստել, որ, թեև հիմնական կին-տղամարդ դերերի տարանջատումն արտաքուստ տեսանելի չէ, բայցևայնպես, Լոնդոնը սահմանազատում է սեռերը՝ տալով ավելի բովանդակալից զանազանում գաղափարական և արժեքային առումով, քան զուտ սիրելի զբաղմունքը, հետաքրքրությունների շրջանակը, արկածասիրությունը, հագուստի ընտրությունը, զենքին տիրապետելը, ֆիզիկական ուժը և նմանատիպ այլ թվացյալ կողմնորոշիչներն են, որոնք իրականում պարզապես չեն կարող որոշարկել և սահմանազատել կնոջը տղամարդուց: Սա արդեն իսկ քայլ էր ընդդեմ սահմանափակ կարծրատիպային մտածողության, որը հաճախ դառնում էր կնոջ երջանկության ամենամեծ արգելքը: Որքանով են գրաքննադատական ենթադրությունները բխում կարծրատիպային մտածողությունից, դժվար է ասել: Սակայն հոդվածում գալիս ենք այն համոզման, որ «նոր կնոջ» գործունեությունը չի խանգարում նրան շարունակել լինել գրավիչ ու կանացի, շարունակել մնալ կին՝ իր բոլոր բարոյական և արժեքաբանական դրսևորումներով:

Գրականության պատմության մեջ կանանց կերպարների բնութագրերն ու զբաղեցրած դերերը ներառում են հետևյալ 4 ժամանակաշրջանները. **միջին դարերի կանայք** (12–15-րդ դդ)[1], **Էլիզաբեթյան դարաշրջանի կանայք**

1 **Միջին դարերի կանանց** ինքնությունը սահմանափակվում էր հասարակության ցածր դասին պատկանելով, նրանք տղամարդու սեփականությունն էին, ազատ չէին կողակցի ընտրության հարցում, խորհրդանշում էին մաքրությունը, նրանց առաքելությունը մայրությունն էր, տարբերակվում էր «կույս կին» կամ «հրեշտակ կին», և «գայթակղիչ» կամ «անբարո» կին (Ջ. Չոսեր) (տես՝ Lucas, 2023, էջ 8):

(16-րդ դարի վերջ, 17-րդ դար)[2] , **Վիկտորիանական դարաշրջանի կանայք** (19-րդ դար)[3] և **ժամանակակից գրականության կանայք** (20-րդ դար)[4]:

Հարկ է փաստել, որ բոլոր ժամանակաշրջաններում կանացի կարծրատիպերը նույնքան անփոփոխ էին, որքան նրանց վերագրված սահմանափակումներն իրական կյանքում: Մերի Էնն Ֆերգյուսոնն իր «Կանանց կերպարները գեղարվեստական գրականության մեջ» աշխատության մեջ կանացի կարծրատիպերում ընդգրկում է *մայր, կին, սիրուհի/գայթակղիչ կին, սիրո առարկա, պառված օրիորդ տեսակները* (տե՛ս Եղիազարյան, 2020, 111-112): Իսկ Ուորդն իր «Ձեք Լոնդոնի կանայք. Քաղաքակրթությունն ընդդեմ սահմանի» (Ուորդ, 1976, 94-102) աշխատությունում կանանց կերպարներին բաժանում է երեք խմբի: Առաջինը 19-րդ դարավերջի ռոմանտիկ ոճին պատկանող ***առաքինի հերոսուհիներն են:*** Երկրորդը, որպես դարասկզբի հերոսուհիներ, Լոնդոնը պատկերել է կնոջ ***կին-ընկեր*** տեսակը, որը հավասարապես իր տղամարդու հետ անցնում է արկածային փորձությունների միջով: Ընդհանուր առմամբ, Լոնդոնի հերոսուհիների մեծ մասը հենց այս խմբին է պատկանում: Երրորդ խմբին պատկանում են հնդկացի կանանց կերպարները՝ «պարզունակ կանայք» ՝ իրենց հատուկ միապաղաղ կենսակերպով: Նրանց իրավունքները փոքր-ինչ ոտնահարված են, ունեն բավականին ցածր սոցիալ-հասարակական դիրք: Նշված տեսակները կարող ենք համալրել մեկ այլ տեսակով՝ «իշխող կին». նա ամուսնու արարքների, թե՛ հաջողությունների և թե՛ ձախողումների բանալին է (Եղիազարյան, 2020:113): **«Մարտին Իդեն»** (1909) վեպում **Ռութի** կերպարը կարող է դիտվել որպես իշխող կնոջ տեսակ այն առումով, որ նրա դերն ու ազդեցությունն Իդենի կյանքում ոչ այլ ինչ էր, քան սպառնալիք: Այս կինը դարձավ Մարտին Իդենի ներշնչանքը՝ հաջողությունների բանալին, և ի վերջո ոչնչացրեց նրան:

«Լուսնի հովիտ» (1913) վեպում **Սաքսոնի** կերպարը սկզբում հիշեցնում է վերը նշված առաքինի կնոջը, «կին» տեսակին, մինչդեռ վեպի գործողությունների զարգացմանը զուգահեռ՝ հերոսուհու մոտ սկսում են արտահայտվել *կին-ընկեր* տեսակին բնորոշ հատկություններ: Վեպում նրա կերպարը հակադրվում է Մերիի կերպարին, որը հիշեցնում է «գայթակղիչ-կին» կամ «անբարո-կին» տեսակը:

Սաքսոնի կյանքը, որը սկսել է որբանոցում, անց կացել հանքավայրերում ու գործարաններում, ընթերցողին առաջարկում է այն ուժեղ և անկախ կնոջ ապշեցուցիչ տեսլականը, որը սփոփանք էր փնտրում՝ կառչելով հնագույն հիշողություններից, հին, սիրելի իրերից, թերթերի հոդվածներից: Նրա անձ-

2 **Էլիզաբեթյան դարաշրջանը** հայտնի է նաև որպես «Շեքսպիրյան շրջան», նշանակալի է կնոջ գեղեցկության գովերգումով Շեքսպիրի սոնետներում, ինչպես նաև՝ կանանց՝ թատրոնում հանդես գալու փորձով՝ որպես կանանց դերը կարևորելու առաջատար քայլ: Տե՛ս՝ նույն տեղում:

3 **Վիկտորիանական շրջանը** հայտնի է հսկայական թվով վեպերով, որոնցում պատկերվում են հասարակության կողմից ճնշված տիպական ավանդական վիկտորիանական կնոջ տառապանքները, մարմնավորվում է կնոջ առաքինի կերպարը կրոնական, սոցիալական, հոգևոր- արժեքաբանական ենթատեքստերում (Ռ. Քիփլինգ, Զ. Դիքենս, Շ.Բրոնտե, Է.Բրոնտե): Տե՛ս՝ նույն տեղում, էջ 9:

4 **Ժամանակակից գրականության շրջանը** նշանավորվում է նոր կնոջ կերպարի ներկայացման ուսումնասիրությամբ՝ կնոջ դերի կարևորության ընգծմամբ՝ կնոջ ինքնավարության, սոցիալ-տնտեսական փոփոխությունների, սեռերի իրավահավասարության համատեքստում, այս առումով մեծ դեր ունի ֆեմինիստական շարժումը (Վ. Վուլֆ): Տե՛ս՝ նույն տեղում:

նական երջանկությունն ամփոփվում է ընտանիք կազմելու և երեխա ունենալու առաքելությամբ:

Աստված և կրոնը այն թեմաներն են, որոնց շուրջ Սաքսոնն անկեղծորեն քննարկում է վեպի սկզբում: Այս կնոջ ձգտումները հեռու են արկածախնդրությունից, ինչը, իհարկե, բխում է այն միջավայրից, որտեղ հերոսուհին ապրում է: Սոցիալական հեղափոխության ժամանակ բախվելով ծանր դժվարությունների՝ Սաքսոնը սկսում է կորցնել հավատն առ Աստված:

Հերոսուհու եզակիությունն արտահայտվում է տվյալ միջավայրում գոյատևելով, պայքարով և հաղթանակ տանելով: Նրա հաղթանակն ամփոփվում է իր ռոմանտիկական երազանքի իրականացմամբ՝ ընտանիք, խաղաղ անկյուն, երեխա: Պատահական չէ նրա անվան ընտրությունը՝ "Saxon", որը շեշտադրում է անգլո-սաքսոնական ռասայի պատկանելությունը՝ ըստ այդմ խորհրդանշելով անկոտրուն, խիզախ ոգի:

Ըստ Էնդրյու Սինքլերի ուսումնասիրության (Sinclair, 1978, էջ 180), **Սաքսոն Ռոբերթսը** նման էր Չարմիան Քիթրեջին՝ Ջեք Լոնդոնի երկրորդ կնոջը, նույնիսկ եթե նա նրա չհղկված տարբերակն էր: Նա բնութագրվում է որպես կենսունակ, թարմ, առողջ, խելացի, համառ, միևնույն ժամանակ՝ սենտիմենտալ: Սաքսոնի կերպարն այս առումով շատ նման է **«Բոցավառ արշալույսը»** (1910) վեպի գլխավոր հերոսուհու՝ **Դիդ Մեյսոնի** կերպարին, որը ևս իր երջանկությունը գտնում է քաղաքակիրթ աշխարհի կապանքներից հեռու՝ սկսելով ամուսնու հետ նոր կյանք բնության գրկում: **Դիդ Մեյսոնը** հասարակական – սոցիալական տեսանկյունից ևս անկախ է: Նրա ուժն ու գրավչությունն ամփոփված է մայրանալու և սերունդ տալու առաքելությամբ: Նա ամուսնուն ծառայում է ոչ միայն որպես կին, այլև՝ ուժեղ *կողակից, ընկեր. «...Հարնիշին գրավում էր հենց նրա պարզությունը, անմիջականությունը, լավ ընկեր լինելու կարողությունը...Խաղալիք, ամուսին, սերունդ շարունակող... Հարնիշը միայն այս հատկություններով էր պատկերացնում կնոջը...»* (Լոնդոն, 1966, էջ 723):

Դիդ Մեյսոնի շնորհիվ ցոփ ու շվայտ կյանք վարող Էլամ Հարնիշն հրաժարվում է միլիոնատիրոջ կյանքից, դառնում հումանիստ և բնակություն հաստատում նույն Լուսնի հովտում: Դիդը, ինչպես Լոնդոնի մյուս նեոռոմանտիկ հերոսները, աչքի է ընկնում իր դիմացկունությամբ. *«Դիդը գերազանց ձիավարուհի է,ոչ միայն հմուտ է, այլև՝ դիմացկուն: Օրեր էին լինում , երբ նրանք վաթսուն, յոթանասուն, մինչև անգամ ութսուն մղոն ճանապարհ էին կտրում, և ոչ մի անգամ Դիդը չասաց, թե հոգնած է...»* (Լոնդոն, 1966, էջ 720): Այս առումով նա զգալիորեն նման է **«Ձյունների դուստրը»** (1902) վեպի հերոսուհուն՝ Ֆրոնա Ուելսին:

Ֆրոնա Ուելսը, Մոդ Բրուստերը («Ծովագայլը»**), Էվիս Էվերհարդը** («Երկաթե կրունկ»), **Ջեյն Լեքլենդը** («Արկած») դիտվում են որպես ազատագրված կանայք: Այս կանայք հրաժարվում են *«ամուսնու կին»* (Եղիազարյան, 2020, էջ 112) լինելու պարտավորվածությունից, այլ բառերով՝ հրաժարվում են ենթարկվել, ստորադասվել, ամուսնուն գոհացնել:

«Ձյունների դուստրը» վեպի հերոսուհի **Ֆրոնա Ուելսն** իդեալական կին

է, մարդասեր, ճշմարտասեր, ողջախոհ ու խելացի, աչքի է ընկնում քաջությամբ ու տոկունությամբ: Ֆրոնան բարձր է գնահատում բնության կողմից մարդուն շնորհված ուժն ու դիմացկունությունը. Նա *«ծնվել էր ուժեղ, և հաստատապես վճռել էր իր կյանքը կապել միայն ուժեղ տղամարդու հետ»* (Լոնդոն,1965, էջ 81): Ըստ Ֆրոնայի՝ *«...միշտ էլ թույլ ու քնքշացած տղամարդիկ անհետացել են կյանքի ասպարեզից: Միայն ուժեղներն են եղել հաղթողներ»* (նույն տեղում):

Համաձայն դարվինյան դոկտրինայի բնական և սեռական ընտրության՝ նա նախընտրում է ուժեղ տղամարդու, բայց *նաև « ...կամենում էր, որ մարմինն ու ոգին ներդաշնակ լինեն իրար հետ...»*, քանի որ *« ...ոգին ստեղծված է ոչ միայն հավերժական երազանքների համար»* (Լոնդոն, 1965, էջ 82):

Լինելով իր ժամանակի «բնության զավակը»՝ նա ծաղրում է սեռերի և առհասարակ մարդկանց փոխադարձ հարաբերություններում «քաղաքակրթության» կեղծ պայմանականություններն ու հասարակական կարծիքը, և միևնույն ժամանակ զերծ է մնում արտամուսնական կապերից: Ֆրոնայով հրապուրված Վենս Քորլիսը, որը մանկուց ճանաչում էր աղջկան , նկատում է *«զարթնող բանականության ու գիտելիքների ծարավի»* (Լոնդոն, 1965, էջ 71) հետևանքով տարիների ընթացքում կրած այն փոփոխությունները, որոնք այլևս չէին համապատասխանում *«նախնիների պայմանականություններով կաշկանդված»* (Լոնդոն, 1965, էջ 71) հասարակության կարծիքին:

Այս կերպարը մեծ քննադատության ալիք է բարձրացրել հատկապես վիկտորիանական մտածելակերպ ունեցող քննադատների շրջանում: Բազմաթիվ ընթերցողներ ֆիզիկական ուժը դիտարկում էին ոչ թե որպես կանացի, այլ բացառապես արական հատկանիշ: Բայց, ինչպես գրականագետ Ֆյուրերն է պնդում (Furer, 1994, էջ 188)՝ Լոնդոնի ստեղծագործություններում սեռերի կենսաբանական տարանջատումը չի տարբերակում ուժի այս կամ այն սեռին պատկանելությունը, քանզի հեղինակի առաջադրած «նոր կնոջ կերպարում» ներառված են գեղեցկություն, հմայք, սպորտային կազմվածք, տղամարդկային հետաքրքրություններ և հակումներ, գրականության մեջ տղամարդուն բնորոշ խելացիություն ու սրամտություն: Այս կանայք տղամարդկանց համար անշահախնդիր ընկերներ են, որոնց պակասում է իրական ֆիզիկական մտերմությունն ու սերը: Նրանց ֆիզիկական տոկությունն անհրաժեշտ է ապագայում մայրանալու, ինչպես նաև՝ Քլոնդայկում ծանր փորձությունների դեպքում տղամարդուն օգնելու համար: Լոնդոնը ժխտում է Ֆրոնայի՝ արտամուսնական հարաբերությունների մեջ մտնելը՝ նրա կանացի երջանկությունը սահմանափակելով արկածով, որը կարծես թե համահավասար է կամ փոխարինում է կին-տղամարդ ֆիզիկական մտերմությանը: Մինչդեռ կարող ենք նաև նկատել, որ նրա ֆիզիկական գրավչությունը տարբեր հերոսների առնչությամբ կիզակետային է և վեպում ունի սեռական ակնարկների որոշակի ենթատեքստ: Փաստացի, Լոնդոնին հաջողվում է միաձուլել տղամարդկային կեցվածքն ու կանացի գրավչությունը՝ ապահովելով կնոջ հավասար մասնակցությունն այն վտանգավոր ճանապարհորդություններին, որոնք բացառապես տղամարդկանց համար էին: Ինչպես

գրաքննադատ Ռիչարդ Օ'Քոննորը (O'Connor, 1965, էջ 147) նշել է իր ուսումնասիրության մեջ՝ Լոնդոնին հաջողվել է ստեղծել «ամերիկուհու նոր հայեցակարգ» Ֆրոնա Ուելսի կերպարի միջոցով. կին, որը հավասար էր տղամարդ կերպարներին որպես ընկեր: Ըստ Օ'Քոննորի (O'Connor, 1965, էջ 148)՝ Լոնդոնի **«բնական կինը»** փոխարինեց հին «վիկտորիանական տիկնոջը» և բացահայտեց նրա «երազը կատարյալ կնոջ, զուգընկերոջ մասին, որն արժանի է ժամանակակից տղամարդուն»: *«Ֆրոնան իրենից ներկայացնում էր մի նոր, մինչ այդ ... անհայտ կանացի մի տիպ...*(Լոնդոն, 1965, էջ 70):

Ֆրոնա Ուելսի խիզախությունն ու արկածասիրությունը բնորոշ է նաև **«Ծովագայլը»** (1904) վեպի հերոսուհի **Մոդ Բրուստերին,** որը տղամարդու հագուստով ավելի գրավիչ տեսք ունի: Մոդ Բրուստերը ևս ազատամիտ է, անկախ ՝ ինչպես Ֆրոնան: Այս երկու հերոսուհիները մարդասիրական արժեքներով մոտ են Սաքսոն Ռոբերտսին և Դիդ Մեյսոնին, սակայն, եթե վերջիններիս կյանքի գերնպատակն ամփոփվում էր խաղաղ ընտանեկան անկյուն և երեխաներ ունենալու մեջ, ապա Մոդ Բրուստերն ու Ֆրոնան իրենց երջանիկ են զգում արկածներ որոնելով, թեև ենթագիտակցաբար գտնվում են միայնության և կողակից գտնելու անվերջանալի որոնումների մեջ: Այլ է **Էվիս Էվերհարդի** կերպարը **«Երկաթե կրունկ»** վեպում: Ամերիկացի գրողի կին կերպարներին նվիրված ուսումնասիրությունների մեջ Ս. Ուորդն իր (Ward, 1983, էջ 169–170, 173–174) "Ideology for the Masses: Jack London's The Iron Heel" հոդվածում լուսաբանում է, որ Էվիսն առաջնահերթությունը բոլոր հարցերում տալիս է ամուսնուն, սակայն կախում չունի նրանից. ինքնաբավ է, միևնույն ժամանակ՝ ամուսնու ամենամոտ ընկերը, ի տարբերություն Սաքսոն Ռոբերտսի և Դիդ Մեյսոնի՝ ավել գիտակից և հավասարակշռված իր դիրքորոշումների մեջ:

Համարձակ հերոսուհի է նաև **Ջեյն Լեքլենդը «Արկած»** (1925) վեպում, որն աչքի է ընկնում խիզախությամբ, հաստատուն բնավորությամբ և մտածելակերպով՝ հակադարձելով տեղի բնակչության կարծրատիպային մտածողությանը, այն է՝ կնոջ կյանքի, գործողությունների սահմանափակություն, տղամարդ–կին գործունեությունների խիստ տարանջատում:

Լոնդոնի ստեղծագործություններում կնոջ և տղամարդու ավանդական կարծրատիպային հատկանիշների հակասությունը գրավել է ամերիկացի պրոֆեսոր Ս.Դերիքի ուշադրությունը: Լոնդոնի արձակում Դերիքն արձանագրել է գենդերային խախտում, կնոջ և տղամարդու կերպարների ավանդական հատկանիշների դեմ «հարձակում», որը վեպի բուն պատումային (նարատիվ) սկզբունքներից ելնելով անձեռնմխելի է մնացել: Դերիքը կնոջ կերպարի հակասական, նոր նկարագիրը համարում է դարասկզբի ամերիկուհու կերպարի արձագանք: Այս երևույթն առավելապես դրսևորվում է հերոսների արտաքնի նկարագրության, հագուստի ընտրության ենթատեքստում, թեև վստահաբար կարելի է ասել, որ Լոնդոնը, կնոջ կերպարի մեջ ներառելով նոր հատկանիշներ, *կարողանում է պահպանել կնոջ և տղամարդու դերերի ավանդական տարանջատումը* (Derrick, 1996, էջ 111–113):

Դերիքը նշում է, որ «նոր կնոջ» կերպարը կրում է Լոնդոնի միաժամանակ

պահպանողական և ժամանակակից հայացքները (1996, էջ 113–119), քանի որ, թվում է, թե հեղինակը չի կարողացել ամբողջապես հիմնվել նշվածներից որևէ դիրքորոշման վրա՝ բացառելով մյուսը: Հարկ է նկատել, որ վեպերում *արկածասեր կանայք ավելի քիչ սպառնալիք են ներկայացնում արական սեռին, քան պահպանողականները:*

Այլ է **«Մեծ տան փոքրիկ տիրուհին»** (1915) վեպի հերոսուհի **Պաոլայի** կերպարը: Պաոլան Լոնդոնի այն նեոռոմանտիկ կերպարներից է, որը, որպես գերմարդ, կրում է անհատապաշտի իր բաժինը՝ միայնությունը, ինչը հատուկ է ոչ թե կին, այլ տղամարդ կերպարներին՝ Մարտին Իդեն, Լարսեն, Դեյվիդ Շելդոն,Դիք Ֆորեսթ և այլն: Ըստ այդմ՝ Պաոլային դժվար է դասել վերոնշյալ կանանց տեսակներից որևէ մեկին:

Հերոսուհու անունն իտալական ծագում ունի. նշանակում է «փոքր», «խոնարհ» (Names.org): Անշուշտ, լինելով հսկայական տան «փոքրիկ տիրուհին»՝ նա խոնարհ է, առաքինի, բազմաթիվ տղամարդկանց համար՝ անհասանելի երազանք. *«Պաոլան կարող է լինել ուրախ և անկաշկանդ, նուրբ-կանացի և գողայական կրակոտությամբ, պատրաստ ամեն տեսակ չարաճճիությունների, բայց հպարտությունը միշտ նրա հետ էր»* (Լոնդոն, 1970, 487): Նա կատարյալ էակ է՝ «արքայադստեր ոչ պակաս բնական անհասանելիությամբ» (Լոնդոն, 1970, էջ 493), շքեղ հագուստով, հիանալի դաշնակահարուհի է, նկարչուհի, լողորդ, ձիավարուհի, ինչպես նաև «նման է թանկարժեք քարի», որն «ուժի տպավորություն էր թողնում...ամենակատարյալ ու զուսպ ձևերով» (Լոնդոն, 1970, էջ 487): Նա, ինչպես Ֆրոնան, նախընտրում է ուժեղագույնին. *«կյանքը խաղ է, այդ խաղում հաղթում են ամենաճարպիկները, ամենաուժեղները»* (Լոնդոն, 1970, էջ 688):

Պաոլան ապրում է շքեղ կյանքով, բայց որքան ավելի է մեծանում հյուրընկալվող մարդկանց շրջանակը ամենօրյա խրախճանքներին, այնքան ավելի է խորանում Պաոլայի և իր ամուսնու միջև գոյություն ունեցող հոգեբանական և ֆիզիկական հեռավորությունը: Ամուսինները հսկայական տան բոլոր անկյուններում անընդհատ փնտրում են միմյանց. նրանք, լինելով նույն տանիքի տակ, ապրում են իրարից հեռու՝ ամեն երեկո բարի գիշեր մաղթելով և ամեն առավոտ բարի լույսով իրար դիմավորելով: Ի վերջո Պաոլան դառնում է «սիրո եռանկյունու» զոհը՝ երկար ժամանակ չկարողանալով ընտրություն կատարել ամուսնու՝ Դիք Ֆորեսթի և նրա ընկերոջ՝ Իվեն Գրեհեմի միջև, որին սիրահարվել էր ամուսնական տասներկու երջանիկ տարիներ ապրելուց հետո:

Հերոսուհու անաղարտ կերպարը բնազդածին քայլերի հետևանքով փլուզվում է՝ վերածվելով «գիշատիչ կնոջ» (Լոնդոն, 1970, էջ 675): Եվ Ֆորեսթը սարսափում է այն մտքից, թե իրենից բացի ինչ-որ մեկը կբացահայտի, որ *«օրինակելի, անարատ Պաոլան Եվայի դուստրերից մեկն է»* (Լոնդոն, 1970, էջ 672):

Պաոլան, որը նկարագրվում է *«անկեղծ ու ազնիվ, ուղղամիտ և առանց նախապաշարումների, և ոչ մի դեպքում կամազուրկ խաղալիք»* (Լոնդոն, 1970, էջ 487), Լոնդոնի եզակի հերոսուհիներից է, որ դիմում է դավաճանության,

թեև անմիջապես զղջում է: Դավաճանելով՝ նա քանդում է ամուսնու ստեղծած այն իդեալական աշխարհը, որի առաջնորդն ինքն էր, բայց որի գագաթին կանգնած էր կինը՝ ամփոփելով Դիք Ֆորեսթի «հարստությունների» շարքը:

Հիմնվելով Սփենսերի և Դարվինի այն հայեցակարգի վրա, որ գոյատևում է նա, ով ամենաուժեղն է և կարողանում է դիմակայել փոփոխություններին, պետք է, անկասկած, պարտվի թույլ էակը: Հաշվի առնելով Պաոլայի իմպուլսիվությունը՝ անմտածված քայլերի դիմելը, պահի ազդեցության տակ գործելը, ինչպես նաև՝ ամենամեծ թուլությունը՝ անքնությունը, նրա մահը կարող է դիտարկվել որպես կոնֆլիկտի տրամաբանական ավարտ, քանի որ, ըստ Նիցշեի՝ կինը էվոլյուցիոն շղթայի օժանդակ, անկատար օղակն է, մինչդեռ տղամարդը գլխավորում է շղթան (Ницше, 1990, էջ 52):

Տպավորիչ են Պաոլայի թաքնված այգու զարդարանքները՝ երեխաների արհեստական դեմքերով, որոնք խորհրդանշում են արհեստական շքեղության սին ու դատարկ լինելը, «իդեալական» զույգի՝ երեխաներ չունենալու ամենամեծ բացթողումն ու դրա հետևանքով կրած ողբերգությունը: Ահա թե ինչու Պաոլան, բնազդաբար ընտրում է Գրեհեմին, քանի որ նրա հանդեպ տածում է այն կիրքն ու ջերմությունը, որը գուցեև դառնար ապագա սերնդի բանալին:

Այսպիսով, Պաոլան սկզբում կարող է դասվել առաքինի կնոջ տեսակին, «կին» տեսակին իր ողջ կանացիությամբ և հմայքով, սակայն կին-ընկեր նա այդպես էլ չկարողացավ լինել ամուսնու համար: Գայթակղիչ/սիրուհի կնոջ տեսակը ևս նրան չի վերաբերում, քանի որ նա, սխալվելով, չի կորցնում իր հպարտությունն ու արժանապատվությունը:

Եզրակացություն

Այսպիսով, սույն հետազոտության արդյունքում վեր հանվեցին այն բնութագրիչները, որոնք նոր լույս են սփռում ամերիկացի գրողի ստեղծագործության վրա՝ կարևորելով այն գործոնը, համաձայն որի՝ Լոնդոնի վեպերում և պատմվածքներում առաջարկվում է «նոր կնոջ տեսակ», «նոր կնոջ հայեցակարգ», «կանացիության» նոր դրսևորում «Նոր կինը» քայլում է ժամանակին համընթաց, որպեսզի արժանի լինի «ժամանակակից տղամարդուն», այլ բառերով՝ լինի ոչ թե տանը ամուսնուն սպասող առաքինի անձ՝ մոռանալով սեփական ես-ի ձգտումներն ու պահանջմունքները, այլ՝ համահավասար զուգընկեր կյանքի բոլոր պահերին: Հարկ է կարևորել այն, որ արժեքային և հասկացական տարբեր ընկալումներով և դրանց գեղարվեստական իրացումներով արտահայտված «նոր կնոջ» հետաքրքրությունների շրջանակը, մտածողությունը, կրթությունը, աշխատանքային գործունեությունը, անգամ ֆիզիկական ուժն ու հագուստի ընտրությունը չունի սահմանափակում, բայցևայնպես, նշված բոլոր առումներով տղամարդուն հավասարվելը կնոջը չի տալիս հավելյալ դեր կամ իշխանություն. նա շարունակում է մնալ կին՝ իր ողջ կանացիությամբ ու հմայքով, և շարունակում է հավատարիմ մնալ այն արժեհամակարգին, որը որոշարկում է կին-տղամարդ դերերը:

Օգտագործված գրականության ցանկ

Եղիազարյան, Գ. (2020). *«Անգլիացի և ամերիկացի կին գրողների երկերի արժեբանական հարացույցը»:* Մենագրություն: Երևան: Հեղինակային հրատարակություն:

Լոնդոն, Ջ. (1967). «Արկած»//Երկերի ժողովածու, հատոր 7, թարգմանությունը՝ Հ. Զարյան, «Հայաստան» հրատարակչություն: Երևան:

Լոնդոն, Ջ. (1966). *«Բոցավառ արշալույս»*://Երկերի ժողովածու, հատոր 6, թարգմանությունը՝ Է. Ավագյան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան:

Լոնդոն, Ջ. (1965). «Լուսնի հովիտ»://Երկերի ժողովածու, հատոր 11, թարգմանությունը՝ Ա. Բուդաղյանի, «Հայաստան» հրատ., Երևան:

Լոնդոն, Ջ. (1965). «Ծովագայլը»: //Երկերի ժողովածու, հատոր 3, թարգմանությունը՝ Հ. Գասպարյանի, «Հայաստան» հրատ., Երևան:

Լոնդոն, Ջ. (1965). «Ձյունների դուստրը»://Երկերի ժողովածու, հատոր 2, թարգմանությունը՝ Կ. Սիմոնյանի: «Հայաստան» հրատ., Երևան:

Լոնդոն, Ջ. (1970). «Մեծ տան փոքրիկ տիրուհին»://Երկերի ժողովածու, հատոր 10, թարգմանությունը՝ Կ. Սիմոնյանի: «Հայաստան» հրատ., Երևան:

Луков, В.А. (2003). *История литературы.* Зарубежная литература от истоков до наших дней. М.: Академия.

Ницше, Ф. (1990). *Сочинения в 2 томах.* Том первый, Издательство Мысль, Москва.

Толмачев, В.М. (2001). Неоромантизм//Литературная энциклопедия терминов и понятий под ред. А.Н. Николюкина. М.: НПК «Интелвак».

Derrick, S. (1996). *Making a heterosexual man. Gender, sexuality and narrative in the fiction of Jack London.* In L. Cassuto and J. C. Reesman (eds.) Rereading Jack London. With an afterword by Earle Labor. Stanford, California: Stanford University Press, 110 – 129.

Furer, A. J. (1994). Jack London's new woman: a little lady with a big stick. *Studies in American fiction (SAF),* autumn 22 (2).

Lucas, J.M. (2023). *Representation of Women in Literature through Different Era.*

Names.org: https://www.names.org/n/paola/about

O'Connor, R. (1964). Jack London. A biography. London and Boston: Victor Gollancz Ltd.

Sinclair, A. (1978). *Jack: A biography of Jack London.* London: Weidenfeld & Nicolson.

Ward, S. (1983). *Ideology for the masses: Jack London's The iron heel.* In J. Tavernier Courbin (ed.) Critical essays on Jack London. Boston, Massachusetts: G. K. Hall & Co.

Ward, S. (1976). *Jack London's women: civilization vs. the frontier.* Jack London newsletter.

References

Yeghiazaryan, G. (2020). *«Angliatsi yev amerikatsi kin groghneri yerkeri arzhebanakan haratsuytsy»* [The Evaluative Paradigm of the Works of English and American Women Writers]: Menagrutyun: Yerevan: Heghinakayin hratarakutyun: (In Arm.)

London, J. (1967). *«Arkats»* [Adventure]://Yerkeri zhoghovatsu, hator 7, t'argmanut'yuny' H. Zaryan, «Hayastan» hratarakch'ut'yun: Yerevan: (In Arm.)

London, J. (1966). *«Botsavarr arshaluys»* [Blazing Dawn]://Yerkeri zhoghovatsu, hator 6, targmanutyuny E. Avagyan: «Hayastan» hratarakchutyun, Yerevan. (In Arm.)

London, J. (1965). *«Lusni hovit»* [Valley of the Moon]://Yerkeri zhoghovatsu, hator 11,

targmanutyuny A. Budaghyani, «Hayastan» hrat., Yerevan: (In Arm.)
London, J. (1965). *«Tsovagayly»* [The Sea Wolf]://Yerkeri zhoghovatsu, hator 3, targmanutyuny՝ H. Gasparyani, «Hayastan» hrat., Yerevan: (In Arm.)
London, J. (1965). *«Dzyuneri dustry»* [The Daughter of the Snows]://Yerkeri zhoghovatsu, hator 2, targmanutyuny՝ K. Simonyani: «Hayastan» hrat., Yerevan: (In Arm.)
London, J. (1970). *«Mets tan pvokrik tiruhin»* [The Little Mistress of the Big House]://Yerkeri zhoghovatsu, hator 10, targmanutyuny՝ K. Simonyani: «Hayastan» hrat., Yerevan:
Nitsshe, F. (1990). Sochineniya v 2 tomakh [Works in 2 volumes]. Tom pervyy, Izdatel'stvo Mysl', Moskva. (In Rus.)
Lukov, V.A. (2003). *Istoriya literatury* [History of Literature]. Zarubezhnaya literatura ot istokov do nashikh dney. M.: Akademiya.
Tolmachev, V.M. (2001). *Neoromantizm* [Neo–romanticism]//Literaturnaya entsiklopediya terminov i ponyatiy pod red. A.N. Nikolyukina. M.: NPK «Intelvak». (In Rus.)
Derrick, S. (1996). *Making a heterosexual man. Gender, sexuality and narrative in the fiction of Jack London.* In L. Cassuto and J. C. Reesman (eds.) Rereading Jack London. With an afterword by Earle Labor. Stanford, California: Stanford University Press, 110 – 129. (In Eng.)
Furer, A. J. (1994). Jack London's new woman: a little lady with a big stick. *Studies in American fiction (SAF),* autumn 22 (2). (In Eng.)
Lucas, J.M. (2023). *Representation of Women in Literature through Different Era.* (In Eng.)
Names.org: https://www.names.org/n/paola/about (In Eng.)
O'Connor, R. (1964). Jack London. A biography. London and Boston: Victor Gollancz Ltd. (In Eng.)
Sinclair, A. (1978). *Jack: A biography of Jack London.* London: Weidenfeld & Nicolson. (In Eng.)
Ward, S. (1983). *Ideology for the masses: Jack London's The iron heel.* In J. Tavernier Courbin (ed.) Critical essays on Jack London. Boston, Massachusetts: G. K. Hall & Co. (In Eng.)
Ward, S. (1976). *Jack London's women: civilization vs. the frontier.* Jack London newsletter. (In Eng.)

Мариам Акопян
Преподаватель государственного университета имени В. Брюсова,
соискатель Института литературы им. М. Абегяна, НАН, РА
Эл. адрес: mar.hakopyan@mail.ru

ЖЕНСТВЕННОСТЬ И КОНЦЕПЦИЯ НОВОЙ ЖЕНЩИНЫ В НЕОРОМАНТИЧЕСКИХ РОМАНАХ ДЖЕКА ЛОНДОНА

В статье анализируются направленности концепта «новая женщина» в американской художественной литературе, представлены особенности восприятия женственности в неоромантических романах американского писателя Джека Лондона.

Героини Лондона представляют новую женщину — авантюрную, ищущую

удовольствий, свободную от семейных уз, которая в то же время имеет моральные ценности и не имеет права на свободную любовь.

Во всех упомянутых аспектах равенство новой женщины с мужчиной не дает женщине дополнительной роли или власти. она остается женщиной во всей своей женственности и обаянии и остается верной ценностям, определяющим роли мужчины и женщины.

Ключевые слова: женственность, концепция новой женщины, неоромантизм, исключительный герой, свобода.

Mariam Hakobyan
Lecturer at V. Brusov State University
Ph.D. student at M. Abeghyan Instituite of Literature, NAS, RA
Email: mar.hakopyan@mail.ru

FEMININITY AND THE CONCEPT OF THE NEW WOMAN IN JACK LONDON'S NEO-ROMANTIC NOVELS

This article analyzes the orientations of the "new woman" concept in American fiction, presents the features of the perceptions of femininity in the neo-romantic novels of the American writer Jack London.

London's heroines epitomize the new woman, who is adventurous, pleasure-seeking, free from family bonds and who, at the same time, has moral values and no right to free love.

In all the mentioned aspects, the equality of a new woman with a man does not give a woman an additional role or power. She remains a woman in all her femininity and charm who is faithful to the values determining the roles of men and women.

Key words: femininity, concept of new woman, neo-romanticism, exceptional hero, freedom.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. սեպտեմբերի 15-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. սեպտեմբերի 20-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. դեկտեմբերի 26-ին:

ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК

МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА ЕВРАЗИЯ

BULLETIN

EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

2

EDIT PRINT
43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մայան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@edit print.am

Տպաքանակը՝ 100 օրինակ: